ԼԷՕ

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՏՈՐ Ա.

— ՓԱՐԻԶ —
Տպագրութիւն՝ Պահրի Եղբարց
1934

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ՀՕԿ-Ի

Այս գիրքը տպւած է 1934 թւին, Փարիզի մէջ, ՀՕԿի հրատարակչութեամբ, ՊԱՀՐԻ ԵՂԲԱՐՑ կողմէ։ 50 օրինակ Նավառի Ալֆամուս թղթի վրայ — թւագրւած եւ վերապահւած ՀՕԿ-ի։ 1500 օրինակ հրատարակչական ընտիր թղթի վրայ, որոնք կը կազմեն առաջին տպագրութիւնը։ Գրքի սկզբնատառերը
— — — նկարած է Գր. Պահրի։ — — —



Լէօ

ԱՌԱՋԱԲԱՆ

Թիւրքահայ յեղափոխութիւնը, հայութեան ապրած բոլոր ողբերգութիւններից ամենաահռելին, նոր նոր է սկսում ենթարկւել քննական փաստացի վերլուծութեան:

Սկիզբ առնելով 19րդ դարի 60-ական թւականներին, այս ապստամբական փոթորկալից շարժումը վերջնական «լուծման» յանգեց, ինչպէս յայտնի է, 1914—1918 թւականների համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ընթացքում, ամբողջ թիւրքահայ ժողովրդի բնաջնջմամբ, թիւրքաց Հայաստանի ամբողջ մակերեսից իսպառ անհետացմամբ:

Մի ամբողջ աշխատաւոր՝ 90 տոկոսով գիւղացի ժողովրդի այս անլուր եւ անօրինակ կորուստը այնպիսի մի փաստ չէ, որին կարողանար անտարբերութեամբ վերաբերւել նոյն այդ ժողովրդի այն մասը, որ, բախտի յաջողականութեամբ, ազատ է մնացել վերահաս բնաջնջումից: Իսպառ ոչնչանալու վտանգը — ո՞ւմ չէ այս յայտնի — կախւած էր եւ արեւելահայութեան վզից, եթէ Անդրկովկասը խորհրդային իշխանութեան տակ չմտնէր եւ նրա Կարմիր Բանակը չգար մեր երկիրը՝ ազգերի մէջ խաղաղութիւն եւ հաշտութիւն հաստատելու համար:

Եւ ահա այն մեծ, մահացու վտանգը, որ երէկ կար եւ սպառնում էր բովանդակ հայ ժողովրդի (խօսքը, ի հարկէ, Հայաստանի հողի վրայ ապրողի մասին է) ֆիզիքական գոյութեան, այսօր չպիտի մոռացւի, անուշադրութեան մատնւի, այլ պիտի ուսումնասիրւի ամենախիստ քննական մեթոդով՝ ահռելի դրամայի իսկական պատճառները վաւերագրերով պարզելու եւ լոյսի մէջ դնելու համար:

Այս մի բազմակողմանի պահանջ է, որ կարող է բաւարարել արիւնոտ

երեւոյթը բազմաթիւ կողմերից ուսումնասիրելու միջոցով: Պէտք է քննութեան եւ տարրալուծման տալ ամէն ինչ — ե՛ւ միջավայրը, ե՛ւ ժողովուրդը, ե՛ւ շարժման հիմքերը, նրա ընդհանուր բովանդակութիւնը, ընթացքը և շատ ու շատ այսպիսի խնդիրներ, որոնք բխում են իրարից, իրար լուսաբանում եւ լրացնում, եւ այլն, եւ այլն:

Պէտք է հաւատի լինել, որ խորհրդային Հայաստանի սկսած նոր գիտական շարժումը, որ փորում, փորփորում է հայ ժողովրդի անցեալը՝ մի իսկապէս ժողովրդական կեանքի պատմութիւն որոնելու եւ հիմնաւորելու համար, ի վիճակի կը լինի մեր ցաւագար եւ բազմաբիւր վէրքերով ծածկուած, երեկի խնամքով թաքցող, խուժանավարական աղմուկ-աղաղակներով խոր ու անթափանց պահող գարշահոտ պալարները աջ ու ձախ պատռել սուր նշտրակներով՝ մեր այնքան զարհուրելիօրէն վտանգուած գոյութիւնը առողջացնելու համար:

Ես համարձակւում եմ կարծել, որ իմ ներկայ ուսումնասիրութիւնն աւելորդ մի աշխատանք չի համարուի այդ նոր վիրահատական շարժման մէջ, որին այնքան կարօտ է մեր նորոգւող կեանքը:

Թիւրքահայ յեղափոխութեան ամբողջութիւնից ես վերցնում եմ մի կողմը միայն, որն ամենագլխաւորն է — նրա գաղափարախօսութիւնը — եւ տալիս եմ նրա ամբողջ պատկերն իմ ձեռքի տակ եղած վաւերագրերի լեզուով: Այս գաղափարախօսութեան ամբողջ ընթացքն ինքն ըստ ինքեան բաւական է, կարծում եմ, ողջ շարժման, մի միլիոնից աւելի ժողովուրդ կոտորել տալու պատճառները բացայայտ անելու համար: Մենք ձեզ հետ, ընթերցո՛ղ, պիտի տեսնենք թէ որքան ողորմելի, յեղյեղուկ, հակասական եւ շփոթ է եղել այն գաղափարախօսութիւնը, որն առաջնորդ ու ղեկավար է եղել, ստեղծել է երազական պատրանքներ, անգիտակից եւ հեշտ յափշտակւող տարրերը նետել է կատաղի պայքարի դաշտը ու նրանց միջոցով պատրուակներ եւ հնարաւորութիւններ է պատրաստել մորթոտելու մի անզէն եւ անպաշտպան ժողովուրդ:

Մենք կը տեսնենք այստեղ մի ուրիշ կարեւոր երեւոյթ — հայ քաղաքական մտքի զարգացման պատկերը, հայ ինտելիգենցիայի ըմբռնողական եւ ստեղծագործական կարողութիւնը:

Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարախօսութիւնները թէեւ այսօր գաղափարապէս անցել են ստուերների ցուրտ աշխարհը՝ բայց նրանցից շատերը դեռ ապրում են եւ կատաղութիւնից փրփրում, երբ նրանց դնելով Արդիւլ-Համիդների, Թալէաթ-Էնվէրների, Լոբանով-Ռոստովսկիների, Նիկոլայ երկրորդների, Ջեմբերլէնների et tutti quanti, ուրիշ հայասպանների հետ միասին՝ իբրեւ նրանց գործակիցներ, հարցում ենք անում՝ «ո՞ւր է եղբայրդ»: Բայց այս կատաղութեան ամբողջ փրփուրը, որքան էլ ժահրոտ խորքերից լինի դուրս ժայթքելիս, երբէք եւ երբէք չպիտի մեզ շեղի հանգիստ, պաղարիւն ուսումնասիրողի եւ քրքրողի գիտական դիրքից: Նրանք մեզ յիշոցներ, իսկ մենք նրանց՝ փաստեր եւ փաստեր, անվերջ փաստեր .

Հուսկ բանիս՝ քաղցր պարտականութիւն եմ համարում խորին շնորհակալութիւնս յայտնել խորհրդային Հայաստանի Լուսժողկոմատին, որ տրամադրութեանս տակ դրաւ այն բոլոր աղբիւրները, որոնք վերաբերւում են իմ ընտրած նիւթին եւ պահւում են Հայաստանի գրադարանների, թանգարանների մէջ:

Ինձ մնում է աւելացնել, որ իմ ձեռքի տակ եղած աղբիւրները միշտ լրիւ չեն եղել եւ ես յաճախ կանգնած եմ եղել բաւական զգալի բացերի առաջ: Բայց եւ այնպէս յեղափոխական գաղափարախօսութիւնը չի կարող խոյս տալ դիտողի աչքից, քանի որ իր ներքին բովանդակութեամբ նա աղքատ ու միակողմանի էր և օրը օրին ապրում էր անվերջ կրկնութիւններով ու համանման փաստերի կուտակումներով: Թէեւ ես հաւատացած եմ, որ պակասող նիւթերը չեն կարող որեւէ փոփոխութիւն մտցնել ընդհանուր պատկերի մէջ:

ԼԷՕ

1928 թ. յունիս 29ին, Թիֆլիս

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒՄԸ

Առաջին անգամ թիւրքահայ յեղափոխական գաղափարախօսութիւնը հրապարակային փաստ դարձնում է 1862 թւականի յուլիս ամսին Զէյթունի ապստամբութիւնը թիւրք կառավարութեան դէմ։

Այս տեսակի շարժում անօրինակ չէր այդ լեռնային փոքրիկ գաւառակի համար։ Ապստամբութիւններ Զէյթունն ունեցել էր, իր անկախութիւնը պահպանելու համար, մի քանի անգամ, թէ նոյն 19րդ դարում, թէ նրանից էլ առաջ։ Բայց այս կռիւները մնացել են տեղական սովորոյթի կարգում, որ բխում եւ մշտապէս սնուցւում էր այն համատարած անիշխանական դրութիւնից, որ տիրում էր Թիւրքիայում 17–19 դարերի ընթացքում։ Կռւում էր Զէյթունը ինքնագլուխ լինելու համար, բայց ո՞վ չէր կռւում նոյն նպատակով։ Ամէն մի գաւառապետ, ամէն մի ցեղապետ կենտրոնական իշխանութիւնը չճանաչելու, զօրով տիրելու մէջ էր որոնում իր բախտն ու հարստութիւնը, այնպէս որ Զէյթունի օրինակը ոչ եզակի էր, ոչ կարող էր առանձին ուշադրութիւն գրաւել ընդհանուր թոհ ու բոհի մէջ։ Եւ յիրաւի. Զէյթունի ընդհարումները համարեա միանգամայն աննկատելի են մնացել նոյնիսկ հարեւան տեղերի հայութեան համար եւ, եթէ որեւէ հետք թողել են, այդ միայն բուն իրենց զէյթունցիների ժողովրդական բանաւոր աւանդավէպերի եւ երգերի մէջ։

Ուրիշ էր 1862–ի ապստամբութիւնը։ Այստեղ, առաջին անգամը լինելով, Թիւրքաց Հայաստանի համար երեւան էր գալիս քաղաքական ծրագիր, կազմակերպւած զինական շարժում, որ ունէր իր հիմնաւորումը, իր պրոպագանդը, քաղաքագիտական յիւրանքները, ինտելիգենտական մտածողութեան արգասիք հանդիսացող. մի խօսքով, այն ամէնը, ինչ հարկաւոր է նախապատրաստւած, վաղօրօք չափւած ու ձեււած քաղաքական ձեռնարկութիւնը քանդող ու ապրեցնող գաղափարախօսութեան։

Ահա այս Զէյթունեան ապստամբական շարժումից էլ մենք կը սկսենք մեր տեսութիւնը։

Միայն 20–22 տարի առաջ, ռուսական առաջին յեղափոխութեան բերած ազատութեան հետեւանքով էր, որ, ի միջի այլոց, լոյս հանուեց մի դատաստանական գործ, որը վերաբերում էր 1860ական թուականների սկզբում գործող ռուս յեղափոխական նարոդնիկներին, որոնց մէջ էր եւ մեր Միքայէլ Նալբանդեանը [1]։ Այստեղից էր միայն, որ հայ մտաւորական աշխարհին յայտնի դարձաւ թէ՝ Նալբանդեանն իր ժամանակի ռուս հռչակաւոր տարագիրների — Հերցենի, Բակունինի, Օգարեւի շրջանի մարդն է եղել, նրանց գաղափարակից եւ գործակից, որի համար էլ բանտարկուել է Պետրոգրադի Պետրոպավլովսկայա բերդում, որտեղից դուրս է եկել արդէն թոքախտով սպառուած, ուղիղ գերեզման մտնելու համար։

Նալբանդեանի մօտ գտնուած թղթերից մէկը, մի նամակ Կ. Պոլսի շատ անուանի հրապարակախօս Յարութիւն Սւաճեանից գրուած, որի ռուսերէն անկատար թարգմանութիւնն է, դժբախտաբար, որ ունենք, չափազանց կարեւոր նշանակութիւն ունի մեր ամբողջ նորագոյն պատմութեան համար այն կողմից, որ ապացուցում է թէ Զէյթունի ապստամբութիւնը պատրաստել է Կ. Պոլսում կազմակերպուած մի գաղտնի յեղափոխական մարմին, որի հիմնադիրը եղել է ինքը՝ Մ. Նալբանդեանը։

Այսպիսով ակնյայտ է դառնում, որ 1862 թուականի Զէյթունեան ապստամբութիւնը կապուած էր ռուս նարոդնիկութեան հետ եւ, որ գլխաւորն է, հայ ինտելիգենցիան հանդէս գալով, իբրեւ Թիւրքահայ յեղափոխութեան ծնող եւ ղեկավար, բերում էր իր հետ ռուս յեղափոխական շարժման գաղափարախօսութիւնը՝ իբրեւ նրա հլու եւ հաւատարիմ աշխատակիցը եւ ընդօրինակողը առանց որեւէ սեփական աշխատանք մտցնելու այդ գործի մէջ, որ կարեւոր ու անհրաժեշտ էր հէնց ի սէր այն հանգամանքի, որ օտար տեսական հիմնաւորումներ, արդիւնք օտար մասնաւոր միջավայրի, պէտք էր իրականացնել մի օտար, բոլորովին այլ պայմաններում ապրող միջավայրում։

Ահա այս առաջին եւ ամենակարեւոր երեւոյթն է, որ կարմիր թելով անցնում է Թիւրքահայ յեղափոխութեան առաջին օրից մինչեւ վերջինը։ Ինչո՞վ բացատրել այն։

Միքայէլ Նալբանդեանը, իր օրինակով, պարզում է մեր առաջ այդ գաղտնիքը։ Այդ այն է, որ հայ ինտելիգենցիան գաղութային երեւոյթ էր, կտրուած բուն հայաստանեան միջավայրից, նրա կեանքին ու աշխատանքին միանգամայն անծանօթ։

Այս մենք կը տեսնենք յետոյ։ Բայց նախ՝ ի՞նչ է նարոդնիկութիւնը։

1) Мих. Лемке. — "Дѣло о лицахъ, обвиняемыхъ въ сношеніяхъ съ лондонскими пропагандистами". (Жур. "Былое" 1906).

«Նարոդնիկ» պարզապէս պէտք է թարգմանել «ժողովրդական» եւ Նարոդնիկութիւնը, հետեւաբար, այն քաղաքական հոսանքն է, որի բովանդակութիւնն է ժողովրդասիրութիւնը։ Զուտ ռուսական հասարակագիտական մի ուսմունք էր այդ, որի համար գերագոյն իդէան էր ռուս ժողովրդի (այս անունով հասկացւում էր ազգաբնակութեան ամենահոծ զանգուածը կազմող գիւղացիութիւնը) ազատագրումը։ Նա կազմւում էր այն ժամանակից (40–ական թուականներից), երբ ռուս մտաւորականութեան մէջ մուտք է գործում, Եւրոպայից, սոցիալիզմի վարդապետութիւնը։ Նարոդնիկութիւնն այսպիսով «ռուսական սոցիալիզմն» էր [1]։ Հետեւաբար եւ Թիւրքահայ յեղափոխութիւնը բխում էր այդ սոցիալիզմից, այդ յատուկ ռուսական վարդապետութիւնից, և այսպէս էր նա ոչ միայն 60–ական թուականներին, այլ եւ, ինչպէս կը տեսնենք նաեւ յետոյ, մինչեւ վերջ։ Մեզ մնում է տեսնել թէ այդ ինչ տեսակի էր ռուսական սոցիալիզմը։

«Ռուսական» անունը կրելու նա կատարեալ իրաւունք ունէր, որովհետեւ կրում էր իր մէջ մի քանի խոշոր առանձնայատկութիւններ, թելադրուած զուտ ռուսական կեանքի տնտեսական պայմաններից։

Մինչդեռ Արեւմտեան Եւրոպայում սոցիալիզմը կապիտալիստական արդիւնաբերութեան եւ բանւորական դասակարգի վրայ էր խարսխուած, Ռուսաստանում, ընդհակառակը, կապիտալիստական ձեւի տնտեսութեան թոյլ զարգացման շնորհիւ, գրեթէ ոչ մի նշանակութիւն չէր տրւում թէ արդիւնաբերական բուրժուազիային եւ թէ բանւորութեան. այստեղ սոցիալիզմի հիմք ընդունւում էր գիւղացի ազգաբնակութիւնը։

Մի գերմանացի ճանապարհորդ ռուսական գիւղում գտել էր մի հինաւուրց հիմնարկութիւն, որ նարոդնիկական մտածողութեան մէջ առաջնակարգ տեղ բռնեց, կարծել տալով թէ այդ մի զուտ ռուսական կամ, առ առաւելն, սլաւոնական կեանքի ստացուածք է, որ վաղուց կորել անհետացել էր եւրոպական միւս ազգերի մէջ։ Այդ համայնական հողատիրութիւնն էր, որ արդէն ինքն ըստ ինքեան կրում էր իր մէջ սոցիալիզմի սկզբունքները։ Դեռ 1850–ական թուականներին Հերցենը, գալով այն եզրակացութեան, թէ սոցիալական յեղափոխութիւնը Արեւմտեան Եւրոպայում անխուսափելի է, հարց էր տալիս թէ արդեօ՞ք Ռուսաստանը պիտի անպատճառ անցնի տնտեսական զարգացման այն փուլերը, որ անցել է Եւրոպան, որից յետոյ միայն այստեղ էլ տեղի կունենայ նոյն սոցիալական յեղափոխութիւնը, թէ՞ այստեղ այդ յեղափոխութիւնը հնարաւոր է առանց այդ տնտեսական զարգացման աստիճաններն անցնելու։ Եւ պատասխանում էր թէ տնտեսական զարգացումն անհրաժեշտ պայման չէ յեղափոխութեան համար, քանի որ կայ գիւղական համայնավարութիւնը, որ, զարգանալով, կեանքի միւս կողմերն էլ ընդգրկելով, կը

1) Ивановъ-Разумникъ. —"Исторія русской общественной мысли", СПБ., 1905, гл. II. с. 8.

դառնայ այն կոմունիստական կարգը, որ Եւրոպայում պիտի իրագործէ սոցիալական յեղափոխութիւնը։

Այս հայեցակէտը դառնում էր հիմնաքար, որի վրայ անխուսափելիօրէն դրւում էր ռուս նարոդնիկական սոցիալիզմի մայր դաւանանքը, ուրիշ նշանաւոր հասարակագէտների (օրինակ՝ Չերնիշեվսկու) մանրազնին հիմնաւորումներով ամրապնդւած (1)։ Այսպիսով սահմանւում է երջանիկ իլլիւզիա թէ կապիտալիզմը մուտք չի գործի Ռուսաստան, որ եւ ազատ կը մնայ նրա չարիքներից։

Բայց այս ժպտուն ապագան չէր նշանակում թէ, ուրեմն, Ռուսաստանում չպիտի լինի առհասարակ որեւէ յեղափոխութիւն։ Ընդհակառակը, ժողովրդական շարժում, ապստամբութիւն պահանջում էր հէնց այն դրութիւնը, որի մէջ գտնւում էր գիւղացիութիւնը։ Նա աղքատ էր, որովհետեւ բաւականին հող չունէր, ճնշւած էր ազնւապետական—ոստիկանական պետութեան ծանր ռեժիմի տակ, տգէտ ու խաւար էր։ Ուստի՝ մի կողմից պէտք էր բարձրացնել նրա մտաւոր և տնտեսական մակարդակը, միւս կողմից պատրաստել նրան, որ նա ապստամբւի իշխանութեան դէմ, խորտակի ցարական բռնակալութիւնը եւ այդպիսով ստանայ ազատութիւն, առանց որի անհնարին է որեւէ բարօրութիւն։

Այս յեղափոխական գաղափարախօսութեան մէջ մեծ հեղինակութիւն ստացաւ ռուս աշխարհահռչակ ապստամբական եւ անարխիստ Միխայիլ Բակունինը։ Դեռ քաղաքական գործունէութեան ասպարէզում նոր երեւան եկած ժամանակն էր, որ նա յայտարարեց այսպիսի սկզբունք. «քանդելու կիրքը միաժամանակ եւ ստեղծագործական կիրք է» (2)։ Այնուհետեւ էլ նա, մինչեւ իր կեանքի վերջը, շարունակ մնաց «բունթար» (ապստամբարար) եւ առաջարկում էր այդ միջոցը իբրեւ յեղափոխութեան ամենաազդու գործիք։ Ոտքի կանգնեցնել ժողովուրդը, առաջնորդել նրան դէպի ըմբոստացում, դէպի կռիւ ամէն մի իշխանութեան, ամէն մի հեղինակութեան դէմ — այս էր բոլոր հարցերը լուծելու յատուկ միջոցը, եւ Բակունինը պատճառաբանում էր այդ միջոցը մի շարք տեսական նկատառումներով։ Ինքն էլ, ուրիշների նման, համարելով ռուս գիւղի համայնական հողատիրութիւնը մի չափազանց թանկագին ստացւածք սոցիալիզմի տիրապետութեան տեսակէտից, Բակունինը գտնում էր, որ ռուս ժողովրդի մէջ ապրում են մի քանի վատ յատկութիւններ, որոնք կարող են ոչնչացնել նոյնիսկ այն գեղեցիկ ստացւածքները, որ նա ունէր, օրինակ՝ հէնց համայնական հողատիրութիւնը։ Այդ վատ յատկութիւններից գլխաւորն էր ցարի աստւածացումը. բայց հիմա ինքը՝ գիւղացիութիւնը խելահաս է դարձել, որ պէտք է կռւել ե՛ ցարի,

1) Г. В. Плехановъ. — "Наши разногласія" (собр. сочин. Москва, 1925, т. II. с. 113 и слѣд.).

2) Ю. Стекловъ. — "Бакунинъ" т. II. с. 251.

ե՛ւ նրա պաշտօնեաների դէմ։ Այդ կռւին արդէն կար ժողովրդի մէջ եւ նրան պէտք է պաշտպանել, զարգացնել ու արծարծել։ Եւ Բակունինը սպասում էր որ ռուս գիւղացիական յեղափոխութիւնը, զինւած կացիններով, վերջ ի վերջոյ կը տապալի ցարական ռեժիմը։

Եւ ահա ռուսական նարոդնիկութիւնը ստանում էր, իբրեւ իրեն միայն պատկանող մի առանձնայատկութիւն, բակունինիզմը, այսինքն յախուռն, տարերային ապստամբութիւնը, «բունթարութիւնը» (ապստամբարար բառից)։ Բակունինի բունթարական վարդապետութիւնը խիստ խոր ազդեցութիւն էր թողնում ժամանակի երիտասարդութեան վրայ, որ եւ որդեգրում էր նրան իբրեւ մի անսխալական սկզբունք. կային, սակայն, աւելի չափաւոր եւ շրջահայեաց մտածողներ, որոնք ուզում էին մեղմել բունթարութիւնը, ազատելով նրան գոնէ յախուռն, չմտածւած տարերային բնոյթից։ Այսպէս, յայտնի վտարանդի եւ յեղափոխական տեսաբան Պ. Լավրովը պահանջում էր, որ ռուս գիւղացիական ընդհանուր ապստամբութիւնը միանգամից չբարձրացւի, այլ պատրաստւի աստիճանաբար, հետզհետէ երբ մանրամասն կերպով կուսումնասիրւեն երկրի դրութիւնը, գիւղացիութեան շրջապատող հանգամանքները, եւ այլն։ Բայց Բակունինը պատասխանում էր թէ ոչ մէկ ուսումնասիրութիւն հարկաւոր չէ, թէ ժողովուրդն ինքը շատ լաւ գիտէ ամէն ինչ, կարօտ չէ պատրաստութեան և մնում է նրան միայն ոտքի կանգնեցնել. բայց մի վարդապետութիւն չէր ոչնչացնում միւսին, այլ երկուսն էլ — թէ բակունինիզմը եւ թէ լավրովիզմը — մնում էին նարոդնիկութեան մէջ, խմբելով իրենց շուրջը տարբեր կուսակցական հատւածներ։ Լավրովի վարդապետութեան հետեւողների մէջ սկսւում էր մի շարժում, որ կոչւում էր «գնալ ժողովրդի մէջ». յեղափոխական ինտելիգենցիան գնում էր գիւղերը, աշխատում էր միանալ ժողովրդի հետ եւ կրթական—կուլտուրական ղեկավարութիւն ստանձնել գիւղական աշխարհում։

60—ական թւականների առաջին կէսին ռուս յեղափոխական կազմակերպութիւնները միացան եւ դարձան մի կուսակցութիւն՝ «Նարոդնաեա Վոլեա» (Ժողովրդական Կամք) անունով։ Այնուհետեւ այս անւան տակ էր գործում ռուսական սոցիալիզմը, խարսխւած իր երեք գլխաւոր առանձնայատկութիւնների — գիւղական համայնքի, բունթարութեան եւ ժողովրդի մէջ գնալու — վրայ։ Վերջերում նարոդովոլցիների կազմակերպութեան մէջ առաջացան թեւեր, եւ դրանցից մէկը մտցրեց եւ մի չորրորդ ռուսական առանձնայատկութիւն — ահաբեկում (տերոր)։

Այսքանը բաւական համարելով «ռուսական սոցիալիզմը» իր ամենաբնորոշ յատկութիւններով գծագրելու համար, որոննք նրա ազդեցութիւնը հայ կեանքի վրայ։

Որ այսպիսի մի գաղափարական շարժում սկզբից եւ եթ չէր կարող չգրաւել հայ երիտասարդութիւնից շատերին — այս մասին կասկածելու ոչ մի

հիմք չունենք: Բայց թէ ինչ արին այդ երիտասարդները միջնորդ հանդիսանալու համար ռուսական սոցիալիզմի եւ հայ իրականութեան մէջ, այստեղ է ահա, որ մեզ, տարաբախտաբար, պակասում են վաւերագրեր, որոնք ցոյց տային այդ միջնորդութեան թէ որակը եւ թէ ծաւալումը:

Միակ մի վաւերագիր ունենք, եւ այդ՝ Միքայէլ Նալբանդեանն է, մի չափազանց պերճախօս եւ բնորոշ վաւերագիր:

Միքայէլ Նալբանդեանի գրական գործունէութիւնը սկզբից մինչեւ վերջ անցել է պարզ եւ որոշ նշանի տակ — լիբերալ մտածողութեան ձախ թեւը, ազգասէր, նոյնիսկ լուսաւորչական ուղղափառութեամբ տոգորուած մի տաղանդ, որը ճիշտ որ իր ժամանակ մի բոլորովին առանձնայատուկ եւ կղզիացած երեւոյթ էր ներկայացնում հայ իրականութեան մէջ, իբրեւ արի, կրակոտ եւ յեղափոխիչ մի գրչազէնք պայքարող:

Բայց կայ նրա աշխատութիւնների մէջ մի հատը, որ արդէն նման չէ նրա միւս աշխատութիւններից ոչ մէկին եւ ցոյց է տալիս թէ գրուած է տարբեր միջավայրում, տարբեր շրջանի մէջ, տարբեր ազդեցութիւնների տակ: Այդ մի փոքրիկ գրքոյկ է, տպուած յայտնի չէ թէ որտեղ, 1862 թուականին [1], «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» վերնագրով, որին հետեւում է ցուցմունք թէ՝ աշխատասիրել է նրան Սիմոն Մանիկեանը:

Եթէ այդ բրոշիւրը սկզբից մինչեւ վերջ Նալբանդեանի փայլուն ու վառվռուն հրապարակախօսական լեզուով չլինէր գրուած, կարելի կը լինէր վիճել, որ Սիմոն Մանիկեանը մի բոլորովին ուրիշ անձնաւորութիւն էր, այնքան նոյնանշան էր նրա գրքոյկի բովանդակութիւնը: Հեռուն գնալու կարիք չկայ: «Երկրագործութիւնից» մի տարի առաջ, 1861ին, Նալբանդեանն իր իսկական անունով տպեց Փարիզում, Սէնիւնի տպարանում, «Երկու տող» վերնագիրը կրող մի տետրակ, որ մի բանավէճ էր Կ. Պոլսի յայտնի խաւարամիտ եւ կղերամոլ խմբագիր Զամուռեանի դէմ, մի բանավէճ, որի առարկան են փչացած հոգեւորականները, եկեղեցական ռեֆորմների հարցը, Գաբրիէլ Վարդապետ Այվազովսկին, եւ այլն, մի խօսքով այն, ինչ կար եւ մնում էր՝ այն ժամանակուայ լիբերալ հրապարակախօսութեան ոգին էր, մարմինն էլ: Նոյնպէս եւ «Երկրագործութիւն»ից յետոյ էլ գրած իր աշխատութիւնների մէջ Նալբանդեանն նոյն ազգասէր եւ եկեղեցասէր հայ լուսաւորչականն է:

Եւ, միմիայն «Երկրագործութիւն» գրքոյկի մէջ է, որ իրար խաչաւորում են այլ տեսակի հովեր: Պէտք է ասել, որ, եթէ այդ փոքրիկ աշխատութիւնն այնքան հռչակ եւ հմայք է ստացել մեր գրականութեան մէջ, այդ հէնց շնորհիւ այն հանգամանքի էր, որ նա մի երեխայրիք էր, նոր արտասանուած

1) Գրքոյկը տպուած է Կարապետ Վարդ. Շահնազարեանի տառերով եւ այս հանգամանքը մատնում է տպագրութեան տեղը — Փարիզ:

մի խօսք, ճիշտ է՝ դեռ շատ թոթով, շատ անվարժ եւ խակ, բայց եւ այնպէս՝ անդրանիկութեան հմայքով լեցուն:

Ի՞նչ էր այդ նորոյթը:

«Երկու տող» տետրակից մենք իմանում ենք այն շատ հետաքրքրական փաստը, որ, երբ դրանից առաջ, 1860ին, Նալբանդեանը գտնւում էր Կ. Պոլսում, այդտեղի յառաջադիմական երիտասարդութիւնը նրան վերաբերւում էր մեծ համակրանքով եւ պատիւներով, մինչդեռ հին սերունդը բացատրում էր այդ ոգեւորութիւնը նրանով, որ Նալբանդեանը սոցիալիստ էր, կարմիր հասարակապետական [1]: Այս արդէն ցոյց է տալիս թէ այդ ժամանակ յայտնի էր շատերին, որ նա ռուս նարոդնիկների մէջ է գտնւում, իբրեւ նրանցից մէկը: Այս իրողութիւնը բացատրում է մեզ եւ նրա «Երկրագործութիւնը», որի նպատակն էր ապացուցել թէ միայն հողերի հաւասար բաժանումը կարող է հարստութեան եւ երջանկութեան աղբիւր դառնալ մի ժողովրդի համար: Բայց արդեօք իսկապէս սոցիալի՞ստ էր Նալբանդեանը: Այժմ էլ այդ դեռ հարց է, մինչդեռ գրքոյկի բովանդակութիւնը շատ պարզ է եւ թիւրիմացութեան տեղիք չի տալիս:

«Երկու տող»ի մէջ [2] Նալբանդեանն ասում է թէ իր սիրած եւ յարգած հեղինակներն են Օուէն, Պրուդոն, Ֆուրիէ. բայց, անշուշտ, նրա հայեացքները եւրոպական սոցիալիզմի ուտոպիստական շրջանից չէին քաղւում, այլ զուտ ռուսական միջավայրում ծագած հողատիրական համայնական սոցիալիզմից: Մեծ բարիք կը լինէր արած Նալբանդեանը հայ հասարակական մտքի զարգացմանը, եթէ կարողացած լինէր տալ մի ընդհանուր պատկեր այն նոր աճող եւ հուժկու շարժումներ առաջ բերած տնտեսական երեւոյթներից եւ նրանց հետ կապուած հասարակագիտական ուսմունքներից, որոնք հրատապ այժմէութիւն էին կազմում հէնց նոյն 60—ական թուականներին՝ Եւրոպայի զանազան կողմերում: Բայց այսպիսի բան նա անել չի կարողացել, եւ նրա «Երկրագործութիւնը» մի մասնիկ է՝ դուրս գզլուած մատերիալիստական աշխարհայեացքի տեսութիւններից, առանց ուշադրութիւն դարձնելու տնտեսական այն անխուսափելի պայմանների վրայ, որոնք այն ժամանակուայ տնտեսապէս ամենից շատ զարգացած երկրներում քանդում էին ու ոչնչացնում կեանքի հին հիմքերը եւ նրանց տեղ հաստատում նորերը:

Այսպէս, երկար եւ երկար կանգ առնելով անգլիական գիւղացիութեան հողազրկութեան վրայ, բացատրելով թէ ժողովրդական աղքատութիւնը ահռելի չափերի է հասնում այն պատճառով, որ աշխատաւոր ժողովուրդը հող չունի մշակելու համար, Նալբանդեանն այնպէս է կարծել տալիս, թէ այդ դրութիւնն Անգլիայում առաջ եկաւ մի որեւէ ուժի քմահաճոյքով, եւ, եթէ

1) Միքայէլ Նալբանդեան.— «Երկու տող», Փարիզ, 1861, երես 9:
2) Անդ, երես 10:

այսօր վերացրէ այդ քմահաճ ուժը, հեշտ կը լինի բաժանել հողը աշխատաւոր ժողովրդի անդամներին եւ, դրանով իսկ, կը վերացնէ մարդկային ցեղը բոլոր տանջանքները, որոնց արմատը մէկն է — հացի հարցը: Կարելի՞ էր այդպիսի մի հրաշք կատարել:

Մոռացում էր կամ վարագոյրի յետեւում էր թողնում աշխարհատատան վիթխարի երեւոյթը — Անգլիայի արդիւնաբերական յեղափոխութիւնը, որի մէջ անգլիական գիւղի քայքայումը, անգլիացի արհեստաւորի եւ երկրագործի պրոլետարացումը, անհրաժեշտ պայմաններից մէկն էր, որ զարգանայ կապիտալիստական–գործարանային արդիւնաբերութեան հիմքը կազմող վարձու բանւորութիւնը: Կա՞ր աշխարհի երեսին մի որեւէ զօրութիւն, որ խանգարէր, կանգնեցնէր գործարանի հսկայական հեւքով առաջացումը, որ պիտի մի կարճ միջոցում նուաճէր, ամբողջ աշխարհը եւ գլխիվայր դնէր մարդկային յարաբերութիւնները. գիւղացիութիւնը՝ բանւոր, երկրագործութիւնը խոշոր կապիտալի ձեռքն անցած — ա՛յս էր շարժումը եւ ոչինչ չէր կարող կանգնեցնել նրան:

Նալբանդեանն անտես է անում կապիտալի գործը կամ շատ թեթեւ կերպով սահում է նրա վրայով: Այդպէս էլ երեւում է ռուս նարոդնիկը, որ արհամարհում էր կապիտալը, համարում էր իրեն նրա չարիքներից ապահովուած երկրագործական համայնքի ձեռքով: Եւրոպական խոշոր ինդուստրիայի եւ նրա բանւորական բանակների իրականութիւնից չէր գալիս Նալբանդեանը, այլ ռուսական սեւահողից, ուր տնտեսական իրականութիւնը երկրագործութիւնն էր, որ եւ բնականաբար պիտի համարուէր միակ իրական ուժը մարդկային կատարեալ երջանկութեան հասցնելու համար: Այստեղ, ահա, ռուս նարոդնիկութեան տնտեսագիտութեան միջավայրում, Միքայէլ Նալբանդեանը կարող էր համարուել «սոցիալիստ», եթէ ոչ ամբողջ հասակով, գէթ կիսով չափ, քանի որ նրա ցանկացած դրութիւնն այն էր, որ համայնացուեն հողերը, բայց ոչ թէ բոլորը, այլ միայն դաշտային հողերը, ասել է՝ վարելահողերը, որոնց վերաբերմամբ չպիտի լինէր մասնաւոր սեփականութիւն կամ, աւելի ճիշտն ասած, վաճառելու իրաւունք: Այսպէս չպիտի լինէին միւս տեսակի հողերը: Ահա թէ ինչպէս էր նա բացատրում այդ սիստեմը:

«Եթէ կամենում ես գեղի մէջ բնակուել, ապա ուրեմն միւս գիւղացիների չափով կը ստանաս քո բնակութեան, տանիդ պարտիզի, անասնոց գոմի եւ այլ կարեւոր բաների հարկաւոր եղածի չափ, հողի քանակութիւն, որի վրայ կը շինես քո բնակութիւնը, վերը ասած պարագաներով: Իսկ եթէ քաղաքում կամենում ես բնակուել, նոյնպէս միւս քաղաքացիների չափով հող կը ստանաս տուն եւ բնակութիւն հաստատելու համար: Եւ այս երկու դիպուածում, այսինքն, թէ՛ գիւղում եւ թէ քաղաքում, քեզ տուած հողը, որի վրայ շինութիւն թէ արել ես եւ թէ ոչ, ազատ ես, կամեցածիդ պէս, դրաւ դնել, վաճառել, ընծայել, ի վերջոյ, դու նրա անպայման տէրն ես եւ դրա վրայ խօսելիք չկայ: Իսկ խօսելիքը վերաբերւում է դաշտային հողին, ուր պիտի ընթանայ երկրագործութիւնը: Պիտի իմանաս, որ գեղի եւ քաղաքի իւրաքանչիւր անդամը, հաւասար չափով պիտի ունենայ մի որոշեալ քանակութիւն հողի մշակելու եւ գործելու: Եւ այս իրաւունքը պիտի տեւէ այնքան, որքան նա կամ նրա սերունդը պիտի բնակէ այդ հողի վրայ: Իւրաքանչիւր քաղաք, իւրաքանչիւր գեղ պիտի ունենայ իւր յատուկ հողը որ պիտի սեփական մնայ գեղի կամ քաղաքի հասարակութեան: Քաղաքի կամ գեղի ազգաբնակութիւնը հաւասար իրաւունքով ազատ են իրենց բաժինը գործել եւ մշակել, քանի որ գտնւում են այն գեղում կամ այն քաղաքում: Եւ եթէ դու, լինելով քաղաքացի, զբաղուած լինելով վաճառականութեամբ կամ այլ գործերով, չկամիս կամ ձեռնհաս չես քո բաժին ջոկած հողը մշակելու կամ մարդիկ վարձելով մշակել տալու, այդպիսի դիպուածում, կարող ես վարձու տալ եւ այդ կերպով օգուտ քաղել քո հողերից: Եթէ հող վաճառելու սկզբունքը թոյլ տրուի, այն ժամանակ աղքատութեան եւ թշւառութեան սկզբունքը կ'ընդունուի» [1]:

Այսպէս էր Սիմոն Մանիկեանի «սոցիալիզմը» — կատարեալ սեփականատիրութիւն եւ սահմանափակ սեփականատիրութիւն: Բայց նա չի մոռանում հանդիսաւոր կերպով կրկնել Պրուդոնի հռչակաւոր ձեւակերպումը — «սեփականութիւնը գողութիւն է», մի ձեւակերպում, որ իսկապէս Պրուդոնինն էլ չէ, այլ առաջին անգամ արտասանել է 18րդ դարի վերջում, Ֆրանսական մեծ յեղափոխութեան ժամանակ: Այս դարձուածքը կարծէք զարդարանքի համար է Մանիկեանը մտցրել իր տնտեսական սիստեմի մէջ, որ իրօք ոչ այլ ինչ է, բայց միայն նոյն նարոդնիկական իդէալը կազմող գիւղական համայնքը: Ապրած լինելով միայն Ռուսաստանում, դաստիարակուելով ռուսական մտքի հզօր ազդեցութեան տակ եւ անծանօթ մնալով թէ ինչ տեսակ կարգեր են տիրում միւս երկրներում, Նալբանդեանը չգիտէր, ի հարկէ, որ նոյն համայնական հողատիրութիւնը գոյութիւն ունի և Արարատեան երկրում եւ շատ միամիտ կերպով նկարագրում ու բացատրում էր այդ սիստեմի այն կարգերը, որոնք յայտնի էին Երեւանեան նահանգի իւրաքանչիւր հայ գիւղացուն իբրեւ հայրական ու պապական կարգ, որ գոյութիւնը պահպանել էր պարսկական տիրապետութեան ժամանակից:

Հասկանալի է, ըստ ինքեան, որ Նալբանդեանի այդ գործի ամբողջական քննադատութիւնը չի կարող մեզ համար նպատակ դառնալ այստեղ: Մենք վերցնում ենք նրա այն յատկանշական գծերը, որոնք կապ ունեն մեր առարկայի հետ: Իսկ ամենագլխաւոր յատկանիշը հէնց այն ազդեցութիւնն է, որը ղեկավարել է Սիմոն Մանիկեանին իր տնտեսական քաղաքական–

1) «Երկրագործութիւն», երես 17–19:

2408
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

թիւնը բացատրելու: Պարզ երեւում է, որ նրա ետեւում այն ժամանակ կանգնած է եղել իր ամենամօտիկ բարեկամ Բակունինը, որի գործակիցն էր ինքը՝ կարեւոր ձեռնարկութիւնների մէջ անգամ: Այսպէս, համայնական հողատիրութեան մասին արած իր դատողութիւնների մէջ նա յաճախ գալիս է Բակունինի մտքերի կրկնողութեան (1). իսկ երբ գրում էր՝ «Մարդը դեռ եւս թոյլ է, կառավարութեան օրէնքը դեռեւս ազդում է նրա վրայ» (2), այստեղ մենք լսում ենք արձագանգը բակունինեան անարխիզմի:

«Երկրագործութիւնը» առաջին հայերէն ինքնուրոյն գիրքն էր, որ մկրտուած էր մատերիալիստական աշխարհայեացքի աւազանում եւ յայտարարում էր տնտեսական հարցը միակ տէր եւ տնօրէն մարդկային ճակատագրի: Բայց նշանակո՞ւմ էր դա թէ մի արմատական բեկում է կատարուել եւ Նալբանդեանի գրական գործունէութեան մէջ: Այդ շատ հետաքրքրական հարցը մենք, տարաբախտաբար, ճշտօրէն լուսաբանելու հնարաւորութիւն չունենք, որովհետեւ 1862 թուականից յետոյ, երբ տպագրուեց «Երկրագործութիւնը», Նալբանդեանին արդէն շատ կարճ գրական գործունէութիւն էր մնում անցնել Ռուսաստանում, եւ ռուսական Բաստիլլի պատերի մէջ փակուած:

Շեշտում ենք առանձնապէս այս հանգամանքը, որովհետեւ Նալբանդնը՝ իբրեւ գրող եւ մտածող՝ ներկայանում է մեզ երկուերեսի դէմքով: Ուրիշ է Նալբանդեանը արտասահմանում՝ իբրեւ Սիմոն Մանիկեան, եւ ուրիշ է Ռուսաստանում՝ իբրեւ Միքայէլ Նալբանդեան, իբրեւ կոմս Էմմանուէլ: Սիմոն Մանիկեանը միայն « Երկրագործութեան » մէջ մնաց, չզարգացաւ: Իր « Երկու տող »ի մէջ, Նալբանդեանը յայտնում էր թէ արդէն Լոնդոնում հաստատուել է ազատ հայկական մամուլ (3), բայց սա, եթէ իրողութիւն է դառել եւ ենթադրութիւնների աշխարհում չմնաց, որքան յայտնի է՝ չունեցաւ իր ոչ իսկ փոքր չափով գործունէութիւնը: Այս հայկական ազատ մամուլը, անշուշտ, Հերցեն – Օգարեւ Բակունին տպարանի մի մասը պիտի կազմէր, եւ նրան կենդանացնողը, անշուշտ, պիտի լինէր ինքը, Նալբանդեանի կենդանացնող գրիչը: Երեւում է, որ, գնալով Ռուսաստան, իր հայրենի Նոր Նախիջեւանին հնդկական կտակների հաշիւը տալու, նա մտադիր էր այնուհետեւ վերադառնալ Լոնդոն եւ կատարելապէս վտարանդի դառնալ, Հերցենեան օջախում, բայց Ռուսաստանում ձերբակալուեց եւ՝ այսպիսով՝ Սիմոն Մանիկեանը մեռաւ դեռ հասակ չառած, իսկ Միքայէլ Նալբանդեանը մնաց դեռ մի առժամանակ դժգոյն առկայծելու բանտի խաւարի մէջ եւ այդպիսով աւելի եւս ընդգծելու նրա գրական երկուերեսակութիւնը, մի բան,

1) Плехановъ. — "Наши Разногласія" (т. II. с. 134-141).
2) «Երկրագործութիւն», երես 93:
3) Անդ, երես 24:

որ ապացոյց չէր թէ մատերիալիստական աշխարհայեցողութիւնը ճիշտ որ բեկում էր կատարել ազատական – լուսաւորչական գաղափարներով սնուած այդ մարդու մէջ:

Մի երկու նմոյշով կարելի է ապացուցած համարել այս իրողութիւնը: Նոյն 1862 թուականին, երբ լոյս էր տեսնում « Երկրագործութիւն »ը, Գամառ – Քաթիպան գրում էր « Հայկ եւ Լեւոնին մոռանանք եղբարք » ոտանաւորը, որի մէջ երգւում էր « Մանուկ Հայաստանի » գաղափարը: Գուցէ այս մի կազմակերպութիւն էր, որ առաջ էր եկել հայերի մէջ, ռուսական « Երիտասարդ Ռուսաստան » կազմակերպութեան ազդեցութեան տակ: Մի գաղափար էր այդ, յամենայն դէպս, յառաջդիմական – դեմոկրատիկ գունաւորումով: Գամառ – Քաթիպան կոչ էր անում մոռանալ ամբողջ հին աշխարհը, թափ տալ հնութեան փոշին, վերածնուել նոր կեանքի համար, աշխատել, գործել՝ որ գաղափարը մարմնանայ, տեղ ու կայան բռնի բուն Հայաստանում: « Մեր յոյսը, ասում էր բանաստեղծը, միայն մեր վրայ լինի, չեն պէտք մեզ նպաստ մեծատուններից. ողորմութեամբ թող մուրացիկն ապրի, մուրացողը միշտ ստրուկ է օտարին »:

Նալբանդեանը հարկաւոր է համարում հակառակել « Մանուկ Հայաստան »ին, եւ այս, անշուշտ, այն պատճառով որ Հերցենն էլ սաստիկ հակառակ էր « Երիտասարդ Ռուսաստան »ին, եւ գրում է մի պատասխան – ոտանաւոր, որի մէջ թէ՛ հեգնում է « Մանուկ Հայաստանը », թէ՛ իբրեւ հակադրութիւն՝ տալիս է հին պահպանողական – ազգասիրական պատգամներ, որոնք բոլորովին չէին կարող տալ « կարմիր հասարակապետական » Սիմոն Մանիկեանին: Նա ասում էր. —

Հայկ ու Տիգրանին յիշենք միշտ, եղբայրք,
Թափենք նոցանից հնութեան փոշին
Նորանց յիշելով արդեօք մի նոր կեանք
Առնու Հայաստան – նոցա խեղճ այրին:

. . . .

Կեցցէ յաւիտեան այրին Հայաստան,
Նա որ իր որդուց դեռ սրտի խորքում
Զունի հաստատուն մի ոտքի կայան
Եւ որդիքն պանդուխտ իրենց բուն երկրում:

. . . .

Մեր յոյսը, սակայն, մեր վրայ լինի
Այսինքն ազգի մեր ընդհանրութեան,
Աղքատ ու հարուստ տուած թեւ թեւի
Այսպէս թէ միայն կայ ճար փրկութեան:

. . . .

Եւ Հայկ, Տիգրանին յիշենք մենք, եղբայրք,

Նորոգենք նոցա խօսքը սուրբ աւանդ.
Գուցէ այս կերպ մի ստոյգ նոր կեանք
Առնու խեղճ, այրի, մայրն Հայաստան [1]:

Որ անվերապահ մատերիալիստ, նիւթապաշտ, տնտեսական հարցով պետական — հասարակական կեանքի բոլոր առեղծուածները լուծող Սիմոն Մանիկեանը չէր կարողացել որ եւ է բեկում առաջացնել լիբերալ ազգասէր — լուսաւորչական Միքայէլ Նալբանդեանի մէջ, այդ ապացուցում է եւ Ղազար Փարպեցու Թղթի Թարգմանութիւնը, գրաբարից աշխարհաբար, որ՝ նա կատարել է բանտում, աւելացնելով իրանից բազմաթիւ ծանօթութիւններ բնագիրը բացատրելու համար: Արդ, ներելի պէտի լինէր որ այդ ծանօթութիւնների մէջ՝ առաջին հայ մատերիալիստ հեղինակը գէթ մի թեթեւ փորձ անէր լուսաբանելու երեւոյթները աւատական տնտեսութեան տեսակէտից եւ նոյն չափանիշով էլ վերլուծելու հինգերորդ դարու Նախարարական փոխյարաբերութիւնները, որոնք այնքան աղէտալի եղան հայ ժողովրդի համար: Բայց այսպիսի վերաբերմունքի նշոյլ անգամ չէր կարելի գտնել Նալբանդեանի գրած ծանօթութիւնների մէջ: Ամբողջ ժամանակ, նա յափշտակուած մի հայ լուսաւորչական է:

Այսպիսով ուրեմն, պարզ է, որ Նալբանդեանի մէջ տեղաւորւում էին, առանց անյարմարութիւն զգալու, ե՛ւ Բակունինը, ե՛ւ Ղազար Փարպեցին:

Երկրորդ տեսակի Նալբանդեանը բաւականաչափ բացայայտուած է մեր գրականութեան մէջ: Առանց բացայայտութեան է մնում առաջին տեսակի Նալբանդեանը, այն է՝ Սիմոն Մանիկեանը: Եւ սակայն, այս բացայայտութեան շատ կարօտ է մեր ուսումնասիրութեան ներկայ առարկան: Ուստի այժմ դիմենք նրան, Մանիկեանին:

Միանգամայն բնական կը լինէր եւ հասկանալի, որ Սիմոն Մանիկեանը, լինելով ռուս նարոդնիկական գործիչներից մէկը, միջնորդ հանդիսանար այդ կազմակերպութեան եւ Ռուսաստանում ապրող հայութեան մէջ, ներշնչէր նրան ռուսական սոցիալիզմի սկզբունքները, ուշադրութեան եւ ուսումնասիրութեան առարկայ դարձնելով երկրագործութեան եւ հողատիրութեան պայմաններն ու դրութիւնը: Այս բոլորը, կրկնում ենք, կատարելապէս հասկանալի եւ օրինական կը լինէր:

Բայց ռուսահայերի մասին «Երկրագործութեան» մէջ մի խօսք անգամ չկայ: Մանիկեանը, վերջացնելով Անգլիայում եւ Ռուսաստանում տիրող ագրարային կացութեան վերլուծումով, յանկարծ խօսքի դարձուածքը փոխում է այսպէս.

«Բայց, մինչեւ այստեղ, մենք մեր առջեւ դրած բուն խնդրին չդպանք, մինչեւ այստեղ աշխատեցանք միմիայն մերկացնել նորան: Ի՞նչ է մեր խնդիրը:

1) Միանսարեան.— «Քնար Հայկական», Պետերբուրգ, 1868, եր. 202–203:

Ո՛չ Ամերիկայի պատերազմը, ո՛չ Անգլիոյ սեփականութեան օրէնքը, ո՛չ օդային ազատութիւնը, ո՛չ Ռուսիոյ ներկայ վիճակը ... ոչ մինը ոչ միւսը: Ի՞նչ է ուրեմն մեր խնդիրը ... ինչ որ աւելի իրաւունք ունի գրաւելու մեր ուշադրութիւնը, ինչ որ մօտ է մեզ, որի հետ անքակտելի կապերով կապուած ենք, — մեր խնդիրը է մեր ազգի թշուառութիւնը: Այս տողերից սկսած, մեր ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում ենք դէպի Թուրքիա, որի կազմութեան մէջ մտնում է Հայաստանի եւ Հայոց ազգի մեծագոյն մասը [1]:

Առաջին հայեացքից, շատ տարօրինակ է թւում այս հանգամանքը, — որ ռուսահայ ինտելիգենտը, թողած իր մերձաւոր եւ անմիջական շրջապատը, իր խնամքի եւ հոգացողութեան առարկայ է դարձնում հեռաւոր, աշխարհից կտրուած թիւրքահայ գաւառը, այն ծաւալուն աշխարհը, որի ազգաբնակութիւնը գրեթէ գլխովին բաղկացած էր աշխատաւոր գիւղացիութիւնից:

Թիւրքահայ յեղափոխութեան ամենագլխաւոր առանձնայատկութիւնը հէնց այս է եղել առաջին իսկ օրից. նա եղել է գրեթէ բացառապէս ռուսահայ ինտելիգենցիայի գործը:

Մեր ներկայ ուսումնասիրութեան ընթացքում շատ պարզուած կը լինի այս տարօրինակ երեւոյթի պատճառը: Առ այժմ այսքանն ասենք՝ իբրեւ շատ սեղմ եզրակացութիւն իրողութիւնների, որ թիւրքահայ գաւառաբնակ ժողովուրդը նշանակութիւն ունէր ո՛չ թէ միայն սոցիալական ու տնտեսական վատ պայմանների մէջ ապրող եւ դրանցից էլ տանջւող մի մարդկութիւն, այլ իբրեւ մի ազգագրական զանգուած, որ քաղաքական գործ պէտի կատարէր հայ ազգային ինտելիգենցիայի համար, պահպանելով Հայաստանի տերրիտորիան, որից պէտի դուրս գար, վերածնուէր հէնց ի՛ր՝ Նալբանդեանի խօսքերով բնորոշուած «Այրի» մայր Հայաստանը՝ Հայկերի եւ Տիգրանների փառքով պսակուած: Այդ մի խաւար, տգէտ, քաղցած ու տկլոր ժողովուրդ էր, որ հաց էր ուզում իր ֆիզիքական գոյութիւնը իբրեւ մարդ պահպանելու համար, բայց նրան ընդունում էին իբրեւ նիւթ, իբրեւ ատաղձ հայկական ինքնավարութեան, գուցէ նոյն իսկ եւ թագաւորութեան համար: Եւ՝ այս ազգասիրական նպատակը կենդանի պահպանելու համար՝ այդ անխօս ու անլեզու ատաղձը պէտի կրէր իր դարաւոր ստրկութեան շղթաները՝ հէնց նոյն այդ «Այրի» մայր Հայաստանի հողի վրայ:

Այսպէս էր հայրենիք որոնող ու հեռաւորութիւնից հայրենիք կարգադրող գաղութահայ ինտելիգենցիան, իր հետ տանելով նաեւ կղերա – առեւտրական վերնաշերտերը:

Հարց է այստեղ առաջ գալիս. — որքա՞ն լաւ էր ճանաչում այդ ինտե-

1) Անդ, երես 51–52:

լիգենցիան Հայկից եւ Տիգրանից յետոյ ամայացած Հայաստանը եւ նրա մէջ ապրող գիւղացի ժողովուրդը:

Ամենից համոզիչ եւ պերճախօս պատասխանն այս հարցին տալիս է ինքը՝ Մանիկեանը: Նրա «Երկրագործութեան» այն մասը, որ վերաբերում է Թիւրքաց Հայաստանին, ոչ մէկ արժէք չունի, որովհետեւ ամենեւին չի համապատասխանում այն դրութեան, որի մէջ իրապէս գտնւում էր Թիւրքահայ գիւղացին հէնց նոյն այն ժամանակները, այն է՝ յիսնական թւականների վերջում եւ վաթսունականների սկզբում, երբ հողային հարցն ընդունում էր առանձնապէս աղէտալի հանգամանք: Ոչինչ իրական տեղեկութիւններ չունէր Մանիկեանը, ոչինչ հաւաստի ծանօթութիւն չէր ձեռք բերել նա այն մասին, թէ ինչ է կատարւում այդ դժբախտ երկրում. սակայն, հեղինակութեան հովերով լցւած՝ մեծամիտ ինքնահաւանութեամբ դատողութիւններ էր անում, խրատական ցուցմունքներ էր տալիս:

Մեր յաջորդ գլուխը նւիրւած կը լինի այս դժնդակ հողային հարցին, որ Թիւրքահայոց հարցին մայրն ու սնանողն էր: Այնտեղ ընթերցողը կը տեսնի թէ ինչեր էր ապրում Թիւրքահայ գիւղացին քրդական ճորտատիրութեան դժոխքի մէջ, եւ նրանից ազատւած յայտարարւելուց յետոյ: Այստեղ, սակայն, չենք կարող չարձանագրել, որ կատարեալ եւ յուսահատական անգիտութեան զոհ դարձած Մանիկեանը նոյն իսկ զրպարտում, հայհոյում է Թիւրքահայ նահապետական գիւղացիութեանը, ասելով թէ նա՝ առանց պատճառի, չհասկացութիւնից դրդւած, լքում է իր դաշտերը եւ գաղթում քաղաքները՝ վաճառականութեամբ պարապելու համար: Ահա ինչպէս է ներկայացնում նա այդ ժողովրդական աղէտը.

« — Ո՞ւր բարով:

« — Պոլիս, Տրապիզոն, եւն. եւն.:

« — Ինչի՞ համար:

« — Աշխատելու եւ ընտանեաց օգնելու:

« — Աշխատելու եւ ընտանեաց օգնելու», — կրկնում է խօսակիցը, անհնարին տխրութեամբ:

« Անցնում է սրա վրայով մի քանի տարի, յանկարծ այս նորեկը լուր է ստանում որ իւր ծերունի հայրը վախճանւել է, մայրը հիւանդ է: Մի փոքր ժամանակից եւ մայրը մեռնում է»:

Եւ աւելացնում էր.

« Լաց, պանդուխտ, բնական զգացողութեամբ չես կարող լաց չլինել. բայց ոչ ոք մեղաւոր չէ, բացի քո հօրից, բացի քեզանից, բացի այն սխալ եւ վնասակար աւանդութիւնից որ քեզ այդ օրը ձգեց» (1):

Կրկնում ենք, միայն տգիտութիւնը կարող էր այսքան սոսկալի թշնա-

1) Անդ, երես 59:

մանք յարուցանել մի աշխատաւոր տարրի դէմ, որ հալածական ու ակամայ բանտարկեալ ու փախստական էր իր հողից ու տնից՝ տնտեսական զարհուրելի պայմանների հարկադրանքով:

Եւ ի՞նչ գտնէ մեր «սոցիալիստ»ը այդ թշուառ, բազմատանջ ժողովրդի տնտեսական անճարութիւնը բուժելու համար: Նրա դեղն ու հրաշագործ բալասանն ուրիշ մի բան չէ, բայց եթէ ... վաճառականութիւնը: Այստեղ, հօ՛, հայկական վաճառականութեան մէջ, Մանիկեանը գալիս կանգնում էր նոյն այն կէտի վրայ, ինչի վրայ կանգնած էր կրօնամոլ լիբերալ Ստեփանոս Նազարեանը, պահանջելով որ հայ վաճառականութիւնը լինի ազգային, այսինքն՝ որ նա չբաւականանայ եւրոպական ապրանքներ ներմուծելով ու ծախելով, այլ հայ գիւղացու բերքն էլ արտահանի իբրեւ հում նիւթ՝ դրամով վաճառելու համար: Եւ այդ վաճառականութիւնը լիովին ազգային կը դառնար մանաւանդ այն ժամանակ, երբ վաճառականը վաղօրօք փող կըտար գիւղացուն նրա կարիքները հոգալու համար եւ իր տւածի փոխարէն կը ստանար գիւղացու տնտեսութեան արտադրութիւնները:

Թէ թիւրքական, թէ ռուսական եւ թէ պարսկական Հայաստանի գիւղերն աւերող վաշխառու չորպաճիներն ու չարչիները կարող էին շնորհակալութեան ուղերձ ուղարկել Ստեւարտ Միլլ, Օուէն կարդացող հայ «կարմիր հասարակապետական»ին, որ իր գիտական հեղինակութեամբ օրինականացնում է վաշխառութիւնը, չիմանալով որ հայ գիւղացին հէնց նրա ձեռքից է աշխարհից աշխարհ փախչում մերկ ու բոբիկ:

Այսքան ահա ողորմելի էր գաղութաբնակ հայ ինտելլիգենտի գիտակցութիւնը Թիւրքահայաստանի տնտեսական դրութեան մասին: Եւ մենակ Նալբանդեանը չէր այսպէս: 1860 թ., երբ նա Կ. Պոլիս էր, նրա մասնակցութեամբ, գուցէ եւ ներշնչումով, կազմւեց մի Բարեգործական Ընկերութիւն, որի գլխաւոր նպատակն էր որբ եւ անօք երեխաներին յատուկ դպրոցներում վարժեցնել երկրագործական գիտութեան: Այդ Ընկերութիւնը հրատարակեց մի յայտարարութիւն, որի մէջ բացատրւում էր, Սիմոն Մանիկեանից գուցէ ոչ պակաս համոզիչ կերպով, թէ ինչ նշանակութիւն ունի գիւղացիութիւնը Հայաստանի նման մի երկրի համար, եւ որի մէջ, սակայն, մենք գտնում ենք դարձեալ նոյն անգիտութիւնը գաւառական Հայաստանում տիրող իրական պայմանների մասին:

Կ. Պոլիսն էլ գաղութ էր եւ նրա ինտելլիգենցիան էլ նոյնն էր, ինչ որ էր ռուսահայ ինտելլիգենցիան, թէեւ կարող էր նրանից աւելի շուտ լաւատեղեակ լինել:

Եւ ահա մենք կանգ առանք մի նոր, վերին աստիճանի կարեւոր յատկանշական երեւոյթի առաջ. — այսպիսի անտեղեակ, կարելի է ասել իրականութեան միանգամայն խորթ եւ օտար ինտելլիգենցիան էր, որ յանձն էր առնում փրկել Թիւրքահայ գիւղացիութիւնը նրա անտանելի ծանր դրութիւնից,

նրա իսպառ բնաջնջելու վերահաս վտանգից: Եւ այս դառն ու աղաղակող երեւոյթը յատուկ մնաց Թիւրքահայ յեղափոխութեան՝ մինչեւ վերջը:

Չճանաչել ամենեւին մի երկիր եւ նրա համար յեղափոխական ճակատագիր ստեղծել — այս կարող էր լինել հայկական այն դարաւոր իրականութեան մէջ, երբ ինքը՝ բուն երկիրը թաղուած էր թանձր խաւարի ու անյատակ աղքատութեան մէջ՝ անշարժ ու անզգայ, իսկ նրա տէրը հանդիսանում էր հեռաւորութեամբ, հոգով ու հասկացողութիւններով անջատուած գաղութը:

Հիմա գանք երրորդ գլխաւոր կէտին. — Ինչպէ՞ս էր ուզում Նալբանդեանը փրկել Թիւրքահայերին:

Ասում են հաստատապէս, թէ Սմբատ Շահազիզը, գրելով «Լեւոնի վիշտը» անունով քերթուածը, իր հերոսի պատկերը վերցրել է Նալբանդեանից եւ թէ վերջինս, քերթուածը կարդալուց յետոյ, ասել է՝ «Լեւոնի վիշտը իմ վիշտն է» (1): Ինչպէս յայտնի պիտի լինի նրանց, որոնք կարդացել են այդ «Ժամանակակից վէպը», Լեւոնը մի ռոմանտիկ բնաւորութիւն է, ուզում է ծառայել իր ժողովրդին եւ դրա համար գնում է ճանապարհորդելու հայաբնակ վայրերում: Որ Լեւոնը Նալբանդեանն է, ցոյց է տալիս այն, որ բանաստեղծը կանգ է առնում այն պայքարի վրայ, որ ունեցել է Նալբանդեանը Նոր-Նախիջեւանում Գաբրիէլ վարդապետ Այվազովսկու դէմ: Լեւոնը խօսքի մարդ է, ամէն տեղ տրտնջում է, գանգատւում, յանդիմանում հասարակական չարիքների հանդէպ, իսկ այդ չարիքներն են՝ հին աղէտ սովորոյթներ, ժլատ ու անկարեկից հարուստներ, տէրտէր-տիրացուի, եկեղեցու, կրօնի վէճեր: Տեսնում է այս բոլորը Լեւոնն իր ճանապարհին եւ հրապարակախօսութիւն է անում, ինչպէս անում էին այն ժամանակուայ ամսագրերն ու լրագրերը: Ռուսական Հայաստանին են պատկանում այս հանրային հարցերը, որոնց մասին կարելի էր անվերջ ու անսահման խօսել:

Բայց ահա Լեւոնն անցնում է Թիւրքահայաստան եւ անվտանգ ճառախօսը փոխւում, դառնում է մի ռազմատենչ, մարտնչող, որ կռիւ է քարոզում, որովհետեւ ժողովուրդը հարստահարւում է այնտեղ անդադար: Սիրառատ զեղումներով նա դիմում է այդ «գեղեցիկ աշխարհին» այսպիսի հարցով.

«Եւ մի՞թէ ոչ ոք քո զաւակներից
Փայլատակելու չէ՞ սուսեր ձեռին,
Փոթորիկ, հրդեհ վիրաւոր կուրծքից
Անվախ թափելով ոսոխի գնդին...

Եւ կոչ է անում.

«Մի վեր կաց, կանգնիր, աշխարհ Հայաստան,
Մի թափ տուր ուժով, թող ճեղքուին կապանք.

1) Ю. Веселовскій. — "Армянскій поэтъ Сумбатъ Шахазизъ". Москва 1905, с. 20.

Ահա քեզ արիւն իմ նուիրական,
Թող ցօղէ դաշտերդ փրկութեան համար (1):

Այս ինքնազոհման, սեփական արեան նուիրման հաւաստիացումին շատ նմանւում են Նալբանդեանի սեփական խօսքերը, որ նա ուղղում էր Զամուռճեանին՝ իր «Երկու տող»ի մէջ.

«Պաշտպանել այն հայի ասութուր կոխուած իրաւունքը եւ մեր կեանքի բուն խորհուրդն ու նպատակը: Եւ այս նպատակին հասնելու համար չէ պիտոյ ընկրկենք ոչ բանտի եւ ոչ աքսորի առաջ եւ ոչ միայն բանիւ ու գրչով, այլ եւ զէնքով ու արիւնով, եթէ մի օր արժանի լինենք զէնք ունենալ մեր ձեռքը եւ մինչեւ այժմ կարօտած ազատութիւնը նուիրել եւ սրբել մեր արիւնով (2):

Այսպիսով, ուրեմն, մի կատարեալ յեղափոխական առաքեալ, կռուի եւ ազատամարտութեան քարոզիչ, որ ուրիշ միջոց չգիտէ չարատանջ Թիւրքահայ ժողովրդի ազատութեան համար: Եւ նրան վիճակւած չէր լոկ քարոզողի դերը, նրա բաժին էր դառնում եւ առաջին յեղափոխական կազմակերպողի պարտականութիւնը:

Ապստամբել, այո, կռուել, բայց ի՞նչ բանի վրայ յոյս դրած: Այս մասին երկար մտածելու կարիք չկար: Բակունինն էր թելադրողը, եւ ռուս նարոդնիկութիւնն՝ իր ծրագիրը շարժման դրդապատճառ դարձնողը:

1848 թուականների յեղափոխութեան ազդեցութեան տակ կենդանանում էր այն հին գաղափարը, որի միտքն էր՝ միացնել բոլոր սլաւոնական ժողովուրդները՝ քաղաքական-մշակութային գերիշխանութիւն ձեռք բերելու համար գերմանական եւ ռոմանական ազգերի վրայ:

Այս գաղափարն, ինչպէս յայտնի է, հռչակւում էր Համսլաւականութիւն (պանսլաւիզմ) անունով եւ ահագին դայթակղութիւն է եղել Թիւրքահայ գիւղացիութեան ճակատագիրը տնօրինելու մենաշնորհն իրենց ձեռքն առած «ազգայիններ»ի համար՝ թէ ծնելով Թիւրքահայ յեղափոխական շարժումը եւ թէ տանելով նրան, վաթսուն տարուայ ընթացքում, անդունդից անդունդ:

Պանսլաւիզմը մի ազգայնական եւ յետադիմական պաշտամունք էր, բայց Բակունինը յարեց նրան եւ աշխատում էր յեղափոխական բովանդակութիւն դնել նրա մէջ՝ իր մեծ ապստամբական ծրագիրն իրագործելու համար — այն է՝ միացնել Աւստրիայի սլաւոններին՝ նախ Ռուսաստանի դէմ, այնուհետ, ժողովրդական ապստամբութեան միջոցով, խորտակել ցարականութիւնը, հաստատել հանրապետութիւն, որ եւ մտցնել ընդհանուր սլաւոնական ինքնավարութիւնների միութեան մէջ (3): Այդ ծրագիրն յաջողութիւն չգտաւ

1) Ս. Շահազիզեան.— «Լեւոնի Վիշտը», ժամանակակից վէպ, Մոսկւա, 1865, երես 117-118:
2) Անդ, երես 22:
3) В. Полонскій. — "Бакунинъ", т. 1, с. 22-223.

1848ին, եւ այնուհետեւ էլ Բակունինը ձերբակալուեց եւ ընկաւ Նիկոլա Ա.ի ձեռքը, ապա ուղարկուեց Սիբիր, որտեղից, սակայն, կարողացաւ փախչել եւ դարձեալ անցնել արեւմտեան Եւրոպա: Յեղափոխական պանսլաւիզմը նա, այնուամենայնիւ, ձեռքից չտուեց եւ նորից նրան իր ծրագրային յղացումների առարկայ դարձրեց 1850ական թուականների վերջից, այսինքն այն ժամանակներից, երբ նա ծանօթանում էր ու մտերմանում Միքայէլ Նալբանդեանի հետ:

1862 թուականի սկզբին արդէն պատրաստ էր նրա նոր, ընդարձակ ծրագիրը, որ՝ եթէ իրագործուէր՝ մեծամեծ տակնուվրայութիւններ պիտի մտցնէր Եւրոպայի մէջ, եւ Արեւելքում պիտի իսպառ կործանուէին Ռուսաստանը, Աւստրիան եւ Թիւրքիան, որպէսզի այդ պետութիւնների սլաւոնական ազգերը ազատուէին, ստանային ինքնավարութիւն եւ կազմէին առանձին սլաւոնական դաշնակցութիւններ (ֆեդերացիա): Բայց որովհետեւ այդ չափազանց խոշոր ապստամբական շարժումը չէր կարող յաջողութեամբ պսակուել լոկ սլաւոնական ազգութիւնների ապստամբական միջոցներով, ուստի անհրաժեշտ էր համարում եւ միւս ազգութիւնների մասնակցութիւնը, ամենից առաջ՝ Իտալիայի, գուցէ նրա հետ եւ Ֆրանսիայի, Մաճառների եւ Ռումինների:

Ոչ Բակունինը, ոչ էլ նրա գործակիցները (Հերցեն, Օգարեւ) չունէին, ի հարկէ, զօրք, գեներալներ, ապայակոյտ: Այս ահագին շարժումները ծնւում եւ թղթի վրայ դրոշմւում էին՝ Լոնդոնի սրանց փոքրիկ առանձնասենեակում, իսկ թէ ո՞վ պիտի կատարէր այդ բոլորը, ծրագրողներին, այս հարցի մէջ, օրօրում էին զանազան երազական հնարաւորութիւններ: Ժամանակի ժողովրդական հերոսը գեներալ Գարիբալդին էր, որ ահագին դեր էր կատարել Իտալիայի ազատութեան մէջ, եւ համարւում էր առ հասարակ բոլոր ազգերի ազատութեան պաշտպան եւ հովանաւոր: Ահա սրան էլ Լոնդոնի ռուս վտարանդիները դարձնում էին իրենց ծրագրի իրականացնողը: Իրանց բաժին նրանք վերցնում էին բունթարութիւնը, ժողովուրդներ ապստամբեցնել, մնացած պատերազմական պատրաստութիւններն ու գործողութիւնները յանձնում էին Գարիբալդիին:

1862 թ. մայիսին, Բակունինը Լոնդոնից ուղղում էր գեներալ Գարիբալդիին մի ընդարձակ նամակ, որի մէջ լրջօրէն եւ մանրամասնօրէն արծարծում էր իր ծրագիրը [1]: Նրա մէջ մենք գտնում ենք մեզ համար չափազանց կարեւոր մի կէտ: Թուելով այն հնարաւոր ազգային ապստամբութիւնները, որոնք պիտի օժանդակէին Իտալիայի ժողովրդական հերոսին, Բակունինը դնում էր նաեւ հայկական եւ յունական ապստամբութիւններ: Միաժամանակ նա գրում էր Ռուսաստան գնացած Միքայէլ Նալբանդեանին — ամէն ջանք

1) "Былое" 1906, № 10. с. 81-84.

գործ դնել այդ լայնածաւալ ձեռնարկութեան յաջողման համար [1]: Այժմ կարծում ենք ամէն ինչ շատ է պարզ: Նալբանդեանը Բակունինի բունթարութեան գործակալ—ոչ միայն Ռուսաստանի, այլեւ մանաւորապէս հայերի մէջ: — Կազմակերպել ապստամբական շարժում՝ նա սկսել է Կ. Պոլսում դեռ 1860ին, իրեն օգնական ունենալով «Մեղու» շաբաթաթերթի խմբագիր Յարութիւն Սվաճեանին: Վերջին մի հատ նամակը, որ գրած է այլաբանական (վաղօրօք պայմանաւորուած) լեզուով, եւ թարգմանուած ռուսերէնից շատ անվարժ մարդու ձեռքով, միմիայն կցկտուր տեղեկութիւններ է յայտնում, բայց եւ այնպէս՝ պարզ ցոյց է տալիս որ կազմակերպուել էր, գուցէ հէնց այն բարեգործական ընկերութեան հետ, որ յիշեցինք վերեւում, եւ որի անդամների մէջ կար նաեւ ինքը՝ Նալբանդեանը [2], մի գաղտնի յեղափոխական կոմիտէ, որ կապ ունէր Լոնդոնի ռուս վտարանդիական կենտրոնի հետ, եւ հարկաւոր դէպքում պիտի միջոցներ ստանար նրանից: Սվաճեանը հաղորդում էր Նալբանդեանին, որ 1862ի մայիսին Տարսոնից (Զէյթունից) եկաւ մի վարդապետ, որին յեղափոխական կոմիտէն տուեց փող եւ զէնք, անշուշտ ապստամբութիւն բարձրացնելու համար:

Բայց Սվաճեանը, ինչպէս պարզ երեւում է, միայն այս մի հատ նամակը չէ եղել գրած Նալբանդեանին, որովհետեւ երկուսի մէջ պայմանաւորուած այլաբանական խօսքերի եւ դարձուածքների բառարանի մէջ մենք գտնում ենք եւ ուրիշ մտքեր, որոնք անշուշտ նոյն յեղափոխական ծրագրից են ելնում, ինչպէս օրինակ՝ զանազան ցուցմունքներ Կիլիկիայում յարուցանելիք շարժումների մասին, դիմում Անգլիային՝ որպէս զի նա զօրք իջեցնի Կիլիկիայում, անորոշ արտայայտութիւններ, որոնք յամենայն դէպս վկայում են կարեւոր մի կէտի մասին. շարժումը միմիայն Զէյթունի մէջ չպիտի ամփոփուէր, այլ պիտի տարածուէր եւ Արեւելեան ուղղութեամբ: Այսպէս յիշատակւում է՝ որ Տրապիզոնում էլ հարկաւոր է կապեր հաստատել: Հայերի վրայ պարտք է դրւում կապ հաստատել նաեւ կովկասեան լեռնաբնակների հետ, որոնց քաջարի ապստամբական շարժումը Ռուսաստանի դէմ՝ դեռ չէր մարել Սեւ ծովի առեզերեայ լեռնաշխարհում:

Այսպէս ուրեմն ռուսական նարոդնիկեան յեղափոխութիւնն էր, որ հայ ինտելիգենցիայի միջոցով սկիզբ դրեց թիւրքահայ յեղափոխութեան: Բայց սա լոկ սկզբնաւորողի, լոկ առաջին քայլն առնողի սահմանափակ նշանակութիւնը չունեցաւ հայ ժողովրդի պատմութեան մէջ: Մենք կը տեսնենք որ քառորդ դար անցնելուց յետոյ, 1887ից սկսած, նա աւելի մեծ թափով վերարծարծում է իր այդ դերը եւ 30 տարուայ անընդհատ շարունակութեամբ՝ բակունինեան յախուռն ապստամբականութիւնը փաթաթած էր պահում հայ ժողովրդի շլինքին:

1) Անդ:
2) «Յայտարարութիւն Բարեգործական Ընկերութեան Հայոց», Կ.Պոլիս 1861. եր. 43:

Այստեղ քանի որ ակիզբն է, առաջին քայլն է, ստիպողական անհրաժեշտութիւն է առաջ գալիս յայտնելու թէ ի՛նչ քննադատական վերաբերմունք էր յայտնաբերում հայ ինտելիգենցիան դէպի նարոդնիկական իդէալի առանցքը կազմող Բակունինեան յաւիտենական ապստամբութիւնը, ինչ էր յապաւում նրանից կամ ինչ էր աւելացնում նրա վրայ: Եւ ուրիշ պատասխան այս հարցին մենք տարաբախտաբար գտնել չենք կարող, բացի նրանից՝ որ հայ ինտելիգենցիան ոչինչ ինքնուրոյն, ոչ մի ուժեղ քննադատական վերաբերմունք երբեք չկարողացաւ մտցնել իր նարոդնիկական գործունէութեան մէջ, թերեւս փանատիկ ընդօրինակող մնաց մինչեւ կործանման վերջը:

Ահա մեր առջեւ է նրա նախահայրը: Վերցնենք Բակունինի հէնց այս համասլաւոնական ապստամբութեան միտքը, որ պիտի կործանէր երեք մեծ եւ ուժեղ կայսրութիւններ: Ի՞նչ է նա, եթէ ոչ մի ամբողջական ցնորք, մի վիպական երազ. ի զուր չէ որ Բակունինի կենսագրողներից մէկը, Վ. Պոլոնսկին, անուանում է նրան ռոմանտիկ՝ իր կեանքի մեծագոյն մասում: Ամբողջ այդ ծրագրից ոչինչ դուրս չեկաւ, եւ չէր էլ կարող գալ, այնքան օդային էր նա ու թեթեւամիտ: Վիճելիք չունինք, գուցէ այդ պրոպագանդի ազդեցութեան տակ է, որ 1861 թ. բռնկեցին սլաւոնական մասնակի ապստամբութիւններ՝ Չեռնոգորիա, Բոսնիա, Հերցեգովինա: Բայց կարո՞ղ էին նրանք օրինակ դառնալ մի հայ գաւառի, հէնց նոյն իսկ Զէյթունի համար: Եթէ սլաւոնները ապստամբում էին, նրանք կարող էին յոյս ունենալ մասնաւոր յաջողութեան վրայ, քանի որ կազմում էին հոծ, միապաղաղ ազգաբնակութիւն եւ հակառակորդ մահմեդական տարրը աննշան փոքրամասնութեան դիրքն ունէր:

Իսկ ի՞նչ միտք ունէր ապստամբեցնել մի փոքրիկ, թէկուզ քաջարի լեռնային հայաբնակ գաւառակ, որ շրջապատուած էր թիւրք, թիւրքմէն, չէրքէզ, քիւրդ խառնամուռ ցեղերի մի ամբողջ ժողովրդով: Այս հարցի մասին չէր մտածում հայ ինտելիգենտ յեղափոխական մտայնութիւնը, քանի որ նրա ուղեղը գտնւում էր Բակունինի բունթարական դաւանանքի ճնշման տակ: Այդ դաւանանքը կարող էր որոշ չափով յարմարուել ռուսական իրականութեան: Եթէ նրան յաջողուէր էլ ոտքի կանգնեցնել ամբողջ ռուս գիւղացիութիւնը, զինուած սոսկ կացիններով, ռուս կառավարութեան դէմ, ամենաշատը այդպիսի մի շարժում կարող էր վերջանալ կառավարութեան ուժեղ ու խոր ճնշումով, որ յամենայն դէպս չէր նշանակում այդ բազմամիլիոն ժողովրդի բնաջնջում եւ անհետացում:

Իսկ հայե՞րը Թիւրքիայում: Նրանց ապստամբութիւնը պիտի նշանակէր պատերազմ օսմանեան մեծ ու շատ ուժեղ պետութեան դէմ. եւ որովհետեւ հայերը տնտեսապէս չափազանց թոյլ էին՝ կազմուած լինելով գրեթէ ճորտ գիւղացիութիւնից, բայց մանաւանդ այն հանգամանքով, որ ցրուած էին փոք-

րիկ մասերով Վանի ծովակից մինչեւ Միջերկրական ծովը, գրեթէ ոչ մի տեղ հոծ մեծամասնութիւն չէին կազմում, որպէսզի փոքր ի շատէ ազդեցիկ ուժ կազմեն, ուստի, նրանց ապստամբութիւնը մի օտար ցեղային եւ կրօնական նախապաշարումներով թշնամի կառավարութեան դէմ պիտի բերէր նրանց մահ եւ ոչնչացում:

Այս բոլոր ռէալ, իրական փաստերը աներեւութանում էին Նալբանդեանի երիտասարդ, վառվռուն յափշտակութեան մէջ, թովուած լինելով իր մտերիմ Բակունինի հուժկու ապստամբական ոգով: Որքան ոգեւորիչ ու թովիչ պիտի լինէին երիտասարդ բնաւորութիւնների համար Բակունինեան այն խօսքերը, թէ «առանց քանդելու, առանց կրքի՝ անհնարին եւ անկարելի է յեղափոխական գործը, որովհետեւ չի կարող լինել յեղափոխութիւն առանց լայն ու կրքոտ քանդման. — քանդում փրկարար եւ արգասաւոր, որովհետեւ հէնց նրանից է եւ միայն նրա միջոցով է որ սկզբնաւորւում են եւ ծագում նոր աշխարհներ» (1):

Այսպիսի անզուսպ քանդողական յեղափոխութեան ենթարկուած Նալբանդեանին Հերցենն իր նամակներից մէկում բնորոշում էր այսպիսի խօսքերով. «Ոսկի սէր, անձնուէր, անշահասէր, անձնուէր միամտօրէն՝ մինչեւ սուրբ լինելու աստիճան» (2):

Այս խօսքերը հասկանալի են դարձնում ամէն ինչ, մանաւանդ «սուրբ լինելու չափ միամտութիւնը»: Այսպէս էր թիւրքահայ յեղափոխութեան նախահայրը, այսպէս եղան եւ նրա որդիներն ու թոռները, — անսահման միամիտ, անսահման հաւատացող՝ հաւատացին Նալբանդեանն ու իր համախոհները Բակունինի օդային ամրոցներին թէ Գարիբալդին եւ ազգերը ոտքի կը կանգնեն իրենց ոտքի շղթաները փշրելու համար: Հաւատացին թէ կարելի է խնդրել, որ Անգլիան զօրքեր իջեցնի Կիլիկիայի ափերին, անշուշտ հայկական ազատութիւնը պաշտպանելու համար: Հաւատացին ու գնացին ... Եւ այնուհետեւ քանի քանի հէքեաթներ ու երազներ ... Եւ հաւատացին ամենքն ու գնացին հայ գիւղացիութեան դիակները լեռնացնելու եւ մարմին տալու այդ մշուշային տեսիլներին ...

Ապստամբութիւնը տեղի ունեցաւ: Յուլիս – օգոստոս ամիսներին, լեռնոտ գաւառակը դղրդում էր ահեղ դէպքերից: Թիւրք ազգաբնակութիւնը կատաղած էր անհնարին չափով: Երկու հայ գիւղ սրի քաշեցին, բազմաթիւ խժդժութիւններ կատարեցին: Բայց ինքը՝ Զէյթունի գիւղաքաղաքը քաջարի դիմադրութիւն ցոյց տուեց Ազիզ փաշայի, որի բանակը, բաղկացած անկանոն, բաշիբոզուկ խմբերից, անհամար քանակութեամբ պաշարեց փոքրիկ քաղաքը, բայց սաստիկ ջարդ կերաւ ու յետ շպրտուեց՝ թողնելով զէյթունցիների ձեռքը մի թնդանօթ: Այսքանով բանը չէր վերջանում: Շարժումը սպառնում

1) Стекловъ. т. II, с. 251.
2) «Былое», № 9, с. 209.

էր փոխել կառաղի կրօնական պատերազմի։ Եւ զէյթունցիները, նկատելով այս, տեսնելով որ իրենք, այնուամենայնիւ, պաշարուած են ամէն կողմից եւ մնացել են անօգնական, անձնատուր եղան կառավարութեան, եւ ապստամբութիւնը վերջացաւ։

Միքայէլ Նալբանդեանին վիճակուած չէր տեսնել իր սկսած գործի ծաւալումն ու ընդունած չափերը։ 1862 թ. յուլիսի 14ին, երբ Զէյթունում նոր էր սկսւում շարժումը, նա ձերբակալուեց Նոր Նախիջեւանում եւ ուղղակի ուղարկուեց Պետերբուրգ ու փակուեց Պետրոպավլովսկայա բերդում։ Այսպիսով կտրըւում է կապը նրա եւ, մի կողմից, Լոնդոնի վտարանդիների եւ, միւս կողմից, Կ. Պոլսի յեղափոխական կազմակերպութեան միջեւ։ Ինքը՝ Նալբանդեանը մահանում է իբրեւ հասարակական եւ քաղաքական գործիչ։

Բայց Զէյթունի ապստամբութիւնը մնում է իբրեւ փաստ եւ ահագին դեր է սկսում կատարել։ Ամենից առաջ զէյթունցիների տարած յաղթութիւնը մեծ ոգեւորութիւն է տարածում գաղութահայ ինտելիգենցիայի ազգասէր շրջաններում՝ աւելացնելով եւ բարձրացնելով առանց այն էլ հայրենասիրական գրականութեան մէջ անչափ ուռեցրած ազգային ինքնագոհ եւ յոխորտալից սնապարծութիւնը։ Զէյթունը դառնում է Հայաստանի ազատութեան առաջին կռուանը։ Բանաստեղծ Պեշիկթաշլեանը երգում է պատերազմ Թիւրքերի դէմ [1] եւ նախագուշակում է, որ միշտ Թիւրքական գլուխներն են որ պիտի ջարդւին։ Բակունինեան բունտարութիւնը, ըստ երեւոյթին, արտաքին հանգամանքների մէջ գտնում էր փաստաւոր ապացոյց։ Զէյթունը փոխում էր հայի դարաւոր հոգեբանութիւնը. — այն հայը, որ միշտ իմացել էր վախենալ Թիւրքի զօրութիւնից եւ հաշւի առնել իր գոյութիւնը նրա տիրապետութեան տակ, այժմ յախուռն ոգեւորութիւնից մղւում էր դէպի այն մտայնութիւնը, թէ Թիւրքի դէմ ինքը կարող է միայնակ կռուել եւ նոյն իսկ ջարդել նրան։ Նշանաւոր տեղ էր բռնում Զէյթունն այնուհետեւ Թիւրքահայ յեղափոխական շարժման մէջ։ Նա դառնում էր յեղափոխական կազմակերպութիւններից առանձնապէս սիրուած ու փայփայուած մի անկիւն, ուր նրանք յաճախ բռնկեցնում էին, աւելի կամ պակաս յաջողութեամբ, ապստամբութիւններ, ոգեւորւում էին նրանցով, թէեւ նրանք միշտ մնում էին տեղային անցքի սահմանափակ եւ նեղ նշանակութեան մէջ, եւ երբեք, ի հարկէ, չէին կարող ազդել մնացած հայութեան ճակատագրի վրայ։

Պակաս նշանաւոր չեղաւ Զէյթունի 1862 թ. ապստամբութիւնը եւ այն խաբուսիկ, բայց շողշողուն, անիրաւաբար բարձր բարոյական հեղինակութիւն ստացած հասկացողութեան տեսակէտից, որի անունն էր «միջազգային քաղաքականութիւն»։ Նա էր, որ, առաջին անգամ, հանում էր Եւրոպայի հանրային կարծիքի առջեւ մի հայ ժողովրդի գոյութիւնը Թիւրքիայում և նրա

1) «Փարիզ», լրագիր, 1863, № 87

ըմբոստացումը Թիւրքական ռեժիմի դէմ։ Զէյթունցիների շարժումը մասնաւորապէս կարեւոր եւ ուշագրաւ էր դառնում մանաւանդ այն պատճառով, որ Զէյթունի կողքին նոր էին դադար առնում Սիրիայի արիւնահեղ դէպքերը, որոնք քրիստոնեաների մեծամեծ զանգուածային կոտորածներով ցնցել էին Եւրոպան եւ առաջացրել էին Ֆրանսայի զինուած միջամտութիւնը, որի հետեւանքով Լիբանանը ստացաւ ինքնավարութիւն։ Նման մի փորձ կարելի էր համարւում անել և Զէյթունի նկատմամբ։ Դրա համար բաւական եռանդուն պրոպագանդ էր սկսւում Ֆրանսական մամուլի մէջ, Փարիզում։ Տրւում էին կոտորածների մանրամասն նկարագրութիւնները, հանրային հանգանակութիւն սկսեց յօգուտ հայ զոհերի, երկու անուանի Ֆրանսացի գիտնականներ, երկու՝ ինչպէս այն ժամանակից սկսեցին յորջորջել՝ «հայասէրներ»՝ Սէն Մարկ Ժիրարդէն եւ Վիկտոր Լանգլուա, ընդարձակ յօդուածներ գրեցին, յանձնարարեցին հայերին լաւագոյն կողմից, թէ՛ անցեալում, պատմութեան մէջ, եւ թէ ներկայում։ Այսպիսով՝ միջազգային մամուլի հրապարակում աշխատում էին կանգնեցնել մի նոր մասնիկ Արեւելեան Հարցի — Հայոց Հարցը, հասկանալով հայեր անուան տակ՝ լոկ միայն զէյթունցիներին։

Եւ միայն գրական քայլերը չէին, որ արուեցին այս ուղղութեամբ։ Իր հինաւուրց դիրքերում երեւան եկաւ հայ կղերը, իբրեւ հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի ինքնակալ տնօրինողը, որ իր ձեռքում ունէր նրա դիւանագիտական լիազօրութեան մենաշնորհը։ Դիմում է արւում Նապոլէոն կայսրին, Ֆրանսական դիւանագիտութիւնը ոտքի էր հանւում։ Նապոլէոնը յանձնառու էր լինում միջամտութիւն անել յօգուտ զէյթունցիների, եւ գուցէ սրանց էլ տուէր Լիբանանի ինքնավարութեան օրինակով մի փոքրիկ գաւառակային բան, եթէ միայն նրանք, Լիբանանի մարոնիների նման, կաթոլիկ եկեղեցուն պատկանեն, մի բան՝ որ Ֆրանսական արեւելեան քաղաքականութեան հիմնաքարն է կազմում։ Հարց էր բացւում Զէյթունը կաթոլիկ դարձնելու մասին, բայց այստեղ, ինչպէս միշտ հայկական անցեալում, արգելք է լինում հին պատմական Ֆանատիկոսութեան վիշապը, որ՝ չորրորդ դարից հայերին քրիստոնեայ դարձնելուց աւելի լուսաւորչական է դարձրել։ Այդ ժամանակից է որ լուսաւորչական կղերը՝ իր ճորտանման կողոպուտ դարձնելով հայ ժողովուրդը, իր քաղաքականութեան հիմնաքար էր անում լուսաւորչականութիւնը, որին եւ անխնայօրէն զոհ էր բերում դարէ — դար հայութիւնն՝ ահագին զանգուածներով։

Միեւնոյնը կրկնուեց եւ այժմ։ Զէյթունը կռուածաղիկ դարձաւ լուսաւորչական եւ կաթոլիկ կղերի միջեւ։ Յաղթեց լուսաւորչականութիւնը, եւ Նապոլէոնը մոռացաւ Զէյթունը։

Առաջին դիւանագիտական փորձը անյաջող եղաւ։ Բայց այս ոչինչ չէր նշանակում։ Գլխաւորն այն էր, որ հայերը սովորում էին ծեծել եւրոպական դիպլոմատիայի դռները՝ յամառօրէն, բեռնաւորուած մեծամեծ յոյսերով։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

1

Զէյթունը, ինչպէս տեսանք, առաջին անգամ եւրոպական մամուլի եւ դիւանագիտութեան մէջ ձեւակերպում էր մի նոր երեւոյթ օսմանեան Արեւելքում — Հայոց հարց։

Մենք պիտի այժմ տեսնենք թէ ինչ էր այդ նոր դիւանագիտական անւանումը։

Այն բարձր լեռնադաշտը, որ կոչւում էր սովորաբար հայկական բարձրաւանդակ, միշտ, դարերի սկզբից, կապել էր աշխարհագրական դրութեան հետ մի առաջնակարգ ու քաղաքական հարց, այն՝ որ միայն ուժեղ ազդեցութիւնը կարող էր դարձնել իրան, այդ բարձրաւանդակը՝ մի անկախ քաղաքական հայրենիք։

Այս ճակատագրական վճիռը, նկատենք համառօտակի, բղխում է այդ բարձր լեռնադաշտի ֆիզիքական, տնտեսական եւ ռազմագիտական դիրքից։ Նա բարձրացած է մեծ ծովային մշակոյթների — Միջերկրական եւ Սեւ ծովերի եւ Պարսից ծոցի մէջտեղը, հին քաղաքակրթութիւնների կենտրոնում։ Դէպի այս բազմահռչակ ծովափերը միշտ էլ, դեռ խորին նախապատմական դարերի անորոշութիւնից, մեծ ձգողութիւն է եղել աշխարհի բոլոր կողմերից, որ տանում էր իր հետ անթիւ եւ անհամար ժողովուրդներ՝ իրար հանդիպելու, իրար հետ պայքարելու համար։ Հայկական բարձրաւանդակը այդ յաւերժական անդիմադրելի մագնիսային ձգողութեան մեծագոյն, համաշխարհային միակ ընտրելի ուղիների հիւսւածքն է կրում իր վրայ, չնայած իր խիստ լեռնոտ կերպարանքին։ Բացի այն հանգամանքից, որ Հայաստանի լեռնաշղթաները միապաղաղ պատւարներ չեն, այլ ունին իրենց մէջ բազմաթիւ անցքեր, այս միջազգային մեծ ճանապարհը ունի եւ անզուգական յարմարութիւն իբրեւ կայան, որ ծածկւած է անթիւ արօտներով, որոնք շատ հեռուից գրաւում էին թափառական անասնապահ ցեղերը՝ դէպի շարժում, դէպի տեղափոխութիւն՝ արեւելքից արեւմուտք, հիւսիսից հարաւ, եւ հակառակ ուղղութիւններով։

Այսպիսով, հայկական բարձրաւանդակը անդադար ոտնակոխ էր լինում զանազան ազգերից, նախ եւ առաջ իբրեւ միջազգային մեծ ճանապարհի վրայ պատրաստւած առատ ու գեղեցիկ կայան։ Բացի դրանից, նոյն լեռնադաշտը ունի չափազանց կարեւոր ռազմագիտական նշանակութիւն՝ իբրեւ մի բարձրաբերձ բերդ, որ տիրապետում է Հնդկական Ովկիանոսի եւ Միջերկրական ծովի աւազանների վրայ, եւ միանման թանկագին արժէք ունի՝ թէ՛ նրանց վրայ յարձակւելու եւ թէ նրանց պաշտպանելու տեսակէտից։ Այստեղից ահա խոշոր նշանակութիւն. — Հայաստանի լեռնաշխարհը՝ միշտապէս բանուկ համաշխարհային ճանապարհ լինելու հետ միասին՝ մշտական մրցադաշտ դարձած է պատերազմողների – արշաւողների եւ թէ պաշտպանողների համար։

Եւ հասկանալի է, որ, արդարեւ, չափազանց ծանր խնդիր է պահել այս հրաբխային նմանութիւն բերող մարդկային եռուզեռի մէջ՝ իբրեւ անկախ եւ ապահով, լաւ պաշտպանւած մի կազմակերպութիւն։ Այսպէս լինելու պայմանն ինքնին հասկանալի է — լինել ուժեղ քաղաքական կազմակերպութիւն։

Արդ, ինքը՝ երկիրը շատ հնարաւորութիւններ է տալիս, որ իր մէջ գոյանայ եւ զարգանայ մի այդպիսի կազմակերպութիւն։

Այդ յարմարութիւնները, առհասարակ, սակաւաւոր են. մի ժողովուրդ կարող է քաղաքականապէս ուժեղ լինել այն դէպքում, երբ նա միացած է, կենտրոնացած մի ղեկավարող իշխանութեան շուրջը, եւ շահերն ու պահանջները կարող են հարկաւոր ժամանակ միանալ։ Հայկական բարձրաւանդակն այդ կողմից աննպաստ միջավայր է. կտրատւած լինելով լեռներով մանր, իրար հետ դժւար կապ ունեցող գաւառների, նա ստեղծում է ընդհանուր ազգաբնակչական հոգեբանութիւն — գաւառական անջատում, տեղական շահեր ու պահանջներ, յաճախ իրար հակադիր՝ մինչեւ թշնամութիւն, մի խօսքով՝ կենտրոնախոյս ձգտումներ։

Հայաստանի աշխարհագրութեան այս ֆիզիքական առանձնայատկութիւնը սաստիկ ուժեղացնում են այդտեղից իսկ բխող տնտեսական առանձնայատկութիւնները։ Մենք յիշեցինք որ նա չափազանց հարուստ է արօտներով, հետեւապէս կարծես ամբողջապէս բնութիւնից յատկացւած է խաշնարած կենցաղին։ Բայց այս տեսարանը համատարած չէ։ Երկիրն ունի խոր ու շատ արգաւանդ հովիտներ, ուր ամէն յարմարութիւն կայ, որ տնտեսութիւնը նախնական ձեւերից բարձրանալով՝ ընդգրկի նստակեաց երկրագործական մշակոյթի վերին աստիճանները։

Ահա այս տնտեսական երկու խոշորագոյն գործօնների հակադրութիւնն էլ թուլացնում էր ամբակուռ պետականութեան զգացմունքը, ստեղծելով իրարից տարբեր մշակութային տիպեր, տարբեր շահերով եւ ձգտումներով։ Այսպիսով երկու ախոյեաններ, եւ նրանց մէջ՝ շարունակական մրցակցութիւն։

Այդ մրցութեան մէջ երբ գերակշիռ էր հանդիսանում հովիտների նստակեաց տնտեսութիւնը, առաջանում էր՝ նախ եւ առաջ, սեփական պաշտպանութեան համար, ուժեղ պետականութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը, որ դառնում էր եւ բարձրաւանդակի հետ կապուած քաղաքական հարցի լուծումը: Բայց հէնց որ տեղի էր ունենում հակառակ երեւոյթը, այսինքն հէնց որ գերակշռութիւնն անցնում էր հովուական արօտայնութեան, հովտային մշակոյթը ոչնչանում եւ առաջ էր գալիս պետութեան թուլացումն ու անկումը: Վերանում էր բարձրաւանդակի առաջադրած քաղաքական հարցը, եւ այնուհետեւ, եթէ մնում էր որ եւ է հարց լեռնադաշտի ազգաբնակութեան համար, այդ՝ պարզապէս գոյութեան հարցն էր, զուտ տնտեսական:

Երկու խոշոր օրինակներով՝ հայկական բարձրաւանդակը՝ տասնեակ դարերի տարածութեան վրայ, ցուցադրել է թէ ինչը՝ այս, որպէս օրէնք է սահմանել իր վրայ ժողովուրդների համար: Եւ այդ երկու օրինակներն են՝ այստեղ իրար յաջորդած ազգերը — խալդերը եւ հայերը, որոնց ճակատագրի մէջ զարմանալի նմանութիւններ կան, բոլորն էլ արդիւնք, ի հարկէ, միջավայրի: Խալդական, կամ աւելի հանրածանօթ անուն գործածելով, ուրարտական պատմութիւնը սկսւում է Հայաստանի լեռները խիտ ցանցով ծածկող մանր տոհմատիրական կամ ցեղային կազմակերպութիւններով, որոնք առաւելապէս արօտային տնտեսութեան ժողովուրդներ են, հովիւներ, որոնց մէջ սակայն մուտք է գործել եւ նստակեաց երկրագործութիւնը: Իրանց նախնական թոյլ կազմակերպութեամբ՝ այդ ժողովուրդները անդադար որս են դառնում Միջագետքի աշխարհակալ գիշատիչների, ասորեստանցիների համար, որոնք թալան եւ աւար են դարձնում այդ լեռնցիներին: Սրանք թէեւ ինքնապաշտպանութեան բնազդով յաճախ եւ կազմում են տոհմերի եւ ցեղերի միութիւն, բայց միշտ էլ ջարդ ու փշուր են լինում տափարակից բարձրացած ասորեստանցիների ձեռքին:

Բայց այս դարաւոր իրականութիւնը փոխւում է, երբ Վանի եւ Ուրմիայի ծովակների ափերին, Արածանի եւ Արաքսի հովիտներում զարգանում է հովտային բարձր տնտեսութիւն, տեխնիկայի հետ: Երկրի խոշոր կազմակերպութիւններից մէկը, ուրարտականը, յենւելով այդ մշակոյթի վրայ, հաւաքում է բոլոր խալդական տոհմերն ու ցեղերը մի ուժեղ պետական միութեան մէջ, եւ հայկական լեռնադաշտը տեսնում է իր վրայ մի այնպիսի կենտրոնացած միապաղաղ պետականութիւն, որ ոչ միայն կարող էր անվախ ապրել իր բարձր երկրում, այլ եւ նուաճողական ընդարձակ քաղաքականութիւն էր արծարծում հայկական արշաւանքներով, մինչեւ իսկ ընկճում էր ահարկու Ասորեստանը:

Այս բարձրացման, սակայն, հետեւում է եւ անկում: Կիմմերացիների, Շակերի եւ այլ վաչկատուն ցեղերի արշաւանքները բարձրացնում են արօտային տնտեսութիւնը, հովտայինը խոնարհւում, խորտակւում էր, հողե-

ւարքի մէջ: Ուրարտական հարցը ամենասուր ընթացք է ստանում: Ազգաբնակութիւնը պիտի ցոյց տայ՝ կարո՞ղ է նա նորից վերականգնել իր պետական ուժեղութիւնը, այսինքն նորից լուծել իր լեռնադաշտի դրած հովտային անփոփոխ ու ահեղ քաղաքական հարցը: Եւ ազգաբնակութիւնը ցոյց տուեց, որ իր համար այլ եւս անհնարին է իր սեփական միջոցներով գլուխ բերել մի այդպիսի բան: Զանազան հանգամանքների սեղմման տակ, նա կորցրել էր իր կայունութիւնը եւ սկսում էր ցրուել հարեւան երկիրներ:

Այս մի գեղեցիկ առիթ է Արեւմուտքից դանդաղ առաջացող, իր հօտերի համար արօտներ որոնող, հետեւաբար եւ անդիմադրելի ձգողական ուժով դէպի խալդային կանաչ սարերը մղւող նոր ժողովրդի — հայերի համար, որ նա երկար մրցութիւններով հաստատուի լեռնադաշտի վրայ, բնիկներին կամ դուրս վտարելով, կամ ձուլելով իրեն հետ:

Հիմա էլ հերթը ճիշտ նոյն եղանակով անցնում էր նորեկ ժողովրդին: Հայոց պատմութիւնն էլ սկսւում է անասնապահական – տոհմատիրական կենցաղի շրջանում, մինչեւ որ Արաքսի եւ Արածանիի հովիտներում՝ ինչպէս եւ Վանի ծովակի ափին, այդ նորեկ ժողովուրդն էլ՝ սերունդից սերունդ զարգանալով, անցնում է աւելի բարձր մշակոյթի եւ ստեղծել է իր պետութիւնը, միացնելով բոլոր տոհմերն ու ցեղերը, թէ՛ սեփական, թէ օտար, եւ այնքան ուժեղանում՝ որ կարողանում է իր լեռնաշխարհի դրած հարցը լուծել իր օգտին: Ուրարտական հարցը, գերազանցօրէն քաղաքական, անհետացել էր. այժմ նոյն հարցը, որ ուրարտական ազգագրական գոյնով էր ներկայացրել Հայկական բարձրաւանդակի աշխարհագրութիւնը, ստանում է այն ազգագրական զանգուածի — հայի անունը, որ նստել է ուրարտացիների տեղը:

Հայ պետականութեան ուժը, ճիշտ է, այնքան մեծ չէր եւ այնքան երկարատեւ, ինչպէս ուրարտականը: Բայց հայ ժողովրդի համար ստեղծւում էր նպաստաւոր դիրք դէթ կիսանկախ լինելու, շնորհիւ այն հանգամանքի, որ հայկական բարձրաւանդակը դառնում է, երկար ժամանակ, պարսիկ – հռոմէական մրցակցութեան թատերաբեմ: Արտաքին ուժերի փոխարէն, երկիրն ստանում է ներքին տնտեսական ուժի կռւաններ, որովհետեւ, հռոմէական տնտեսական քաղաքականութեան հովանու տակ, Հայաստանի կարեւոր տնտեսական կենտրոններ կազմող հովիտներում, ծաղկում եւ ընդարձակւում է քաղաքային տնտեսութիւնը:

Բայց գալիս է չորրորդ դարը. երկիրը, արօտային տնտեսութեան գերակշռութեան հետեւանքով, ենթարկւում է տնտեսական յեղաշրջման, տեղի է ունենում աւատական յեղափոխութիւն, կործանւում է քաղաքական տնտեսութիւնը, ոչնչանում է երկրի քաղաքական միութիւնը, քանի որ նա բաժանւում է Պարսկաստանի եւ Բիւզանդիայի միջեւ: Հայաստանն այսպիսով վերածւում է մի գիւղական աշխարհի, ուր տիրապետողը աւատական աղքատ

եւ սահմանափակ բնական տնտեսութիւնն էր, երկարատեւ հոգեւարքի մատնելով հովտային տնտեսութիւնը:

Այդ ժամանակից էլ սկսւում է նոյն պատմական պրոցեսը, որ մենք արդէն տեսանք ուրարտական շրջանում: Սկսւում է երկրի դանդաղ եւ անընդհատ մահացումը: Ազգաբնակութիւնը շարունակ ցրւում է, հեռանում դանազան կողմեր, հետզհետէ մեծացնելով գաղութային հայութիւնը: Հայոց հարցն իր քաղաքական առումով հետզհետէ ջարդւում, ոչնչանում է: Վերջին վճռական գործը կատարում է արօտային տնտեսութեան անչափ ուժեղացումը միջին – ասիական վաչկատուն – անասնապահ ցեղերի ձեռքով, 11 – 13րդ դարերում, երբ հովտային մշակոյթի աւերակները շերտ շերտ սկսում են դարսւել իրար վրայ:

Այնուհետեւ երկրի դատարկումը հայ տարրից ընդունում է կատաստրոֆիկ բնաւորութիւն: Թողնենք նոյն իսկ ահագին գաղթականութիւնները, կոտորածները, որոնք յաճախ այցելել են այս երկիրը: Հայ ազգաբնակութեան սպառումը, փոքրացումը՝ ինչպէս ճակատագրական մի անխուսափելիութիւն, տեղի ունէր շարունակ, առանց համատարած ցնցումների էլ, երկրի մէջ հաստատուած կարգերի բնական հետեւանքով: Վենետիկում, 1806 թւականին, տպագրւել է Ն. Ղ. ԻՆՃԻՃԵԱՆԻ «Նոր Հայաստան» անունով չափազանց հետաքրքրական աշխարհագրութիւնը, որի մէջ ընթերցողը կը գտնէ շատ պերճախօս փաստեր, թէ ինչպէս էին ամայանում Թիւրքաց Հայաստանի շատ կողմերը:

Հետեւանքն այդ դարաւոր շարժումների, քամբախտ Հայութիւնը նոր մասնիկներով սփուած ամբողջ Արեւմտեան Ասիայում, Վանի ծովակից մինչեւ Միջերկրական ծովը: Քաղաքական առումով, Հայոց հարցը, որ կը նշանակէր հայ ժողովրդի սեփական, առանձին միջոցներով վերականգնել այն, ինչ որ նա ունէր մի ժամանակ եւ իր լեռնաշխարհի օրէնքն էր կազմում, գոյութիւն չունէր վաղուց: Ինքը Հայ ժողովուրդը շատ լաւ հասկանում էր այդ: Դեռ 11րդ դարից նա կազմել էր այն հասկացողութիւնը՝ թէ Հայաստանը միայն ազատել կարող են փռանկները, այսինքն՝ Եւրոպացիները, ծովի աւազի համրանքով զօրքեր թափելով այստեղ: Նոյն գիտակցութիւնը ցոյց էր տալիս նաեւ Թիւրքահայ գաւառացի հասարակ ժողովուրդը՝ 19–րդ դարի առաջին կիսում տեղի ունեցած ռուս – թրքական երկու պատերազմների ժամանակ: Իրենց ազատութիւնը նրանք հասկանում էին այն մտքով, որ ռուսները գան նւաճեն իրենց երկիրը և տիրեն իրենց վրայ, իսկ եթէ դա անկարելի է, իրանք գաղթեն ռուսական զօրքերի ետեւից, բնակւեն Անդրկովկասում:

Պէտք կա՞յ ասել, որ չափազանց իրական փաստերը, ուժերի փոխյարաբերութեան երկաթի օրէնքը ա՛յս էին թելադրում: Դեռ 19–րդ դարի սկզբում, ԻՆՃԻՃԵԱՆԸ գրում էր թէ քրդերի թիւը Հայաստանում նոյնքան է, որքան

Հայերի թիւը [1]: Յետոյ նոյն դարի վերջին քառորդի եւ 20–րդ դարի սկզբում, մի քանի անգամ փորձեր են եղել կազմելու հայերի եւ նրանց հետ խառն ապրող միւս ազգերի մանրամասն վիճակագրութիւնը, բայց այս փորձերի մէջ հակասութիւններ են առաջ եկել շնորհիւ այն հանգամանքի՝ որ երկու հակառակորդ կողմերից են բղխել այդ տեղեկութիւնները — Թիւրքաց կառավարութիւնից, որ հաշիւ ունէր պակասեցնել հայերի թիւը, եւ Հայոց Պատրիարքարանից, որ հակառակ հաշւով էր ղեկավարւում: Այնուամենայնիւ, եթէ մենք վերցնենք նոյն իսկ Պատրիարքարանի հաշւով՝ հայերը 1912–ին, ամբողջ Ասիական Թիւրքիայում, կազմում էին ազգաբնակութեան 38 %–ը [2]:

Ահա ինչ էին ասում սառը թւանշանները: Եւ նրանք հաստատում էին դարաւոր դառն ճշմարտութիւնը — որ քաղաքական առումով Հայոց հարց, լուծելի հայ ժողովրդի սեփական ուժով, չկար եւ չէր կարող լինել: Հաշիւը պարզ է ե՛ւ երախայի համար — 38–ը եթէ գնայ 62–ի դէմ, միշտ կը ջարդւի, մանաւանդ երբ 62ի կողմն է եւ կառավարութիւնն իր զօրքերով ու զօրութեամբ:

2:

Բայց մենք արդէն տեսանք ուրարտական շրջանի մէջ, որ, երբ Հայկական բարձրաւանդակի ժողովուրդն անընդունակ էր դառնում իրականացնելու իր երկրի տնտեսական եւ ռազմագիտական դիրքից մշակւած անողոք եւ ահեղ քաղաքական պահանջը, նրա հարցը, այն ժամանակ այդ ժողովուրդը՝ անհետանալով քաղաքականօրէն, դարձնում էր քաղաքական գոյութեան հարցն իր ֆիզիքական գոյութեան, ասել է՝ իր տնտեսական կացութեան հարց:

Թիւրքաց Հայաստանում մնացել էր՝ չնայած դարերի աւերումներին, հայ ազգաբնակութիւն, որի ամենահոծ բազմութիւնը, գրեթէ 90%ը, բաղկացած էր աշխատաւոր գիւղացիութիւնից: Նա ունէր, ճիշտ որ, իր հարցը: Ինչի՞ մէջ էր կայանում դա:

Եթէ նայենք նրա բովանդակութեան, կը տեսնենք մի անյատակ խորութիւն, լցւած արտասուքներով, արիւնով, տանջանքներով, եւ այս բոլոր սարսափների մէջ՝ անասունի դրութեան հասցրած մարդուն: Բայց, այնուամենայնիւ, չի կարելի ասել թէ այդ հարցը բացառապէս հայկական էր, շահագործւող եւ տանջւող գիւղացու հարցն էր, մի խօսքով՝ ճորտ գիւղացու հարցը: Ճորտութեան դէմքը երբեք եւ ոչ մի տեղ կարմիր չի եղել:

Յիշենք միայն եւ ոչ պաշտօնապէս ճորտ ֆրանսիական գիւղացու դրութիւնը կենտրոնական եւ արեւելեան Ֆրանսիայում, Մեծ Յեղափոխութիւնից առաջ: Յիշենք իսկական ճորտութեան սարսափները Ռուսաստանում, ռուսաց տաղանդաւոր նկարիչների վրձինով ներկայացւած ճորտավաճառման շուկաները: Ամէն տեղ, ուր անսահման կատաղութեամբ կեղեքւում էր հողի մր-

1) Ինճիճեան. — «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», Վենետիկ, 1806, երես 14:

2) Marcel Léart. — «La Question Arménienne», 1913, page 61.

չակը, ժողովուրդի հեծեծանքը երկինք էր հասնում: Այսպէս էր եւ Թիւրքական Հայաստանում:

Մի շատ սխալ կարծիք կայ տարածուած, թէ Թիւրքիայում, որպէս մահմեդական երկրում, ճորտատիրութիւնը գոյութիւն չի ունեցել: Իրաւ է թէ մահմեդականների կրօնական օրէնսդրութեան (շերիաթ) մէջ գրուած են այնպիսի սկզբունքներ, որոնք ժխտում են ճորտատիրական կարգը, բայց այս բոլորովին արգելք չի եղել, որ Թիւրքիա, ժառանգելով Բիւզանդիայից նրա քաղաքական եւ տնտեսական հիմնարկութիւնները, իւրացնէր եւ ճորտատիրութիւնը՝ իբրեւ մէկն այդ հիմնարկներից [1]: Այս ճորտատիրական կարգն անհրաժեշտաբար բղխում էր այն զինուորական, աւատական սերմից (թեմարական սիստեմ), որ ընդգրկում էր Օսմանեան պետականութիւնը [2]: Ճորտ էր, այսպիսով, Թուրքիայի գիւղացիութիւնը, ինչպէս ճորտ էր եղել Բիւզանդիայի գիւղացիութիւնը:

Հայ գիւղացիութիւնը, բացառապէս, քիւրդ աղնուականութեան ճորտն էր: Եւ այս՝ առանց պատճառի չէր: Իր ճորտութիւնը, հայ գիւղացին՝ Թիւրքիայից չէր ստացել: Այդ մի « ազգային ժառանգութիւն էր, մնացած հին հայկական աւատականութիւնից, նախարարական կալուածատէր դասակարգից: Այդ նախարարները մեծագոյն մասամբ, առաւելապէս արօտային շրջաններում ապրողները, քիւրդ ցեղապետների նման բաներ էին, եւ այս ցեղապետներն ամենայն հեշտութեամբ բռնեցին նրանց տեղը, երբ նրանք՝ իբրեւ դասակարգ՝ անհետացան, շատերը քրդացան: Ճորտային դրութիւնը չփոխեց հայ գիւղացու համար. տարբերութիւնն այն էր միայն, որ հայ տէրերի փոխարէն, նա ենթարկւեց քիւրդ տիրոջ, եւ այսպէս նա ապրեց ամբողջ դարեր, որոնց ընթացքում էլ մշակւեցին հայ – քրդական շատ մօտիկ, սերտ յարաբերութիւններ, ինչպէս՝ առհասարակ, լինում են տէրերի եւ ստրուկների միջեւ: Բնականաբար, կալուածատիրական կեղեքումների եւ անգթութեան ու վայրենութեան կողմից՝ քիւրդ աղնուական, անգէտ ու վայրենի մի ազգութեան բարձր ներկայացուցիչը պիտի շատ ու շատ գերազանցէր մի Փրանսիայի կամ ու աղնուականի, որ գիտէր Վոլթէր ու Շէքսփիր կարդալ:

Ճորտատիրական դրութիւնը Թիւրքիայում վերացւեց այն ռեֆորմների հետեւանքով, որոնք կեանք ստացան թղթի վրայ 1840 թւականներին «Թանզիմաթ» անուան տակ: Սահմանւում էր նոր կալուածատիրական կարգ: Աւատական տէրերն իրենց հողերի արժէքն ստանում էին պետական գանձարանից, հողերը դառնում էին պետական սեփականութիւն եւ տրւում էին ցանկացողներին, առանց խտրութեան, երկարատեւ վարձակալութեան սկզբունքով: Ամէն

1) Соколовъ. — «Земельное податное обложенiе въ Турцiи до Танзимата («Новый Востокъ», 1925, № 8-9, с. 91).

2) Այս սիստեմի հետազօտութիւնը տես. Berlin. — « Du Régime des fiefs militaires dans l'Islamisme» Paris, 1870.

մի գիւղացի կարող էր իր կտոր հողի համար նշանակւած վարձագինը մուծանել պետական գանձարան եւ ստանալ թուղթ (որ կոչւում էր թափու), որով և ազատ իրաւունք էր տալիս նրան ինքնագլուխ մշակելու իր դաշտը:

Թանզիմաթն, այսպիսով, գալիս էր Արեւմուտքի հետ միասին՝ ազատելու եւ հայ գիւղացուն ճորտային դրութիւնից, դարձնելու նրան ազատ հողագործ, իր սեփական աշխատանքի տէր: Զմոռանանք, որ նոյն Թանզիմաթը տալիս էր նրան նաեւ կեանքի, գոյքի եւ պատւի ապահովութիւն: Կարելի է ասել, որ դարերի այդ ստրուկը,—ստրուկ թէ՛ իր ազգային, հայրենի աւատականութեան եւ թէ քրդական իրականութեան մէջ — երբեք դեռ չէր արժանացած մարդկային այս տարրական իրաւունքների երաշխիքին:

Բայց այս բոլորը, տարաբախտաբար, միայն... թղթի վրայ: Իսկ Թիւրքիայում ամենադժւարը, նոյնիսկ անհնարինը, հենց թղթից կեանքի մէջ անցնելն է: Թանզիմաթը մնաց իբրեւ եւրոպականացման արտաքին կեղեւ, որ հարկաւոր եղաւ Թիւրք պետական մարդկանց՝ Եւրոպայի վստահութիւնը գրաւելու եւ նրանից պարտք վերցնելու համար [1]:

Այսպիսի արմատական փոփոխութիւններ, որպիսիները բերում էր Թանզիմաթը, հակառակ մահմեդական օրէնսդրութեան (շերիաթ), ընդունելութիւն եւ կիրառութեան տրամադրութիւն չէին կարող առաջացնել յետամնաց եւ ֆանատիկոս մի միջավայրում. իսկ այսպէս էր համարեա ամբողջ Թիւրք իրականութիւնը: Եւ ահա այս խորթ նորմուծութիւնների դէմ ծառանում էին ժողովրդական ցասման բռնկումներ: Այսպէս, Կիլիկիայի Տարսոն քաղաքում, ամբոխը Թանզիմաթի պատճառով յարձակւում էր Փրանսիական հիւպատոսի վրայ, որ պաշտպանութիւն էր գտնում հայոց եկեղեցում [2]: Այս հակաբարենորոգչական շարժումների հետեւանքով էր, որ տեղի ունեցան՝ նոյն քառասնական թւականներին՝ քրիստոնեաների մասսայական կոտորածներ՝ Սիրիայում եւ Քրդստանի լեռներում: Մահմեդականութիւնը վրդովւած էր, որ քրիստոնեաներին հաւասար իրաւունքներ են տալիս:

Առանձնապէս դժգոհ էր եւ քիւրդ աղնուականութիւնը: Թանզիմաթը քրդական աշխարհում համարւում էր մեծ դժբախտութիւն, եւ իբրեւ այդպիսին էլ քրդական ժողովրդական երգը ներկայացնում էր Թանզիմաթը մինչեւ իսկ դեռ 1880–ական թւականների սկզբում [3]: Եւ այս միանգամայն հասկանալի կը լինի, եթէ չմոռանանք, որ Թանզիմաթը զրկում էր Թիւրք ազգաբնակութիւնը՝ տիրելու եւ կառավարելու շատ իրաւունքներից:

Երգով արտայայտւած գանգատն, ի հարկէ, չէր կարող բաւարարել Թիւրք աւատապետներին: Իր կալուածական ճորտատիրական արտօնութիւնները

1) В. Гурко — Крясинъ. — «Исторiя Революцiи», Москва 1923, с. 9.

2) «Հայաստան» լրագիր, Կ. Պոլիս, 1846:

3) «Մասիս» . Պոլիս, 1884—1885, երես 1240:

պաշտպանելու համար, քիւրդ բեգը ուժ էր գործադրում, բայց ոչ թէ կառավարութեան դէմ՝ որի հանդէպ նա ազատ էր, այլ այն անզէն ու անլեզու մշակի դէմ, որ երէկ նրա ճորտն էր, իսկ այսօր՝ Թափու–ի սիստեմով, դարձել էր ազատ հողագործ. հարկադրում էր հայ գիւղացուն, որ նա՝ անտեսելով նոր օրէնքը, շարունակի իր նախկին ճորտային կացութիւնը, իսկ, հակառակ դէպքում, դուրս վտարի նրան թափուի գիրքով ստացած հողից՝ զէնքի ուժով կամ այլ ազդու միջոցներով — ահա ի՛նչ տեսակ յարաբերութիւն էր այժմ ստեղծւում քիւրդ կալւածատիրոջ եւ հայ գիւղացու միջեւ։

Այս շատ վտանգաւոր հանգամանքի մէջ՝ թոյլ եւ անզօր հայը կարող էր պահպանել պետական վարձակալ հողագործի դիրքը՝ միայն մի՛ միջոցով, այն է՝ եթէ Թիւրք կառավարութիւնը՝ իր սեփական օրէնքի կիրառութիւնն ապահովելու համար, հողագործի կողմը պահպանէր՝ նրա կատաղած նախկին տիրոջ դէմ։ Բայց այսպիսի պաշտպանութիւն չէր տեսնում, կամ հարիւրից մի անգամ էր տեսնում հայ գիւղացին։ Դուրս էր գալիս, որ նա չէր ազատւել, այլ ընկել էր երկու կրակի մէջ. — մինչդեռ, մի կողմից, քիւրդ կալւածատէրն իրենն էր համարում հայի մշակած հողը եւ պահանջում էր, որ այդ հողի վրայ հաստատւեն նախկին կալւածատիրական իրաւունքները, միւս կողմից՝ կառավարութիւնը նոյն այդ հողը համարում էր իրենը, եւ պահանջում էր վարձադինը։ Այսպիսով, երկու կեղեքիչները դաշտում կանգնած էին՝ գիւղական մի հատ արօրի վրայ։

Եւ առաջանում էր այս ողբալի կացութիւնն այն հանգամանքից, որ Թիւրքաց կառավարութիւնն՝ իր Ասիական նահանգների Արեւելեան մասերում, հողային հարցի մէջ մտցնում էր քաղաքական նկատառումներ։ Բանն այն էր, որ ռուս – թրքական պատերազմներն այս կողմերում երեւան էին հանել այն իրողութիւնը, որ օսմանեան սահմանագլուխը մնում էր՝ ռուսական արշաւանքների դիմաց՝ գրեթէ անպաշտպան, որովհետեւ այդ տեղերում ապրող երկու գլխաւոր ազգութիւնները — քիւրդերն ու հայերը, անվստահելի տարրեր են, քիւրդերն՝ այն պատճառով որ ատելով օսմանցիներին, նրանք պատերազմի ժամանակ վաճառւում էին ռուսներին, եւ փոխարէն իրենց երկիրը պաշտպանելու՝ անցնում էին թշնամու կողմն ընդդէմ օսմանեան բանակի, իսկ հայերն էլ այն պատճառով որ տեսնում էին ռուսների մէջ իրենց ազատարարին, ուստի ցոյց էին տալիս նրանց ամէն տեսակի աջակցութիւն։

Ղրիմի պատերազմի ժամանակ, Քրդստանում ծագեց քիւրդ ցեղապետ Եզդիշհարի շատ ընդարձակ ապստամբութիւնը, որի դրօշակի տակ թիւրքերի դէմ յաղթականօրէն կռւողների թիւը հասնում էր հարիւր հազարի։ Որ ապստամբութիւնը կապ ունէր ռուսական բանակի հետ, այս պարզ էր ամենքի համար։ Թիւրքաց կառավարութիւնը՝ բազմաթիւ պարտութիւններ կրելուց յետոյ՝ հազիւ կարողացաւ մի կերպ ազատւել այդ ներքին մեծ վտանգից, բայց այնուհետեւ նա որոշեց արմատապէս փոխել իր քաղաքականութիւնը քրդերի

վերաբերմամբ։ Փոխանակ պատժող ու ճնշող հանդիսանալու, ինչպէս եղել էր մինչեւ այդ, ընդգրկւում էր սիրաշահել – գրաւելու քաղաքականութիւնը եւ այդպիսով ոչ միայն անվնաս դարձնելու այդ ռազմիկ տարրը, այլ եւ պատերազմի դէպքում իր կողմն ունենալու համար։ Իսկ սիրաշահելու ամենալաւ միջոցներից մէկն էր՝ թոյլ տալ քրդերին, որ շահագործեն հայ երկրագործ ժողովրդին, ինչպէս իրենք կը կամենան։Կառավարութեան համար,դուրս ռազմական նպատակներով՝ ցանկալի էր, որ քրդերը պահպանեն իրենց հին ցեղային – զինւորական կազմակերպութիւնը, եւ որովհետեւ Թանզիմաթը քանդում էր այդ կազմակերպութեան հիմքերը — մի հանգամանք, որ պիտի չափազանց թուլացնէր նրա պատերազմական արժէքը, ուստի քիւրդ կալւածատիրութիւնն ուժեղացւում էր ի հաշիւ հայ կալւածատիրութեան՝ մինչ այն աստիճան՝ որ Թանզիմաթի ներգործութիւնն իրապէս չքանում էր, թէեւ արտաքուստ պահում էր իր տառը։ Օրինակ, վերցնենք հէնց Թափուի սիստեմը։ Վարչական կամայականութիւնը շատ յաճախ ի չիք էր դարձնում նրան։ Յաճախ հայի վրայ թափու արած հողը, թափու էր անւում եւ քրդի վրայ։ Ո՞վ պիտի տիրէր։ Ի հարկէ ուժեղը, քիւրդը։ Պատահում էին եւ դէպքեր, երբ ամբողջ հայ գիւղեր թափու էին անւում մի քիւրդ բեգի վրայ. — ահա եւ հէնց Թանզիմաթով օրինականացած ճորտութիւնը [1]։

Այս բոլորի հետեւանքով էր, որ 1870–ական թւականներին, Թանզիմաթից 20 – 30 տարի անցած, Թիւրքահայաստանում քրդական ճորտատիրութիւնը դեռ ծաղկած վիճակի մէջ էր, եթէ ոչ ամենուրեք, գոնէ շատ տեղերում (Խիզան, Բոնաշէն, Սասուն, Վանի գաւառ, Պալու, Ջարսանճաղ, եւն.)։ Ճորտային կացութեան մասին շատ իրական և ամբողջացրած գոյներով մի նկարագրութիւն է մնացել հայոց մամուլի մէջ, որը մենք չենք կարող չօգտագործել այստեղ, ա՛յնքան կարեւոր է հայ աշխատաւոր գիւղացիութեան դրութիւնը հարազատօրէն ներկայացնելու համար։ Այդ պատմական վաւերագիրը, որ անդրանիկն է Թիւրքահայի վերաբերեալ հայերէն այն սակաւաթիւ գրւածքների մէջ, որոնք խօսում են ճորտատիրութեան մասին, Մուշի առաջնորդական տեղապահ Գրիգորիս Վարդապետ Աղվանեանի զեկուցագիրն է, ուղարկւած Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին, 1872 թւին։

« Մերազնեայ դաս մը ժողովուրդ, որ է Բոնաշէն, ի Խութ, ի Սասուն եւ ի Շատախ գաւառներ, — ասում է նա, — քիւրդերու հետ խառն կը բնակին։ Նոցա գլխաւորներուն, որ խաֆիր կ'ըսուին, ճորտ լինելով, ամենադառն կենաց վիճակւած են։ Դաս – դաս նոցա բաժին եղած, իւրաքանչիւրն իւրեւ հրպատակ եւ սեփականութիւն համարւած, տարեկան տուրք կուտան խաֆիրին–

1) Մենք ունենք այս բոլորը բացատրող եւ հաստատող շատ վաւերագրեր, որոնց մասին խօսել այստեղ մանրամասն անհնարին համարեցինք, նկատի առնելով որ այստեղ մեր ներկայացրածը լոկ մի համառօտ տեսութիւն է, մինչդեռ հարցը շատ ընդարձակ եւ հարուստ նիւթ է։

րուն, եւ երեք կարգի բաժնուած են: Առաջին կարգը, որ համրա կ'ըսուի, տուն գլուխ եօթ բեռ ցորեն կուտայ, մէկ պանիր, հինգ ոչխար, երկու լիտր իւղ, երկու օխա ծխախոտ, մէկ լիտր չորթան, չորս լիտր աղ, մէկ չալվար, մէկ զոյգ ղանկապան, մէկ զոյգ գուլպայ, մէկ զոյգ խոնճան, մէկ զոյգ գոգնոցի ժապաւէն, երկու ունկի վառօդ, երկու ունկի կապար, երկու ունկի կանեփ, հինգ ունկի ձէթ, հինգ հատ պատուկ, երկու չերեփ, երեսուն գդալ, չորս թի, երկու կողով, վեց ցախաւել, մէկ ղանակ, չորս հաւ, երկու տըպղաղ, տասը սարակ, վեց արօր, 1242 ղրշ. ստակ [1] եւ տարին երկու անգամ ունեցած ոչխարաց կաթ՝ ղարնան պանիր շինելու եւ աշնան մածուն բանելու համար: Երկրորդ կարգը, որ կիսահամրա կ'ըսուի, վերոյիշեալ իրաց 2/3 մասը, իսկ երրորդը, որ պճեղ [2] կ'ըսուի 1/3 մասը կը վճարեն:

« Այս մարդակեր գազան խաֆիրներ (ճորտատէր)՝ ինքնագլուխ եւ ապստամբ վիճակի մէջ լինելով, իրենց ճորտ հայերը կանամբ եւ որդովք, շարժական եւ անշարժ կալուածներով իրարու ծախելու սովորութիւն ունին, եւ երբ իրարու դէմ կատաղին կամ թշնամանան, իւրաքանչիւրն իրենց հպատակ հայերն բռնութեամբ առաջնին ձգելով, իրարու սահման կ'աւարառեն, մանաւանդ հայոց գիւղերու վրայ յարձակելով, կը կողոպտեն, կը վիրաւորեն, կը սպաննեն եւ կը վերադառնան տեղերնին: Յաղթահարեալ թշնամին՝ միւսին վրէժը լուծելու համար, զօրաժողով կ'ընէ, կ'աւարառէ թշնամուն հպատակ հայերու գիւղերը առաջածին զայրոյթով, կը կողոպտէ, կը քանդէ, կ'աւերէ, կը վիրաւորէ, կը սպաննէ եւ կը դառնայ:

«...Գերիի տէր խաֆիրներ, երբ մարդ ծնանելու լինեն, յանձն իր ճորտի տունէն՝ կառամբ եւ ոչխարով աչքալուսի պիտի երթան, տղայի զգեստը պիտի տանեն, այն ինչ հայոց մերկանդամ կանայք ձեռքով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մէջ կը գտնուին: Երբ պատանեկութեան հասնի, զէնք պիտի պատրաստեն անոր: Հինայելու ատենը, ղալան (բաշլըղ) պիտի տան հարսնցուի ծնողաց, եւ հարսանեաց պիտոյքը պիտի պատրաստեն: Եթէ մեռած էլ պատահի, ոչխար, իւղ, պանիր եւ այլն տանելով՝ կը մխիթարեն զխաֆիրները: Բայց ընդհանուր ազգութեան նախատինք այն կէտն է, որ նահապետացն հայոց պարկեշտութեան առագաստի յոյսը եւ սրբութեան քօղի ներքեւ սնուած աղջիկներ, այսօր հոլանի եղած, խաֆիրներու տան մէջ, իբրեւ հարս՝ օրերով ձաւարը, կորկոտը շինելու, լաթը լուանալու եւ կարկատելու սպասարկութիւն կ'ընեն՝ լուռ արտասուելով: Եւ անոնց կըլկըլի արտերը քաղհանելու շաբաթներով կ'աշխատին մերկ անձամբ եւ բոբիկ ոտամբ, արեւակէզ

1) Մոտ 96 ռ.:
2) Այս «համրա—պճեղ» սիստեմը գոյութիւն ունէր եւ Արեւելեան Հայաստանում, դեռ պարսկական տիրապետութեան ժամանակ: Ինչպէս յայտնի է, նա բղխում է համայնական հողատիրութիւնից: Ուրեմն, ճորտատիրական Թիւրքահայաստանում, ինչպէս էր նաեւ Ռուսաստանում, պահւում էր համայնական հողատիրութիւնը:

եւ ոտնահար եղած, «զիրենց կանաչ արեւը կ'ողբան, զիրենց խաւար աստղը կ'անիծեն»:

...«Հայերու ոմանց կիները եթէ ամուլ լինեն կամ մանչ զաւակ չծնանին, խաֆիրներ երկրորդ կին առնել կուտան, որպէսզի զաւակ յարուցանելով տարեկան տուրքը յաջորդեն »:

Միւս տեղերում տիրած ճորտատիրական կարգերը [1] համարեա միանման էին, տարբերելով միմիայն տեղական պայմաններից բղխած մանրամասնութիւններով: Բայց այսքանն էլ բաւական է՝ ցոյց տալու համար թէ ի՜նչ զարհուրելի կացութեան մէջ էր գտնւում Թիւրքահայ գիւղացիութիւնն այն երկրում, որ պարծենում էր իր Թանզիմաթով: Դրութիւնը ողբալի եւ յուսահատական էր մանաւանդ այն պատճառով, որ կատարելապէս անտէր եւ անօգնական էր այդ հօծ գերի ժողովուրդը: Նրա ճորտութեան պատկերը մենք իմանում ենք պատահական, կցկտուր տեղեկութիւններից: Մի տեղ՝ այդ լրագրական մի թղթակցութիւն է, մի տեղ՝ մի Նաթանեան վարդապետի «Արտօսր Հայաստանի» գրքոյկն է, մի երրորդ տեղ՝ մի Սրուանձտեանց վարդապետի «Հնոց նորոց» աւելի եւս փոքրիկ գրքոյկն է: Եւ ոչինչ աւելի՝ ահռելի ժողովրդական դժբախտութիւնը իր ամբողջ դժբախտութեամբ ներկայացնելու համար: Ճորտութեան վրայ ուշադրութիւն չէին դարձնում, համարում էին նրան երկրորդական երեւոյթ: Գաղութահայ ինտելլիգենցիան, որ սիրում էր խօսել հասարակ ժողովրդի եւ նրա հետ կապւած «ազգային իղձեր»-ի անունից, չգիտէր էլ թէ Հայաստանում գոյութիւն ունի ճորտատիրութիւն:

Իսկ ի՞նչ էր անում «ազգային իշխանութիւնը», այսինքն նոյն այդ դժբախտ ժողովրդի տգիտութիւնը եւ նախապաշարումները իր համար սննդաբար նիւթ դարձրած հայ հոգեւորականութիւնը: Կ. Պոլսում նա ունէր մի մեծախօս պատրիարքարան, որ վայելում էր օսմ. բարձրագոյն կառավարութեան հետ անմիջապէս յարաբերութիւն ունենալու իրաւունքներ, իսկ գաւառներում կային առաջնորդներ, որոնց իշխանութիւնը շատ էլ ցած չէր պետական առաջնակարգ պաշտօնեաների իշխանութիւնից: Պատրիարքարանն, ի հարկէ, բազմաթիւ տեղեկութիւններ էր ստանում ճորտ գիւղացիութեան մասին, բայց կազմել լուրջ եւ ընդարձակ ուսումնասիրութիւն, կազմել տեղեկագրեր եւ նկարագրութիւններ, հրատարակել պաշտօնապէս, դիմումներ անել կառավարութեան, նա երբեք չիմացաւ եւ չկարողացաւ: Ճորտութեան մասին պատրիարքարանի արած մի եզակի հրապարակագրութիւնը բաղկացած էր երկու հազիւ նկատելի տողից. — « Սոյն աւանի (Մոկս, Վանի գաւառ) քիւրդ պէյերը գիւղացի հայերն իբրեւ գերի կը վաճառեն իրենց մէջ »:

Իսկ գաւառական առաջնորդները ո՛չ միայն որ եւ է օգնութիւն չէին տառապող ժողովրդին, այլ մի – մի վեղարաւոր խաֆիրներ էին նրա գլխին: 1879

1) «Մասիս» լրագիր, Կ. Պոլիս, 1872 № 1239:

թուին, Ներսէս պատրիարքի յանձնարարութեամբ Հայաստան գնացած Գարեգին վարդապետ Սրուանձտեանցը, որ պաշտօն ունէր վերահսկու լինելու, թէ ինչ պայմաններից է տանջւում գաւառաբնակ հայ ժողովուրդը, իր ընդարձակ տեղեկագրի մէջ նախ եւ առաջ քննադատում էր Թիւրք վարչական անպէտք սիստեմը, որ չարիքի գլխաւոր աղբիւրն էր կազմում, ապա անցնում էր հայ առաջնորդների կատարած դերին:

« Գաւառաց առաջնորդներն եթէ հանճարեղութիւն եւ ազգի միութիւնն իրենց հետ ունենան, կարի ակնածելի եւ ազդու դիրք մը կը գրաւեն, կը համարձակեմ ըսել, թէ վալիներուն եւ թէ միւթէսարրֆներուն հաւասարապատիւ եւ հաւասար ձայնի եւ ազդեցութեան տէր կը լինեն: Ձեզ կը թողում իմաստասիրել, Ս. Հայր, թէ ինչ մեծամեծ բարիքներ կրնան յառաջ գալ բոլոր ազգասիրաց եւ հայասիրաց ըղձացեալ նպատակին համար, եւ որքան կանուխ. բայց աչքի առջեւ բերէք մեր գաւառաց առաջնորդները, եւ կը տեսնէք որ ամենքն ապիկարներ են, որոնց մէջ շատերը Կ. Պոլսոյ եկեղեցեաց քարոզչութեան անգամ արժան չեն համարուած, առեր ու ղրկեր են առաջնորդ. շատերը Պոլսոյ մէջ խռովութիւն եւ անկարգութիւն յարուցանելով, անկէ հեռացնելու համար՝ գաւառաց առաջնորդ են ընտրուած: Կոյր չէ գաւառացին, բայց այնքան կարօտ է եւ այնքան պէտք կը զգայ առաջնորդի, որ վեղարաւոր մը տեսնելուն պէս՝ կը փարի անոր, մանաւանդ երբ գացողը Պոլսէն է եւ պատրիարքարանի գիր մը ունի ձեռքը: Անշուշտ, կ'ըսէ, պատրիարքարանը մեր թշնամին չէ, սակայն ընդփոյթ կը դառնայ եւ իր գլուխը կը ծեծէ:

« Առաջնորդաց մէջ՝ լաւոց բացառութիւնները չեմ մոռնար. բայց եթէ հարց անէք՝ չեմ կրնար թեւել: Առաջնորդ տեսայ, որ իր տանը մշակն էր եւ կախարդութեան յարեալ: Առաջնորդ՝ կինով արբեալ եւ վիճակին պատուհաս մը. առաջնորդ՝ որ զօր ու գիշեր միմիայն իւր ձին կը հոգար, եւ բաշըբօզուկ ու անաստ վարդապետ ու եպիսկոպոս տեսայ, որ կը շըջին յաշխարհէ յաշխարհ, կ'ուտեն, կը խմեն, կը խլեն, կը ձեռնադրեն, հրաշքներ կ'ընեն, դպիրներէն եղած բժիշկ կը ձեւանան, եւ իրօք հիւանդները կը նային մերթ խաչով ու աւետարանով ըստ հաւատոյ, մերթ դեղերով ու դարմաններով ըստ պատշաճին. վիճակաց մէջ խռովութիւն եւ ծանր — ծանր գայթակղութիւններ կը յարուցանեն: Ուրիշ վարդապետ մը, որ Պելետիէի անդամ էր, իրեն համար եկեղեցին անծանօթ ...

« Քանի մը տեղ փաշաները ձեռքս բռնելով առանձին կ'ըսէին ինծի թէ դիտողութիւններ կ'ընեն մեր դատըններուն վրայ, իրաւունք ունին, բայց այս մարդը (ցուցանելով առաջնորդը) այսպիսի փափուկ ժամանակի մէջ, այսպիսի բազմահայ գաւառի մը առաջնորդ ընելու՞ մարդ է. պատրիարքարանն ի՞նչ տարբերութիւն ունի մեր կենտրոններէն՝ ուսկից կը ղրկուին մեր դատընները, գայմագամները, միւֆթիները, եւն. դուք ալ բան մը ըլլալիք չունիք»: Ուրիշ տեղ մը, փաշայի ներկայութեամբ, խարբէի անդամ նշանաւոր տաճիկ

մը խօսքի կարգին այս ծանր դիտողութիւնն ըրաւ. « Թանզիմաթէն առաջ պէյեր ու աղաներ կային մեր երկրի քիւրդերէն ու թիւրքերէն, որ առանձին բանտ, շղթայ, Փալախա ի գործ կը դնէին եւ կը բռնանային աղջիկ մը՝ իւր եւ իւր ծնողաց հակառակ՝ նշանածէն կորզել եւ իրենց աւելի ստակ տուողին տալ. դուք շատ բաներու վրայ դիտողութիւններ կ'ընէք մեր մասին, բայց շնորհք ըրէք կառավարութեան ատեանը ճանի մը միջոց դառնալ, եւ կը տեսնէք թէ քանի քանի բողոքներ կուգան տեղւոյս առաջնորդին վրայ. որի կինը ծեծած է, որը փալախա կոխած ու քանի մը օր բանտարկած, որին ծանր տուգանքներ արած, որ մէկի աղջիկը կեղծ զարթիէով խլած եւ ստակն աւելի տուողին հետ պսակեցուցած, իրեն հաւասար վարդապետին՝ շուն եւն. կոչած, գանի ծեծել տուած, եւն., եւն.: Կը խնդրենք պատրիարքարանէն, թող շնորհքով առաջնորդներ ղրկեն, որոնց հետ խորհրդակցելու եւ գործակցելու պէտքը կը զգայ գրեթէ ամէն բանի մէջ կառավարութիւնը » (1):

Արժէ այս նկարագրութեան վրայ աւելացնել, իբրեւ առաջնորդական բընութագիր, մի քանի տող՝ Միքայէլ Նալբանդեանի «Երկու տող» տետրակից, որոնք վերաբերում են Վանի առաջնորդ Պօղոս վարդապետին: Ահա դրանք.—

«Աղջկայ կուսութիւնը խախտել, յետոյ ամուսնացնել իւր մանուկ փոքրաւորի հետ, յետոյ՝ սափրելով առեւանդեալ կնոջ բողոքելու, ամուսնութիւնը լուծել եւ վերստին պսակ դնել մի այլ մարդու հետ: Մի ուրիշ ամուսնութիւն 500 ղրուշի համար լուծել եւ վերստին այլ մարդու հետ ամուսնացնել: Ցըլի կինը կապել եւ այնքան ծեծել, որ յղացած զաւակը վիժէ, եւն., եւն. » (2):

Այսքան անտէր էր այդ տարուկ ժողովուրդը, իւրայիններից ոչ պակաս կեղեքուած քան օտարներից. այս կացութիւնը մի շատ բնորոշ եւ հիմնական մի փաստ էր լոյս բերում: Այդ՝ Կ. Պոլսի հայ գաղութի վերաբերումն էր դէպի գաւառները: Սրուանձտեանց վարդապետի ասելով, նա բոլոր լաւ հոգեւորականներին պահում էր իր մէջ, իսկ տականքներն ու մրուրը ուղարկում էր գաւառները ժողովրդի գլխին պատուհաս դառնալու համար: Ոչ միայն այդքանը: Նալբանդեանն իր վրդովմունքը յայտնում էր այնքան խստութեամբ այն պատճառով որ նա՝ մերկացնելով հանդերձ այդ չարագործութիւնները՝ պաշտպանում էր նոյն այդ պոլսահայ գաղութի մի մասը:

3.

Այսքան մոռացուած ու խոշտանգուած, կարելի է ասել՝ գլխովին արհամարհուած հայ գիւղացիութիւնը, չէր կարող, բնականաբար, իր սեփական միջոցներով դիմանալ, ոչ մանաւանդ դիմադրել այն սոսկալի դժբախտութեան, որ նրա վզին էր փաթաթում նրան ազատ հողագործ հրատարակած Թանզիմաթը, այն է՝ հողազրկութեան:

1) «Փորձ» ամսագիր, Թիֆ. 1879, № 4, երես 171—172:
2) «Երկու տող», երես 11—12:

Քիւրդ կալուածատիրութիւնը միայն զէնքի ուժով չէր աշխատում պահել իր տիրապետութեան տակ այն հողերը, որոնք թափուր դրութեամբ անցել էին նրա նախկին ճորտերին: Կար եւ աւելի խաղաղ, անաղմուկ, օրինականացած միջոց քան հողազրկութիւնը. — այդ՝ վաշխառութիւնն էր, եւ այս բանի մէջ նրա հետ զուգընթաց էր ու համագործակից եւ հայ վաշխառուն, այն՝ որ ունէր իր յատուկ յորջորջումը — «չորպաճի»:

Իր տնտեսական գերութեան մէջ գիւղացի հայը, ի հարկէ, չէր կարող անկախ տնտեսութիւն վարել: Մշակել հողը, ունենալով լոկ մի զոյգ ձեռքեր, չէր կարելի: Գիւղացին ամէն տարի կարիք ունէր փոխառութեան, որով կարողանար հոգալ իր հողային ու տնական կարիքները: Ուստի ստիպւում էր դիմել փոխառուին եւ այդտեղ էլ հէնց ստորագրում է իր տնտեսական ինքնատպանութեան դատավճիռը:

Այս, ի հարկէ, թրքական մի երեւոյթ չէր, այլ մի համատարած չարիք էր, որ ճարակած ունէր բոլոր յետամնաց երկիրները, եւ եթէ Թիւրքիան մի բանով տարբերւում էր ուրիշներից, այդ այն էր՝ որ տնտեսական վաշխառութեան մէջ՝ աւելի մեծ չափերով, քան ուրիշ տեղ, հանդէս էր գալիս ինքը կալուածատիրութիւնը, որի ձեռքում գտնւում էին տեղական հարստութիւնները, եւ մենք տեսնում ենք այն ընդարձակ գաւառներում՝ ուր խաֆիրութիւնը կամ արդէն չկար և կամ շատ թուլացել էր, որ գիւղացուն տոկոսով փող տւողն է, մեծագոյն մասամբ, քիւրդ պէյը կամ աղան:

1879 – 1880 թւականներին, երբ հայերն անսահման ոգեւորւած էին Բեռլինի դաշնագրի 61–րդ յօդւածով, Կ. Պոլսի ինտելիգենցիայի մէջ գտնւեց մի անհատ, յետագայում յայտնի հրապարակախօսի անուն վաստակած, Բիւզանդ Քէչեան, որ «Մասիս» լրագրի էջերում հրատարակեց մի ամբողջ յօդւածաշարք Հայաստանի տնտեսական դրութեան մասին: Եզակի երեւոյթ կազմող այդ բաւական թռուցիկ տեսութիւնների մէջ այսպէս է նկարագրւած գիւղացու հողազրկութեան մեր յիշատակած գործողութիւնը.

« Հայաստանի հայ գիւղացւոց միայն մի փոքր եւ երջանիկ մասն է, որ իւր հնձոց հասոյթէն ամէն տարի քիչ մը բան մի կողմ դնելով, խնայողական գումար մը կը կազմէ, որով իւր արտաքոյ կարգի դրամական պէտքերը կարողանայ հոգալ. իսկ մեծագոյն մասը իրմէն աւելի հարուստէ մը դրամական փոխառութիւններ ընելու անխուսափելի հարկի մէջ կ՚գտնուի, որովհետեւ դրամով վճարելիք տուրքեր ունի, դրամով հոգալիք երկրագործական այլ եւ այլ պէտքեր ունի, զորս գոհացնելու համար չի կրնար հնձոց ժամանակին սպասել, կ՚հարկադրուի ուրեմն վաշխառուին դիմել, որ սովորաբար այլ ազգ, բէյ մը կամ աղա մըն է: Հոս է ահա հայ երկրագործաց եւ ամենամեծ դժբախտութեանց մին. — դրամ փոխ կ՚առնու, բայց ի՞նչ տոկոսով, հարիւրին 50 կամ 60 սովորական բաներ են. 100ին 100 շահ կայ, եւ 100ին 200 լսւած է, բայց գիւղացին ուրիշ ճար չունի, ուստի այս ծանր պայմանով փոխառութիւն

կ՚ընէ եւ եթէ այն չափով ազատի, դարձեալ գոհ է: Վաշխառուն խեղճ գիւղացու հունձքն արգելքի տակ կը դնէ, եւ եթէ մեծ գումար մը փոխ առած է, անոր արտը գրաւ կ՚առնու: Տնտեսագէտ անձինք գիտեն թէ անշարժ կալուածք գրաւի ներքոյ դնել ի՛նչ մեծ չարիք մըն է, բայց մեր խեղճ հայ գիւղացիք այդ բարոյական, տնտեսագիտական և քաղաքական նկատողութեանց տեղեակ չեն, թէեւ վնասը շարունակ կը կրեն: « Աստուած այսպէս կամեցել է, ի՞նչ կարող եմ անել », ահա իրենց բոլոր գիտութիւնը:

« Հնձոց ժամանակը կուգայ, վաշխառուն խեղճ գիւղացիին կը ներկայանայ անմիջապէս եւ իր փոխ տուած գումարին իբր թէ տոկոսը լինելու համար՝ այնչափ բան կ՚առնու, որով թերեւս ամբողջ պարտքը կը վճարուէր: Միւս կողմէն, տոկոսին տոկոսը կը դիզուի, եւ գիւղացին ամէն տարի թէեւ իւր հունձից շատ բան կուտայ պահանջատիրոջ, այսու ամենայնիւ՝ տոկոսի միայն մի մասը վճարած կը լինի, պարտքն անշարժ կը մնայ, եւ անդադրապէս կը մեծնայ: Այդ միջոցին՝ վաշխառուն մուրհակ նորոգելու պատրւակով գրաւը կ՚ամրացնէ եւ արտը կամ փոխառուին ուրիշ հողային ստացւածքը գրեթէ վաշխատիրոջ կը լինի: Եթէ գիւղացին փոքրիկ մանուկ մը ունի, պարտքն այդ մանկան հետ կը մեծնայ, եւ երբ մանուկն այր կը լինի, պարտքն անոր վըրայ կը դառնայ, եւ ահա այս հօրենական պարտքն է՝ որ մեր հազարաւոր գիւղացւոց նիւթական վիճակն անտանելի կ՚դարձնէ, որք, չկրնալով արդէն հասոյթովը կարգադրել այն անվերջանալի պարտքը, կը պարտաւորին Կ. Պոլիս կամ այլուր գաղթել: Բայց անգութ վաշխառուն հոն ալ անոնց ետեւէն կ՚իյնայ. արտն արդէն իւր ձեռքն է, բայց անով ալ գոհ չի լիներ, տոկոս կը պահանջէ, տոկոսին տոկոսը կը պահանջէ, դրամագլուխը կը պահանջէ, մինչեւ վերջը կը պահանջէ. այնպէս որ՝ անգամ մը 3000 պարտքի համար գիւղացի մը եւ իւր որդին 123,000 ղրուշ վճարած էին, եւ սակայն իրենց հողը տակաւին գրաւի ներքեւ էր » (1):

Պարտքով եւ պատուհասով շղթայւած գիւղացին յաճախ չէր էլ սպասում, որ վաշխառուն խլէ իրա հողը տոկոսների ճիւաղային որոգայթներով, այլ ինքն իր ձեռքով, յուսահատութեան ծայրին հասած, ծախում էր իր հողաբաժինը թիւրքերին կամ քիւրդերին «ամենաչնչին գումարի մը համար—շարունակում է մեր աղբիւրը — եւ այդ գումարին ամենամեծ մասը պարտուց յատկացնելէն յետոյ, մնացածով քիչ մը ժամանակ կ՚ապրին, եւ անկէ ետքը բառին բուն նշանակութեամբ թշւառութեան մէջ կ՚իյնան, ոչ եւս հողատէր լինելով, կը պարտաւորին ուրիշի մը հողին վրայ աշխատել իբրեւ բանւոր, եւ կամ հարուստ պէյին ծառայ լինել իրենց բոլոր ընտանիօք ... :

« Թէպէտ Կարնոյ դաշտի մէջ Հայոց հողերը միշտ Հայոց ձեռք կը մնան,

1) «Մասիս» լրագիր, 1880, №2637:

կամ հայ վաճառականաց կողմէ կը գնուին [1]*, այսու ամենայնիւ Հայաստանի ուրիշ կողմերը, եւ մանաւանդ ի Տարոն եւ ի Վասպուրական, ծախու հանուած այս հայկական հողերն ընդհանրապէս Թիւրքաց կամ քիւրդաց ձեռք կ'անցնին, եւ մենք մեր սենեակին մէջ Հայաստան կ'երազենք:*

«Որչափ արտեր, տներ, այգիներ եւ պարտէզներ արդէն այսպէս հայոց ձեռքէն ելած եւ այլոց ձեռքեր անցած են. որչափ արդեօք կ'անցնին այժմ, որ թշնամութիւնն աւելի մեծ է, եւ որչափ տակաւին պիտի անցնին՝ եթէ այս ողբալի վիճակին դարման տանելու գործնական միջոցները չխորհուին: Որչափ հայ վաճառականներ արդէն մարած են, որչափ հայ ընտանիքներ արդէն ցիր ու ցան եղած են այս տնտեսական գերութեան պատճառով. որչափներ այժմ իսկ կ'ոչնչանան նոյն պատճառով եւ ապագայի մէջ դեռ քանի քանի հայ գիւղեր դեռ աւերակ պիտի դառնան այն միակ պատճառով թէ դրամագլուխ չկայ զանոնք կանգուն պահելու համար» [2]*:*

Այսպէս՝ անդիմադրելիօրէն, յաւիտենապէս ներգործող օրէնքի տարերային բնութեամբ, շարունակւում էր թիւրքահայ գիւղի դարաւոր եւ սիստեմատիկ քայքայումը հողազրկութեան միջոցով, պրոլետարացում՝ որ դուրս էր շպրտում ազգաբնակութիւնը չորս քամիների ուղղութեամբ: Այս ահարկու երեւոյթի առջեւ ինքնատինքեան վերյուշման է գալիս Միքայէլ Նալբանդեանն իր «Լաց, պանդուխտ, ոչ ոք մեղաւոր չէ, բացի քո հօրից եւ քեզանից» յանդիմանութիւնը: Մենք չարախօսութիւն, հայհոյանք անուանեցինք նահատակ ժողովրդին ուղղուած եւ անգիտութեան արգանդից ծնուած այդ խօսքերը: Եւ այժմ ընթերցողը, որ տեղեկացաւ սարսափելի իրականութեան, անշուշտ կը կրկնէ մեզ հետ. «Թշուառ ժողովուրդ ... Նրան ոչ միայն չէին ճանաչում, այլ եւ զրպարտում, չարախօսում էին հէնց այն մարդիկ, որոնք նրա գլխաւորներն ու առաջնորդներն էին, եւ որոնց պարտքն էր՝ ուրեմն, նրա տնտեսական դրութիւնը եթէ ոչ ամբողջովին՝ գէթ մի մասով վերացնելը»:

Իսկ այս մի անլուծելի հարց չէր: Ինքն, անխնայ բնաւեր դարձած գաւառը, գտնում էր իր ցաւի դարմանը եւ առաջարկում էր իր «ազգային իշխանութեան», այսինքն նոյն Կ.Պոլսի գաղութին, որի վերաբերմունքը դէպի գաւառը հէնց նոր տեսանք առաջնորդական հարցի մէջ:

1880 *թուի փետրուար ամսին, Մուշի հայերը մի հանրագիր էին ուղարկում Ներսէս պատրիարքին, որի մէջ շատ վառ գոյներով նկարագրում էին թէ որքան աղէտներ է առթում հայ գիւղացիութեան նրա տնտեսական անօգնականութիւնը:*

«Տխուր է, Ս. Հայր, — գրում էին նրանք, — հայուն վիճակը Հայաստանում, ամէն տեղ կը տեսնուին թշուառութիւն, զրկանք, աղքատութիւն: Հայն

---

1) *Ժամանակի ազգասիրութեան համար մեծ մխիթարութիւն էր, որ Կարինի գաւառում գործողը հայ վաշխառուական կապիտալն է եւ ոչ թէ մի ուրիշը:*

2) *Անդ:*

իր ընտանիքէն տարիներով հեռու ապրելու, կամ լաւ եւս է ըսել՝ փտելու դատապարտուած, իւր սեփական արտն եւ ուրիշ հողերը թիւրքին, քիւրդին կամ անխիղճ վաշխառուին զիջանելու ստիպուած, ծանր պարտուց ներքեւ ընկճելով, զանոնք վճարելու համար պանդխտութեան դիմած է:

Հայ գիւղացին վար ու ցանի ժամանակ՝ չունենալով սերմ, ուստի սերմնացու գնելու եւ արքունի ծանր պարտքերը վճարելու համար, ի սկզբան կը սկսի անիրաւ վաշխառուէ մը փոխառութիւն մը ընել 100*—էն* 100 *և շատ ժամանակ ալ աւելի տոկոսով: Գիւղացին կը դողայ, կը սոսկայ մինչեւ իսկ փոքրիկ փոխառութեան մը ժամանակ, զի կը զգայ թէ պիտի կործանի ապագային, բայց իւր արտն անմշակ չթողլելու հողն ու հարկահան ոստիկանին ... ստիպումները կը մղեն զանի անգութ դահիճին՝ այսինքն վաշխառուին առջեւ, ուրում խեղճ գիւղացին «մերաքա» պիտի դառնայ յաւիտեանս յաւիտենից իւր ամբողջ ընտանիքով, արտերով, եզներով եւն. եւն.:*

Խեղճ գիւղացին ամրան կիզիչ արեւուն կիզիչ ճառագայթներուն առջեւ իւր ընտանիքով կը տառապի եւ իւր քրտամբ գերկերը կ'ոռոգէ, «կալոց կ'ընէ»: Բայց ահա վաշխառուն կամ իր սպասաւորը մահուան հրեշտակի նման խեղճ երկրագործին գլուխը կը տնկուի, կ'ուտէ, կը խմէ եւ նրա ամբողջ ընտանիքը չարաչար կերպով իրեն ծառայեցնելուց յետոյ, կը բաժնի իբրեւ վարձ իւր տուած սակին՝ բերքին կէսը, տէրութիւնը կ'առնէ իւր տասանորդը առաւել չափով, քիւրդը կը յափշտակէ հայհոյանաց եւ սպառնալեաց քաղաքավարութեամբ, հայ երկրագործը շատ անգամ, Ս. Հայր, իւր կալոցին հետեւեալ օրը իւր օրապահիկ սննդեանն համար չունենար եւ ոչ մի հատ ցորեան: Սարսափելի է այս: Գիտեմք դժուարին պիտի լինի ձեզ համար հաւատալ, սակայն բաւծնիս մեր ամենօրեայ լսածն ու տեսածն է:

Այսպէս թշուառ գիւղացին անվճարելի պարտուց կ'ենթարկուի եւ կը ստիպուի իւր կալուածը խիստ պակաս գնով ծախել իւր աղային ա) զի աճուրդէ օգուտ չի կրնար քաղել գիւղացին, զի իւր աղային խաթեր համար այլք չեն կրնար յաւելում մը անել, եւ այս համաձայնութիւնն կը պահեն աղայք իրանց մէջ փոխադարձաբար. բ) գիւղացին կը պատրաստուի պանդխտանալ. գ) թէ նրա ներկայութեան եւ թէ նրա բացակայութեան, նրա ընտանեկան պատիւը կը բռնաբարուի թէ աղայէն եւ թէ նրա պարագաներէն, եւ այս է միակ աղբիւրը հայ օրիորդաց եւ հարսնաց հաւատափոխութեան: Գիւղացին եւ իւր պարագաները պիտի լինեն մշտնջենապէս գերի՝ իւր աղային կամ նրա պարագայից» [1]*:*

Բայց ինչո՞ւ համար է հանրագէտը պատմում այս բոլորը. նրա գլխաւոր միտքն այս չէր, այլ մի կարեւոր առաջարկութիւն, որ ահա.

«Արդ, բոլոր այս չարեաց առաջը, Ս. Հայր, մասամբ երեք եւ 3 – 4

---

1) *«Մասիս»* 1880, № 2644:

Ազգային Փոխատու Դրամատուն մը հաստատե-
տարէին բոլորովին կ'առնէ, Ազգային Փոխատու Դրամատուն մը հաստատե-
լով դրամատէրերէ, որ թէ իրենք շահին, եւ թէ Հայաստանի իրենց թշուառ
ազգայինը»: Միայն Մուշի գաւառի համար պահանջւում էր 10,000 ոսկի [1]:
Այս գումարը կը բաժանէր հարիւր մասի, ամէն մէկը 100 ոսկի արժողու-
թեամբ: Փոխատուութիւնն, ի հարկէ, ձրի չպիտի կատարուէր, առաջարկւում
էր հարիւրին տասը տոկոս. գիւղացիներն ուրախութեամբ կը տային նաեւ 20
առ 100: 3 – 4 տարուց յետոյ, երբ Մուշի շրջանի տնտեսութիւնն վերականգ-
նած կը լինէր, դրամատունն իր 10,000 ոսկիով կարելի կը լինէր փոխել մի
ուրիշ գաւառ եւ այսպիսով մի քանի տասնեակ տարի յետոյ բոլոր հայաբնակ
գաւառները կ'ազատուէին տնտեսական սարկութիւնից [2]:

Սակայն ոչ գաղութահայ բուրժուազիան, ոչ էլ նրա գաղափարախօս ին-
տելլիգենցիան չիրագործեցին այսքան հեշտ եւ արմատական միջոցը: Անկաս-
կած պատճառն այն էր որ բուրժուազիան չուզեց ենթարկել իր քսակը հնարա-
ւոր վտանգի: Դրա փոխարէն գերի գաւառներին առատօրէն տրւում էր մի ան-
փող «բարիք» — ազգային կոչուած սահմանադրութիւնը, այսինքն փոքրիկ
պարլամենտներ՝ երեսփոխանական ընտրութիւններ կատարելու, գաւառական
ընդհանուր ժողովներում վիճաբանելու, տէրտէր – առաջնորդական հարցերն
ու գործերը քուէարկութեամբ վճռելու իրաւունքով: Տարին մի անգամ էլ, մա-
յիսի 24–ին, երբ Կ. Պոլսի հայ գաղութը հաւաքւում էր Հիւնքեար – Իսկելէսի
դաշտավայրում ազգային սահմանադրութեան տարեդարձը երգ ու պարով,
ճաշով ու գինիով տօնելու համար, անփոփոխ գրւում էին յատուկ տարեդար-
ձական ոտանաւորներ, անսահման շովինիզմով լեփ – լեցուն, եւ դրանց մէջ
պարտադիր կերպով մի – մի սիրային համբոյր էր ուղարկւում «մօրը», այ-
սինքն Հայաստանին:

Ահա, նմոյշի համար, մի քանիսը այդ տարեդարձային համբոյրներից.

Դուն ալ Հայաստան, սիրուն հայրենիք,
Այլ այսուհետեւ մի պղար լռիկ.
Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ
Զքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ:

Ալ մի լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ
Եւ ձայնիւ քաղցրիկ որդոցդ հետ երգէ.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու սահմանադրութիւն:

Երբ յաւերակս լուռ հսկէ մայրդ Հայաստան,
Աչքերդ ուղղէ, արդ՝ ի կամար Աստուածեան,
Տես աստղն հայոց ինչպէս խայտայ լուսավառ,
Լիաբերան օրհնէ որդիքդ փրկարար:

1) Մտաւորապէս 90–95 հազար ռ.:
2) «Մասիս», անդ:

Անցան սեւ օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բախտի ծագի առաւօտ.
Սահմանադրութիւնն ուղեցոյց կենաց,
Սիրոյ դրօշակով եկաւ զարդարուած:
Որ փայլէ արեւ սուրբ Հայաստանի,
Որ հայ ազգութիւնն փառօք վերածնի ...

Ո՛հ, բնագաւառ մեր Հայաստան,
Գերեզմանաց դու հայրենիք
Նոցա վրայ փշոց փոխան,
Բուսնեն զւարթ հուր վարդենիք,
Ահա ցաւած ճակտիդ թառամ
Կապել պսակ մի անթառամ [1]:

Ինքնագոհ ռոմանտիզմի մշուշներից իջնենք թւանշանների ցուրտ եւ իրա-
կան դաշտը: Թէեւ այստեղ տեղեկութիւնների առատութիւն չի տիրում, բայց
եւ այնպէս կարելի է մի ընդհանուր հասկացողութիւն կազմել հայ ազգաբնա-
կութեան կորցրած հողերի մասին:

Արդ՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի մի պաշտօնական հրատարակու-
թեան մէջ, որ վերաբերւում է 1876 թուականին [2], յականէ յանւանէ յիշատակ-
ուած են հայաբնակ նահանգներում գտնւած 276 հայ գիւղեր, որոնց հողերը մե-
ծագոյն մասամբ ամբողջովին եւ չնչին դէպքերում մասնակի կերպով յափշ-
տակւած են եղել քիւրդերի, շատ քիչ թւով նաեւ թիւրք աղւեցիկների ձեռքով:
Նոյն Պատրիարքարանը 1912 թ. հրատարակած ֆրանսերէն տեղեկագրի մէջ
մանրամասն տեղեկութիւններ է գրել հայերից զանազան ժամանակ խլւած հո-
ղերի, տների եւ առհասարակ անշարժ կալւածների մասին: Այդ մի շատ ըն-
դարձակ նիւթ է, որ բնականօրէն մենք չենք կարող օգտագործել այստեղ, ուս-
տի բերում ենք մի երկու ընդհանուր գումար. — Յափշտակւած են արտեր
26,185, տներ 2591, խաղողի եւ այլ այգիներ 1190, մարգեր 2007, կալուց-
ւածքներ 1066, արօտներ 460 [3]: Իսկ մի ուրիշ մասնաւոր աղբիւր յափշտակ-
ւած հողերի ընդհանուր տարածութիւնը որոշում է 1,030,000 օրավար [4]:

1) «Նոր Երգարան կամ Քնար Հայաստանի», Կ. Պոլիս, 1874, երես 10 - 13:
2) «Տեղեկագիրք Գաւառական Հարստահարութեանց», Կ. Պոլիս, 1876 երես 29–36:
3) «La situation des Arméniens en Turquie exposée par des documents», IX, p. 132-133.
4) Գեղամ Տէր Կարապետեան — «Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ»,
Կ. Պոլիս, 1911, երես 44:

ԹԻՒՐՔԱՀԱՅ ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1.

Սահմանադրական հայաստանասիրութեան այն նմուշները, որ մենք բերինք քիչ վերեւում, ոչ եզակի են եւ ոչ էլ դուրս են գալիս իրենց ժամանակի շրջանակից: Հայ հասարակական մտայնութիւնը ունեցել է արտայայտութեան միայն մի ասպարէզ՝ հայ գրականութիւնը: Արդ՝ եթէ մի ընդհանուր հայեացքով չափենք մեր նոր գրականութիւնը, որի սկիզբը պէտք է դնել 18-րդ դարի երկրորդ կէսին, — երբ միալար տխրած նեղ կրօնական – աղանդաւորական ուղղութեան մէջ սկսում են թափանցել քաղաքական խոկումներ եւ ձգտումներ՝ գաղութային տրամաբանութեամբ ու հասկացողութիւններով (1), — մենք կը տեսնենք, որ նրա առանցքը կազմում է հայրենասիրութիւնը, կամ՝ այն ժամանակների չափ գործածական խօսքով՝ ազգասիրութիւնը, ինչպէս այս յատուկ էր 19-րդ դարի ազգային շարժումների եւ նրանցով սնւող համեւրոպական գրականութեան:

Մեր գրականութիւնը ամբողջովին ազգասիրական էր եւ, թող աւելորդ չլինի մի անգամ եւս կրկնել, գաղութային: Բուն Հայաստանի հողը դեռ առհասարակ ամուլ էր գրական աչքի ընկնող ծաղիկներ բուսցնելու համար. — Վենետիկ, Փարիզ, Վիեննա, Կ. Պոլիս, Թէոդոսիա, Նոր Նախիջեւան, Մոսկւա, Պետերբուրգ, Դորպատ, հեռաւոր Կալկաթա — ահա թէ որքան շատ էին այն տեղերը, որոնք արտադրում էին բաւական հարուստ ազգասիրական գրականութիւն — երգ, վէպ, թատրոն, հրապարակախօսութիւն: Հայ ինտելիգենցիան չէր ուզում յետ մնալ համաշխարհային ազգային ինտելիգենցիայից եւ ստեղծում էր առժամանակ, երեւակայութեան մէջ միայն, իր սե–

(1) Այս մի շատ ընդարձակ նիւթ է, որ ընդգրկում է 1876—1879 թւականների շարժումները Թրքական Արեւելքում եւ մասնաւորապէս հայերի մէջ. մի նիւթ, որին մենք նւիրած ունենք մի առանձին աշխատութիւն, բաղկացած մի ստւար հատորից. այստեղ տալիս ենք միայն ամենահամառօտ տեսութիւնը գլխաւոր անցքերի, որոնք առաջին անգամ մեզանում լուսաբանւում են միանգամայն մեր ընթերցող հասարակութեան անծանօթ աղբիւրների հիման վրայ:

փական հայրենիքը՝ օգնութեան կանչելով հին, սաստիկ ուռցրած եւ առասպելական «փառքը»: Արդէն տեսանք, որ, Նալբանդեանի ժամանակ, հայաստանասիրութիւնը քաղաքական վերականգման վայր ընտրում էր Թիւրքահայաստանը:

Այժմ ընդհանուր ազգասիրական մարմաջը, որ բռնել է ինտելիգենցիան, կղերականութիւնը եւ բուրժուական վերնաշէնքերի մի փոքրիկ մասը, պիտի վերջ ի վերջոյ թիւրքահայ գիւղացիական հարցը դարձնէր քաղաքական հարց, որ պիտի նշանակէր խախտել հայ ժողովրդին յատկացւած փոքրամասնութեան, առ առաւելն՝ 38 %-ի դիրքը, առանձնացնէր նրան այն բոլոր ժողովրդներից, որոնք ապրում էին նրա հետ խառը եւ, այդպիսով, դնել նրան մի անտանելի ծանր բեռան տակ:

Մենք այստեղ պիտի ասենք, որ թիւրքահայ ժողովրդին այդպիսի մի դեր յատկացնելը կազմում էր Թիւրքիայում իրար հետ յարատեւ մրցող երկու գիշատիչ նւաճողների — Անգլիայի եւ Ռուսաստանի — ձգտումը, որ երեւան էր գալիս դեռ 1840-ական թւականներից եւ որի նպատակն էր քաղաքական ազդեցութեան գործիք դարձնել այդ ժողովուրդը:

Բայց երկու կողմերի դիւանագիտութիւնը մի ճանապարհ գիտէր հայերին շահագործելու համար — կրօնական ճանապարհը, հայ կղերական դիւանագիտութեան հետ ծածուկ համաձայնութիւններ կայացնելու միջոցով: Սակայն, այստեղ նա յանդում էր լուսաւորչական ֆանատիկոսութեան եւ ջարդ ու փշուր լինում: Հետաքրքրական են մանաւանդ այն անյաջողութիւնները, որ ունեցաւ այս բանի մէջ ռուսական դիւանագիտութիւնը: Երկու թիւրքահայ եպիսկոպոսներ — Մատթէոս եւ Գէորգ — բացարձակ կերպով խաբեցին Կ. Պոլսի երկու դեսպաններին՝ ամէն խոստումներ տալով թէ իրենք կը դառնան ռուս քաղաքականութեան կոյր գործիքներ, եւ նրանք, ռուս կառավարութեան կարգադրութեամբ, ընտրւեցին կաթողիկոս. բայց, Էջմիածին հասնելուց յետոյ, դարձան կատաղի ռուսատեացներ:

Առանձնապէս կարեւոր է մեզ Գէորգի դերը, որ եւ պահանջում է մեզանից մի քանի մանրամասնութիւններ տալ:

1864 թւականին Կ. Պոլսի ռուսական դեսպան էր նշանակւում Աղեքսանդր Բ. կայսեր առանձին վստահութիւնն ու մտերմութիւնը վայելող գեներալ Իգնատիեւը: Նրա վրայ դրւում է մի շատ ծանր աշխատանք — վերականգնել, Ղրիմի պատերազմի հետեւանքով, Թիւրքիայում ոչնչացած ռուսական ազդեցութիւնը եւ նորից դնել ռուս քաղաքականութիւնը այն դիրքի մէջ, երբ նա կարող էր Թիւրքիայի ճակատագիրը տնօրինել, ինչպէս իր շահերն էին թելադրում:

Իգնատիեւը կարողացաւ մեծ յաջողութեամբ առաջ տանել այդ քաղաքական գիծը: Նրա պէս եռանդուն, աղդու եւ կարող դեսպան Ռուսաստանը երբեք չէր ունեցել Կ. Պոլսում: Նա ոչ միայն դիմադրում էր, նոյն Ղրիմի պա–

տերազմի հետեւանքով, Բոսֆորի ափին ահագին ուժ ստացած անգլօ – Ֆրանսիական ազդեցութեան, այլ եւ ռուսական ազդեցութիւնը մեծացնում ու ընդլայնում էր անդադար · իսկ երբ 1871 թուականին, Ֆրանսիան, չարաչար ջարդուելով Գերմանիայից, ժամանակաւորապէս գրեթէ դուրս էր գալիս մեծ պետութիւնների շարքից, Իգնատիեւը ազատեց մի խոշոր մրցակցից, դարձաւ ամենից ազդեցիկը Կ · Պոլսի դեսպանների մէջ: Նրա դիմաց մի հատ հզօր ախոյեան էր մնացել – անգլիական դեսպան Էլլիոտը · բայց նա, մեծ ազդեցութիւն ձեռք բերելով սուլթան Աբդիւլ – Ազիզի վրայ, իր ձեռքի մէջ էր պահում Թիւրքիայի ճակատագիրը: 1876 թւին, Փարիզի Ֆրանսերէն Ֆիկարօ լրագրի թղթակիցը գրում էր հետեւեալ տողերը Իգնատիեւի մասին, որի ազդեցութիւնը շատ մեծ էր սուլթանական պալատի մէջ · « Դիւանագէտն, այս պատճառով, ընդունուած էր իբրեւ պետութեան երկրորդ անձնաւորութիւն · ժողովուրդը նրան անուանում էր երկրորդ սուլթան · կար թիւրք սուլթանը, կար եւ ռուս սուլթանը » (1):

Տեսնենք այժմ թէ՝ ի՞նչ քաղաքական ծրագիր ունէր այդ ամենակարող դեսպանը, այդ ռուս սուլթանը: Բարեբախտութիւն է, որ, մի քանի տարի առաջ, տպեցին նրա կարեւոր հեղինակութիւնները եւ մենք կարող ենք դիմել նրա սեփական խօսքերին:

Ռուսաստանն իրեն նեղուած է զգում Սեւ ծովի վրայ, գրում է նա · հարկաւոր են նրան այդ ծովի ելքերը — նեղուցները: Ենթարկել սուլթանին իր ազդեցութեան, ունենալ իր ձեռքի մէջ նրա մինիստրներին, դառնալ նեղուցների կատարեալ կարգադրիչը՝ թոյլ տալով, որ սուլթանն ապրի Կ · Պոլսում մինչեւ իր օրերի վերջը, մինչեւ որ հանգամանքները թոյլ կը տան նրա ձեռքից խլելու եւ այս քաղաքը — ա՛յս պիտի լինի Ռուսաստանի քաղաքական վարքագիծը Թիւրքիայում, առանց պատերազմի միջոցին դիմելու:

Այս խաղաղ նուաճումը Իգնատիեւը ծրագրում էր ապահովել՝ տալով թիւրքահպատակ քրիստոնեաներին — բուլղարներին, յոյներին եւ հայերին — ինքնավարութիւն այնպիսի շրջանակների մէջ, որ նրանք երբեք չկարողանան հակառակել Ռուսաստանին եւ միշտ մնան նրա կոյր գործիքները: Խորհուրդ էր տրւում, մանաւանդ, չտալ այդ ինքնավարութիւններին կառավարութեան հանրապետական ձեւը (1):

Ռուսական ազդեցութեան գլխաւոր ուժը, Եւրոպական Թիւրքիայում, եղել են միշտ սլաւոնական ազգութիւնները, որոնց վրայ առանձին ուշադրութիւն էր դարձնում նա այժմ, երբ աշխատանք էր թափում, որ Ռուսաստանը նորից ուժեղացնի իր դիրքը Արեւելեան հարցի մէջ: Համասլաւոնական շարժումը ուժեղացաւ Ղրիմի պատերազմից յետոյ եւ կենտրոնացաւ Ռուսաս–

1) Jean de Vœstyn. — «Voyage au pays des Bachi Bousouks», Paris, 1876, p.p. 173-174
2)Гр. Н. П. Игнатьевъ. — «Записки», «Историческій Вестникъ», 1911. № 1. С: 53:

տանում, երբ Պետերբուրգում բացւեց, բարեգործական անուան տակ, սլաւոնական կոմիտէ, որ բաժանմունք ունէր եւ Մոսկւայում: Թէեւ պանսլաւիզմը թւում էր Բակունինին մի շատ ուժեղ յեղափոխական միջոց՝ ցարականութիւնը տապալելու համար, բայց ցարական բիւրոկրատիան եւ մեծ հեղինակութիւն ստացած սլաւոնասէր գործիչները կարողացան դարձնել այդ գաղափարը քաղաքական մի շատ ուժեղ գործօն՝ ուղղուած նախ եւ առաջ Թիւրքիայի դէմ: Սլաւոնական կոմիտէն այնքան ուժեղանում էր, որ սկսում էր ուղղութիւն տալ ռուս կառավարութեան՝ Հարաւային սլաւոններին միացնելու եւ Թիւրքիայի տիրապետութեան տակից դուրս բերելու համար: Կառավարութիւնը, այսպիսով, ենթարկւում էր կոմիտէական հեղինակութեան, եւ ցարն անգամ իրեն անզօր է զգում այդ ամենազօրեղ ուժի դիմաց:

Գեներալ Իգնատիեւը համասլաւոնական շարժման գլխաւոր սիւներից մէկն էր (1) · եւ այս հանգամանքն էր, որ կարողութիւն էր տալիս նրան՝ յենւելով Ռուսաստանի մէջ իր ունեցած հզօր կապերի վրայ, վերին աստիճանի համարձակ եւ աշխուժ աշխատանք վարել սլաւոնական երկրների եւ մանաւանդ բուլղարների մէջ՝ խրախուսելով նրանց յեղափոխական ձեռնարկները, որոնք մեծ մղում էին ստանում Ռուսաստանի սլաւոնական կոմիտէներից: Թիւրք բիւրոկրատիայի այն մասը, որ գտնւում էր անգլիական ազդեցութեան տակ (այդպիսիների թւում մանաւանդ հռչակաւոր Միդհաթ փաշան), շատ լաւ էր տեսնում, թէ ո՞ւր է տանում Իգնատիեւի սլաւոնական քաղաքականութիւնը · բայց ռուս դիւանագէտը վախ չունէր այդ հանգամանքից, քանի որ վայելում էր սուլթան Աբդիւլ – Ազիզի լիակատար վստահութիւնն ու բարեկամութիւնը:

Երկրորդ սուլթանի գործունէութեան այս կողմն այժմ բաւականաչափ պարզուած է ռուս եւ եւրոպական գրականութեան մէջ (2): Իսկ այն կողմը, որ վերաբերւում է հայերին, մինչեւ այժմ էլ մնում է ծածկուած՝ եթէ ոչ կատարեալ անյայտութեան, գէթ շատ թանձր մշուշի մէջ, չնայած որ մենք ունենք բաւականաչափ նիւթեր՝ այդ շատ կարեւոր հարցը այդպիսի դրութիւնից ազատելու համար:

Իր դեսպանութեան հէնց սկզբում, 1865–ին, մեռնում է, Էջմիածնում, ռուսական դիւանագիտութիւնը չարաչար խաբած կաթողիկոս Մատթէոս Ջուխաջեանը: Մնում է, նախկին ընտրութեան ժամանակ, նախկին ռուսամոլ թեկնածու հանդիսացած Գէորգ եպիսկ · Քերեստեճեանը, որին եւ Իգնատիեւը անմիջապէս իր ձեռքն է առնում, յատկապէս, այդ նպատակաւ, գնալով Պրուսա, ուր եպիսկոպոսը առաջնորդ էր: Երկուսի միջեւ հաստատւում է բաւական մօտիկ անձնական բարեկամութիւն: Հայ փառասէր հոգեւորականին խոս–

1) Jean de Vœstyn. — «Voyage an pays des Bachi Bousouks».
2) G. Hanoteaux. — «Histoire de la France contemporaine», IV, Paris p. 133.

տացում է իր անհաջող կաթողիկոսական աթոռը, բայց որոշ պայմաններով, որոնք ռուս դիւանագէտի ձեռքը պէտք է տային մէկից աւելի հնարաւորութիւններ՝ հայերին, իբրեւ կրօնական ուրոյն համայնք, քաղաքական գործիք դարձնելու համար: Պէտք է որ կաթողիկոսը փոխանորդութիւն հաստատէր Կ. Պոլսում՝ ուղարկելով այնտեղ մի ռուսահայ եպիսկոպոս, ռուս պետական գանձարանի հաշւով, մի վանատուն եւս կառուցանէր այնտեղ եւ այդ բոլորը դրւէր Կ. Պոլսի ռուսական դեսպանատան հովանաւորութեան տակ:

Քերեստեճեանը՝ կաթողիկոսանալով՝ հաստատւում է Էջմիածնում եւ, այնուհետեւ, նրա ու դեսպանի միջեւ, սկսւում է մի երկարատեւ գրագրութիւն, որ վկայում է, ամենից առաջ, այն թէ՝ որպիսի անշէջ եռանդով եւ ամենամանր պարագաների նախատեսութեամբ՝ երկրորդ սուլթանը կատարում էր, Կ. Պոլսի մէջ, հայոց կաթողիկոսի գործակատարի պաշտօնը: Չնայած, սակայն, իր բոլոր ջանքերին, Իգնատիեւը չկարողացաւ իրագործել իր ձեռնարկութիւններից եւ ոչ մէկը, որովհետեւ Պոլսի հայ գաղութի ղեկավար շրջանակները, որոնք բաղկացած էին հոգեւորականներից եւ պետական պաշտօնեաներից (էֆենդիներից), իբրեւ օսմանեան հայրենասէրներ, գտնւում էին արեւմտեան (անգլօ — ֆրանսիական եւ յետոյ միայն անգլիական) ազդեցութեան տակ եւ սաստիկ դիմադրութիւն էին ցոյց տալիս Իգնատիեւին՝ հայերին վերաբերեալ նրա քաղաքականութեան մէջ: Այս շրջանակների ազդեցութեան ենթարկւում էր եւ Գէորգ կաթողիկոսը, որ խուսափողական գրութիւններով սկսում էր խաբխաբել Իգնատիեւին եւ, վերջ ի վերջոյ, նրանից իր օձիքն ազատելու համար, բանակցութիւններ վարելը յանձնում էր Վարժապետեան Ներսէս եպիսկոպոսին, որ արեւմտեան ազդեցութեան մոլեգին ներկայացուցիչներից մէկն էր: 1875 թւականին գրած իր նամակով Իգնատիեւը իր ցաւակցութիւնն էր յայտնում, որ կաթողիկոսն այլ եւս չի ուզում կատարել իր տւած խոստումները եւ դադարեցնում է իր յարաբերութիւնները:

Հայ կղերական դիւանագիտութիւնը, անպատասխանատու եւ ինքնակամ, մի անգամ էլ ցոյց տւեց թէ ինչպէս նա իր սեփական օգտին եւ փառասիրութեան կարող է զոհ բերել անխօս ու անմռունչ ժողովրդի կենսական շահերը:

2.

Իսկ ժամանակը, երբ կատարւում էր Քերեստեճեան — Իգնատիեւեան խաղումը, չափազանց կարեւոր էր, յղի մեծամեծ տակնուվրայութիւններով: Սլաւոնական շարժումը, Թիւրքիայում, պատրաստւած էր գործի կենալու եւ, 1875—ի ամառը, ապագայ մի հրդեհի կայծը փայլատակում էր Հերցեգովինայի լեռներում: Այդ մի ապստամբութիւն էր, որ պատրաստւած էր Օդեսայի սլաւոնական գաղութում, տեղական համալսարանի մի քանի պրոֆեսորների եռանդուն մասնակցութեամբ [1]:

1) Այս իրողութիւնն այն ժամանակները խնամքով թաքցւում էր եւ յետոյ միայն,

Ապստամբութիւնը ճարակւում էր եւ վայրկեանէ վայրկեան սպառնում էր Բուլղարիան առնելու իր բոցերի մէջ: Սերբիան պատրաստւում էր պատերազմի: Քաղաքական մթնոլորտը լցւած էր ելեկտրականութեամբ: Կ. Պոլիսը ճգնաժամային օրեր էր ապրում: Ահարեկւած սուլթան Ազիզը՝ Իգնատիեւի ճիրանների մէջ տապլտկած՝ պատրաստ էր զիջումների: Այս՝ ռուսական քաղաքականութեան յաղթանակն էր: Անգլիան այս յաղթանակը վիժեցնելու միակ ելքը գտնում էր օսմանեան գահի վրայ դնել իրեն կամակատար մի գործիք, որի միջոցով խեղդէր բալկանեան ժողովուրդների ազատագրումը:

Կռիւը Ռուսաստանի եւ Անգլիայի միջեւ էր, դարաւոր կռիւը: Եթէ Ռուսաստանը նպատակ ունէր բալկանեան ժողովուրդների ազատագրութեամբ անդամահատել Թիւրքիան եւ տիրել նեղուցներին եւ հասնել Միջերկրականի տաք ջրերին ու սպառազէն կանգնել Հնդկաստանի ճանապարհի դռանը, ապա Անգլիան ամէն գնով պիտի խորտակէր ռուսների դարաւոր այդ ծրագիրը, պիտի պահէր Թիւրքիան՝ ամբողջական, իբրեւ պատնէշ ռուսական հեղեղի առաջ եւ պահապան նեղուցների:

Իրերի այս դրութեամբ՝ սուլթան Ազիզի ոչնչացումը անհրաժեշտութիւն էր դարձել Անգլիայի համար:

Դեսպան Էլլիոտը լարեց իր ճարպիկ դաւադրութիւնների մեքենան: Ձեռք ձգեց Միդհաթ փաշային: Միդհաթը, «Երիտասարդ Թիւրքեր»ի պարագլուխը, եւրոպական քաղաքակրթութեան ջատագով, ազատամիտ գաղափարներ ունեցող մարդ էր. ձգտում էր Թիւրքիան արդիացնել, սահմանադրական իրաւակարգ հաստատել այս բռնապետական երկրում. տնտեսական, կրթական, դատաստանական բարենորոգումներ մտցնել օսմանեան պետութիւնը բաղադրող բոլոր ժողովուրդների համար, միաժամանակ այն կենսական մտածումով ղեկավարւած՝ թէ սահմանադրական իրաւակարգով կը բաւարարւեն բազմատարր ժողովուրդները եւ Թիւրքիայի անդամահատութիւնը կը վերանայ: Դեսպան Էլլիոտը համակիր հանդիսացաւ Միդհաթ փաշայի գաղափարներին, եւ վերջինս ոգեւորութեամբ փարւեց անգլիական քաղաքականութեանը եւ բռնւեց նրա մեքենայի մէջ:

Ինչքան էլ որ Միդհաթը սահմանադրութեան մուծումով քաղաքական նըպատակներ էր հետապնդում, բայց եւ այնպէս անկեղծ հաւատացող էր սահմանադրական իրաւակարգերի բարիքներին ժողովուրդների տնտեսական, կուլտուրական յառաջդիմութեան համար. մինչդեռ Էլլիոտը՝ ներքուստ թըշնամի լինելով Թիւրքիայի յառաջդիմութեանը, խրախուսում էր Միդհաթի գործը, սահմանադրութեան վրայ նայելով իբրեւ մի ժամանակաւոր պատրանքի: Նոր, յառաջդիմական խոստումներով, բարեփոխութիւնների անդա—

40 տարի անցնելուց յետոյ բացատրւում էր. — տես. «Сороколетіе Герцоговинскаго возстанія». «Историческій Вестникъ», 1915, с. 888.

տարածքով անջատման ձգտող ժողովուրդները կը գալէին, կը խաղաղէին՝ նրանց մէջ գտնելով իրենց տենչանքների իրականացումը առանց արիւնհեղութիւնների։ Որով եւ ռուսական սպառնալից միջամտութեան առիթները կը չնչէին եւ, ուրեմն, Ռուսաստանի յառաջխաղացումը կանգ կ'առնէր։

Բոսնիայի եւ Հերցեգովինայի ապստամբութիւնը ծայր առեց Բուլղարիայում։ Ռուսաստանի սպառնալիքը օրէց օր աւելի խտանում էր Թիւրքիայի գլխի վրայ։ Երիտասարդ Թիւրքերը Միդհաթի սահմանադրութիւնը առաջադրեցին սուլթան Ազիզին։ Սուլթանը մերժեց եւ գահընկէց եղաւ։ Նրան գտան խորհրդաւոր պարագաների մէջ ինքնասպան եղած։ Նրան յաջորդեց Մուրադ Ե.ը. Թոյլ, ապիկար մի մարդ, որ երկու հզօր մրցակիցների, Ռուսաստանի եւ Անգլիայի, ձեռքը խաղալիկ եղաւ, որով դեսպան Էլլիոտի գրգռումով, գահազուրկ եղաւ ի նպաստ իր եղբօրը, Աբդիւլ – Համիդ Բ.ի։ Խորամանկ եւ նենգամիտ Աբդիւլ – Համիդը, երեք ամիս յետոյ տապալելու համար նորակազմ պարլամենտը, ընդունեց սահմանադրութիւնը, սակայն այդ փորձը չփրկեց պետութեան տագնապալից վիճակը։ Մակեդոնիան ապստամբած էր եւ պահանջում էր Բուլղարիայի ազատութիւնը. Թիւրք կառավարութիւնը սկսել էր կիրառել իր վաղեմի մեթոդը — կոտորածները։ Ռուսաստանը վրդովուել եւ յուզուել էր սաստիկ բուլղարական սարսափներից, սլաւոնոֆիլ կոմիտէները գործում էին եռանդով եւ աւելի յուզում ռուս ժողովրդին եւ միահամուռ պահանջում էին ցարից պատերազմ հռչակել Թիւրքիայի դէմ, կտրել ոճրագործ ձեռքը եւ ազատել եղբայրական բուլղարներին ու քրիստոնեայ ժողովրդներին սուլթանական մարդասպան լուծից։

Ցարը պատեհ ժամը հասած տեսաւ եւ սուրը մերկացրեց։ Ռուսական բանակները բալկաններում եւ հայկական լեռներում փշրեցին Թրքական ուժերը, սուլթանը ծունկի եկաւ, եւ Թիւրքիան, Բերլինի դեսպանաժողովում, ստորագրեց Բուլղարիայի ազատութեան ակտը եւ Հայաստանի մահավճիռը — 61-րդ յօդուածը՝ անորոշ, անպարտադիր, խաբէական խոստումները « հայկական բարենորոգումների »։

Միամիտ եւ քաղաքականօրէն տհաս հայութիւնը, փոխանակ հիասթափւելու այս ոչնչութիւնից, խանդավառուեց եւ գլուխը կորցրեց։ Փափագը իրականութիւն ընդունելով, այս պատրանքի մէջ տեսաւ իր մօտալուտ ազատագրման օրը։ Հերթը հիմա Հայաստանինն է։ Բուլղարիայից յետոյ Հայաստանը պիտի ազատուի։ Ինչո՞ւ չպիտի ազատուի, չէ՞ որ ինքն էլ բուլղարների նման դարերով հեծում է Թիւրքի անագորոյն լուծի տակ. մարտիրոս է քրիստոնէական հաւատի համար։ Այս անալոգիան, բուլղարների եւ հայերի վիճակների այս միակողմանի նմանութիւնը եւ համեմատութիւնը, որին, քիչ յետոյ, աւելի մանրամասն կ'անդրադառնանք, դարձաւ միամիտ հայութեան յոյսերի եւ պայքարի անքննադատելի խարիսխը։ Սակայն ա՛յս եղաւ պատճառների ամենահզօր պատճառը հայկական, պատմութեան մէջ աննախընթաց եւ իրա–

պէս նմանը չունեցող ջարդերի եւ վերջնական բնաջնջմանը միլիոնաւոր Թիւրքահայերի եւ մնացորդների վտարմանը իր դարաւոր հայրենիքից։

Զգացումներով եւ երեւակայութեամբ տարուած հայութիւնը 61-րդ յօդուածի մէջ գտաւ այն խորհուրդը թէ՝ այսուհետեւ Հայաստանը դարձաւ Եւրոպայի հզօր պետութիւնների մտահոգութեան առարկան։ Անփորձ հայութիւնը երեխայի պէս հաւատում էր եւրոպական քաղաքակրթութեանը, պետութիւնների մարդասիրութեանը եւ անշահասիրութեանը, քրիստոնեայ ազգերի հայասէր զգացումներին եւ եղբայրական օգնութեանը։ Հայութիւնը հաւատում էր իր պատմական դերին, առաքելութեանը. չէ՞ որ Եւրոպայի ճանապարհորդները եւ ոմանք գրողներից ու դիւանագէտներից նրան համարում էին արեւմտեան քաղաքակրթութեան ջահակիրը Ասիայի խաւարի մէջ, լուսաւորութիւն տարածող, ընդունակ, յառաջադէմ տարր։ Եւ քաղաքակրթութեան համար պայքարող Եւրոպան, փրկարար Եւրոպան, վերջ ի վերջոյ, իր վեհանձն բազուկը պիտի մեկնէ ու ազատէ իր գործի առաքեալ հայ ժողովուրդը « հիւանդ մարդու », մահւան մէջ գալարւող, բարբարոսական ճիրաններից։

Փրկարար Եւրոպան՝ յանձինս ո՛չ միայն իր հզօր պետութիւնների, այլ մանաւանդ իր ամենահզօր հասարակական կարծիքի։ Եւրոպական հասարակական կարծիքը մարդկութեան խիղճն է, որ անկարող է հանդուրժել ո՛ եւ է անարդարութեան, երկրագնդի ինչ ծայրում որ լինի, բռնութիւնների, բռնաբարումների եւ վերջապէս կոտորածների։

Այդ հասարակաց կարծիքը կոչում ունի պաշտպանել զրկուածներին ու տանջուածներին, մանաւանդ երբ սրանք իրենց վրայ կրում են քրիստոնէութիւն ու քաղաքակրթութիւն. Նրա վճիռն անդառնալի է եւ այնքան հզօր, այնքան ստիպող ու պարտաւորեցնող, որ կարող է ուզած րոպէին գործերը (միջազգային) տակն ու վրայ անել, միջամտութիւններ առաջացնել, խաղաղ թէ զինուած, մի խօսքով՝ անել այն, ինչ լաւագոյնն է ու իմաստագոյնը մարդկայնութեան ու քաղաքակրթութեան տեսակէտից։

Այս մեծ ուժն ունի սպասաւորներ եւ ղեկավարներ, որոնք գլորում են նրա անիւն արդարութեան ու ճշմարտութեան ուղիներով։ Հասարակական կարծիքի ղեկավարներն են, նախ եւ առաջ, պարբերական մամուլը եւ հրապարակախօսական հրատարակութիւնները. ուստի՝ սրանք երկրորդ ֆետիշն են դառնում։ Զուր չէր, որ մամուլը կոչւում էր 7-րդ մեծ պետութիւն։ Եւ պարծանքով ասում էին, որ « Տէյլի Նիւզ » լրագիրը՝ Մակ – Գարոնի թղթակցութիւններով՝ կատարել է, Բուլղարիայի ազատութեան գործում, մի ամբողջ մեծ պետութեան դեր։

Նոյն այդ ամենակարող հասարակական կարծիքի ղեկավարութեան շատ ազդու գործիք էր այն յատուկ անգլիական հրապարակային հաւաքոյթը, որ կոչւում է միտինգ. եւ երբ մի քաղաքական հարց արժանանում էր մի կամ մի քանի միտինգների գումարման, կամ քննութեան, այդ նշանակում էր, որ նա

ձեռք է բերել երկրի ընդհանուր վստահութիւնը եւ կարող է ճնշում գործ դնել նոյն իսկ կառավարութեան վրայ:

Պաշտամունքի առարկայ էին դառնում նաեւ հասարակական, պետական, գիտական եւ այլ այսպիսի հանրային ասպարէզներում հռչակ ստացած գործիչները՝ դաւանանքով մարդասէր եւ ազատասէր: Հաւատը դէպի այս տեսակի մարդիկ անսահման էր: Դրանք մի տեսակ ազգային սրբեր էին, արժանի խունկի եւ երկրպագութեան: Եւ դրանցից մէկը, եթէ չասենք առաջինը, Գլադստոնն էր: Ասում էին եւ բիւր անգամ կրկնում թէ՝ Գլադստոնի ճառերը, բրոշիւրն էին իսկապէս, որ Բուլղարիայի համար քաղաքական ազատութիւն ստեղծեցին:

Վերջապէս, ստեղծւում էր նաեւ հաւատ թէ՝ միջազգային դիւանագիտութեան մէջ կարող է լինել նաեւ շիտակութիւն, գաղափարականութիւն, անշահախնդրութիւն. օրինակ՝ Ռուսաստանը, որ՝ լոկ Բուլղարիային ազատելու համար՝ մի երկարատեւ, սաստիկ արիւնահեղ եւ երկու միլիարդ րուբլի նստած պատերազմ վարեց Թիւրքիայի դէմ: Ահա ինչ տեսակ մտայնութիւն էր ստեղծում բուլղարական ազատութիւնը մարդկանց մէջ, ինչ տեսակ հայեացքներ էր դարձնում անխախտական, հաստատուն, այլ եւս ապացոյցների անկարօտ: Բայց այս բոլորը մի մեծ պատրանք էր, որ ստեղծել էին արտաքին երեւոյթները: Կոյր հաւատի եւ միամտութեան ժամանակներն անցան, յայտնագործուեցին նոր նիւթեր, որոնք լուսաւորեցին անցքերի մութ կողմերը, վարագոյրի յետեւում ծածկուած մութ գործերն ու գործիչներին: Եւ մեր մէջ, այսօր, ծիծաղ են յարուցանում մեր հայրերի ու ժամանակակիցների պաշտած ֆետիշները, ոչ պակաս ծիծաղ, քան ինչ որ յարուցանում են աֆրիկեան սեւամորթների ֆետիշները:

Սկսենք ամենագլխաւորից: Հասարակական կարծիքը, Եւրոպայում, ճիշտ որ շատ յուզուած եւ գրգռուած էր: Անգլիայում տեղի ունեցած բողոքի, զայրոյթի եւ անէծքի միտինգների թիւը հասնում էր 300-ի: Բայց այս մեծարան եւ մեծանուն կարծիքը չկարողացաւ ոչինչ անել ոչ թիւրքերի դէմ, որոնք կոտորածների հեղինակներն էին, ոչ մանաւանդ անգլիական կառավարութեան եւ նրա Կ. Պոլսի դեսպանի դէմ, որոնք բացարձակ կերպով պաշտպանում էին Թիւրքիային եւ ամէն ջանք գործ էին դնում հաւատացնելու թէ՝ բուլղարական սարսափները չափազանցուած են, թէ իրենք բուլղարներն էլ շատ մեղաւոր են եւ թէ, առհասարակ, այդ աղմուկը ստեղծել է ռուսական ինտրիգներով: Առաջին մինիստր Դիզրայէլի այսպիսի շնական բացատրութիւններ եւ արդարացումներ արտասանում էր պարլամենտի ամբիոնից՝ առանց վախենալու թէ կը կորցնի այդ՝ իբր թէ հասարակական խիղճը ներկայացնող հաւաքոյթի վստահութիւնը: Հազարաւոր միտինգներ իրենց կարգին, իսկ կառավարութեան դիրքի անխախտութիւնն էլ իր կարգին:

Առանձնապէս խայտառակ է դեսպան Հենրի Էլլիոտի վարմունքը: Քաջա—

րի Թղթակից Մակ-Գահոնը հրապարակով մերկացնում էր նրա արարքները, յայտարարում էր նրան թիւրքերի մեղսակից եւ պատասխանատու բուլղարական պատերազմների համար [1]: Եւ սակայն մինչ այս աստիճան նշաւակուած դիւանագէտը չկորցրեց իր տեղը, այլ հանգիստ շարունակեց իր գործունէութիւնը:

Գանք «7-րդ մեծ պետութեան»: Այս էլ մի շատ խաբուսիկ հիմնարկութիւն էր, որի մի մեծ արատը՝ պոռնկութիւնը՝ կրծում էր իր բարոյական հեղինակութիւնը: Սիրում էր նա կաշառուել ոսկիներով, առանց հարցնելու թէ թրքական է այդ «անարգ» մետաղը եւ արիւնոտ, թէ անգլիական՝ մարդասպաններին վարագուրելու եւ պաշտպանելու համար: Մենակ բուլղարները չունէին իրենց «7-րդ մեծ պետութիւնը»: Ճիշտ այդ համարով «մեծ պետութիւն» — ի՞նչ փոյթ թէ փողով գնուած — ունեն եւ տասնեակ հազարներով բուլղար ջարդած բաշիբոզուկներն ու չէրքէզները: Եւ ահա գրչի պոռնկութեան թոյնը թափանցում էր մինչեւ սիրտը եւ արատաւորում էր նրան, կաթուածի ենթարկում:

Առանձնապէս կարեւոր է մեզ համար շեշտել այստեղ, իսկոյն եւ եթ, Գլադստոնի դերը, որովհետեւ այս մարդը բաւական խոշոր տեղ ունի գրաւած թիւրքահայերի դժբախտ ճակատագրի մէջ:

Խօսք չունենք, որ նա, իր ժամանակ, շատ մեծ քաղաքական հեղինակութիւն էր, Եւրոպայի պետական մարդկանց առաջին շարքումն էր, մանաւանդ յայտնի էր լիբերալ հայեացքներով, մարդասիրական գաղափարներով: Այս բոլորը ճիշտ է. բայց պակաս ճիշտ չէ եւ այն, որ Գլադստոնի դերը բուլղարական ագիտացիայի մէջ անսահման չափերով գերագնահատւում էր: Հարիւրաւոր միտինգների մէջ կային, ի հարկէ, շատ այնպիսի հռետորներ, որոնք նրա չափ, գուցէ եւ աւելի, պերճախօս էին թէեւ եւ համարձակ իրենց մեղադրանքների մէջ, բայց ահագին նշանակութիւն էին տալիս Գլադստոնի խօսքին, որովհետեւ նա լիբերալ կուսակցութեան պարագլուխն էր, եղել էր առաջին մինիստր եւ դարձեալ պիտի լինէր, եթէ լիբերալները յաղթէին պահպանողականներին: Այս պայքարը՝ իշխանութիւնը իրար ձեռքից խլելու համար՝ միշտ կար երկու կուսակցութիւնների միջեւ, եւ Գլադստոնը, իբրեւ իր կուսակցութեան պարագլուխ, պարտաւոր էր օգտուել ամենայարմար առիթից՝ պահպանողական կառավարութիւնը վարկաբեկելու եւ տապալելու համար:

Այսպիսի մի լաւ առիթ էր հանդիսանում բուլղարական հարցը: Նրա միջոցով Գլադստոնը կուսակցական պայքար էր մղում Դիզրայէլի կառավարութեան դէմ, իսկ աշխարհը կարծում էր թէ լոկ բուլղարասիրութիւնն է նրան ղեկավարում: Գալով նրա խիստ յարձակումներին Թիւրքիայի դէմ, այս էլ կուսակցական պայքարի միջոց էր: Թէ՛ կառավարութիւնը եւ թէ կուսակցա—

1) Е. З. Мак-Гэрон. — «Зверства въ Болгаріи», СПБ. 1877, с. 98-105.

կան հրամայող դասակարգերը կարող էին հանգիստ կերպով լսել այդ սպառնալիքները, քանի որ նրանք անպատասխանատու մարդու բերանից էին լսում: Անգլիական իմպերիալիզմի հաւատարիմ ծառաներն էին Գլադստոնն էլ, Դիզրաէլին էլ: Եթէ բուլգարական գազանութիւնների ժամանակ Գլադստոնը լինէր կառավարութեան գլուխ, կարո՞ղ կը լինէր նա իր սպառնալիքների եւ յոխորտանքների մէջ փոքր ի շատէ իրական բովանդակութիւն դնել, ծառայեցնելու նրան անգլիական պետական ուժերի մի փոքրիկ մասն անգամ, — ի հարկէ ոչ:

1880 թւի ամառը, երբ Գլադստոնն արդէն կառավարութեան գլուխ էր, պարլամենտում մի պահպանողական պատգամաւոր իր ճառի մէջ յիշեցրեց Գլադստոնին, բուլգարական գազանութիւնների առթիւ նրա արտասանած ճառերը եւ ասաց թէ Թիւրք–ռուսական պատերազմի պատճառ դարձաւ նա այդ ճառերով: Եւ ահա՝ ի՞նչ պատասխանեց Գլադստոնը. «Ես ի՞նչ էի այդ իրողութեան ժամանակ: — Աննշան մասնաւոր անհատ մը, որ պաշտօնական դիրք մը չունէր: Երկրին կառավարութիւնն իրենց ձեռքը ունեցող անձինք կառավարական աշխարհավարութեան պատասխանատուութիւնը չեն կրնար մասնաւոր անհատներու վրայ նետել, որք երկրին զօրութիւնները իրենց տրամադրութեան ներքեւ չունեն [1]:

Ահա ինչը չէին հասկանում քաղաքական անչափահասները: Այս հանգիստաւոր յայտարարութիւնից յետոյ էլ դեռ որքան ժամանակ նրանք հաւատում էին թէ՝ անպաշտօն Գլադստոնի մի խօսքն էլ բաւական է մի ամբողջ ժողովրդի ճակատագիրը փոխելու համար:

Ինչ որ, սակայն, երեւակայեն ցնորապաշտները, իրողութիւն է մնում այն՝ որ բուլգարական կոտորածները յաղթանակ չբերին Գլադստոնին Դիզրայէլի դէմ մղած կուսակցական եռանդուն պայքարի մէջ. ընդհակառակը, նա շուտով մենակ մնաց, երբ սկսեց ռուս–թրքական պատերազմը: Իմպերիալիստական Անգլիան իր ամբողջ վստահութիւնը տւեց Դիզրայէլին:

Այս բոլորից հաստատւում է այն՝ որ Բուլգարիան ազատողը ո՛չ հասարակական կարծիքն էր, ո՛չ նրա «7–րդ մեծ պետութիւնը», ո՛չ Անգլիայի 300 միտինգները եւ ոչ, վերջապէս, Գլադստոնը: Բուլգարիան ազատողը համասլաւոնականութեան փետուրներով զարդարւած ռուսական իմպերիալիզմն էր եւ ուրիշ ոչ ոք:

Բուլգարիան 500 տարի գտնւում էր թրքական տիրապետութեան տակ եւ, հետեւաբար, նոր չէին տանջանքները նրա համար: Բուլգարիայում նոր չէին սկսել գործել յեղափոխական մարմիններ: Բուլգարիան նոյն իսկ նոր չէր սովորում ապստամբել Թիւրք կառավարութեան դէմ: Այդպիսի մի ապստամբութիւն տեղի էր ունեցել եւ խեղդւել արեան մէջ 1868–ին: Բայց այդ անցեալ ժամանակներում Ռուսաստանը չէր ցանկացել անգամ զբաղւել բուլ–

1) «Մշակ» լրագիր, 1860, № 162:

գարական հարցով, թէեւ նրա ահագին բանակները քանի–քանի անգամ էին անցել այդ տանջւող ժողովրդի երկրով Թիւրքերի դէմ պատերազմելու համար: Այժմ էր առեղծւել ոչ միայն ցանկութիւն, այլ եւ անողոք սովորողականութիւն ազատելու համացեղ եւ համակրօն «բրադուշկաներին»:

Նպատակն արդէն պարզել է, ինչպէս տեսանք վերեւում, գեներալ Իգնատիեւը: Տեսնելով նեղուցները խաղաղ միջոցով խլելու իւր ծրագրի խորտակումը, նա այժմ զէնքով նւաճելու ծրագիրն էր առաջ տանում: Ռուս մի դիւանագէտ՝ Բելգրադի գլխաւոր հիւպատոս Կարցեւը, իր չափազանց կարեւոր յիշողութիւնների մէջ [1], Իգնատիեւի նամակներով ապացուցում է թէ ինչպէս էր նա ցանկանում, որ Սերբիան պատերազմ յայտարարէ Թիւրքիային, ի հարկէ, շատ լաւ իմանալով, որ այդ փոքրիկ ու թոյլ երկիրը պիտի ջարդւի Թիւրքիայից, բայց իր յետեւից պատերազմի դաշտը պիտի հանէ ռուսական զօրութիւնը:

Այս միեւնոյն ծրագիրն ունէր նաեւ պաշտօնական Ռուսաստանը. բայց որովհետեւ ամբողջ Արեւմտեան Եւրոպան ռուսաց նւաճողական ձգտումներն էր տեսնում բուլգարական հրդեհի մէջ, ուստի պաշտօնական կառավարութիւնը իրեն աշխարհի առաջ ցոյց էր տալիս չափաւոր եւ մեղմ պահանջների տէր, ամէն քայլում ընդգծում էր իր անկեղծ խաղաղասիրութիւնը եւ պատրաստակամութիւնը՝ համընթաց գնալու մեծ պետութիւնների ընդհանուր համաձայնութեան հետ: Բայց, իրապէս, դրսի աշխարհից միանգամայն ծածուկ, գործում էր ոչ–պաշտօնական կառավարութիւնը, որ ներկայացնում էին սլաւոնական կոմիտէները, որոնց ղեկավարն էր Մոսկւայի գլխաւոր կոմիտէի նախագահ Ակսակովը, մի իսկական դիկտատոր [2] իր ժամանակի: Ահա մի փաստ: Պաշտօնական կառավարութիւնը փորձ էր անում արգիլելու այն կամաւորական հոսանքը, որ կոմիտէներն ուղղում էին Սերբիա պատերազմի մասնակցելու համար: Այն ժամանակ Ակսակովը իր գործակիցներից մէկին ուղարկում էր Ալեքսանդր Բ.ի մօտ, Ղրիմ: Եւ մենք ունենք այդ ուղարկւածի պատմութիւնը թէ՝ ինչպէս ռուսաց ինքնակալ ցարը յօժարակամ զիջում էր անում դիկտատորին՝ թոյլ տալով, որ կոմիտէները գործեն ազատ եւ անարգել:

Դրութեան տէրը կոմիտէական Ռուսաստանն էր, ասում է մեր յիշատակած դիւանագէտ Կարցեւը: Նա պատմում է, որ ինքը գնաց Էմս քաղաքը՝ այնտեղ բժշկւող Ալէքսանդր Բ.ին զեկուցելու բալկանեան գործերի մասին: Կայսրը պահանջում էր նրան պահել ամէն կերպ, որ Սերբիան պատերազմի մէջ չմտնի: Սակայն, դրա հետ միասին, պետական կանցլեր իշխան Գորչակովն ասում էր նրան. «Թէեւ այսպէս, բայց մի՛ մոռանաք, որ, եթէ թագաւորը պատերազմին դէմ է, նրա որդին, գահաժառանգը, կանգնած է շարժման գլու–

1) Карцевъ.— «За кулисами дипломатіи», «Русская старина», 1908 г.
2) Кн. Мещерскій. — «Мои воспоминанія, т. II, СПБ, 1898, стр. 281.

իը »[1]: Բացւում է մեծ գաղտնիքը: Ո՛չ միայն Թագաժառանգը, ապագայ Ալեքսանդր Գ. կայսրը, շարժման գլուխը եւ ղեկավարն էր, այլ եւ նրա մայրը՝ Մարիա կայսրուհին. ասել է թէ, ի հարկէ, ոչ բացարձակ կերպով, եւ ինքը կայսրը: Թագաժառանգի պալատը, որ կոչւում էր Անիչկեան պալատ, սլաւոնական պրոպագանդի եւ զինական շարժումների գլխաւոր շտաբն էր դարձել:

Եւ այս բոլորը արտաքուստ շպարւում էր մի գաղափարական շարժման պատրւակով: Իբր թէ գոյութիւն ունի հասարակական մի շարժում, որ համակել է ամբողջ պետութիւնը ծայրից ծայր, ծնել եւ զարգանում է ինքնաբերաբար, սնւում եւ ուռճանում է մարդկութեան մէջ արդարութիւն հաստատելու, ճնշւածներին եւ կեղեքւողներին ազատութիւն տալու միանգամայն եւ բոլորանւէր անշահասէր ոգով:

Կարիք չկայ կանգնելու այս գաղափարական պրոպագանդի վրայ: Բաւական է, որ ընթերցողը կարդայ ռուս մեծ գրողներից մէկի՝ Դոստոեւսկու հրապարակախօսական յօդւածներն այդ ժամանակւայ մասին[2] եւ նա կարող է գաղափար կազմել թէ՝ ի՛նչ էր եւ ի՛նչպէս էր խօսքն ու զրոյցը Ռուսաստանում, 1876 թւի երկրորդ կիսում: Մի խաչակրութիւն քրիստոնեաների, այն էլ բոլոր Թրքահպատակ եւ ոչ միայն ռուսահպատակ սլաւոնների ազատութեան համար — ահա ի՛նչ էր վերագրում ռուս հրապարակախօսութիւնը ծիածանի գոյներ հագցրած ցարական իմպերիալիզմին: Այսպէս սովորեց խօսել եւ ռուս դիւանագիտութիւնն իր ծանուցագրերի եւ շրջաբերականների մէջ: Այսպիսի լեզու խրացրեց, վերջ ի վերջոյ, եւ պատերազմի Մոլոքը, երբ բոլոր թագուն եւ աշկարայ խորհուրդները, նպատակներն ու հաշիւները յանձնեցին նրա արիւնածարաւ ժանիքներին: 1877 թ. ապրիլի 12-ին՝ ռուսական գլխաւոր բանակի գլխաւոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը հրատարակում էր հետեւեալ հրամանը.

« Հարիւրաւոր տարիներ ծանրացած է Թրքական լուծը մեր եղբայր քրիստոնեաների վրայ:

« Դառն է նրանց դրութիւնը. ամէն ինչ, որ թանկ է մարդու համար — Քրիստոսի սուրբ հաւատը, պատւաւոր անունը, քրտինքով եւ արիւնով ձեռք բերած բարիքը — ամէն ինչ հայհոյւած եւ պղծւած է անհաւատների ձեռքով:

« Չդիմացան դժբախտները, ապստամբւեցին հարստահարիչների դէմ, եւ ահա երկու տարի է, թափւում է քրիստոնէական արիւնը. քաղաքներն ու գիւղերը հրդեհւած են, կայքը՝ թալանւած, կանայք եւ աղջիկները՝ անպատւած, շատ տեղերի բնակչութիւնը գլխովին սրի է քաշւած:

« Մեր միապետի եւ օտար կառավարութիւնների բոլոր առաջադրութիւն-

1) Карцевъ. — "За кулисами дипломатіи", "Русская старина", 1908, мартъ.
2) Достоевскій. — "Дневникъ писателя".

ները՝ քրիստոնեաների դրութիւնը բարելաւելու մասին՝ մնացին ապարդիւն: Մեր ազատարար ցարի համբերութեան չափը սպառւած է:

« Ցարական վերջին խօսքն արտասանւած է:

« Պատերազմը Թիւրքիայի յայտարարւած է:

« Ինձ հաւատացած բանակի զօրքե՛ր, մեզ բաժին է ընկել կատարել ցարական կամքը եւ մեր նախնիքների սրբազան աւանդը:

« Նւաճումների համար չենք գնում մենք, այլ մեր հայհոյւած եւ հարստահարւած եղբայրների եւ Քրիստոսի հաւատի պաշտպանութեան համար:

« Եւ այսպէս յառա՛ջ: Մեր գործը սուրբ է եւ Աստւած մեզ հետ է[1] »:

Գործն այսպէս է ներկայացւում ամբողջ մարդկութեան — մի ահագին պատերազմ առանց որ եւ է շահի ակնկալութեան: Հրաշք չէ՞ միթէ համամարդկային պատմութեան մէջ:

Չհաւատանք հրաշքներին: Անշահասիրութիւնը չափազանց սովորական խօսք է հակառակ սկզբունքը՝ շահամոլութիւնը՝ մարդկանց աչքից թագցնելու համար:

Կրկնում ենք, մենք սեպուհ պարտականութիւն կատարեցինք՝ կանգ առնելով Բուլգարիայի ազատագրական շարժման գլխաւոր դրւագների վրայ: Այս շատ եւ շատ հարկաւոր է մեր ընթերցողին, որպէս զի նա, կարդալով մեր յաջորդ գլուխները, գիտակցաբար որոշի թէ՝ կարո՞ղ էր բուլղարական ազատութիւնը անալոգիա (նմանութիւն) եւ օրինակ դառնալ հայերի համար:

3.

Դարձեալ ռուսահայ գաղութային ինտելիգենցիան էր, որ, 1876 թւից, համասլաւոնական շարժումների խոր ազդեցութեան տակ, Միքայէլ Նալբանդեանի պէս վեր էր կենում յատկապէս Թիւրքահայ գիւղացիութիւնն էլ մասնակից դարձնելու համար այդ շարժումներից հետեւելիք բարիքներին: Եւ դարձեալ Նալբանդեանի թանձր անգիտութիւնն էր բռնացած նոյն այդ « ազատարար » ինտելիգենցիայի վրայ: Ոչինչ, այս կողմից, չէր փոխւած, թէեւ Նալբանդեանի վրայից 14 – 15 տարի էր անցել:

1879 թւից, երբ հայերը պարծենում էին թէ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդւածը ունեն, որ հայոց հարցը դարձնում էր միջազգային հարց, Մելիք Զաղէն գրում էր «Մշակ»-ի մէջ. « Ուրիշ օրինակ անյարմար կը լինէր բերել քան թէ այն, որ Բեռլինի Աւագաժողովի ժամանակ Կ. Պոլսի հայոց դրութիւնը նմանում էր մի վաճառականի, որ կամենում էր սկսել մի մեծ առեւտրական սպեկուլացիա առանց նախապէս գիտենալու իր դրամական վիճակը: Նա հասկանում է, որ իր կասսան դատարկ է այն ժամանակ, երբ գործն արդէն սկսել էր[1] »:

1) Ген. М. Зыковъ. — «Война 1877-1878 г., въ Европейской Турціи», т. I.
2) «Ինչ կապ կայ մեր եւ Տաճկաստանի հայերի մէջ», «Մշակ», 1879, № 122:

Այս մի շատ ճիշտ բնորոշում էր: Միայն այս օրինակի տակ մտնում էին ոչ միայն Կ.Պոլսի հայերը, այլ և ընդհանրապէս ամէնքը, դրանց թւում եւ ինքը Րաֆֆին. ամէնքը, որոնք մաս ու բաժին ունեցան Թիւրքահայ գիւղացիութեան հարցը քաղաքական հարց դարձնելու եւ մինչեւ վերջ իր վախճանին տանելու մէջ:

«Մինչեւ վերջին ռուս – թրքական պատերազմը, շարունակում է Րաֆֆին, եթէ պատահում էր, մեր կողմերում, մի տաճկաստանցի հայ ֆէսը գըլխին, իսկոյն հուհու անունը կպցնում էինք ճակատին և երեխերս չուռ տալիս: Մեր կողմերում վանեցի եւ մշեցի մշակներին մեր երեխաներն անգամ կռօ էին կոչում, իսկ շատերը մեզանից հաւատացած էին թէ «կռօ»–ն հայ չէ, այլ քըրդերի մի որ եւ է ցեղին է պատկանում»:

Տաճկաստանցին նոյն սխալ ու մութ կարծիքն ունէր մեր մասին: Եթէ մեզանից մէկը հանդիպում էր Կ. Պոլսի եւ այլ քաղաքներից մէկում, տաճկաստանցին մի կասկածաւոր հայեացք էր գցում մեր երեսին եւ «անոնցմէ է» ասելով՝ ցոյց էր տալիս իր ընկերոջ: Մեզ համարում էին հայութիւնից օտարացած: Մենք միմեանց չէինք ճանաչում. նրանք ատելի էին մեզ, իսկ մենք նրանց: Մեր մէջ բոլոր յարաբերութիւնները կտրուած էին: Վաճառականութիւնը չէր մօտենում մեզ. վաճառականութիւնը, որ կարող էր հաղորդակցութեան կապ լինել մեր միջեւ, ա՛յդ էլ չկար:

Երբ խօսում էր ֆէսով հայերի կամ վաճառականութեան մասին, նկատի էին առնում, ի հարկէ, գաղութները, գլխաւորապէս Կ. Պոլիսն ու Թիֆլիսը: Գիւղացիական Հայաստանը ոչ ֆէս էր ծածկում, ոչ վաճառականութիւն ունէր եւ կատարելապէս անծանօթ էր երկու գաղութներին էլ. ներկայանում էր կամ հալումաշ սեւ բանւոր պրոլետարի, կամ իր երկրից փախչող անտուն անտեղ Թափառականի կերպարանքով: Ահա ի՛նչ էր գրում ժամանակի մի ուրիշ հայ գրող՝ Ծերենցը:

«Ով որ մշեցու հայուն թշուառ վիճակը կ'ուզէ տեսնել՝ թող երթայ ոչ ի Մուշ, շատ հեռու է երկիրը եւ ճամբան վտանգաւոր, այլ հոս, Պոլիս, Գասըմ – Փաշայի խան անուանեալ որջերը եւ տեսնել մշեցի ընտանիք՝ այր, կին, տղայ, գրեթէ մերկ, յոգնաբեկ, անխօս, անկարօտ, յարաժամ իր խորին աշխատութեան եւ անօթութեան, օդի խստութեան դէմ: Ով որ հայուն թշուառ վիճակը կ'ուզէ տեսնել՝ թող երթայ Վանանդ, Ախուրեան գետի ափանց մօտ, տեսնի մշեցին դառնադէմ տղու ձեռքէն մը բռնած, հալած կին մը՝ գրկի տղեկով, մի հատ կով, պարկ մը ցորեան բեռնաւորեալ առջեւը ձգած, աչքերը գետին սեւեռեալ, գիւղէ գիւղ Թափառական, յարմար առիթ մը գտնելով, որ կարենայ ինք գետին անդին՝ գերմանացի ճանապարհորդի մը ասած Էլտորատոն ձգել» [1]:

1) «Արեւելեան Մամուլ» ամսագիր, 1876, երես 23:

Այս կորած ու մոռացուած մարդկութեան համար էր, խաւարակուլ Աֆրիկայի նմանութիւնը բերող այս անյայտութեան համար էր, որ գաղութահայ ինտելիգենցիան ուզեց պատրաստել այն դրութիւնը, որ հարիւրապատիկ անգամ երջանիկ բալկանեան քրիստոնեաների համար ստեղծել էին կայսրուհիների եւ կայսրների, ամենակարող դեսպանների, հասարակական դիկտատորների գլխաւորութեամբ գործող կոմիտէները:

Այս դերը վերապահւում էր բացառապէս ռուսահայ բուրժուական ինտելիգենցիայի ձախ լիբերալ թեւին, որ թէեւ դեռ սաւառաթեւ չէր, բայց արդէն ազդեցութիւն էր ձեռք բերել մասնաւորապէս Թիֆլիսում: Նրա վրայ էր, որ մեծապէս ազդում էր Ռուսաստանի սլաւոնական շարժումը, եւ Բուլղարիան դառնում էր մի հեղինակաւոր օրինակ, որին պէտք էր հետեւել: Կ. Պոլսի հայ ինտելիգենցիան բնականաբար չէր կարող լինել ռուսահայ ինտելիգենցիայի հետ միասին, քանի որ Ռուսաստանը Թիւրքիայի անհաշտ թշնամին էր, իսկ ռուսահայ լիբերալ ինտելիգենցիան սաստիկ տոգորուած էր ռուսասիրութեամբ եւ դաւանանք էր դարձրել թէ հայութիւնն իր ամբողջ յոյսը պիտի դնէ Ռուսաստանի վրայ: Այսպիսով ստեղծւել էր «կոմիտէական Ռուսաստան»ի մի հըսկայական բաժանմունք յատկապէս Թիւրքահայերի համար, եւ այդ բաժանմունքի գաղափարախօսը դառնում էր տաղանդաւոր հրապարակագիր Գրիգոր Արծրունին՝ իր «Մշակ» լրագրի մէջ:

Այս ահագին աղմուկի մէջ, որ տարածւեց ամբողջ աշխարհում եւ մասնաւորապէս Ռուսաստանում, բուլղարական ապստամբութեան եւ կոտորածների հետեւանքով, Արծրունին գտնում էր խրախոյս եւ հրահանգ նաեւ հայերի համար եւ 1876–ի ամառը նա գրում էր թէ Թիւրքահայերն էլ պիտի իրենց ձայնը բարձրացնեն, այսինքն՝ ապստամբեն: Այս բառը — «ապստամբութիւն» — սարսափ ազդեց պահպանողական, կղերա – բուրժուական շերտերին եւ Կ. Պոլսի հայերին: Նրանք առարկեցին «Մշակ»–ին, եւ այս՝ ամենայն իրաւունքով: Յախուռն, բայց խոր մտածողութիւնից զուրկ էր Արծրունու քարոզութիւնը, — անմիջական արդիւնք նրա անգիտութեան, — որ տանում էր նրան լոկ արտաքին երեւոյթներով քաղաքական անալոգիաներ յերիւրելու տկարութեան:

Ճիշդ էր, բուլղարներն էլ, հայերն էլ տանջւում էին սուլթանական Թիւրքիայի ռեժիմից, բայց ա՛յս էր նմանութեան միակ փաստը, մինչդեռ շատ ու շատ էին այնպիսի հանգամանքներ, որոնք հեռացնում էին ամէն նմանութիւնների միտքն անգամ: Ամենից առաջ հէնց այն, որ բուլղարներն ապրում էին եւրոպական հողի այն մասի վրայ, որ միշտ մեծ պետութիւնների շահերի մըրցակցութեան ասպարէզ է եղել: Յետոյ կայ այն հանգամանքը, որ բուլղարները, ինչպէս ցոյց են տալիս 1877–ի զինուորական աղբիւրները [1], թւով 5 մի–

1) Зыковъ. —«Война 1877-1878 гг.», т. 1, стр. 3.

լոն էին, մի մխալաղաղ ազգաբնակութիւն, որ արեւմտեան կողմից սահմանակից էր ուրիշ սլաւոնական ցեղերի:

Իսկ հայե՞րը: Ճիշտ է՝ Արծրունին գիտէր, որ հայերի թիւը, Թիւրքիայում, հասնում է 3 միլիոնի, բայց գիտէ՞ր արդեօք, որ այդ թւի 1/3 մասն էր միայն ապրում բուն Հայաստանում, այն էլ խառը, բազմաթիւ օտար եւ մեծ մասամբ թշնամի ազգագրական տարրերի հետ: Յետոյ մոռանում էր Արծրունին, որ մի ժողովուրդ կարող է ազատագրուել միայն հիմնաւոր պատրաստութիւններից յետոյ, իսկ Թիւրքահայաստանի ճորտ գիւղացուն ո՞վ էր զէնք տուել, զէնքի գործածութեան վրայ վարժեցրել:

Դժուար չէր հակառակորդներին ապացուցել, որ, տւեալ պայմանների մէջ, Թիւրքահայերին ազատագրեցնել կը նշանակէր կոտորել տալ նրանց: Թէեւ այսպէս էր, բայց բառն արտասանուած էր — ազատագրութիւն, եւ ահա, այնուամենայնիւ, դրոշմւում էր, մի ռուսահայի ձեռքով, Թիւրքահայ ժողովրդի ճակատագրի մէջ, ուր եւ պիտի հաստատ բնակութիւն ստանար:

Արծրունեան այս ահարկու բառը հերձւած էր առաջացնում երկու գլխաւոր հայ գաղութների միջեւ: Կ. Պոլսի ղեկավարող շրջանները՝ միշտ անգլիասէր եւ դեսպան Էլլիոտին աչք յառած՝ նախ եւ առաջ կոպիտ ցոյցեր սարքեցին Ռուսաստանի դէմ՝ իբրեւ այն աղբիւրի, որից բղխել էր «ազատագրութիւն» նշանաբանը, եւ ապա իրենք սկսեցին աշխատել տաճկական Հայաստանի համար եւրոպական դիւանագիտութեան առաջ այնպէս, ինչպէս որ այդ կարող էր հաճելի լինել Թիւրք կառավարութեան: Մի ծանուցագիր մատուցեց անգլիական արտաքին գործերի մինիստրին, պրոպագանդ սկսեց եւրոպական մամուլի մէջ: Հայերը պահանջում էին, որ այն բարենորոգութիւնները եւ արտօնութիւնները, որ կը ստանան ազատագրած սլաւոնները, տրւեն եւ իրենց: Այդ բանին իրենք իրաւունք ունեն, քանի որ չեն ազատագրուել իրենց կառավարութեան դէմ, հաւատարիմ են եղել նրան:

Արծրունին չէր ժխտում գործողութեան դիւանագիտական եղանակը: Երբ որոշւեց, որ Կ. Պոլսում դեսպանական ժողով հրաւիրւի՝ սլաւոնական հարցը լուծելու համար, Արծրունու նախաձեռնութեամբ, Թիֆլիսի հայերը ստորագրեցին մի հաւաքական ուղերձ, որի մէջ նրանք խնդրում էին Աղեքսանդր Բ.-ից՝ մտցնել դեսպանական խորհրդի զբաղմունքների մէջ նաեւ Թիւրքահայերի դրութեան բարելաւման խնդիրը: Այդ դիմումին Կ. Պոլսի Ներսէս պատրիարքը պատասխանում էր՝ այցելելով դեսպան Էլլիոտին եւ յայտարարելով նրան, թէ հայերը օտար պետութեան միջամտութեան կարիքը չեն զգում եւ իրենց պէտքերի համար լաւագոյն միջոց են համարում դիմել ուղղակի իրենց երկրի կառավարութեան:

Բայց բուլղարական օրինակը չափազանց մեծ էր, որպէսզի Արծրունին կարողանար հաւատալ, թէ հնարաւոր է լոկ թղթի վրայ գրած դիւանագիտական դիմումներով ազատութիւն պատրաստել մի ժողովրդի համար: Ուստի նա

գրում է մի առաջնորդող յօդւած՝ «Հայոց խնդիր» վերնագրով, որի մէջ տարակուսանք եւ հեգնանք ազդող լրջութիւնը խառնուած էին իրար հետ:

«Ինչպէ՞ս, — հարցնում է նա, — հասան հայերը իրենց ձայնն էլ Եւրոպային լսել տալու համար:

«Ապստամբութեա՞մբ:

«Ոչ:

«Ապստամբութիւնը հայոց ազգի բնաւորութեան հակառակ է:

«Հայոց ազգը չափից դուրս ստրկացած է, ճնշւած է եղել դարերով, որ յանդգնի զէնք վերցնել, արիւն թափելով իր իրաւունքները պաշտպանել ...

«Այդ կարող են անել այն ազգերը, որոնք դեռ ունեն ազատութեան զգացմունքի կայծն իրենց սրտերում, բայց ոչ թէ հայոց ազգի պէս կատարեալ կրաւորականութեանը հասցրած մի ազգութիւն:

«Հայոց ազգը մի ուրիշ զարմանալի յատկութիւն ունի եւ այդ յատկութիւնը նշմարելի էր նրա մէջ իր ամբողջ պատմութեան ընթացքում: Նա ուզում է խելքով, մտաւոր զէնքով, ապացոյցներով, դատողութիւններով յաղթել իր թշնամուն: Նրան ճնշում են, նրան ծեծում են, վիրաւորում են, բռնաբարում են, սպանում են, իսկ նա փիլիսոփայութիւններ է անում, ապացուցանում է, որ այդ անարդարանք է, վիճում է իր ճնշողի, իր հալածողի, իր թըշնամու հետ:

«5-րդ դարում, Զրադաշտի կրօնի պաշտողները հայերին ճնշում էին, Հայաստանն աւերում էին, ամբողջ քաղաքների, գաւառների, գիւղերի բնակիչներին գերութեան էին տանում, բնակութիւններին կրակ տալիս, կանանց ու կոյսերին անպատւում, տանջում էին կամ բռնաբարում, մարդկանց կոտորում, իսկ հայն իր Եղիշէի կամ Եզնիկի բերանով դատողութիւններ էր անում, ապացուցում էր իր բռնակալին՝ նրա դաւանած կրօնի անհիմն լինելը եւ նրան իր կրօնը՝ քրիստոնէութիւնը քարոզում: Պարսից արքայի հրամանով բռնաբարւած հայ քաջ նախարարները իրենց բռնակալներին քրիստոնէութիւն, արդարութիւն եւ մարդկային իրաւունք էին քարոզում:

«Կար մի ուրիշ ազգ՝ հրեաները, որոնք իրենց թշնամիներին աղօթքներով ու հրաշքներով էին ուզում յաղթել. բայց հայոց ազգի պէս մի ազգ, որ սուրը ձեռքին կատաղի թշնամու առաջ անզէն կանգնած քարոզէր նրան փիլիսոփայութիւն, մարդասիրութիւն, լոկ խօսքով, լոգիկական մտախորհութեամբ պահանջէր մարդկային իրաւունք, արդարութիւն — հայոց ազգի պէս մի ազգ հազիւ թէ մի ուրիշը կը գտնուի աշխարհիս երեսին:

... «Հայը կանգնում է բարբարոս, կատաղի, մոլեռանդ մահմեդականի առջեւ, ապացուցանում է նրան իր իրաւունքը, աղերսներ է տալիս նրան, պահանջում է արդարութիւն եւ դուցէ վերջը սպառնում է նրան, — բայց ի՞նչպէս, ինչո՞վ ... սպառնում է, որ եթէ չը ստանայ իր պահանջած ամենաանհրաժեշտ մարդկային իրաւունքը, այն ժամանակ ստիպւած կը լինի գաղթել

իր հայրենիքից, որ նուաճած է Թիւրքերից, որ Թիւրքաց պետութեան մի մասն է կազմում ... կարծես թէ վայրենի Թիւրքը մտաւորապէս այնքան զարգացած է, որ կարող է հասկանալ, որ ճշմարիտ էլ իրեն վնաս է, եթէ աշխատասէր, ընդունակ հայոց ազգի պէս տարրը գաղթի իր պետութիւնից:

« Եւ այժմ Արեւելեան հարցի մէջ էլ հայը հաւատարիմ է մնացել իր պատմական յատկութեանը, իր քաղաքական բնաւորութեանը ...

« Նա ամբողջ Եւրոպան ուզում է համոզել, նա Թիւրքին ուզում է յաղթել իր սիրած, սովորական միջոցով, պարզ հասարակ լոգիկայով, մտաւոր ուժով :

« Ցանկանում ենք մեր ազգին, որ եթէ նրան վիճակուած է այդ ճանապարհով ընթանալ, կատարելապէս յաջողւի այդպիսով ստանալ իր մարդկային իրաւունքը, ձեռք բերել արդարութիւնը [1] »:

Այս բոլորը մի ծաղրանկար էր, որի հիմքն ու թելադրիչն էր այն դիւանագիտական գործունէութիւնը, որ սկսել էին Կ. Պոլսի հայերը ընդդէմ Ռուսաստանից եկած ապստամբութեան նշանաբանի: Ծաղրելով այդ պոլսական ձեռնարկութիւնը, Արծրունին ուզում էր հասկացնել, որ փրկութիւնը, այնուամենայնիւ, ապստամբութիւնն է: Եւ իբրեւ ապացոյց ծառայեցնում էր հայ ժողովրդի անցեալի աղճատումը, աղաւաղումը, գլխիվայր բացատրութիւնը նրա պատմութեան այն շրջանի, երբ նա՝ կորցնելով իր քաղաքական միութիւնը, ինչպէս տեսանք վերեւում, կորցնելով, ուրեմն, հայկական բարձրաւանդակի պահանջած պայմանն իրագործելու հնարաւորութիւնները, ցրուած, մանր կաթիլներով տարածուած նուաճող ազգութիւնների մէջ իր գոյութիւնը պահպանելու համար, ընդգրկում էր Թոյլի, փոքրամասնութեան համամարդկային յատկութիւնը — հպատակութիւնը ուժեղին, տիրողին, աղաչաւոր դիրք, եւ այլն: Արծրունին ասում էր թէ՝ հայ ժողովրդի բնական յատկութիւնն է այդ — փիլիսոփայութիւններ անել, լոգիկայի, մտաւոր ուժի միջոցով համոզել սուրը բռնած վայրենի թշնամուն: Բայց աւելի մի ֆելիէտոնական սրամտութիւն էր, քան մի լուրջ վերաբերմունքի արգասիք: Թէ որքան ազատ ու կամայական կերպով էր Արծրունին վերաբերւում պատմութեան, ցոյց է տալիս նրա բնորոշումը 5-րդ դարի, որ ընդհակառակը լի էր յախուռն ապստամբութիւններով:

Ժամանակի հասարակական մտքի զարգացման թուլութեան աստիճանն է ցոյց տալիս այն հանգամանքը, որ «Մշակ»-ի այսպիսի դատողութիւնները դառնում էին ճշմարտութիւններ եւ հետեւաբար խոր թափանցում էին հասարակաց հոգեբանութեան մէջ առանց քննութեան եւ վերլուծման: Մանաւանդ որ Արծրունու փիլիսոփայութիւնը շատ հաճելի կերպով շոյում էր հայկական բարձրամիտ շովինիզմը: Փիլիսոփաներից կազմուած մի ժողովուրդ, որ չա-

1) Մշակ», 1876, № 47:

րանակ, զարկերով, իրաւունքի եւ արդարութեան դատն էր տանում վայրենի ժողովուրդների մէջ: Այժմ ժամանակ չէ՞, որ այդ փիլիսոփայ ժողովուրդը խօսէր, իրեն տանջողների հետ, զէնքի լեզւով:

Նոյն 1876-ին Արծրունին մի փոքրիկ բրոշիւր հրատարակեց ռուսերէն լեզւով՝ նուիրուած Արեւելեան հարցին, որի մէջ այն միտքն էր անցկացնում թէ Թիւրքերին Եւրոպայի հողից Ասիա վտարելով չի լուծւի Արեւելեան հարցը, քանի որ նա միայն եւրոպական հողի վրայ ապրող սլաւոնների եւ այլ ազգութիւնների հարց չէ, այլ եւ Ասիայում ապրող կուլտուրական ցեղերի — հայերի, յոյների, հրեաների ազատութեան հարցն է եւ պիտի լուծւի հէնց այժմ :

« Իսկ եթէ, գրում էր Արծրունին, նա (Եւրոպան) ուզում է ազատել միայն եւրոպական նահանգները Թրքական լուծից եւ դրանով կարծում է լուծել Արեւելեան հարցը, այդ դէպքում նա կարող է համոզուած լինել, որ հէնց, շատ - շատ տասը տարուց յետոյ նա նորից կ'ունենայ արեւելեան հարց եւ գուցէ աւելի յուսահատական, աւելի սարսափելի կուով: Կարո՞ղ է Եւրոպան երաշխաւոր լինել, որ այն ժամանակ նա կարողութիւն կ'ունենայ խցել իւր ականջները եւ չլսել միլիոնաւոր մարդկանց հեծեծանքները միայն այն պատճառով, որ յուսահատական, գուցէ եւ օրհասական կռիւը տեղի կ'ունենայ ոչ թէ Եւրոպայում, այլ Փոքր Ասիայում [1] »:

Այս խօսքերով Արծրունին լրացնում եւ ամբողջացնում էր այն անելիքը, որ թելադրում էր նրան բուլղարական նմանութիւնը: Բարողելով, որ հայերն էլ ապստամբեն, Արծրունին, ի հարկէ, այնքան միամիտ չէր, որ կարծէր թէ ապստամբելով կարելի է ջարդել Թիւրքերին եւ պայմաններ թելադրել նրանց: Այստեղ նրան գերում էին մեղ արդէն յայտնի ֆետիշները — եւրոպական հանրային կարծիք, մամուլ, Գլադստոն, եւայլն: Ճիշտ ուրեմն նոյնը, ինչ Բուլղարիայում — ապստամբութիւն, կոտորած, հեծեծանքներ Թիւրքահայաստանում՝ համոզուած լինելով թէ Եւրոպան չի կարողանայ իր ականջները խցել նրանց չլսելու համար:

Այս մի ամբողջ ծրագիր էր, կամ, աւելի ճիշտն ասած, միակ ծրագիրն էր, որ լինելով կրկնութիւնը բուլղարական օրինակի, դեռ 1876-ին, երբ ջանքեր էին լինում մտցնելու Թիւրքահայ գիւղացիական հարցը միջազգային դիւանագիտութեան մէջ, դառնում էր հիմք եւ պատուանդան Թիւրքահայ յեղափոխութեան, անխախտ ու անփոխարինելի, սկզբից մինչեւ վերջ: Գրիգոր Արծրունին առաջինն էր, որ հրապարակեց փոխ առած յեղափոխական սկզբունքները եւ այսպիսով պիտի համարւի երկրորդ հիմնադիրը Թիւրքահայ յեղափոխական գաղափարախօսութեան:

Այս դերից հետու նա չգնաց՝ թոյլ տալով որ հրապարակած սկզբունքներն

1) Д-ръ Г. Арцруни. — «Восточный вопросъ», Тифлисъ, 1876, с. 6.

արծարծեն եւ ժողովրդականացնեն ուրիշները։ Այս կողմից նա ունենում է երկու ուժեղ համհարզներ, որոնք ապստամբական պրոպագանդը մտցնում էին գեղարուեստական գրականութեան մէջ եւ դրանով իսկ ահագին ազդեցութիւն գործում այն ժամանակուայ միամիտ, անգիտակից հասարակութեան վրայ։ Դրանցից առաջինն էր արդէն, 20 – 25 տարուց ի վեր, «ազգային բանաստեղծ» տիտղոսով զարդարուած Գամառ Քաթիպա–ն, իսկ երկրորդը՝ քիչ ժամանակից յետոյ նոր – նոր անուն ստեղծող տաղանդաւոր վիպագիր Րաֆֆի–ն։

1877 թուի ապրիլին սկսւում է ռուս – թրքական պատերազմը։ Նա գնում էր քար ու քանդ անելու ամբողջ ասիական Թիւրքիան, իսկ հայերին պատճառելու մեծամեծ դժբախտութիւններ։ Բայազէտը եւ Ալաշկերտը ռուսների ձեռքից յետ խլելու համար թրքական հրամանատարութիւնը զէնքի է կանչում բազմաթիւ քրդական ցեղեր։ Յայտնի են Շէյխ – Ուբէյդուլլահի, Շէյխ – Ջալալէդդինի եւ ուրիշների արշաւանքները Քրդստանից մինչեւ Բայազէտ։ Նրանց ճանապարհի երկու կողմերում գտնուող գիւղերի, մինչեւ իսկ Վան քաղաքի հայերը ենթարկւեցին «սրբազան պատերազմ» գնացող քրդերի բռնութիւններին — կողոպուտ, տանջանքներ, կոտորածներ։ Այնուհետեւ Բայազէտ քաղաքի փոքրաթիւ ազգաբնակութիւնն է որ քաշում սոսկալի գազանութիւններով։ Իսկ Ալաշկերտի հովտի հայ ազգաբնակութիւնից մինչեւ 20,000 հոգի, երբ յայտնի է դառնում, որ ռուս զինուորները Ուչ – Քիլիսայի վանքում կոտորել են մի քանի տասնեակ նշանաւոր քիւրդ առաջնորդներ, վախենալով ընդհանուր քրդական վրէժխնդրութիւնից, թողնում են իրենց տունն ու տեղը եւ նահանջող ռուսական բանակի հետ փախչում են Երեւանեան նահանգը։

Սրանք ժողովրդական մեծ աղէտներ էին։ Բայց սարսափելին սրանք չէին, սարսափելին այն էր, որ Թիւրք կառավարութիւնը պատերազմի կանգնած քրդերին բաժանել էր 20,000 կատարելագործուած հրացաններ, Հենրի Մարտինի [1], որոնք այլ եւս չվերադարձւեցին կառավարութեան։ Աղէտի մեծութիւնը հայ ժողովրդի համար ըստինքեան հասկանալի է։ Եթէ քիւրդն իր հնադարեան նիզակով, վահանով եւ կայծքարի հրացանով պատուհաս էր իր դըրացի ժողովուրդների համար, հասկանալի է թէ ի՛նչ պիտի դառնար նա այնուհետեւ, երբ նրա զէնքը դառնում էր կատարելագործուած հրացանը։ Ահա ի՛նչ աղէտ էր բերում Թիւրքահայ առանց այն էլ անզէն ու անճար գիւղացիութեան ռուս – թրքական պատերազմը, որ սկսել էր իբր թէ քրիստոնեաների ազատութեան համար։

Բայց դեռ յայտնի չէր թէ ինչո՞վ կը վերջանայ պատերազմը։ Գրիգոր Արծրունին յոյս ունէր, որ Ռուսաստանը կը միացնի իրեն Թիւրքահայաստանը եւ այդպիսով կ՚ազատէ հայերին։ Միւս կողմից էլ Կ. Պոլսի հայերը եռանդով կատարում էին իրենց հայրենասիրական պարտքը դէպի օսմանեան

---

1) Blue Book, Turkey, 1880, No 71.

կայսրութիւնը, եւ գրեթէ ամէն օր նրանց լրագիրները կատաղի հակառուսական յօդւածներ էին տպում՝ հաւատացնելով թէ հայերի դրութիւնը Թիւրքիայում շատ աւելի լաւ է, քան Ռուսաստանում։ Իսկ սուլթան Աբդիւլ – Համիդը, հայ ժողովրդի ապագայ ճիւաղ – դահիճը, կանչելով իր մօտ Ներսէս պատրիարքին, հաւատացնում էր, որ ինքը շատ է սիրում հայերին, նրանց լաւութիւններ շատ պիտի անի եւ՝ իբր առհաւատչեայ՝ պարգեւում է նրան օսմանիէի շքանշանի 1–ին աստիճանը, որի համար էլ ստանում է շողոքորթւած կղերականից «հրեշտակ» անունը։

Այսպէս էր 1877 թուականը։ Եւ այսպիսի մի տարում էր, որ Գամառ – Քաթիպան իրեն անյատուկ առատութեամբ դուրս էր թափում ոտանաւորներ, ամբողջ 12 հատ, որոնք Թիւրքահայի ցաւն էին ողբում եւ գրգռում նրան զէնք առնել, կռւել, կռւով ազատութիւն ձեռք բերել։ Ամենքին յայտնի էին այդ «ազատ» կոչւած երգերը, մեծ մասամբ բռնազբօսիկ, արհեստական կառուցւածքներ, որոնք սակայն դարագլուխ են կազմել մեզանում, սերունդներ են ոգեւորել, մարտական երգեր են դարձել, գուցէ շնորհիւ մեր հասարակական անգրագիտութեան, բանաստեղծական արւեստի թոյլ զարգացման։ Եթէ կար այդ ոտանաւորների մէջ մի ուժեղ ջիղ, որ ընդունակ էր զգացմունք գրգռել ամբոխային կրծքի տակ, այդ այն արբեցնող եւ չչմեցնող շովինիզմն էր, որ շոյում էր ազգային մեծամտութիւնը, սնապարծութեան եւ յոխորտանքների աղբիւր էր դառնում։ Մի հատ նմուշ՝ նոյն այդ 1877–ին գրւած «Վանեցի կարիչ» ոտանաւորը թող գայ մեր ասածը հաստատելու. —

Հազիւ լրացաւ 21 տարիս,
Աղւամազ բուսաւ երես – ծնօտիս·
Թշերէս կարմիր վարդեր կը կաթէ,
Ջիղերս ամուր, ասես՝ երկաթէ։

Տուէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառն արմատով գետինէն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ուժ, ասէ՛ք, ի՞նչ անեմ։

Առջեւս դրէք մարդ հարիւր ու հազար —
Ջարդեմ տրորեմ զերդ բողկ ու գազար
Ի՞նչ այլք շարքու մէջ՝ ա՛յն ես օր կ՚անեմ ···
Մէջս այդքան ուժ, ասէ՛ք, ի՞նչ անեմ։

Ինձ պէս բիւրերով լի է Հայաստան,
Նրա սուրբ հողին ըլեմ ես ղուրբան,

Մարմինն ուժեղ եւ առոյգ է հային,
Այլ ափսոս, թմրած է նրա հոգին:

Թէ մի օր զարթի նրա վեհ հոգին,
Նա պարզ կցուցնէ օսմանլի ազգին —
Ո՞վ էր երկուսէն ստրուկ եւ կամ տէր ···
Ա՜խ, երբ պիտ թնդայ, խեղճ հայի սրեր ··· [1]:

Այսպէս մերթ աւելի, մերթ պակաս յաջողակութեամբ բանաստեղծութիւններ էր յերիւրում ժամանակի ամենաժողովրդական բանաստեղծի արդէն շատ աղքատացած եւ տժգունացած մուսան՝ Հայաստանում բիւրաւոր կարմրաթշիկ, երկաթ ծամող եւ ծառն արմատով գետնից հանող վանեցիներին, մշեցիներին ոտքի կանգնեցնելու համար: Ապստամբութիւն էր հարկաւոր նոյն իսկ պատերազմի ժամանակ, հարկաւոր էր արիւնահեղութիւն բուլղարներին նմանելու համար, թէկուզ ի՞նչ պակաս էին այն կոտորածները, որոնց զոհ դարձան նոյն այդ կարմրաթշիկ հայերը Բայազէտում եւ քրդական արշաւանքի ճանապարհին:

Ի՞նչպէս պիտի կատարէր հարիւր ու հազար մարդկանց բաղձը եւ գազանի պէս ջարդող տրորող հսկաների ապստամբութիւնը: Զհաշւելով կառավարական զօրքերը, միայն քրդերն արդէն ունէին 20,000 Հենրի Մարտինի հրացաններ: Իսկ Գամառ – Քաթիպայի զարիր մշեցին նոր էր դռնէ դուռ ընկնում զէնք մուրալու համար: Մի տեղ նա ասում էր՝ «խղճացէք հայ ազգիս, տուէք մէկ մէկ թուր», միւս տեղ՝ «խղճացէք հայ ազգիս, տուէք մեզ հրացան», մի երրորդ տեղ՝ «չունենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ», կամ թէ՝ «չունենք մենք ձեր փարան, տուէք թնդանօթ», վերջն էլ՝ «հայ աղբարք, շնորհեցէք դուք մեզ մէկ մէկ զէնք [1]»:

Այսպիսի, եթէ կարելի է այսպէս ասել, տնայնագործական միջոցներով սարքւած ապստամբութեան միտքը ժողովրդականութիւն էր գտնում մեր անպատրաստ, դեռ շատ ու շատ նահապետական – տիրացուական միջավայրում: Եւ Գամառ – Քաթիպա-ն այդպիսի ապստամբութեան երգիչ մնաց մինչեւ իր կեանքի վերջը:

Նոյնանման տնայնագործական ապստամբութեան առաքեալ էր հանդիսանում եւ Րաֆֆի-ն, բայց սրա դերն աւելի խոշոր ու կարեւոր էր: Իբրեւ Թիւրքաց Հայաստանում եղած մարդ, Րաֆֆի-ն ծրագիր էր տալիս իր վէպերի մէջ, ուստի նրան պէտք է համարել թիւրքահայ յեղափոխական շարժման առաջին կազմակերպիչը:

1) Գամառ – Քաթիպայի բանաստեղծութիւնները, Պետեր. 1895, երես 145:
2) Տես՝ «Ղարիբ Մշեցի» ոտանաւորը, եր. 152—153:

4.

1877-ի վերջերին մօտ պատերազմը Թիւրքիայի համար աղէտալի ընթացք էր ստանում: Արդէն խօսւում էր հաշտութեան մասին: Գլխաւոր ուշադրութիւնը գրաւում էր հողային կցումների հարցը: Ռուսաստանը պարտաւորւել էր եւրոպական հողերից ոչինչ չվերցնել իր համար: Մնում էր ասիական Թիւրքիան, ուր ռուսական բանակը գրաւել էր կարեւոր ռազմագիտական դիրքեր: Ռուս կառավարութիւնը չէր թաքցնում իր դիտաւորութիւնը՝ հաշտութեան պայմանների մէջ մտցնել այդ երկրների կցումը Ռուսաստանին, երկիրներ, որոնց մեծ մասը գտնւում էր Հայաստանում:

Այսպիսով Հայաստանի հողն առանձնապէս կարեւորութիւն էր ստանում ոչ միայն Թիւրքիայի, այլ եւ առաւելապէս Անգլիայի համար, որի իմպերիալիստական գիշատիչ երեւակայութիւնն արդէն սկսում էին տանջել Հայաստանի բերդերից դէպի Միջերկրական ծովը եւ Հնդկաստանի ճանապարհներն արշաւող ռուսական գնդերը: Եւ պատերազմը դեռ չվերջացած՝ անգլիական դիւանագիտութիւնը գործի է դնում իր գիտեցած բոլոր միջոցները մօտիկ թէ հեռաւոր ապագայի այդ վտանգը կասեցնելու համար:

Այդ միջոցներից մէկը դառնում են հայերը: Հայերի միջոցով պահել Հայաստանը օսմանեան տիրապետութեան տակ — ահա մի քաղաքական հնարաւորութիւն որ տեղի պիտի ունենար այսպէս. քանի որ Ռուսաստանը պատերազմի նպատակ էր յայտարարել քրիստոնեաների ազատութիւնը, թիւրքահայերը պիտի դիմէին ռուսներին եւ խնդրէին Ռուսաստանին Հայաստանի ազատութիւնը՝ Թիւրքիայի հովանաւորութեան տակ, որ կը նշանակէ թէ՝ Հայաստանը կը մնայ Թիւրքիայի սահմանների մէջ: Այս ծրագիրը անգլիական նոր դեսպան Լայարդի մտքի պտուղն էր եւ, ի հարկէ, ստանում էր նաեւ թիւրք կառավարութեան հաւանութիւնը: Գործը պիտի կատարէր Ներսէս պատրիարքը, որ արդէն իրեն ցոյց էր տւել վաղուց օսմանեան հայրենասէր՝ միաժամանակ ամբողջովին նւիրւած անգլիական ազդեցութեան: Եւ Ներսէսը, առանց երկար մտածելու, դարձնում է իրեն գործիք անգլօ – թրքական դիւանագիտական ինտրիգի:

Հայ ժողովրդի համար մի կատարեալ դժբախտութիւն էր եւրոպական խարդախ եւ խաբեբայ դիւանագիտութեան մէջ խրւել Անգլիայի ձեռքով: Առանձին մի տարաբախտութիւն էր եւ այն, որ, հաշտութեան բանակցութիւններ վարելու համար, ռուսների կողմից լիազօր էր նշանակւած հայերի հին ծանօթը, այժմ կոմսի տիտղոսով ծանրաբեռնւած գեներալ Իգնատիեւը, որ իր կողմից էլ, իր պետութեան շահերի համար, ձեռք առաւ հայերին:

Անգլօ – թրքական յանձնարարութիւնը յաջողութեամբ կատարելու համար, Կ. Պոլսի հայերը նախապէս պիտի ծածկէին իրենց ռուսատեացութիւնը մի շինծու եւ աղմկալի ռուսասիրութեամբ: Ներսէս պատրիարքը սկսեց մի երկդիմի խաղ: Հայերը մերժեցին զինւորներ տալ թիւրք կառավարութեան՝

բարձրաձայն յայտարարելով թէ իրենք քրիստոնեաներ են եւ չեն գնայ քրիստոնեաների դէմ կռուելու: Ներսէս պատրիարքը խնդիրք ուղարկեց Աղեքսանդր կայսրին եւ ինքն էլ անձամբ գնաց Սան – Ստեֆանօ, գլխաւոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայի մօտ եւ խնդրեց նոյնը, ինչ խնդրել էր ցարին — Թիւրքաց Հայաստանի ազատութիւնը: Իր քաղաքականութիւնը Բոսֆորի ափում իրար հետ մրցող երկու կատաղի հակառակորդների նկատմամբ Ներսէսը բացատրում էր այսպէս. « Ռուսիոյ երախտագէտ ըլլալով յուսալ յԱնգլիա եւ Անգլիոյ շնորհիւ ապահովել մեր բարոյական եւ նիւթական բարեկեցութիւնը (1) »:

Դժուար էր այս երկդիմի դերը, մանաւանդ երբ ներկայ էր Իգնատիեւի պէս մի փորձւած դիւանագէտ: Նա տեսնում էր, որ, իր հետ, հայերի դրութեան մասին խօսելու համար, պատրիարքի կողմից ուղարկւած են երկու բարձրաստիճան հայ էֆենդիներ (կառավարական պաշտօնեաներ), որոնք միշտ սաստիկ կերպով հակառակում էին իրան՝ իբրեւ օսմանեան հայրենասէրներ եւ արեւմտեան դիւանագիտութեան ջերմ կողմնակիցներ: Նրա համար միանգամայն հասկանալի էր, որ հայերի յարուցած հարցը անգլօ – թրքական մի ձեռնարկութիւն է եւ՝ բոլորովին չխաբւելով երկուսի շողոքորթութիւններից ու աղերսաւորական դիրքից՝ սոսկալի վրէժ էր հանում Գէորգ կաթողիկոսից, պատրիարքից ու նրա շրջապատողներից էլ, վերջապէս, իրեն հակառակորդ էֆենդիական դասակարգից՝ մի շատ ճարպիկ դիւանագիտական խաղով: Ահա թէ ինչպէս.

Հայ պատւիրակները յամառ կերպով խնդրում էին, որ Հայաստանին տրւի ինքնավարութիւն: Իգնատիեւը անշուշտ հասկանալով, որ այդ անգլիական մի թակարդ է, նոյնպէս յամառ կերպով մերժում էր այդ գաղափարը եւ Սան – Ստեֆանոյի դաշնագրութեան 16–րդ յօդւածի մէջ հրամցնում էր « տեղական պէտքերի պահանջւած ռեֆորմներ » անորոշ, առաձգական, մշուշապատ արտայայտութիւնը: Կար այդտեղ մի ուրիշ ընծայ — Թիւրք կառավարութիւնը պատրաստւում էր պաշտպանել հայերին քրդերից եւ չէրքէզներից: Յօդւածի այս մասը, չնայած իր պարզութեան, նախընթաց մասից պակաս անորոշ չէր: Ի՞նչ միջոցներով եւ ի՞նչպէս պիտի կատարւէր այդ պաշտպանութիւնը, կարելի էր այդ մասին վիճել տարիներով:

Թէ ինչո՞ւ էր կոմս Իգնատիեւն այսպիսի անորոշութիւններ մտցնում մի միջազգային վաւերագրի մէջ, որ հայերի համար որոշ իրաւունք պիտի ստեղծէր — այս նա բացատրում էր իր յիշատակարանի մէջ՝ մի սրտացութեամբ, որից աւելին հազիւ թէ կարելի լինէր պահանջել մի դիւանագէտից: Բանից դուրս է գալիս, որ 16–րդ յօդւածը նա գրել է իսկապէս ոչ թէ թիւրքահայերի, այլ ռուսական դիւանագիտութեան համար:

---

1) Մուշեղ Եպիսկոպոս — «Մանչեսթրի Հայ Գաղութը», Պոստոն, 1911, եր. 87–88:

« Այս յօդւածի խմբագրութիւնը, — կարդում ենք մենք այդ յիշողութիւնների մէջ, — հնարաւորութիւն էր ընծայում Ռուսաստանին տալ նրան առաձգական նշանակութիւն նայած հանգամանքներին եւ, յամենայն դէպս, պաշտօնապէս միջամտել Բ. Դռան պարտաւորութիւնների կատարման եղանակի մէջ՝ հիմնւելով տեղական պէտքերի վրայ: Հանդիսաւոր խոստովանութիւնը միջազգային ակտի մէջ թէ՝ քրիստոնեայ ազգաբնակութեան ապահովութեան սպառնում էին քրդերը եւ չէրքէզները, պարունակում էր հրապարակային դատապարտութիւն թրքական վարչութեան՝ ճանաչւած սուլթանի լիազօրի համաձայնութեամբ: Զինւած այս դիւանագիտական յօդւածով, ռուս դեսպանը Կ. Պոլսում ստանում էր կատարեալ հնարաւորութիւն նշանաւոր չափով ազդելու հայ ազգաբնակութեան դրութեան բարելաւման վրայ եւ նկատի ունենալով, հարկաւ, Ռուսաստանի շահերը, տալ հանրամարդկային համապատասխան զարգացում հայոց հարցին Թիւրքիայում: Սրա համար, ի հարկէ, պէտք կը լինի գործել շրջահայեցողութեամբ, եռանդուն կերպով, տեղական պայմանները կատարելապէս ծանօթ լինելով եւ աչքից չգցելով մեր քաղաքականութեան վերջնական նպատակները » (1):

Այսպիսով, ամէն ինչ Ռուսաստանի համար. իսկ հայերին մնում էր մի մեծ հաճոյք, որ այսպէս էր ձեւակերպում Իգնատիեւը. « Հայերի համար չափազանց շատ նշանակալից էր, որ, առաջին անգամ այն օրւանից, երբ գոյութիւն ունեցաւ օսմանեան կայսրութիւնը, յիշատակւեց միջազգային դաշնագրի մէջ հայերի մասին, իսկ Բ. Դուռը հրապարակօրէն ճանաչեց հայ ազգի գոյութիւնը Ասիական Թիւրքիայում » (2):

Բայց, այսպէս, Թիւրքաց Հայաստանի տարաբախտ հայ գիւղացիութիւնը կարող էր սպասել, թէ իր կացութիւնը որոշ չափով կը թեթեւանայ, քանի որ կոմս Իգնատիեւը իր խորամանկօրէն հիւսւած եւ մշուշով լցւած յօդւածն սկսում էր այսպիսի խորամանկ նախադասութեամբ՝ « Որովհետեւ ռուսաց զօրքերի հեռանալն այն հողամասերից, որոնք պիտի վերադարձւեն Թիւրքիային, կարող է առիթ տալ ընդհարումների եւ բարդութիւնների, որոնք ի վիճակի կը լինեն վնասակար ազդեցութիւն թողնել երկու կողմերի յարաբերութիւնների վրայ, ուստի Բ. Դուռը պարտաւորւում է իրականացնել, առանց յապաղելու, այն բարելաւումները եւ իրականացումները, եւ այլն »: Այս պատճառաբանութիւնը մի դիմակաւորւած հնարաւորութիւն է ռուսական զօրքերով գրաււած պահելու ա՛յն երկրները Հայաստանում, որոնք նորից պիտի յանձնւէին Թիւրքիային. օրինակ, հէնց այնպիսի մի կարեւոր ռազմագիտական կենտրոն, ինչպիսին էր Էրզրումը: Այս կը լինէր իսկապէս մի հզօր ե–

---

1) Гр. Н. П. Игнатьевъ. — «Сан-Стефано», «Ист. Вест.», 1915 г., с. 59-60:
2) Ibid.

բաշխուորութիւն, որ կը հարկադրէր Թիւրք կառավարութեան՝ կատարելու իր յանձն առած պարտաւորութիւնը հայերի նկատմամբ։

Անշուշտ, ռուս դիւանագէտն իրեն խելօք եւ կանխատես էր զգում 16-րդ յօդւածը խմբագրելիս. հաւատացած՝ որ միայն ինքն է հասկանում նրա անորոշութիւնների մէջ դրւած գաղտնի քաղաքական դիտաւորութիւնները։ Բայց նա խաբւած էր։ Եւրոպական դիւանագիտութիւնը նրանից պակաս նրբամիտ եւ ճարտար չէր եւ ճիշտ այնպէս կարդաց 16-րդ յօդւածի իսկական՝ ոչ դրւած բովանդակութիւնը, ինչպէս կարդում էր ինքը՝ Իգնատիեւը։ Եւ այդ պատճառով նա, այդ դիւանագիտութիւնը, չսպասեց Սան-Ստեֆանոյում դրւածը, վեց ամիս էլ չանցած, Բերլինում, այնպէս փոխել, այնպիսի կերպարանք տալ Իգնատիեւեան անորոշութիւններին, որ սրանք դարձան ոչ միայն Ռուսաստանի, այլ եւ մնացած մեծ պետութիւնների համար, միջամտութիւն գործելու, շահեր դրդռելու եւ քաղաքական վաճառքներ կատարելու գործօններ։ Եւ, այսպէս, հայ ժողովուրդը Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդւածով չէր ձեռք բերում իր համար ոչինչ գրական, անվիճելի միջազգային իրաւունք, որի ամբողջ բովանդակութիւնը անկասկածելի դարձնէր Թիւրք կառավարութեան պարտաւորութիւնների սահմանները նրա վերաբերմամբ։

Եւ երբ կարդում ենք Սան-Ստեֆանոյի ամբողջ դաշնագրութիւնը, տեսնում ենք, որ նրա հեղինակը զուրկ չի եղել պարզ, որոշ մարդկային լեզւով խօսելու ընդունակութիւնից։ Բաւական է հէնց, որ մի ակնարկ գցենք 16-րդ յօդւածին նախորդող 15-րդ յօդւածի վրայ, որ վերաբերւում է եւրոպական Թիւրքիայում գտնւող յունական շրջաններին։ Այստեղ իրենց իսկական անուններով թւարկւած են Թիւրքիայի անկիւնները, յականէ յանուանէ յիշատակւած են այդ շրջանի համար հարկաւոր ռեֆորմները եւ թէ ինչ ծաւալով ու ծրագրով պիտի իրագործւեն այդ ռեֆորմները։ Մշուշապատ անորոշութիւնը միմիայն հայերին վերաբերեալ յօդւածի բովանդակութիւնն էր, այն ժողովրդի, որի բարեացակամն էր իրեն յայտարարում կոմս Իգնատիեւը։ Իմպերիալիստական պետութեան հարկաւոր էին ժողովուրդներ – զոհեր՝ նրանց շահագործման միջոցներ եւ գործիքներ դարձնելու համար։ Այսպիսի մի դժբաղդ դերի համար Իգնատիեւն ընտրում էր հայ ժողովուրդը՝ կախելով նրա վզից, իբրեւ ճակատագիր, մեծագոյն չարիքը միջազգային իրաւունքի մէջ — բովանդակութեան առաձգականութիւնը։ Այս մի դիւանագիտական պարգեւ չէր, այս մի ոճիր էր, որ բնաջնջող սրի տակ է դնում ամբողջ հայ ժողովրդի կոկորդը։

Ուրիշ անուն, բացի մեծագոյն չարիքից ու ոճիրից, չի կարելի տալ հայերի ստացած 16-րդ յօդւածին, քանի որ նրա մէջ դրւած միջազգային իրաւունքներին կարելի էր մեկնութիւն տալ ամէն տեսակ չափանիշներով։ Ստեղծւող դրութեան տրագիզմին (ողբերգականութեան) կարելի էր ականատես լինել հէնց Սան-Ստեֆանոյի դաշնագրի հրատարակման առաջին օրից։ « Տեղական

պէտքեր » — ահա՛ այն կախարդական առանցքը, որի շուրջը պիտի պտտւէր հայերին խոստացւած բարելաւութիւնը։ Թիւրքիայի բարի կամքին էր թողնւած որոշել թէ՝ ի՞նչ են այդ տեղական պէտքերը եւ ի՞նչ տեսակ ռեֆորմներ է նա բաւական համարում այդ պէտքերը վերացնելու համար։ Նոյն իսկ այն դէպքում էլ, եթէ նա չափազանց բարեկամաբար տրամադրւած լինէր դէպի հայերը, ինչպէս սուլթան Համիդը հաւատացրել էր Ներսէս պատրիարքին 1877-ի օգոստոսի 12-ի ունկնդրութեան ժամանակ, այնուամենայնիւ բոլորովին չէր կարելի սպասել թէ տեղական պէտքերի պահանջած ռեֆորմները կը հասնեն ինքնավարութեան, որ կտրականապէս մերժւած էր Սան-Ստեֆանոյի բանակցութիւնների միջոցին։ Սակայն, մեզանում քաղաքական դրութիւնը դեռ չափազանց խակ էր, եւ ահա այդ ժամանակւայ առաջնորդ-հրապարակախօս Գրիգոր Արծրունին՝ հէնց որ տեսաւ դեռ նոր-նոր հրատարակութեան մէջ մտնող դաշնագրի 16-րդ յօդւածի « տեղական պէտքեր » կախարդական խօսքերը, իսկոյն դրեց նրանց մէջ այն բովանդակութիւնը, որ գաղութահայ ինտելիգենտական ազգասիրութեան իդէալն էր կազմում։ Երբ ասւած էր տեղային, այդ, օրինակ, չէր կարող նշանակել գիւղացու աշխատանքի ապահովութիւն կամ տնտեսական հնարաւորութիւնների զարգացում, այլ, անպատճառ, այդ բաներից եւ ամէն դրանց նմաններից բարձր համարւող ազգայնական գաղափարներ։

« Ի՞նչ տեսակ վերանորոգումներ է ստանում Հայաստանը՝ որոշւած չէ դաշնագրի մէջ, գրում է Արծրունին, բայց ասւած է « համաձայն տեղական պահանջներին »։ Այդ տեղական բառը պարզ ցոյց է տալիս, որ Հայաստան ունենալու է նահանգական ինքնավարութիւն։ Այդ առաջարկութեանը համեմատ միշտ կարող են պահանջել Թիւրքիայի հայերը։ Ահա ինչ՝ քրիստոնեայ նահանգապետ, սեփական քաղաքային եւ գիւղական վարչութիւններ, գոյքերի եւ անձնական ապահովութիւն, կալւածների ազատելը թիւրք եւ քիւրդ բէյերի աւատական իշխանութիւնից, սեփական կամ խառն դատարաններ, դատարանի առջեւ քրիստոնեաների եւ մահմեդականների հաւասարութիւնը, ուսումնարանների ազատութիւնը, ամբողջ երկրից Թիւրքիային տրւող տարեկան որոշւած հարկը, որ հիմնւած լինէր հաստատ եւ անփոփոխ հիմքերի վրայ եւ ոչ թէ կամայականութեան, եւ այլն։ Մի խօսքով՝ այն բոլորը, որ վերաբերւում էր նահանգական ինքնավարութիւն հաստատելուն։ Դաշնագրի 2-րդ կէտին, այն որ հայերին տրւելու է ապահովութիւն չէրքէզների եւ քրդերի դէմ, Թիւրքիայի հայերը կարող են հասնել միայն նրանով, որ կը պահանջեն Թիւրքիայից իրենց սեփական տեղական զօրք ունենալու իրաւունքը։ Բայց որովհետեւ հաշտութեան դաշնագիրը չի ջնջում հայերին Թիւրքիայի կողմից վաղուց տրւած սահմանադրութիւնը, ուրեմն այժմ, երբ հայերը Թիւրքիայում ստանում են քաղաքական իրաւունքներ, հաւասար միւս քրիստոնեաներին, նոքա կատարեալ իրաւունքով կարող են պահանջել, որ Կ. Պոլսի հայոց ազգային

մօտովը՝ թողնելով Թիւրքիայի եւրոպական հողը՝ տեղափոխուի Հայաստան, զետեղուի Էրզրում կամ Վան եւ դառնայ Հայաստանի տեղական նահանգական ինքնավարութեան գլխաւոր կենտրոնական վարչութիւն » (1) :

Ինչպէս տեսնում ենք, դժբախտ 16–րդ յօդուածին թոյլ չտուին նոյն իսկ մի օր մնալ իր վտիտ ու օրպակաս մարմնի մէջ, այլ հէնց իր ծնուելու օրւանից շարունակաբար փչում ուռցնում էին՝ ինքնավար Հայաստանից բարձրացնելով անկախ Հայաստանի, մինչեւ որ բերին դարձրին արդէն Հայաստան ծովից ծով :

Պէտք է, սակայն, խոստովանել, որ, Կ.Պոլսի պատրիարքարանի շրջանակներում, այդքան էլ չէր քաղաքական հայեացքը: Այդ շրջանակներից գրուած մի նամակի մէջ մենք կարդում ենք. « Այս բառերի (« բզուան լօքօ », տեղական պէտքեր) իմաստն ալ օթոնոմին կրնայ յանգիլ: Բայց քաղաքականութեան մէջ բառը յայտնի դրուած ըլլալու է, որովհետեւ օթոնոմի չէ գրուած դաշնագրի մէջ, ուստի զայն ունենալէն զրկուած ենք բնականաբար (2) :

Յամենայն դէպս, Թիւրքահայ գիւղացիական տնտեսական հարցը քաղաքական հարց դարձնելու հիմքը դրուած էր, թէեւ մի շատ խախուտ եւ մակերեսային հիմք: Հայ ազգասիրութիւնը ոչինչ անառողջ բան չգտաւ 16 համարը կրող նորածինի մէջ եւ նրա ծնողք նշանակեց Ներսէս պատրիարքին, թէեւ նրա իսկական ծնողը ռուս խաբեբայ դիւանագիտութիւնն էր եւ եթէ առհասարակ կարող էր որ եւ է պատիւ բերել մէկին, այդ միայն գեներալ Իգնատիեւին, որին Թիւրքիայում ճանաչում են իբրեւ ստախօս դեսպանի (3) : Ներսէսի դերը միայն այն էր, որ նա գործիք դարձաւ անգլօ – թրքական դիւանագիտութեան ձեռքին, առանց, ի հարկէ, կարենալու ինքնուրոյն գործ առաջացնել, այդու, նախաձեռնող դեր բռնել: Նա ստացաւ այն փշրանքը, որ կարելի համարեցին դուրս նետել դիւանագիտական խոհանոցից եւ սրա համար էլ փառաբանուեց ու պաշտպանուեց՝ իբրեւ ազգային բարերար հերոս :

Այս դերը, սակայն, Սան – Ստեֆանոյով չէր վերջանում: Կոմս Իգնատիեւի հեղինակութիւնը եղող դաշնագիրը պէտք է մեծ պետութիւնների վերաքննութեանը ենթարկուէր: Եւ ահա Ներսէս պատրիարքն էլ եռանդուն աշխատանքների էր դիմում, որ վերաքննուի եւ փոփոխուի 16–րդ յօդուածը: Հայերը նորից խնդրում էին այն, ինչ նրանց մերժուած էր Սան – Ստեֆանոյում, այսինքն՝ ինքնավարութիւն :

Այս անգամ նրանց դրդող եւ խրախուսող էր հանդիսանում նոյն անգլօ – թրքական դիւանագիտական խաղը: Մեծ պետութեան կոնգրեսը, որի գումարման տեղը, վերջ ի վերջոյ, որոշուեց Բեռլինը, կարող էր ոչ միայն հիմնական փոփոխութիւններ մտցնել Սան – Ստեֆանոյի դաշնագրութեան մէջ, այլ

1) «Մշակ», 1878, № 37:
2) Ձեռագիր հեղինակի արխիւում:
3) Генералъ Газенканповъ. — “Мой дневникъ”, 1877-1878, СПБ, 1908, 470-471.

եւ նոյն իսկ ոչնչացնել նրա կարեւոր որոշումներն անգամ: Իսկ այս մի հանգամանք էր, որ անգլօ – թրքական խաղի մէջ պահում էր, իբրեւ օժանդակ միջոցներից մէկը, նախկին վերաբերմունքը դէպի Հայաստանի ինքնավարութիւնը, չնայած որ այս գաղափարը մի անգամ խորտակուած էր Սան – Ստեֆանոյի մէջ՝ ռուս եւ թիւրք լիազօրների միաբան գործակցութեամբ: Ապագայ կոնգրեսը, որի մէջ աւտոտական Ռուսաստանը պէտք է մեկուսացուէր, իր միայնակութեամբ անզօր դարձնէր մրցակից պետութիւնների կամակցութեան առջեւ, յոյս էր ներշնչում եւրոպական դիւանագիտութեան, թէ կարելի է Ռուսաստանից յետ առնել Բայազէտը, Կարսը, Արդահանը (1) :

Անկարելիութիւնը թելադրում էր անգլօ – թրքական դիւանագիտութեան խաղին թոյլատու լինել հայերի նորանոր փորձերի վերաբերմամբ: Դեսպան Լայարդը հաւատացնում էր Ներսէսին, թէ Անգլիան որոշել է ստեղծել Հայաստանից մի արգելակ (բուֆեր) պետութիւն թէ հայերի բարեկեցութեան եւ Հնդկաստանի ճանապարհի ապահովութեան համար (2) :

Այս արգելակ պետութեան գաղափարը, ինքն ըստ ինքեան մի բանդագուշանք, շատ էր դուր գալիս գաղութահայ դիւանագէտներին, որոնք, իրենց սենեակները նստած, երեւակայում էին թէ մի միլիոն հայ ազգաբնակութիւնը կարող է արգելակ դառնալ երկու ուժեղ պետութիւնների միջեւ, եւ այս մանկական մեծամտութիւնն էլ միշտ կուրացրել է Թիւրքահայ գիւղացիութեան բախտը իրենց անօրինութեան տակ առած ազգասէրներին: Լայարդին ամենից առաջ հաւատում էր Ներսէս պատրիարքը, որ եւ մտցնում էր արգելակ — պետութեան ցնորքն իր քաղաքական գրագրութիւնների մէջ: Այսպէս նա գրում էր Բիսմարկին. « Հայաստանում չեզոք գաւառ մը եթէ կազմուի, երկու կողմի գրգռութիւնը եւս կը պակասցնէ, չասենք թէ ապագայ կռիւների առաջը բոլորովին կ'առնէ » (3) :

Եւ այսպիսով Ներսէս պատրիարքին թւում է գործելու մի այնպիսի ազատութիւն, որ կարող է զարմացնել գաղտնիքին անտեղեակ մարդկանց: Բանից դուրս էր գալիս, որ թիւրք կառավարութիւնը ամէն յարմարութիւն տալիս էր հայերին, որ սրանք գան իրենից պահանջեն մի արգելակ – պետութիւն կազմելու համար անհրաժեշտ ինքնավարութիւն: Հայերը, բացի դրանից, օգուտ էին բերում Թիւրքիայի ինքնապաշտպանութեան գործին նրանով, որ Եւրոպայից պահանջում էին իրենց էլ տալ այն արտօնութիւնները, որոնք տրուելու են եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաներին, իսկ թիւրք դիւանագիտութիւնն իր համար զէնք էր դարձրել այն առարկութիւնը, որ՝ եթէ պետութեան մի մասին տրուեն առանձնաշնորհումներ, միւս մասն էլ կը պահանջէ միեւնոյնը:

1) Minasse Tchéraz. — «l'Arménie», London, 1889-1891, No. 24-27.
2) S. Graventage.— «l'Angleterre et les Arméniens», 1918. p. 16.
3) Ձեռագիր հեղինակի արխիւում:

Հայ կղերական դիւանագիտութիւնը այսպիսով ոտքի էր հանում եւ Ներսէսին սկսում էր աւելի եռանդուն եւ աւելի լայնածաւալ մի աշխատանք: Բայց մի անշնորհակալ, գրեթէ դաժան աշխատանք էր երկու կատաղի թշնամի հուժկու ախոյեանների միջեւ, այն է՝ Ռուսաստանի եւ Անգլիայի: Բոլէն պահանջում էր յարել դրանցից մէկին ու մէկին: Եւ այդ մէկը, Ներսէսի համար, շնորհիւ իր դաստիարակութեան, իր շրջանի ներգործութեան, իր բնատուր թրքատեցութեան, պիտի լինէր Անգլիան: Բայց զգացւում էր եւ այն, որ գրութեան տէրը դեռ Ռուսաստանն է եւ առանց նրա հաճութեան չի կարելի ոչինչ անել: Ուստի, ստիպւած լինելով նաւարկել Սկիլլայի եւ Քարիբդայի միջեւ, Ներսէսը մնում էր հոգով, սրտով Անգլիայի կողմը եւ կեղծում էր Ռուսաստանի առջեւ՝ իբր թէ հակառակն ապացուցելու համար:

Բայց կեղծիքի եւ ստութեան մթնոլորտը, որով համակւած էր հայ եպիսկոպոսական դիւանագիտութիւնը, խաբել որ եւ է մէկին, թաքցնել որ եւ է բան երկար ժամանակ չէր կարող: Ռուսական դիւանագիտութիւնը շուտ հասկացաւ թէ բանը ինչումն է եւ վերջ էր դնում այն քաղաքականութեան, որ դեռ 1840 թւականներից աշխատում էր դարձնել թիւրքահայերին գործիք՝ իր ազդեցութիւնը Մերձաւոր Արեւելքում ուժեղացնելու համար: Արդէն շատ խոշոր փորձերով ցարականութիւնը խելահաս էր դարձել, որ Կ. Պոլսում ռուսական գործը երբեք սէր ու համակրանք չէր գտել հայերի մէջ: Վերջին ապացոյցը նա է դառնում, որ Սան - Ստեֆանոյի 16-րդ յօդւածից յետոյ անգամ անգլիական դեսպան Լայարդն էր հայերի խորհրդատուն եւ ուղեցոյցը: Ներսէսի պատգամաւոր Խորէն եպիսկոպոս Նարպէյը, որ ուղարկւած էր Պետերբուրգ ցարական կառավարութեան աջակցութիւնը խնդրելու, որ Հայաստանին տրւի ինքնավարութիւն, սառն ընդունելութիւն գտաւ, եւ Ալեքսանդր Բ.ը, իրեն ուղղւած աղերսանքը լսելուց յետոյ, ոչ մի խոստում չարաւ եւ չարունակ պատգամաւոր եպիսկոպոսի աչքն էր խոթում այն դիմադրութիւնը, որ ցոյց էին տալիս Կ. Պոլսի հայերն Իգնատիեւի ծրագիրներին (1):

Մնում էր այսպիսով Անգլիան, ամենաագահը համաշխարհային գիշատիչ իմպերիալիստներից: Որ թրքահայ գաղութները եւ մասնաւորապէս նրանցից ամենակարեւորները — Կ. Պոլիս եւ Զմիւռնիա — Անգլիայի ուժեղ ազդեցութեան տակ էին գտնւում, այս ինքն ըստ ինքեան հասկանալի էր դարձնում այն խոշոր տնտեսական դերը, որ կատարում էր Անգլիան Արեւելքում եւ յատկապէս Թիւրքիայում: Վաղուց անգլիասէր գաղութ էր մանաւանդ Զմիւռնիայի հայ առեւտրական գաղութը, որ կապւած էր Անգլիայի բամբակամանածական եւ չթագործական հռչակաւոր Մանչեստրի հետ, ուր ժամանակի ընթացքում կազմւեց գլխաւորապէս Զմիւռնիայի վաճառականներից հայկական գաղութ:

1) Ձեռագիր, Գործ դիւանատան Գէորգ Կաթողիկոսի 1878, № 5:

Այս առեւտրական փոխյարաբերութիւններն այնքան մեծ հմայք էին ստեղծում անգլիացիների վերաբերմամբ, որ առաջ էր գալիս մի անգլիամոլութիւն: Այս հիւանդութեան մի ախտանիշն էր այն, որ դեռ 1860-ական թւականներին մի զմիւռնիացի հայ գրող ապացուցում էր, թէ Անգլիայի Վիկտորիա թագուհին հայ Արշակունի թագաւորներից է ծագում (1): Մի այլ պատահական ախտանիշ՝ 1879 թւականին վանեցի յայտնի գրող Տէվկանցը «Մասիս» լրագրի մէջ գրում էր. «Մենք հայքս եթէ ազատութեան եւ մեծութեան ճաշակ ունենք, պէտք է սիրենք այս ազգը (Անգլիան) թէեւ ինքը չսիրէ զմեզ» (2):

Այս ճիշտ էր նկատւած: Հայերը (եւ ոչ միայն թիւրքահայերը) միշտ անգլիասէրներ էին, եւ ոչ միայն Մանչեստրի չթավաճառները, այլ եւ մարդիկ, որոնք իրենց սոցիալիստ էին անւանում, աւելի վստահութեամբ էին վերաբերւում դէպի Անգլիայի, քան մի ուրիշ պետութեան քաղաքականութիւնը: Իսկ Անգլիա՞ն. սիրել նա չգիտէր, գիտէր միայն հաշւել եւ, այդ վաճառականական հաշիւը պահանջում էր նաեւ խողխողել, ոչնչացնել ամբողջ ժողովուրդներ: Թիւրքիայի աշխատաւոր հայութիւնը այդ ոչնչացնող հաշւին ենթարկւեց, սկսած այն դժբախտ օրից, երբ կոմս Իգնատիեւը նրա անունը մտցրեց Սան - Ստեֆանոյի մէջ իր հեղինակած դաշնագրութեան մի անկիւնը: Տարիների, տասնեակ տարիների ընթացքին՝ այս ողջակիզումը կատարւում էր անընդհատ, արեւի լոյսով, մարդկութեան առջեւ, բայց հայ գործիչների աչքերն այնպէս հմայւած էին, որ համոզւած էին թէ անգլիական հաշիւներին զոհ գնալը լաւագոյն միջոցն է մի կտոր բարեկեցութեան հասնելու համար: Եւ անխմաստ ճպուռների նման, յափշտակւած դաւաճան լոյսով, աւելի եւ աւելի խոր էին խրւում անգլիական Մողոքի իմպերիալիստական շիկացած երախի մէջ: Այս մի ցաւատանջ ճանապարհ էր մինչեւ Լօզան, ուր Քըրզընը վերջ դրեց բրիտանական երկարամեայ ոճիրին՝ պինդ ծածկելով կափարիչը թրքահայութեան գերեզմանի վրայ:

Մանչեստրի հայ առեւտրական գաղութը գործօն դեր էր ստանձնում Սան-Ստեֆանոյի դաշնագրից յետոյ՝ աշխատելով հանել նրան ռուսական ազդեցութեան տակից եւ ջուխտ ձեռքով քաշելով նրան դէպի անգլիական ազդեցութիւնը: Եւ Ներսէսն, ի հարկէ, գնաց այդ ուղղութեամբ, մանչեստրցիների խորհրդին եւ օգնութեանն էր դիմում, յաճախ հայրենասիրական աւիւն էր ներշնչում առեւտրական կապիտալին: Եւ նա գտնում էր շօշափելի օժանդակութիւն: Զմիւռնիացի Գարեգին Բարագեանը կարողանում էր կազմակերպել մի հայասիրական պրոպագանդ՝ մասնակից դարձնելով նրան իր բարեկամ Ջեմս Բրայսին, որ մինչեւ իր կեանքի վերջը մնաց հայասէր, որին, սակայն, վիճակւած էր տեսնել իր պաշտպանած ժողովրդի բնաջնջումը:

1) Ս. Միրզավանանդեցի — «Վիկտորիա Անգլիայի թագուհւոյն Արշակունի հայ թագաւորներէն սերիլը», Զմիւռնիա, 1866:
2) «Հայրենիք» լրագիր, Կ. Պոլիս, 1879, № 533:

5.

Անգլիական հսանքի գլխաւոր ներկայացուցիչներից մէկը՝ Խրիմեան Մկրտիչ արքեպիսկոպոս, Հայրիկ անունով հանրածանօթ, 1878 թուի մարտ 7-ին Կ. Պոլսից ուղարկւում էր Արեւմտեան Եւրոպա՝ իբրեւ պատուիրակ Ներսէս պատրիարքի: Այս մարդը մի հասարակ, բայց ընդունակ վանեցի ինքնուս էր, խօսքի եւ գրչի կարողութեամբ օժտւած, հայ ժողովրդի տառապանքներին մօտիկից ծանօթ: Նա առաջինն էր, որ այդ տառապանքները խուլ ու մոռացւած գաւառից տարաւ Կ. Պոլիս, խորթ ու օտարացած հայութեան մէջ, հասկացրեց թէ ինչ է իրական գիւղացիական Հայաստանը, նկարագրեց ժողովրդական ծայրայեղ աղքատութիւնը, առաջինն էր, որ տպագրական մամուլ տարաւ Վան եւ Մուշ եւ նրա միջոցով հրապարակ հանեց ժողովրդի կրած հարստահարութիւնները, իսկ երբ պատրիարք ընտրւեց, ստիպեց ամբողջովին պոլսական հիմնարկութիւն դարձած Ազգային ժողովը զբաղւել գաւառական ժողովրդի առօրեայ ցաւերն ու տնտեսական տագնապը ուսումնասիրելով եւ պաշտօնական տւեալների վրայ խարսխած մի տեղեկագիր պատրաստել տւեց, որի մէջ լուսաբանւում էր հայ գիւղացիական հարցը քիւրդ կալւածատիրութեան հանդէպ եւ թէ որպիսի տանջանքներ ու հարստահարութիւններ են առաջանում այստեղից:

Քրդական հարցն ուսումնասիրելու համար 1876-ին Բ. Դրան մէջ կազմըւած էր մի յանձնաժողով, որին Խրիմեանը ներկայացրեց իր դիտողութիւնները: Քիւրդ կիսավայրենի եւ վաչկատուն ցեղերը երկրագործ ազգաբնակութեան համար անվնաս դարձնելը նա համարում էր միանգամայն հեշտ իրագործելի եւ դրա համար միանգամայն բաւական էր գտնում, որ տեղական վարչութիւնը բարեկարգւած եւ պարտաճանաչ լինի (1):

Եւ որովհետեւ հայ գիւղացիական հարցը գերազանցօրէն քրդական հարց էր, ուստի դուրս էր գալիս, որ Խրիմեանը հայ գիւղացու դրութեան բարելաւումը որոնում էր պետական ընդհանուր բարեկարգութեան մէջ: Բայց այսպէս էր 1876-ին: Այժմ փոխւել էր ժամանակը, եւ նրա իղձն արդէն հայ գիւղացուն տնտեսական ստրկութիւնից ազատելն ու աշխատանքի պայմանները լաւացնելը չէր, այլ դրանից շատ բարձր ու փայլուն Պան-Հայաստանի արդեւլակ-պետութիւնը՝ կառավարւած հայերի, այն էլ լուսաւորչական հայերի ձեռքով. իսկ այդտեղից արդէն շատ հեռու չէր մի հատ թագաւորը, որին մեծ հաճութեամբ կ'օծէր հայ կղերը: Ահա ինչո՞ւ համար էր նա գնում Եւրոպա՝ աշխարհի հզօրներին համոզելու յանձնարարութեամբ: Դեռ այդ հզօրներից էլ ոչ մէկի երեսը չտեսած՝ նրա քարտուղար Մինաս Չերազը, նստած իտալական արտաքին գործերի մինիստրութեան ընդունարանում, ուր պիտի սպասէր թէ երբ ներս կը հրաւիրւի, ներկայացնում էր իրեն այն ժամանակը, երբ ճիշտ

1) Խրիմեան Հայրիկ — «Ծրագիր բարենորոգմանց», Կ. Պոլիս, 1909:

այսպէս էլ իտալական պատուիրակը ստիպւած կը լինի հայոց արտաքին գործերի մինիստրութեան նախասենեակում սպասել ընդունելութեան ժամին (1): Եւ այս երեւակայութիւնը՝ ծնւած Սան-Ստեֆանոյի դժբախտ 16-րդ յօդւածից ...

Բայց եթէ կար մի պաշտօն, որ ամենեւին չէր գալիս Խրիմեանին, այդ հէնց դիւանագիտական առաքելութիւնն էր, որովհետեւ, բացի հոգեւորականի յատկութիւններից, նա ունէր եւ ժողովրդական մարդու դիւրահաւանութիւնը, բանաստեղծի երազուն հակումներ, մի խօսքով՝ մեծ չափերով ունէր այն ամենը, ինչ չպիտի ունենար մի դիպլոմատ: Երբ նրան հարցրին թէ՝ ինչպէս պիտի կատարէ այդ դիւանագիտական շրջագայութիւնը, քանի որ եւրոպական ոչ մի լեզու չգիտէ, նա պատասխանեց. «Պիտի խօսեմ լեզու մը, որ համաշխարհային է եւ տառապանքի լեզուն է միեւնոյն ժամանակ, այսինքն պիտի լամ» (2): Միանգամայն ճիշտ խօսքեր՝ պատկերացնելու համար հայ կղերական դիւանագիտութիւնը, որ առաջին անգամ գնում էր Եւրոպա՝ Բիսմարկների դռները ման գալու եւ ժողովարարութիւն անելու համար: Լաց եւ մէկ էլ մի խօսք — Քրիստոս — ահա՛ այդ քաղաքական մուրացկանութեան միակ «գոյութեան իրաւունքը», մի գոյութիւն, որի ճակատագիրն է արհամարհանք միայն:

Խրիմեանը անլեզու մուրացկան էր, բայց նրա համար ճարտար եւ վազվզուկ լեզւի պաշտօն կատարում էր ժամանակի ազգասէր ինտելիգենցիայի կարկառուն դէմքը — Մինաս Չերազ, այժմ «Հայոց հարցի վաստակաւոր գործիչ» տիտղոսով զարդարւած մի ծերունի: Նրա «վաստակներն» այսօր չափազանց խնդրական են եւ եթէ գնահատութեան տրւեն, բացասական արժէքներ միայն կը ստանան: Բայց թրքահայ ժողովրդի բնաջնջման պատմութեան առաջ նա ունի մի հատ անժխտելի «Վաստակ», եւ այդ այն է՝ որ՝ մանրամասն կերպով նկարագրել է Խրիմեանի եւ այլ պատուիրակների գործունէութիւնը Եւրոպայում: Այս «Վաստակ»-ի համար պատմութեան գոհունակութիւնը սեղմ ու սահմանափակ չէր լինի, ինչպէս է այժմ, եթէ Չերազը իր այդ յիշողութիւնները գրած եւ հրապարակած լինէր հայերէն լեզւով, որպէսզի հայ ժողովուրդը կարդար եւ գիտակցութիւն կազմէր թէ ինչ հրէշ էր այն իսկ եւրոպական դիւանագիտութիւնը, որի դուռը չարժելու համար սպանդանոց էր քշւում թշւառ թրքահայ գիւղացիութիւնը: Բայց Չերազը չի կարողացել գոնէ այդքան լաւութիւն անել իր ժողովրդին՝ փոխարէնն իր նւիրած բազմաթիւ վատութիւնների եւ գրել է իր յիշողութիւնները Ֆրանսերէն լեզւով ու տպել է իր՝ չափազանց քիչ ծանօթ՝ «Լ'Արմենի» թերթի մէջ (3): Այդ մի եր-

1) Մինաս Չերազ.— «Հայաստան եւ Իտալիա», Կ. Պոլիս 1879, եր. 29-30:
2) Մուշեղ Եպ. «Մանչեսթրի Հայ Գաղութը», եր. 112:
3) Գործի վերնագիրն է «Mémoires d'un délégué au Congrès de Berlin» եւ 1889ից սկսած՝ երկար ժամանակ մաս մաս տպւում էր «L'Arménie» թերթում:

կար պատմութիւն է, որ կարդացւում է հետաքրքրութեամբ, եւ այս ոչ թէ այն պատճառով, որ այդտեղ կայ քննական, վերլուծական, մերկացողական վերաբերմունք: Ամենեւին ոչ: Ձերագը մի ժրագլուխ քարտուղար է եղել, որը օրէն մտցրել է իր յիշատակարանի մէջ ամէն մի դէպք, ամէն մի դէմք, թղթեր, նամակներ, այցաքարտեր, եւ այս բոլորը ահա բաց է անում մեր առջեւ մի մեծ տեսարան:

Կենտրոնում դրւած է այն արտակարգ սիրալիր ընդունելութիւնը, որ գտնւում էր պատւիրակութիւնը մեծ պետութիւնների մայրաքաղաքներում եւ ամենից շատ Լոնդոնում, ուր Խրիմեանը մնաց մի քանի շաբաթ, եւ ուր նրան աջակցում էր Մանչեստրի հայ առեւտրական գաղութը՝ յատկապէս դրա համար կազմւած մի կոմիտէի միջոցով: Անվերջ էին այն խնջոյքները, հանդէսները, որոնք տրւում էին ի պատիւ հայ պատւիրակութեան: Ամենաքաղաքավարի, սիրալիր ընդունելութիւնների էր արժանանում Խրիմեանը պետական բարձր պաշտօնեաների, քաղաքական եւ հասարակական խոշոր, հռչակւած գործիչների մօտ: Ամէն տեղ յարգանք ու համակրանք հայ ժողովրդին, ամէն տեղ յուսադրութիւն, դրական խոստումներ: Գերմանական կայսրուհին լաց էր լինում լսելով հայերի կրած տանջանքները եւ յուսադրում էր կայսրի անունից: Լաց էր լինում եւ Բիսմարկի օգնական Բիւլովը: Ճաշեր գերմանական թագաժառանգի, անգլիական արտաքին գործերի մինիստր Սալսբըրիի մօտ, Գլադստոնի մօտ, մեծ պետութիւնների դեսպանատներում:

Ի՞նչ է այս: Մարդասիրութեան, անընչասիրութեան մի արտակարգ շքեղ համատարած տօ՞ն Եւրոպայի դիւանագիտական աշխարհում: Խրիմեանը, պէտք է խոստովանել, միանգամայն չտարւեց այդ հիացուցիչ ցոյցերով, նրա մէջ խօսում էր եւ առողջ բնազդը, նա զգում էր թէ ինչ բան է, այնուամենայնիւ, այդ փայլուն, լկտուած աշխարհը: Եւ մենք նրա մի նամակում հետեւեալ յաջող նմանութիւնն ենք գտնում:

« Անցեալ օրը Լոնտոնի կենդանաբանական պարտէզը գնացինք եւ պատահեցանք այն ժամուն, երբ առիւծներու եւ վագրերու կերակուրի ժամանակն էր: Գազանաց մատակարարը ձեռքի կառքով միս բարձած բերաւ վանդակներու առջը: Հոն մարդ կը զարհուրէր գազանաց մռնչիւնէն: Մի վանդակի մէջ երկու վագր կային, որոնց մին առաւել մեծ եւ կատաղի էր. երբ մատակարարը երկաթէ շիշով նրա բաժինը տւաւ, երեք օխանոց կտոր մը միսը, գազանն այս միսը կատաղաբար ժանիքներով առաւ եւ նստաւ վանդակի դիմաց, սկսաւ մռմռալով միսն ուտել. երբ միւս ընկերին եւս բաժին պիտի տրւէր, սոսկալի կերպով կը կատաղէր մեծ գազանը, այնպէս որ մատակարարն չկրցաւ միւսին բաժին տալ եւ այդ խեղճ տկար գազանն քաշւեցաւ մի քունջն, կարօտ աչքերով կը դիտէր միւսին վրայ. զրկեալ ընկերին այս խղճուկ կերպը մարդուս գութը կը շարժէր: Հետաքրքիր լինելով հարցուցի մատակարարին՝ մի՞թէ այս գազանը քաղցած պիտի մնայ. ոչ, ասաց, պէտք է յառաջ իւր կատաղի եւ չար ըն-

կերը յագենայ ցյագ, եւ երբ իւր սաստիկ կատաղութենէն դիջանի, ապա միւս ընկերի բաժինը կուտանք ···

« Վարագայ արծիւը իւր սուր աչքով դիտեց այս տեսարանը, որ մի ճիշտ եւ իրական պատկեր էր արեւելեան խնդրոյն: Վահ, ես ինքնին մտախոհ լինելով ասացի. « Այս քաղաքակիրթ աշխարհիս մէջ մարդագէլներ պիտի ուտեն Թուրքաստանի մեծ կտոր միսերը, զրկեալ հայուն դէթ կտորիկ մի ոսկոր պիտի թողո՞ւն: Սորա համար կ'արդարանայ խորագէտ Պիզմարքին խօսքը թէ այս աշխարհիս վրայ իրաւունքը հզօրինն է » [1]:

Իմպերիալիստական դիւանագիտութեան էութիւնը ճիշտ էր նկատել Խրիմեանը. միայն մի բանի մէջ էր սխալւում. եթէ չորքոտանի վագրը կշտանալ գիտէ, իմպերիալիստական վագրը իսպառ զրկւած է այդ յատկութիւնից, նրա ախորժակն անյագ է ···

Եւ առաջնութեան արմաւենին պատկանում էր հէնց այն երկրին, ուր Խրիմեանը տեսաւ այդ գազաններին: Վանեցի միամիտ հայրենասէրը մտաւ Անգլիա՝ իբրեւ մի աւետեաց երկիր, որպէսզի յաջողութեամբ պսակէր իր եւ իր նմանների ակնկալութիւնները: Նոյն այդ նամակի մէջ նա ասում էր թէ ինքը տեսնուել է « Վաթսունէն աւելի լորդ, մարքիզ, դուքս եւ պառլամենթի նշանաւոր անդամների » հետ: Սակայն, այս իր կարգին: Իսկ գործը, իսկականը, այն՝ որ երեւակայութիւն չէ, ոչ էլ ցանկութիւն, կատարւում էր արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան 16-րդ յօդւածը, դեռ նոր գրւած հայերի համար, դեռ հայերի համար ոչինչ չարած, լայն շահագործման առարկայ էր դառնում անգլիական դիւանագիտութեան ձեռքին: Ռուս զօրքերու հեռանալու յիշատակութիւնը եւ տեղական պէտքերի պահանջած ռեֆորմներն այնպիսի խրտւիլակներ էին դառնում՝ բրիտանական բարեկեցութեան սպառնացող, որ Մարկիզ Սալսբըրին ահազանգ էր հնչեցնում մի երկար շրջաբերականով, որի մէջ բացատրում էր թէ անգլօ-թրքական շահերը որքան եւ որքան կողմերից են վտանգ եւ սպառնալիք կրում հայերին տրւած այդ յօդւածից:

Ռուսաստանը, յաղթող պատերազմի դաշտում, ծանր պարտութիւններ էր կրում դիւանագիտութեան դաշտում: Նրան ստիպում էին ինքնայօժար հրաժարւել Բայազէտից, որ ստացել էր Սան-Ստեֆանոյի դաշնագրութեամբ, առանձին համաձայնութիւն կնքել, որով հաստատւում էր թէ ինչ արտօնութիւններ որ նա վայելել է 16-րդ յօդւածով, նոյնը պիտի վայելէ եւ Անգլիան: Բայց այս բոլորը վագրի խաղեր էին մի խոշոր եւ չաղ որսաբաժնի շուրջը: Նոյն դժբախտ 16-րդ յօդւածն իր դժբախտ ռեֆորմներով հիմք էր դառնում իր ժամանակ ահագին աղմուկ հանած Կիպրոսի դաշնագրութեան

1) «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս 1916, № 26:

(յունիսի 4-ից), որով Անգլիան դառնում էր Թիւրքիայի դաշնակիցը Ռուսաստանի դէմ, յանձն էր առնում ռեֆորմներ մտցնել Թիւրքիայի ասիական նահանգներում ամենքի համար անխտիր եւ իր այս բոլոր յոգնութիւններին իբրեւ փոխարինութիւն ստանում էր Թիւրքիայից Կիպրոս կղզին ...

Հայերին ուրախացնում էին թէ ահա նրանց անունն էլ մտաւ միջազգային դիւանագիտութեան արձանագրութիւնների մէջ: Բայց դեռ չէր զօրացել այն թափը, որով կատարւել էր այդ գործողութիւնը, եւ ահա անգլիական կառավարութիւնը շտապում էր վաճառքի հանել նրանց՝ իր շահերը լաւագոյն կերպով կարգաւորելու համար: Կիպրոսի դաշնագրութիւնը մեռած տառի նշանակութիւն էր պատրաստում յատուկ հայկական ռեֆորմների համար՝ ամէն հնարաւորութիւն տալով Թիւրք կառավարութեան խուսափել նրանցից, քանի որ բրիտանական կառավարութիւնը պիտի ընդհանուր ռեֆորմներ մտցնէր Ասիական Թիւրքիայի ամբողջ տարածութեան վրայ:

Այսպիսով, եթէ Սան – Ստեֆանոյի 16-րդ յօդւածը մի նոր դրութիւն ըստեղծում էր Թիւրքահայ ժողովրդի համար, այդ դիւանագիտական վաճառք դառնալու դրութիւնն էր, որ այնուհետեւ դարձաւ նրա թշւառ ճակատագիրը մինչեւ վերջին շունչը փչելը:

Կիպրոսի դաշնագրութիւնը դեռ գաղտնի պատրաստութիւնների առարկայ էր արտաքին գործերի մինիստրութեան մէջ, երբ այդ հիմնարկութեան դռնով ներս մտաւ Խրիմեանը. կարո՞ղ էր նա մտածել թէ այդտեղ իսկ այդ րոպէին կատարւում է նահատակ Թիւրքահայ գիւղացիութեան ամարդի վաճառքը: Ի հարկէ ոչ: Հիմնարկութեան տէրը, Մարկիզ Սալիսբուրին, բարեհաճում էր բարեհաճ դէմք ցոյց տալ հայ պատւիրակութեան:

« Հայերը, ասաց նա, իրաւունք ունեն պահանջելու մի լաւ վարչութիւն, բայց ոչ մի պետութիւն չի կարող այժմից կանխել այն վարչական ձեւը, որ կը տրւի նրանց, որովհետեւ ձեւը պէտք է գտնել եւ միայն կոնգրեսը կարող է այդ անել: Յամենայն դէպս, դուք կարող էք հաւաստի լինել, որ հայերը ձեռք կը բերեն մի վարչութիւն, որ կ'ապահովէ նրանց բարեկեցութիւն, ազատութիւն եւ խաղաղութիւն »:

Իր խօսակցութեան վերջում նա աւելացրեց. « Ես չեմ կարող անել Ձեզ այժմ մի խոստում, որ կարող կը լինի ինձ կապել, բայց կարող եմ Ձեզ ապահովել, որ հայերը հաւասարապէս ձեռք կը բերեն այն, ինչ կը տրւի ուրիշ քրիստոնեայ ցեղերին, այսինքն բարեկեցութիւն, խաղաղութիւն եւ ազատութիւն » [1]:

Յուսադրւած պատւիրակութիւնը ուղարկւում է Բեռլին, ուր կոնգրեսը պիտի բացւէր յունիսի 1-ին: Անգլիայում նա բաւականաչափ պատրաստել էր հասարակաց կարծիքն ի նպաստ հայերի: Խօսում էր մամուլը, խօսք եղաւ պարլամենտում, տեղի ունեցաւ նոյն իսկ միտինգ, ուր հայերի ազատութեան

1) «L'Arménie», No. 21

մասին խօսեցին անւանի գործիչներ: Բայց ինչպէս եւ 1876-ի բուլղարական ագիտացիայի ժամանակ, խօսքը խօսք մնաց, իսկ գործը, վճիռը՝ վերապահւած արտաքին գործերի մինիստրին: Եւ ահա, Բեռլին գնալուց առաջ, մարկիզ Սալիսբուրին, լորդերի պալատում, — պատասխանելով մի հարցապնդման, հայերի խնդրած ինքնավարութիւնը ոչնչացնող յայտարարութիւններ էր անում՝ առաջ բերելով այն հանգամանքը, որ Ասիական Թիւրքիայում հայերն այնպէս են խառնւած մահմեդական ազգաբնակութեան հետ, որ յատուկ մի հայկական վարչութիւն ստեղծել այնտեղ անհնարին է: Հայ պատւիրակութիւնը թէեւ հրահրում էր այդ յայտարարութիւնները, բայց և այնպէս Թիւրքահայ ազգաբնակութեան վիճակագրութիւնն սկիզբից եւ եթ դառնում էր մի առեղծւած, որ մինչեւ վերջն էլ չկարողացան լուծել երկու կողմերն էլ — ոչ Թիւրք կառավարութիւնը, ոչ հայերը: Կորստաբեր էր այս անյայտութիւնը մանաւանդ հայերի համար, հարցի կարեւորութիւնը չճանաչելը սկզբից եւ այս անտարբերութիւնը տարաւ Թիւրքահայ ժողովուրդը դէպի կործանում:

Բեռլինում հայ պատւիրակութիւնն ունէր մի հզօր նեցուկ յանձինս Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Վադդինգտոնի, որ Ֆրանսայի առաջին լիազօրն էր կոնգրեսում: Այս դիւանագէտը շարունակ չեշտում էր իր բացառիկ սէրն ու համակրանքը դէպի հայերը, պատւիրակութեան խորհրդատուն էր, պատրաստ ամէն անգամ ընդունելու նրա անդամներին, ղեկավարելու նրա գործողութիւնները: Աւել աւելորդ է անգամ, որ նա անվերապահ կերպով խոստանում էր ոչ միայն անձամբ պաշտպանել հայերի դատը կոնգրեսի մէջ, այլ եւ համոզելու ուրիշ պետութիւնների լիազօրներին, որ նրանք էլ միեւնոյնն անեն:

Հասկանալի է թէ որքան յուսատու պիտի լինէր հայ պատւիրակութեան տրամադրութիւնը: Նա արդէն համարում էր իր նպատակը յաջողութեամբ պսակւած մինչ այն աստիճան, որ սկսում էր թեկնածուներ որոնել Հայաստանի առաջին հայ վալիի պաշտօնի համար:

Իսկ ինչ էր կատարւում կոնգրեսի ներսում: Ամենից առաջ՝ հայ պատւիրակութիւնը նրա շէմքից ներս չէր թողնւում, եւ, երկրորդ՝ նա միանգամայն առանց ուշադրութեան, առանց ընթերցման էր թողնում հայերի ներկայացրած թղթերը: Ինքը կոնգրեսը պիտի վերաքննէր 16-րդ յօդւածը: Իսկ այդ վերաքննութիւնը չափազանց կարճ էր եւ փոքրիկ մանրիկներով կատարւեց երեք ժողովների մէջ: Յօդւածն ամբողջապէս իր ձեռքն էր առել Սալիսբուրին: Նա ամենից առաջ պահանջեց, որ ջնջւեն նրա սկզբի տողերը, որոնց մէջ յիշատակութիւն կայ ռուսաց զօրքերի մասին: Շարունակ պարտութիւններ կրած ռուսական դիւանագիտութիւնը չկարողացաւ պաշտպանել այդ դրութիւնը, կոնգրեսը ջնջեց այդ տողերը, եւ այնուհետեւ ամբողջ 16-րդ յօդւածը կորցնում էր նրա համար իր նշանակութիւնը: Դրութեան տէր մնաց միայն Անգլիան. միւս պետութիւնների ներկայացուցիչները, չնայած իրենց տւած

խոստումներին, կատարեալ անտարբերութիւն ցոյց տւին հայոց հարցի վերաբերմամբ: Այս կողմից անորակելի էր մանաւանդ Վադդինգտոնի վարմունքը, որ Բեռլինի կոնգրեսի արձանագրութիւնների մէջ չունի մի խօսք անգամ յօգուտ հայերի: Այս բանը բացատրւում է նրանով, որ անգլիական դիւանագիտութիւնը՝ յափշտակելով Կիպրոսը եւ այդպիսով ճանապարհ հարթելով Եգիպտոսն էլ յափշտակելու համար, Ֆրանսիայի եւ Իտալիայի բերանները կապելու համար, հէնց այդտեղ, կոնգրեսի կուլիսների յետեւում, իր իբր թէ պաշտպանած Թիւրքիայի նորանոր անդամահատութիւններ էր ծրագրում՝ առաջարկելով որ Ֆրանսիան վերցնէ Թունիսը, իսկ Իտալիան՝ Տրապոլիսը (1): Այս յափշտակութեան հեռանկարն էր, որ ջրով լցրեց Ֆրանսիական մինիստրի բերանը եւ նրա համար ոչինչ դժւարութիւն չեղաւ դրժել իր խօսքերն ու խոստումները: Այսպիսի «առաքինութիւններ»–ով Ֆրանսիական դիւանագիտութիւնը պիտի փայլէր եւ ապագայում, համաշխարհային պատերազմի ժամանակ, խաբելով ու շահագործելով հայերին պժգալի, սրիկայական միջոցներով:

Այս եղանակով ահա դժբախտ 16–րդ յօդւածը վերջ ի վերջոյ գալիս դառնում էր սեփականութիւն անգլօ – թիւրքական դաշնակցութեան: Յուլիսի 5–ի նիստում Սալսբիւրին յայտարարում է թէ՝ « Հայոց շահերը պէտք է որ պաշտպանւեն եւ իր առաջարկութեան նպատակն է յոյսեր տալ նրանց թէ անմիջական բարւոքումների կատարման եւ թէ միանգամայն այս բարւոքումների ընդարձակման մասին ապագայում »:

Այդ ի՞նչ առաջարկութիւն էր, որ պիտի այդքան երջանկացնէր հայերին: Սալսբիւրին ուզում էր աւելացնել յօդւածի մէջ թէ Բ. Դուռը՝ պարտաւորւելով բարւոքումներ մտցնել հայաբնակ վայրերում՝ «Համաձայնութիւն կը կայացնի վեց ստորագրող պետութիւնների հետ այս պարտաւորութեան նշանակութեան եւ նրա գործադրութեան համար անհրաժեշտ միջոցների մասին (2): Այս տեսակ մի որոշում, չնայած իր մթութեան, կարող էր հասցնել մի եւրոպական մասնաժողովի կազմակերպման, որ կը քննէր ռեֆորմների հարցը (3): Բայց Սալսբիւրիի այս առաջարկութեան դէմ դուրս եկաւ Թիւրքիայի առաջին լիազօր Կարաթէոդորի փաշան: Փոխանակ առարկութիւններ անելու, Սալսբիւրին ժամանակ խնդրեց թիւրքաց լիազօրների հետ համաձայնութիւն կայացնելու համար:

Այս համաձայնութեան մէջ էլ թաղւեց առաջարկութիւնը, որի փոխարէն ընդունւեց մի խմբագրութիւն, որ թիւրք կառավարութեան էր թողնում ռեֆորմներ որոշելը եւ գործադրելը, այն պայմանով, որ նա այս մասին պարբերաբար յայտնի մեծ պետութիւններին, որոնք եւ պիտի հսկեն ռեֆորմների գործադրութեան վրայ:

1) «Մշակ» 1878, № 120:
2) Տ. իմ «Հայոց Հարցի վաւերագրերը», Թիֆլիս, 1915, երես 106–109:
3) «Մասիս» լրագիր, 1879, № 2221:

Սան – Ստեֆանոյի 16–րդ յօդւածը այսպիսով դառնում էր Բեռլինի դաշնագրութեան 61–րդ յօդւածը: Հայերը նորից, երկրորդ անգամ, վաճառքի էին հանւում մարկիզ Սալսբիւրիի ձեռքով: Վերացւած էր փոքր ի շատէ իրական երաշխիքը — ռուսական զօրքերի հեռանալը հայաբնակ վայրերից, մնում էր Իգնատիեւեան մշուշը — « տեղական պէտքերի պահանջած ռեֆորմներ »:

Այս բանը կատարւեց կոնգրեսի յուլիսի 8–ի նիստում: Ստեփան Փափազեանը, հայ երեք պատւիրակներից մէկը, այդ օրը մտցնում էր իր « յուշատետրի » մէջ հետեւեալ տողերը. « Ես ու Չերազ երկու երեք անգամներ մտախոհ եւ յուզւած սկսանք պտտիլ Քոնկրէին տանը առաջ, խնդրեցինք աստուծմէ որ ողորմի բիւրաւոր անմեղ զոհերու արիւնին եւ միլիոնաւոր հայերու աղաղակին եւ ապա աչքերնիս արցունքով լի տուն դարձանք » (1): Չօգնեց, ուրեմն, եւ հին, մեռած աստւածը: Ձեռնունայն հեռանալով Բեռլինից, հայ պատւիրակութիւնն ուղարկում էր կոնգրեսի նախագահ Բիսմարկին հետեւեալ բողոքը.

« Ձերդ Գերազանցութիւն.

« Հայկական պատգամաւորութիւնը գալիս է արտայայտելու Ձերդ Գերազանցութեան իր վիշտը, որ իր պահանջները, որքան օրինաւոր, նոյնքան եւ չափաւոր, չկարողացան գտնել լաւ ընդունելութիւն կոնգրեսի կողմից:

« Մենք հաւատացած էինք, որ մի քանի միլիոն հոգուց բաղկացած մի ազգութիւն, որ մինչեւ այսօր չի եղել մի օտար քաղաքականութեան գործիք, որ ամենափոքր անախորժութիւն չի պատճառել թիւրք կառավարութեան, թէեւ աւելի շատ է եղել հարստահարւած քան Թիւրքիայի ուրիշ քրիստոնեայ ցեղերը եւ որ, առանց ունենալու կրօնական եւ ցեղային կապեր մեծ պետութիւնների հետ, սակայն նոյնպէս քրիստոնեայ է ինչպէս Թիւրքիայի միւս քրիստոնեայ ազգութիւնները եւ կարող էր յոյս դնել մեր դարում մի տեսակ հովանաւորութեան վրայ, մենք հաւատացած էինք որ այսպիսի մի ազգ ձեռք կը բերէր իրաւունք ապրելու իր սեփական կեանքով, առանց որ եւ է քաղաքական յաւակնութեան եւ կառավարւելու իր հայ պաշտօնեաներով իր հայ հողի վրայ: Հայերն այժմ կը սովորեն թէ իրանք խաբւած են, թէ որովհետեւ իրանք եղել են խաղաղասէր, իրենց իրաւունքները չեն ճանաչւել եւ թէ իրանք ոչինչ չեն ձեռք բերել պահպանելու համար իրենց հնադարեան եկեղեցու եւ իրանց հնադարեան ազգայնութեան անկախութիւնը:

« Հայկական պատգամաւորութիւնը վերադառնում է արեւելք՝ տանելով իր հետ այս դասը: Նա սակայն յայտարարում է թէ հայ ժողովուրդը երբեք

1) «Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1907, երես 58:

չի դադարի բարձրացնել իր ձայնը, մինչեւ որ Եւրոպան արդարութիւն կ'անի իր պահանջներին:

Բերլին, յուլիսի 13, 1878» [1]:

Կարդա՞ց արդեօք Բիսմարկն այդ Թուղթը եւ, եթէ չվախեցաւ նրա բովանդակութիւնից, գէթ խղճահարուե՞ց արդեօք, յայտնի չէ: Բայց ամենից նշանաւոր հանգամանքը նրա մէջ այն է, որ հայ ժողովուրդը պիտի դաս առնէ իր պատգամաւորութեան շրջագայութիւնից եւ ողբերանքներից եւ որ այդ դասն ուրիշ բան չպիտի լինի, բայց միայն այն, որ նա, հայ ժողովուրդը, խաբուած է: Ա՛յս է ամենաճիշտ եզրակացութիւնը, որ իր ամբողջ մերկութեամբ յայտնագործւում էր Բերլինի կոնգրեսի վերջին օրերում: Կարելի էր շատ գոհ լինել եւ այսքանով, որ հայ ժողովուրդը տիրացել է գոնէ այս ճշմարտութեան, որ կարող էր միանգամայն փրկարար լինել, եթէ երբեք չմոռացւէր:

Ի՞նչ էր մնում, որ տարակուսանքի Թեթեւ քող անգամ տարածէր այդ սոսկալի ճշմարտութեան վրայ: Ներսէս պատրիարքը գրում է Լոնդոնում իր աշխատակից Գաբրիէլին Փափազեանին·

«Գիտէք անշուշտ մինչեւ հիմա կոնգրէսին որոշումները հայոց խնդրի վրայ: Այս որոշումը մեծ դժգոհութիւն յարուց հոս, եւ իրաւամբ: Այս որոշման պատճառները զանազան են. նախ՝ Լայարդի տեղեկագրերը, որ կոյր Թրքամոլ է և շատ սխալ տեղեկութիւններ տուած է իւր կառավարութեան. երկրորդ՝ Անգլիոյ կառավարութիւնը շատ դժգոհութեան պատճառներ ցոյց տուած ըլլալով, կոնգրէսի մէջ, Թիւրք կառավարութեան, երկրորդական խնդրոց մէջ Թուլցաւ եւ տաճկաց հաճոյ ըլլալու ձգտեցաւ. երրորդ՝ տաճիկ լիազօրք, որոնց առաջինը յոյն է, լուռ կեցան ուրիշ խնդրոց մէջ, սաստիկ ընդդիմադրութիւն ըրին. Կարաթէոդորի փաշան ամէն առած հրահանգներուն դէմ զիջումներ ըրաւ յունական եւ աւստրիական խնդրոց մէջ եւ մեր խնդրուն մէջ, ուր բնաւ ընդդիմանալու հրահանգ չէր առած, արիացաւ. չորրորդ եւ մեծ պատճառ՝ Անգլիոյ եւ Թիւրքիոյ մէջ կնքեալ գաղտնի դաշնադրութիւնն եղաւ» [2]:

Մնա՞ց արդեօք մի ծածուկ բան: Ոչինչ: Ամէն տեղ Անգլիան մեր հայերին դաւաճանում էր, խաբում, վաճառում: Տեսէք հէնց Լայարդի սրտալի արարքը: Հռչակաւոր յունագէտ, որ իր անունն անմահացրել էր Նինուէի պեղումներով եւ նկարագրել էր նեստորական ասորիների սոսկալի կոտորածը Թիւրքերի ձեռքով, այդ մարդը հագնելով դիւանագէտի ծիրանի, ուրիշ առաքինութիւն չկարողացաւ ցոյց տալ, բայց միայն դժբախտ ու փոքրիկ Թիւրքահայ ժողովրդին այնպիսի արարքի առարկայ դարձնելով, որի համար չկայ մարդկային լեզուի մէջ մի այլ որակում, բացի սրիկայական խաբերայութիւ-

1) «L'Arménie» No. 1
2) «Մանչեսթրի Հայ Գաղութը», երես 110:

նից: Հայերին ուղարկում էր Սան – Ստեֆանօ եւ Բեռլին ինքնավարութիւն պահանջելու, որպէսզի այդպիսով Կարսը, Արդահանը Թրքական տիրապետութեան վերադարձնի, եւ երբ այս չէր յաջողւում, հայերին նա դուրս էր շպրտում անպէտք փալասի պէս: Այսպէս էր վարւում եւ Լայարդի հետ՝ այդ քաղաքական խնդիրը վարող Թիւրքական կառավարութիւնը:

Կարաթէոդորի փաշային տուած էր հրահանգ չընդդիմանալ հայկական ինքնավարութեան: Բայց այն օրւանից, երբ կոնգրեսը հաստատեց Սան – Ստեֆանոյի որոշումը Կարսի եւ Արդահանի մասին, հայերն այլ եւս հարկաւոր չէին, եւ Թիւրք կառավարութիւնը, որ Ներսէս պատրիարքին Թոյլ էր տւել նոյն իսկ ծածկագիր (չիֆրէ) հեռագրերով հաղորդակցութիւն ունենալ Բեռլինի իր պատգամաւորների հետ, այժմ պահանջում էր յետ կանչել նրանց: Այստեղից էր սկսւում սուլթան Աբդուլ – Համիդի կատաղի Թշնամութիւնը հայոց հարցի դէմ:

Եւ երբ ամէն ինչ այսքան պարզ ու յստակ էր, երբ արդէն պատմական կսկծեցուցիչ դաս էր հայ ժողովրդի խաբւածութիւնը, ի՞նչ պիտի բնականօրէն հետեւէր այդ մեծ փորձից ու փորձանքից, այդ ահագին հիասթափութիւնից, եթէ ոչ այն, որ հայ ժողովուրդը ճանաչում էր վերջապէս թէ ի՞նչ է այդ «քրիստոնեայ» ասուած Եւրոպան: Այսպէս պիտի լինէր, բայց այդպէ՞ս եղաւ արդեօք:

6·

Մեծ դժբախտութիւնն այն է հէնց, որ կեանքի ու մահւան նշանակութիւն ունեցող այս հարցն ունի իր դէմը ժխտողական պատասխան: Եւ այստեղ է հայ կղերական դիւանագիտութեան ժողովրդաջինջ ոճիրը:

Այնքան անգրագէտ էր այդ դիւանագիտութիւնը, որ Բիսմարկին ուղղուած թղթի մէջ չտեսաւ բնորոշ հակասութիւնը: Նա ասում էր թէ հայերը իրանց խաբուած են տեսնում Եւրոպայից, բայց երբեք չպիտի դադարեն ձայն բարձրացնելուց, այսինքն միշտ խաբուած լինելուց, մինչեւ որ Եւրոպան չճանաչէ նրա արդար իրաւունքը: Այստեղ գրւում է Թիւրքահայ յեղափոխութեան ճիշդ հոգեբանութիւնը — միշտ խաբուած լինել Եւրոպայից, բայց չի դադարել «ձայն հանելուց»· իսկ ձայն հանել կարելի էր միայն ապստամբութեամբ:

Իր դիւանագիտական ճանապարհորդութեան ընթացքում, հայ պատգամաւորութիւնը, մտրակւած բուլղարական օրինակով, տոգորւում էր այն մտքով, որ եթէ ինքն յաջողութիւն քիչ ունի, պատճառն այն է որ խաղաղ խնդրատու է Թղթի լեզւով, այլ ոչ թէ պահանջող է՝ Թափած արեան վրայ յենւած: Մի քանի տեղ, դիւանագէտների հետ զրուցելիս, պատգամաւորներն ասում էին թէ հեշտ էր հայերին ապստամբեցնել, իսկ Մինաս Չերազը սպառնում էր, որ, եթէ չկատարւեն հայերի պահանջները, Թիւրքաց Հայաստանը կ'ապստամբւի ռուսահայերի առաջնորդութեամբ:

Արիւնով հայկական իրաւունքներ ստեղծելու գաղափարի ներկայացուցիչ

է դառնում մանաւանդ մեծ ժողովրդականութիւն վայելող Խրիմեանը: Պատգամաւորների վերադառնալուց յետոյ, Կ. Պոլսի հայ գաղութը մի բոպէ սթափւեց, տեսաւ դառն իրողութիւնը, որ իրեն խաբել են, հասկացաւ, որ իսկապէս իրեն ոչինչ չեն տւել: Բայց սառն զգաստութեան բոպէն անցաւ եւ խաբւած ամբոխն ինքն էլ սկսեց խաբել, սակայն ոչ թէ ուրիշին, այլ իրան, միայն իրան: Նախաձեռնող հանդիսացան թէ Եւրոպա գնացած պատգամաւորները եւ թէ նրանց ուղարկող Ներսէս պատրիարքը:

Խաբեբայութիւնը տարւում էր երկու գծով: Ոմանք հաւատացնում էին թէ հայերը դիւանագիտական յաջողութիւն ունեցել են եւ պէտք շարունակեն իրանց ջանքերը սկսւած ուղղութեամբ: Այսպէս էր ներկայացնում դրութիւնը ամենից առաջ Ներսէս պատրիարքը իր հռչակ ստացած ճառի մէջ, որ արտասանեց Ազգային Ժողովի նիստում, օգոստոսի 2-ին, պատգամաւորների վերադարձի անմիջական ազդեցութեան տակ: Այս ճառն աւելի ինքնագովութիւն էր, քան իրականութեան ճշգրիտ պատմութիւն: Ինչե՛ր արաւ ինքը՝ Ներսէս, որքա՛ն դժւարութիւններ կային այդքանն անգամ անելու համար — ա՛յս էր գլխաւորը: Այս առասպելն էլ Ներսէս համարում էր արժէքաւոր նւաճումներ՝ ծածկելով, ի հարկէ, այն դառն իրողութիւնները, որ նա ինքն իր ձեռքով նկարագրել էր Գարեգին Փափազեանին գրած նամակի մէջ, ինչպէս տեսանք վերեւում: Հռետորական ճարտասանութիւնը, համեմւած օրւայ տրամադրութեան համապատասխանող ազգասիրական եւ գաւառասիրական զեղումներով, գալիս ծածկում էր իրերի ռէալ բովանդակութիւնը, արբեցնում էր մարդկանց ապագայի երեւակայական կարելիութիւններով:

« Իսկ մենք, սիրելի երեսփոխանք, — այսպէս էր նա վերջացնում իր ճառը, — մենք յարատեւենք մեր սկսած գործի մէջ: Այսպիսի գործեր ոչ մէկ օրւայ մէջ, ոչ մէկ մարդու ձեռքով կրնան կատարւել, պատրաստենք մեր ապագային: Նախ չկենանք հոս, Հայաստան երթանք: Հայաստան ղրկենք ինչ որ ունենք ազգին մէջ բանիմաց, տաղանդաւոր ու ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ: Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ: Հայաստան երթան մեր վաճառականներ: Հայաստան երթան այնքան դժբախտ պանդուխտներ. ոչ եւս պէտք ըլլայ հոն սով, մաածութիւն. ոչ եւս աշխատութեան խափանում: Ուղիներ պէտք բացւեն, ջրանցքներ պէտք շինւեն, գործարաններ պէտք կառուցւեն, Անգլիոյ դրամատէրերը հոն պէտք երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն այսօրւանէ. ընկերութիւններ՝ ամէն քաղաք եւ գիւղ դպրոցներ հաստատելու համար, ընկերութիւններ՝ առեւտրական յարաբերութիւններ հաստատելու համար. ընկերութիւններ՝ գործարաններ հաստատելու համար, Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգլիայէն, Թիւրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն ու մինչեւ Պարսկաստանէն միանան, ձեռք ձեռքի տան բոլոր հայերը, եւ այն ատեն թերեւս ես ալ, ցաւագար եւ

անբուժելի հիւանդութեամբ վարակեալ ի գերեզման իջած ըլլամ արդէն, այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պսակւած մեր այսօրւան բոլոր յոյսերը, հոգիս պիտի խայտայ գերեզմանիս մէջէն եւ պիտի ընդգրկէ մեր սիրելի նախնեաց հոգիները » [1]:

Այս բանաստեղծութիւն էր, ռոմանտիկ երազատեսութիւն, եւ ոչ թէ քաղաքական գործիչի լուրջ զեկուցում: Միեւնոյն երեւոյթի գուցէ հազարերորդ կրկնութիւնը — Կ. Պոլսի հայ գաղութի վերնախաւերը, որոնք իրանց փափկակեաց հեռաւորութիւնից ժամանակ են գտել ազգասիրութիւն անելու ի հաշիւ աւերակ եւ շարունակ էլ աւերւող գիւղական գաւառների եւ նրանց կոտորւել դրախտ են խոստանում՝ իբրեւ հետեւանք իրանց դիւանագիտական աշխատանքի, որ դեռ ոչինչ դրական արդիւնք չի տւած, ժողովուրդը խաբելու անպատիւ միջոց էր դառնում: Պատիւ կարո՞ղ էր բերել հայ ժողովրդի ներկայացուցիչ համարւող եւ ազգային հերոս դարձրած պատրիարքի այն հանգամանքը, որ, հէնց նոյն այդ օրերին, նոյն այդ 1878-ի աշնանավերջին, Էրզրումի անգլիական հիւպատոս կապիտան Տրոտըրը գրում էր իր կառավարութեան թէ՝ քրիստոնեաների այժմեան դրութիւնն աւելի վատ է, քան երբ եւ իցէ եղել է վերջին տարիներում [2]: Եւ քանի քանի մարդիկ էին խաբւում պատրիարքի անտեղի եւ անհիմն ոգեւորութիւնից, ոչ միայն Կ. Պոլսում, այլ եւ ամբողջ հայութեան մէջ, ոչ միայն 1878-ի ամառը, այլ եւ յետոյ, միշտ, երբ առիթ է հանդիպել կարդալու առաջին պատւի արժանացած եւ Փրանսերէնի էլ թարգմանւած այդ ճառը:

Այս մի համազգային խաբեբայութիւն էր: Նրա հետ համեմատած փոքր բան է դառնում Մինաս Չերազի կատարած խաբէութիւնը, որ այնուամենայնիւ ազդեցութիւն է արել ժամանակակիցների վրայ: Տեսնելով հասարակութեան մէջ տիրող հիասթափութիւնը եւ յուսահատութիւնը, նա գրում էր մի լղարիկ բրոշիւր՝ « Թէ ի՞նչ շահեցանք Բերլինի Վեհաժողովէն » եւ պատասխանում էր այդ հարցին. « Բերլինի Վեհաժողովէն մի ոսկեհանք շահեցանք. մեզ անկէ խիզախել հանել ոսկին » [3]: Երիտասարդ դիւանագէտը, կարճ միջոցում պտտած լինելով միջազգային խաբեբաների եւ ստախօսների ոսկեզօծ ապարանքներում, լաւ իւրացրել էր իւր արւեստի պահանջածը: Այն Մինաս Չերազը, որ, Բերլինում իբրեւ պատգամաւորութեան քարտուղար, գրել եւ ստորագրել էր այն բացարձակ յայտարարութիւնը, թէ հայ ժողովուրդը խաբւած է Բերլինի վեհաժողովից, Կ. Պոլսի մէջ, ազգասիրական աւինով

---

1) «Ատենախօսութիւն Տ. Տ. Ներսէսի, ս. արքեպիսկոպոսի Պատրիարքի՝ Կ. Պոլսոյ Ազգ. Ժողովի Հայոց», Կ. Պոլիս, 1878, երես 57–58:

2) Տպւած է անգլ. Կապոյտ Գրքում. «Blue Book» Turkey. № 10. 1878, եր. 81: «Положенie Армянъ въ Турцiи», М. 1896. с. 52.

3) Մ. Չերազ — «Թէ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն», Կ.Պոլիս 1878, եր. 29:

տապնապած, հաւատացնում էր, որ Բեռլինի կոնգրեսը հայերէն մի ամբողջ հանք է տուել, այն էլ ոչ թէ երկաթի կամ արճճի, այլ ոսկու ...

Գանք այժմ երկրորդ ուղղութեան, որի գլխաւոր ներկայացուցիչն է, ինչպէս ասացինք, Խրիմեանը: Նա ասում է թէ այն, ինչ արուել է մինչեւ այժմ, իսկական հայոց հարց չէր, այլ միայն նրա նախապատրաստութիւնը: Հայոց հարցը նոր է սկսւում եւ պիտի հանդէս գայ արիւնով եւ կռւով: Մեծ ժողովրդականութիւն ստացաւ եւ այժմ էլ չի անյայտացել այն, թէ ի՞նչպէս էր Խրիմեանը ժողովրդին ներկայացնում իր դիւանագիտական առաքելութիւնը:

« Պեռլինի մէջ հոգեճաշ հարիսա կը ցրուէին բոլոր հպատակ ազգերին. ինծի դրկեցիք, որ հայերի ընկած մասն առնեմ բերեմ. ես ալ պտուկն առի ու վազեցի. տեսայ որ սերպեր, ղարատաղցիներ, յոյներ, բուլղարներ, ռումաններ իրենց քովէն կախ տւած երկաթեայ շերեփներով լեցուցին, տարան տարան ... դուք ինծի շերեփի տեղը թուղթ տուիք. այդ թղթի կտորը որչափ որ խօթեցի տաք հարիսային մէջ, թուղթ թացեցաւ, լփկեցաւ, մինչեւ ընկաւ. ես ալ պարապ թողի յետ եկայ. մօտցայ առաջուց մի քանի հատ զէյթունցի տանէի հետ, անոնք շերեփ ունէին, կարելի է ամանին տակէն, քովերէն բան մը փրցնէի » (1):

Բայց միջազգային հարիսային մէջ դրած այս զինական գաղափարը Խրիմեանը միայն այլաբանական ձեւի մէջ չէր դնում, այլ եւ քարոզում էր բացարձակ կերպով: Հետեւեալ նամակը, որ գրել է նրան Էրզրումի քաղքենի բնակիչ երիտասարդներից մէկը 1878-ի օգոստոսի 20-ին, շատ լաւ բնորոշում է ազգասէր շրջանների տրամադրութիւնը Բեռլինի կոնգրեսից անմիջապէս յետոյ:

« Սիրելի Հայրիկ,

« Երբ ուղեւորեցաք Եւրոպա եւ անդ գտաք անչափ փառաւոր ընդունելութիւններ, մեծամեծ խոստումներ, սքանչելի յոյսեր, տեսաք քաղաքագէտ նշանաւոր անձինք, նոյնիսկ ինքնակալ կայսրեր ու կայսրուհիներ — յայնժամ յուսոյ և լուսոյ ճառագայթները նշմարել կարծեցինք Հայաստանի հորիզոնի վրայ: Ամենուս սիրտը ուրախութեամբ արբշիռ, ճակատնիս պանծալի, ապագան յուսածիծաղ, կարծես երկնային դաշտներուն մէջ կ'ապրէինք: Այնպէս աչքերնիս արեւմուտք դարձուցած Ձեր մի ձայնին կը սպասէինք: Եւրոպական լրագրաց էջերը մեր յոյսերը կը քաջալերէին ու ակնկալութիւնները իրականացնել կը խոստանային, վերջապէս ամենքս ալ Պեռլին հաւաքուած գերագոյն ժողովոյ շրթունքներէն առկախ, մեր ազատութիւնը կամ դատավճիռը կը սպասէինք: Այսպէս 2 – 3 ամսոյ չափ յուսոյ եւ անյուսութեան մէջ ծփալէ եւ տատանելէ ետք, յանկարծ գոնկրեսի փակումն ու Թիւրք եւ անգլիական դաշնադրութիւնը լսեցինք, որով մեր յոյսերը յօդս ցնդած տեսանք:

1) «Արմենիա» լրագիր, Մարսէյլ, 1888—1889, № 47:

« Բարէ՜, ցնորք էն եղեր այդ ամենը, որ մեզ կ'օրօրէր ու անուշ երազներով կը տարուբերէր, որքան ճշմարիտ է եղեր, թէ քանի որ չկայ ուղղակի զոհ, չկայ եւ փրկութիւն եւ թէ անպատրաստ, անզոհաբեր ժողովուրդ մը արժանի չէ ազատութեան:

« Է՜հ, հոգ չէ, Անգլիան իր շահամոլութեան, Փրուսիան իր եսասիրութեան ոգւոյն, Ռուսիան իր խորամանկ քաղաքականութեան եւ այլ տէրութիւնք զանազան զգացումներու թող զոհեն տարաբախտ ազգի մը ներկան: Թող կնամարդի եւ լալկան ժողովուրդ անուանեն մեզ, թող կարծեն թէ այս ազգը իրենց շահուն կամ քաղաքականութեան գործիք կարող են ընել. բայց շատ կը սխալին, որովհետեւ մերն է ապագան, այո՛, ապագայի հորիզոնը պայծառ է. պահ մը երեւցած լոյսը առուտ մըն է եղեր, սակայն այժմ կը տեսնենք մի լուսաւոր աստղ, հայ ազգի զգացումներու արթնանալը, ձեռք ձեռքի տալը, միասիրտ, միակամ եւ միահոգի խորհելու, գործելու տրամադրութիւնն ու կամքն է: Այլ եւս վախ չունինք, Հայրիկ, բաւական է որ խօսելը մի կողմ դրած, գործի սկսենք, այո՛, առաւել գործ քան խօսք ... » (1):

Խրիմեանը պատասխանում էր նրան.

« Նամակիդ միայն այն կէտի վրայ ուրախ եմ, որ դուք թերահաւատ չէք ոմանց պէս, որոնք յուսահատութեան տրտունջ կը բառնան եւ կը խօսեն թէ գոնկրեսն հայոց ինքնուրոյնութիւն չտուաւ, կամ թէ նորա իրաւունք զլացաւ, եւ այլն: Այլ դուք այդպէս չէք մտածեր եւ իրապէս կը զատէք, որ մի ազգ առանց պատրաստութեան, որի զարգացումը բարոյապէս եւ նիւթապէս առանց զոհի եւ արեան, որ հայրենի ազատութեան գլխաւոր պայմաններն են, երբեք մի այդպիսի ազգ արժանի է ազատութեան եւ ինքնավարութեան: Եթէ ասեն դոքա՝ հապա ինչո՞ւ խնդրեցինք երբ մենք զմեզ կը ճանաչէինք, երբ գիտէինք կանխապէս, որ հայոց խնդիրը չպիտի պսակէ գոնկրեսը, այս մի թագուն խորհուրդ է, որ շատ պատճառներ ունի եւ ես կարող չեմ գրով պատմել Ձեզ այժմ թէ ատ եւ թէ այդ ... միայն այսքանը կը գրեմ, որ ազգային հեռատես եւ քաղաքագէտ անձինք խորհրդով այս խնդիրը երեւան հանեցին, որպէսզի այժմէն ապագայի համար արձանագրուի եւ ինքը ձայն տար Եւրոպիոյ առաջ, թէ Ասիական մասին մէջ մի ժողովուրդ կայ, որ արժանի է Եւրոպիոյ ուշադրութեան:

« Հայոց ներկայ խնդիրը մի առաջին քայլն էր, որ յառաջ տարաւ ապագայի ազատութեան համար, մի քար էր, զոր հիմը դրաւ, որու շէնքը այժմէ սկսեալ պէտք է պատրաստենք այն յուսացեալ ապագայի համար, որ գուցէ շատ հեռու չէ, յորում դարձեալ պիտի ծնի Արեւելեան յաւիտենական խնդիր: Արեւմուտքի մէջ գրեթէ լրացաւ այդ խնդիրը, անշուշտ Արեւելքի մէջ եւս պիտի լրանայ:

1) «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1906, № 7, երես 92-93:

« Աշխատենք եւ սպասենք այն ապագայի համար. աշխատենք, որ երբ հասնի, մօտենայ այդ յուսաբեր ապագան, հայք քաջագործ եւ պատրաստ գտնուին, միայն գրչով, Թղթով եւ խեղճ վեղարով չներկայանան Եւրոպիոյ դահլիճի յառաջ, այլ զէնքով ու արիւնով, ինչպէս դիւցազն գարաղացին:

« Ազնիւ երիտասարդ, ես ծեր եմ, Թերեւս չհասնեմ այն ցանկալի ապագային, յորում իբրեւ ծերունին Սիմէօն պաղատէի բարձրեալոյն առաջ՝ « արդ արձակեսյ զծառայն քո, տէ՛ր, զի տեսի ազատ մանուկն Հայաստան »: Իսկ դու, որ ընդարձակ ապագան ունիս եւ նրա յոյսով կը խայտաս, զինուորուիր, այժմէն քաջալերէ եւ զինէ նման հայրենակիցներդ, լոյս եւ երկաԹ միասին լծորդելով վազեցէք դէպի յայն ապագայ » [1]:

Երբ մի ժամանակ Խրիմեանը Էրզրումի վալի Իսմայիլ փաշային ներկայացնում էր Մուշի դաշտի հարստահարուած եւ կեղեքուած 63 հայ եւ Թիւրք գիւղերի մանրամասն նկարագրուԹիւնը եւ այսպիսով պատճառ էր դառնում, որ այդ դժբախտ երկրից աքսորեն մի խումբ կեղեքիչ քիւրդ աղաւականներ. երբ նա, իբրեւ նորընտիր պատրիարք, Կ. Պոլիս գալով Վանից, շրջապատուած էր ցնծուԹիւններով, բայց ընդհատելով այդ ցոյցերը, պատմեց Թէ Մուշի Աւաղաղբիւր մեծ գիւղը Թալանուած է քրդերից եւ նրա ազգաբնակուԹիւնը գլխովին մերկացած, դիմաւորեց իրեն լացով ու կոծով իր մերկուԹիւնը ծածկել խնդրելով. երբ նա՝ Ազգային ժողովի նիստերում նստած՝ ընդհատում էր պոլսեցիների ապարդիւն վիճաբանուԹիւնները՝ յիշեցնելով անմխիԹար գաւառները եւ պատմելով զարզանդ պատճառող փաստեր ժողովրդական անծայր աղքատուԹիւնից, ամէնքը համարում էին Թէ Խրիմեանը Հայաստանի բարի ոգին է, « Հրեշտակը », ինչպէս ասում էին: Այժմ հակառակուԹիւններով լի այդ մարդը ուզում էր նոյն այդ գաւառական մերկուԹիւնն ու անճարուԹիւնը զինուորել, արիւնահեղ ապստամբուԹիւնների վարժեցնել՝ « մանուկ Հայաստան » ստեղծելու համար, եւ այս կողմից հանդիսանում էր նոյն Հայաստանի չար ոգին: ԱպստամբուԹիւն քարոզողներից, պատրաստողներից ոչ մէկի վրայ այն աստիճան չէր ծանրանում Թիւրքահայ գիւղացիուԹեան արեան գետերի պատասխանատուուԹիւնը, որքան Խրիմեանի վրայ, որովհետեւ եԹէ մի Նալբանդեան, մի Գրիգոր Արծրունի, մի Գամառ – ՔաԹիպա, տեսած չլինելով բուն երկիրը, խաղում էին նրա ժողովրդի հետ անգիտուԹեամբ, Խրիմեանը շատ լաւ էր ճանաչում իրական Հայաստանը, ժողովրդի ցրուածուԹիւնը, նրան հոգեհան անող տնտեսական գերուԹիւնը:

Եւ ճակատագիրն անողոք հանդիսացաւ այդ մարդու վերաբերմամբ: Նա երկար ապրեց, տեսաւ իր երազած մանուկ Հայաստանը ծայրէ ծայր լցուած հայ բնաջնջող գիւղացիուԹեան արիւնով, դիմեց, իբրեւ կաԹողիկոս, ռուս-

1) Անդ, երես 93–94:

սաց ցարին, Եւրոպա ուղարկեց մի եպիսկոպոսի դռնէ դուռ ընկնելու, ինչպէս մի ժամանակ ինքը, եւ ողորմուԹիւն աղերսելու իսպառ ոչնչացող ժողովրդի համար, բայց ոչ մի տեղից ոչինչ չը ստացաւ:

7.

Անհրաժեշտ է այժմ տեսնել բուն երկիրն ու նրա մէջ ապրող աշխատաւոր ժողովուրդը, երբ գաղուԹահայ կղերական եւ բուրժուա – ինտելիգենտական վերնախաւերն աշխատում էին այսպէս, առաքելուԹիւններ էին գործուղում, ծրագիրներ մշակում, բանաձեւեր եւ նշանաբաններ արծարծում, եւ ոգեւորւում ու հրճւում:

1878 Թւականի ամբողջ առաջին կէսը Թիւրքաց Հայաստանը անցնում էր մի ծայրայեղ լարուած եւ ծանր սպասողուԹեան մէջ, որ սակայն նորուԹիւն չէր նրա համար, այլ ներկայացնում էր կրկնուԹիւն այն տարիների, երբ նրա դաշտերում ռուս – Թիւրքական պատերազմն էր որոտում: Գլխովին գիւղացիական մի երկիր, նա գրեԹէ մի ամբողջ տարի տրորւում էր ռուսական եւ Թիւրքական բանակների ոտների տակ եւ մերկանում էր առանց այն էլ աղքատիկ տնտեսական ստացուածքներից եւ այսպիսով պարարտ հող էր պատրաստում իւրաքանչիւր պատերազմի ուղեկից սովի եւ համաճարակ հիւանդուԹիւնների համար: Ժողովրդական այնպիսի սոսկալի աղէտներ, ինչպէս էին քրդական արշաւանքները, Ալաշկերտի գաղԹականուԹիւնը նորից եւ նորից դրել էին հայ գիւղացիուԹեանը կեանքի եւ մահուան հարցի առաջ — կամ մահանալ ամբողջովին, իսպառ ջնջուել աշխարհի երեսից, կամ մի տեղ որոնել, ուր կարելի կը լինի գտնել մի կտոր հաց աշխատելու համար:

Դէպքերը շտապեցնում էին ընտրել այդ երկու ելքերից մէկը: Դեռ պատերազմական գործողուԹիւնները նոր էին վերջանում: Դեռ հազիւ էին մի քանի ռուսական զօրաբաժիններ հեռանում Վանի ծովակի Հիւսիս – Արեւմտեան շրջաններից, եւ ահա քիւրդերը շտապում էին փորձել իրենց ստացած Հէնրի Մարտին արագաձիգները անպաշտպան հայ գիւղացու մարմնի վրայ, եւ կոտորածների, հրդեհումների հին աղաղակը վերանորոգւում էր նոր ուժով՝ իբրեւ վերջին արձագանգ պատերազմական գործողուԹիւնների, որոնք ոչինչ չէին բերել դժբախտ երկրին, բացի բարքերի կոպտացումից, արեան պաշտամունքի հզօրացումից եւ ցեղային, կրօնական փոխադարձ ատելուԹեան հրէշային դրդումից: Իսկ զինադադարի պայմանները, ապա եւ Սան – Ստեֆանոյի դաշնագիրը արդէն որոշել էին Թէ երկրի որ մասերը պիտի մնային ռուսների ձեռքում: Այս մասերից դուրս մնացող հայ գիւղացի ազգաբնակուԹեան մէջ նորից բռնկւում էր ռուս – Թիւրքական պատերազմների հետ կապուած տարերային շարժումը: Նորից ինքնապահպանման բնազդը խօսեց նրա էուԹեան խորքում՝ հարիւրաւոր սերունդների հաւաքական լեզուով, եւ Եփրատից մինչեւ Վան մի մղում առաջացաւ — գաղԹել, գնալ ռուս զօրքերի յետեւից: Ժողովուրդն արդէն ծփում էր այդ վերջին յոյսի ալիքների մէջ, սպասում էր

յարմար բաղէին, արդէն պատրաստւում էր: Այս անգամւայ գաղթականութիւնն աւելի խոշոր պիտի լինէր, քան 1829 թւականներին:

Բայց այժմ ուրիշ թւական է: Ռուս կառավարութիւնը, որ ամէն քայլափոխում հաւատացնում էր թէ խաչւում է քրիստոնեաների համար, հիմա այլ եւս չէր ուզում հայերի գաղթումն իր սահմանները. Նրա քաղաքականութեան հակառակ բան էր՝ դատարկել ամբողջ Թիւրքաց Հայաստանը հայերից եւ այսպիսով զրկել նրան այդ ժողովրդի դրութիւնը շահագործելու եւ Թրքական գործերի մէջ այդ եղանակով միջամտելուց ապագայում:

Բայց հայերի գաղթման այս անգամ ռուսներից աւելի հակառակւում էր գաղութահայ կղերա – բուրժուական ազգասիրութիւնը: Նրա եւ գիւղացիական Հայաստանի մէջ գոյացել էր, ինչպէս տեսանք Նալբանդեանի ժամանակից, շահերի մի խիստ հակամարտութիւն: Գիւղացիական Հայաստանին — կրկնե՛նք այս միանգամ եւս — միանգամայն խորթ էին քաղաքական հաշիւները. նա միայն մի բան էր ուզում — ապրել իբրեւ աշխատաւոր մարդ հանգստութեան մէջ: Բայց նրա այս գիւղացիական հարցը քաղաքական դարձնող գաղութա – ազգասիրութիւնը նայում էր նրան իբրեւ մի մարդկային ատաղձի, որի ուսերի վրայ պիտի բարձրացւէր արդելակ – պետութիւն դարձնելիք լուսաւորչական մանուկ Հայաստանը. իսկ այդ շալակը ամենից առաջ պարտաւորեցնում էր հայ գիւղացուն նստել իր երկրում, չգաղթել:

Ինչպէս պիտի տանէր նա այդ շալակը, որ արդէն միջազգային խոտելակ դարձած չդարձած՝ մոլեգնոտ կրքեր էր գրգռում գաղութահայութեան մէջ՝ հպարտ, ինքնագոհ եւ խոխոտացող մեծամոլութիւն, իսկ Թիւրքահայ գիւղացուն չորս կողմից շրջապատած մահմեդականութեան մէջ՝ նախանձ, ատելութիւն ծնող կատաղի թշնամութիւն: Ինչպէս միշտ, գաղութահայութիւնը կոյր էր մնում միջավայրի վերաբերմամբ, ուր ապրում էր Թիւրքահայ գիւղացին: Գիւղացիական ժողովուրդը, ընդհակառակը, չափազանց լաւ իրազեկ էր իր երկրի պայմաններին, եւ 61-րդ յօդւածի անունը նրա ականջին դեռ հասած չհասած՝ նա լսում էր իր հարեւան քրդից ու Թիւրքից թէ իրեն պիտի կոտորեն հէնց նոյն այդ յօդւածի պատճառով: Եւ հասկանալի է թոյլ կենդանական բնազդը — փախչել, ազատել:

Դարերի ընթացքում այս մի բնական օրէնք է եղել շարունակական եւ անընդհատօրէն մեռնող հայ ժողովրդի համար: Բայց այժմ 61-րդ յօդւածը յայտարարում է փրկութեան այդ ամենաթշւառ միջոցը յանցանք, դաւաճանութիւն հայրենիքի հանդէպ: Ազգասիրութիւնը, ուր էլ լինէր նա — Պոլսում թէ Էրզրումում կամ Թիֆլիսում, վրդովւած էր եւ վայնասուն էր բարձրացրել իր բոլոր լրագրների մէջ՝ «Հայրենիքը սարսափելի վտանգի մէջ է», սարսափահար աղաղակում էր Մկրտիչ Փորթուգալեանը Պոլսի « Մանզումէի Էֆքեար » լրագրի էջերից: Ուրիշները, որոնք աւելի պակաս ազգասէրներ չէին, ուրիշ կերպով էին կուրծք ծեծում եւ օձիք պատառում:

Եւ իրաւ, 1878-ի ամառը մեծ տագնապի մէջ էր 61-րդ յօդւածը կորցնելու վտանգի ենթարկւած գաղութահայ մտաւորականութիւնը: Ներսէս պատրիարքը այդ կորստի ամբողջ աղէտը գաղթելու պատրաստւած ժողովրդին հասկցնելու համար երկու վարդապետ ուղարկեց Հայաստան: Խրատով եւ յետ կացնող ուղղութեամբ աշխատում էին ուրիշ հոգեւորականներ: Բայց շարժման թափն այնպէս չէր, որ խօսքն ու քարոզները ազդէին:

Էրզրումը եւ նրա շրջականներն էին, որ հրաբխային կենտրոնի ուժով գաղթականական գաղափարներ էին հրահրում Հայաստանի բոլոր կենտրոններում: Բեռլինի կոնգրեսից յետոյ, երբ յայտնի դարձաւ թէ ռուսական զօրքերը պիտի հեռանան Էրզրումից, ամենուրեք տիրեց մի տրամադրութիւն, որի մի թոյլ արտացոլումը կարելի է համարել «Մշակ»-ի թղթակցի հետեւեալ տողերը.

« Յանկարծ լսեց թէ Բաթումը պէտք է դատարկեն եւ մեր զօրաբաժինն այստեղից (Էրզրումից) քաշւի. ի՞նչ աղմուկ, շփոթմունք եւ յուսահատութիւն էր, որ տիրեց բոլորին, ծեր իմ, սուրբ եւ մահն աչքերի առաջ, բոլոր գիւղացիք ահա պատրաստւում էին, էլ ոչնչի վրայ չմտածելով, « փախի՛ — փախչենք » ասելով ճանապարհ ընկնեն մեր յետեւից անօթի, սոված, մերկ ու տկլոր: Յորդորանք, համոզմունք, էլ ո՞վ ականջը կարող էր լսել, երբ բոլորի ուշքը միայն փախչելու վրայ էր» [1]: Ամէն տեղ լուրեր էին տարածւում թէ՝ ռուսների հեռանալուց յետոյ, հայերի ընդհանուր կոտորած պիտի տեղի ունենայ: Սարսափահար ազգաբնակութիւնը պահանջում էր երաշխաւորութիւն թէ այդպիսի բան չի լինի եւ այդ երաշխաւորութիւնը պիտի տար Ներսէս պատրիարքը: Սա դիմում էր դեսպաններին, խնդրում էր փութացնել ռեֆորմների գործադրութիւնը եւ ոչինչ չստանալով՝ խորհուրդ էր տալիս ահաբեկւած ժողովրդին սպասել, յուսալ:

« Ձեր սրբազնութենէն տարած օրհնութիւնները սփռելով Հայաստանի անյոյս ժողովուրդի մէջ, — գրում էր Գարեգին վարդապետ Սրւանձտեանը Ներսէս պատրիարքին, — մխիթարեցինք զիրենք: Ուրախ եմ ըսելու թէ հայ ժողովուրդն իրեն համար էլ անտանելի եղած տարերքէ ի վեր գոյից եւ կենաց զոհութեամբ զրկեալ եւ հարստահարեալ վիճակով հաստատած կը մնայ իր հայրենի շէնի ու աւերակաց վրայ նստել, յուսալ ու սպասել » [2]: Բայց այս բանաստեղծութիւն էր: Հայ ժողովուրդը բոլորովին վարդապետներից ազգասիրաբար չէր խրատւում նստել ու սպասել: Այս իրողութիւնն արձանագրել է «Մշակ»-ի աշխատակից, իր ժամանակի յայտնի հրապարակախօս Գրիգոր Նիկողոսեան իր մի նամակի մէջ, որ գրւած էր Էրզրումից:

« Եթէ, ասում էր նա, զանազան բանակցութիւնները նրա համար են մի-

1) «Մշակ» 1878, № 137:
2) «Մասիս» 1879, № 2224

այն, որ հայերի ապագան ապահովեն, ինչո՞ւ չեն մտածում, որ մինչեւ այդ ապահովութիւնը ձեռք բերելը ոչ մի հայ չի մնայ Հայաստանում եւ գծագրած ռեֆորմները կը մնան ապարդիւն, թղթի վրայ, լոկ պատմութեան յիշատակ: Թող միայն տեսնեն թէ ի՞նչ յուսահատութեան տագնապի մէջ է տարաբախտ ժողովուրդը, որի ականջը միայն սպառնալիք է լսում, իսկ աչքը փախստեան վառ օրինակներ է տեսնում, որին անդէն գտնելով՝ ամէն կողմից կրկնում են թէ մօտ է արդէն այն օրը, երբ հայի արիւնով պիտի ցեխ շաղախեն, իսկ մարմիններից սարեր կառուցանեն ... Երախտագիտութեամբ պիտի յայտնել, որ Էրզրումի առաջնորդ Յարութիւն արքեպիսկոպոսը սկսել է իր բարերար գործունէութիւնը. խաչը ձեռքին նա շրջում է գիւղերում՝ ահաբեկ ժողովուրդն ուշքի բերելու եւ իր գլխով նրան ապահովութիւն է խոստանում, բայց ոչ մի ուժ չի կարող պահել այդպիսի մի կատաղի հեղեղ, ինչպէս գաղթականութիւնն է »[1]:

Ուրեմն սուտ է, որ հայ հոգեւորականներն են եղել գաղթականութիւնը կանգնեցնողները:

Միայն մի ուժ կար աշխարհի վրայ — ցարական ուժը, որ կարող էր այդ բանն անել: Եւ նա արաւ: Նա ցցւում էր գաղթականի արիւնոտ եւ արցունքոտ ճանապարհի վրայ, կրունկի վրայ յետ էր դարձնում նրան, փակում հարիւր հազարաւոր մարդկանց դժոխքի մէջ՝ յանձնելով նրանց վիճակը քրդերին, որոնց 20 հազար կատարելագործուած հրացաններով զինելու պատճառը հէնց ինքն է դարձել:

Հայերի գաղթականութիւնն արգիլելու համար, նախ եւ առաջ ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնն է դիմում թիւրքաց կառավարութեան, ապա Կովկասի փոխարքան էր հրաման արձակում, ապա գեներալ Լազարեւը, արդէն հայերի մէջ իր քաջութիւններով ժողովրդական հերոս դարձած, ուղղում էր հայերին մի յատուկ կոչ՝ յորդորելով նրանց, որ նստեն իրենց տեղը, չհաւատան վտանգի մասին տարածուող լուրերին:

Լազարեւի այս դիմումը հրճուանք էր պատճառում տակն ու վրայ դարձած հայ ազգասիրութեան, եւ Գրիգոր Արծրունին « էլ չեն գաղթի » յաղթական վերնագիրը կրող առաջնորդող յօդուածի մէջ ասում էր. « Այո՛, գեներալ Լազարեւի արած գործը ոչ միայն համապատասխան է ռուսաց կառավարութեան Հայաստանի վերաբերեալ ունեցած քաղաքականութեան, բայց դա միեւնոյն ժամանակ եւ լաւ հայի գործ է »[2]: Այդ « լաւ հայը » բաւական չհամարելով, որ ասել էր իր կոչի մէջ թէ՝ « իբրեւ գլխաւոր իշխող կողմանցս, ազդեալ եմ բարձրագոյն իշխանութենէն, որ յետ մեկնելոյ ինձ ենթարկեալ զօրացս Ձեզ անհանգստութիւն տալ եւ Ձեր վիճակը վտանգող չի պիտի լինի ամենեւին »[1], գրագրութիւն է սկսում Էրզրումի կողմերի թիւրքական զօրքերի հրամանատար Իսմայիլ փաշայի հետ՝ խնդրելով որ նա էլ իր կողմից միջոցներ ձեռք առնի, որպէսզի քրիստոնեաները պաշտպանուած լինեն եւ գաղթելու հարկի մէջ չգտնուեն:

1) «Մշակ» 1878, № 151:
2) «Մշակ» 1878, № 157:

« Երէկ, գրում էր նա, հեռագրով Ձեզմէ խնդրեցի, որ դուք միջոցներ գործ դնէք քրիստոնէից ընչից եւ անձանց ապահովութեան համար. այսօր ստացայ հեռագիր հայոց ժողովրդէն, որ խիստ երկիւղի մէջ է եւ օսմանեան կառավարութեան պաշտօնէից վրայ հովանաւորութիւն մը չտեսներ եւ սաստիկ բռնութիւններ տեսնելով՝ պատրաստ է ինքզինք ձգել մեր սահմանները:

« Արդէն Ալաշկերտէն սկսեր է քրդերու երկիւղէն հայոց գաղթականութիւնը, անոնց օրինակին կը սկսեն հետեւիլ մանաւորապէս եւ Խորասանի քրիստոնեայք: Միւշիւր, դուք գիտէք, որ ես ինքս նմանապէս եւ թագաւոր կայսեր փոխարքայէն ստացած տեղեկութեանցս համեմատ աշխատեցի բոլոր իմ թագաւորական ազդեցութիւնս բանեցնել հայոց ազգն իր տեղն պահելու համար, պատուոյս գիրենք վստահեցնելով, թէ իրենց համար ամենալաւ ապահովութիւնն ու երաշխաւորութիւնն է լիակատար հաւատ եւ անպայման հնազանդութիւն ունենալ օսմանեան պաշտօնէութեան նկատմամբ:

« Միւշիւր, ես բոլորովին համոզուած եմ, որ դուք ինձ գաղափարակից էք եւ անշուշտ առանձին եւ ազդու միջոցներ գործ կը դնէք հայոց հասարակութեան անդորրութեան համար. ասով դուք վերջ կը դնէք անոնց յուզեալ վիճակին եւ կը հարկադրէք զիրանց տեղերնին նստել եւ խաղաղ իրենց աշխատանաց զբաղել: Հարկ չէ Ձեզ հաւատացնել, որ իմ մէկ խօսքս՝ այն է՝ « Գաղթեցէք մեր սահմանները » Ձեր բոլոր քրիստոնէաբնակ գաւառները կ'ամայացնէ, բայց ես հոգով ու սրտով բարեացակամ լինելով հայոց ազգին եւ գիտնալով թէ մեծ բազմութեանց գաղթականութեան վրայ ինչ զրկանքներ եւ զոհողութիւններ կը հասնի եւ ունենալով հաստատ հրամաններ նորին բարձրութիւն մեծ դքսէն, կը համոզեմ զձեզ, պատուելի միւշիւր, այս գործին հետամուտ լինէք ամենայն եռանդով, զՁեզ կ'օրհնեն այն ժողովուրդները, որոնք զօրաւոր եւ արդար իրաւանց ձեռքին տակ կը գտնեն հանգստութիւն եւ ապահովեալ կը շահեն իրենց աշխատանց պտուղներով: Ինչ որ ըրեր էք գաղթականութեան առջեւ առնելու համար, խնդրեմ ինձ իմաց տայք »[2]:

Միւշիւր Իսմայիլ փաշան ազգով քիւրդ էր եւ ստացել էր « ղուրդ » («գայլ») մականունը: Գեներալ Լազարեւը անշուշտ զգում էր, որ գայլին համոզելով ու խրատելով ոչինչ բան չի դուրս գայ, այլ կը լինի այն, ինչ ասւում է «գայլի աւետարան». ուստի ինքն էր կրկնապատկում իր իբրեւ «լաւ հայի»

1) Անդ:
2) «Մասիս» 1878, № 2181:

պարտաւորութիւնը՝ տալով Էրզրումի զինուորական եւ նահանգապետ գեներալ Դուխովսկոյին հետեւեալ հրամանը·

«Ձեզ ալ կը յայտնեմ թէ հրամայել եմ Խորասանի եւ Հասանղալայի կառավարիչներուն չթողնել ամենեւին զաղթականութիւն լինի տաճկաց երկիրներէն դէպի մեր սահմանները· եթէ խնդրողուս անցնելու լինեն՝ հրաման տուած է բանի յետ դարձնեն, իսկ եթէ հակառակ ամենայնի դարձեալ ջանան անցնել, այն ատեն պարտաւոր են ձերբակալելով յանձնել տաճկաց կառավարութեան, որ տանի իրենց տեղերը» (1):

Այս էր ահա, որ խիստ կանգնեցնում էր գաղթականութեան կատաղի հեղեղը, եւ ոչ թէ տէրտէրների, վարդապետների եւ եպիսկոպոսների յորդորները: Վերեւում մեր յիշատակած Գրիգոր Նիկողոսեանը, լինելով այն ժամանակուայ մշակականութեան սիւներից մէկը, զինուորական պաշտօն ունէր Էրզրումում եւ, իբրեւ վառվռուն ազգասէր, սաստիկ հակառակ էր, — ինչ ասել կ'ուզի, — հայերի գաղթին: Իր «Յիշողութիւններ»-ի մէջ նա ասում է թէ Լորիս Մելիքովը թոյլտուութիւն էր տուել, որ հայերը գաղթեն Թիւրքիայից, բայց Լազարեւը, նշանակւելով նրա տեղ հրամանատար, սաստիկ հակառակեց այդ բանին, որովհետեւ ինքն էլ սաստիկ հայրենասէր հայ էր (2): Այս վկայութեան հաւատալ շատ դժւար է, քանի որ նրա մէջ շատ կան անորոշութիւններ եւ հակասութիւններ: Կարող է պատահած լինել, ի հարկէ, որ Կարսի հերոսը ենթարկւած լինի օրւայ ազգասիրական տրամադրութիւններին, բայց այս էլ չէր փոխում դրութիւնը: Իսկ դրութիւնն էր — առջեւին ռուսական ուժեր, իսկ յետեւում թիւրքական ուժեր: Առջեւի ուժերին զարնելով էր, որ յետ էր ընկրկում գաղթականական լաւան: «Լացին, ասում է ականատեսը, վանզի յիմարաբար կարծած էին որ Ռուսիան իրենց պիտի օգնէ, ուստի եւ իրենց տներն ու ցորեն ու խոտեր այրած էին (3):

Դժբախտ ժողովուրդ ... որքան նրան ողորմութիւն արած կը լինէին, եթէ ընդունէին, որ նա ամենից առաջ մարդ է, մարդկօրէն ապրելու բոլոր նիւթական իրաւունքներով, որոնց մէջ ամենագլխաւորն է ապրել մարդկութեան համար: Բայց այդ բնական իրաւունքը խլւած էր նրանից: Նա ամենից առաջ ազգ պիտի լինէր եւ ապա մարդ: Եւ թոյլ չտւին, որ իր դրութիւնն ահագին վտանգի մէջ տեսնող խաղաղ եւ անպաշտպան հայ աշխատաւորութիւնը գնար ուր եւ ինչպէս կարող էր, ապրելու հնարաւորութիւն որոնէր, ինչպէս կը յաջողւէր իրեն: Նրան պահեցին, զօրով նստեցրին, հրամայեցին ազգ կազմել:

Կ'անցնի այս իսկ օրերից մի 17 – 18 տարի ոչ աւելի, եւ այդ ժողովուրդը նորից շարժման մէջ կը լինի, նորից դէպի դուրս իր դժոխքից, դէպի աշխարհի

1) Անդ:
2) «Արաքս» հանդէս, Պետեր. 1889, Գ. Բ. եր. 58:
3) Վահան վ. Պարտիզակցի, «Խօսք հայրենեաց», Կ. Պոլիս, 1879, եր. 57:

չորս կողմերը, բայց այս անգամ նա կը լինի մի ջարդւած ու մերկացած ժողովուրդ, մի չարժուն յօշոտւած դիակ, փտող ու մեռնող մի մսակոյտ: Այն ժամանակ իրենց գերեզմանների մէջ կը լինեն գեներալ Լազարեւները, Ներսէս պատրիարքները, բայց գետնաքարշ դիակ ժողովրդի վրայ ծանրացած կը լինի միեւնոյն անէծքը — նստել, հաւատալ, սպասել:

Ռուս–թիւրքական պատերազմի ամենավերջին արձագանգները մարեցին, անցան: Ռուսական զօրքերը հեռացան, Թիւրքիային թողնւած Հայաստանում վերականգնւեց սովորական դրութիւնը: Ոչինչ, ի հարկէ, չէր փոխւել եւ դարձեալ հողագործ ժողովուրդն էր, մանաւորապէս հայ գիւղացիութիւնը, որ կեղեքւում էր քիւրդ բէյերի ու աղաների, թիւրք կաշառակեր պաշտօնեաների ձեռքին: Ասիական Թիւրքիայի անգլիական հիւպատոսները մանրամասն տեղեկագրել են, նոյն 1878-ի երկրորդ կիսից, դրութիւնն իրենց գտնւած շրջաններում: Զափազանց հարուստ նիւթերով լիքն են անգլիական այդ կապոյտ գրքերը (1), եւ մենք տեսնում ենք թէ ի՞նչ է նշանակում, հայ ժողովրդի համար, «նստել, յուսալ, սպասել»:

«Ամէն տեղ, իւրաքանչիւր քայլում, կործանման եւ բռնաւորութեան ոգին է յայտնւում հազարաւոր ձեւերի տակ, գրում էր Դիարբեքիրից մայոր Տրոտըր, եւ եթէ մեր Արեւմտեան նոյն իսկ ամենահամբերատար ժողովրդներից մէկին վիճակւէր կրել այդ բոլորը գոնէ մէկ օր, նա անպատճառ վրդովմունքի աղաղակ կը բարձրացնէր» (2):

Այսպէս էր ահա թիւրքահայ գիւղացիական հարցը դառնում քաղաքական, այն էլ միջազգային հարց: Սկսւում էր ամբողջ հայ ժողովրդի համար մի պատմական շրջան, որի խոշոր վերնագիրը մենք կարող ենք դարձնել 61 թւանշանը, նրա տակ դնել մի աւելի բացատրական վերնագիր — «Նստել, հաւատալ, սպասել»: Յետոյ արդէն այդ երեք բառերի բացատրութիւնը կը գայ — երկար հոգեւարք եւ միլիոնաւոր մարդկանց գերեզման ...

Եւ չի լռի այդ գերեզմանը երբեք: Դարերին եւս սարսափ կը պատճառի իր մշտարթուն վկայութեամբ, թէ յուշարձանն է ինքը, այդ գերեզմանը, մի գաղափարի, որի յաջող ձեւակերպումը տւել է մի թիւրքահայ պարբերաթերթ հետեւեալ խօսքերով· «Մեզի բողոքներ եղան, որ ժողովուրդը այնքան կարեւոր չէ, այլ թերրիտորիան է կարեւոր» (3):

Այս սուտ չէ· ինչ այսուհետեւ պիտի տեսնենք, այն պիտի լինի, մինչեւ որ այդ գաղափարը 1918-ին կը թեւակոխի հրէշաւորութեան բոլոր բարձունքները, երբ հայ ժողովուրդ այլ եւս չի լինի Թիւրքիայում, բայց կը պահանջի մի տերրիտորիա Միջերկրական եւ Սեւ ծովերից մինչեւ Մասիս:

1) Թարգմանութիւնը տ. «Մասիս» լրագիր, 1878, 1879, 1880 թւականների:
2) «Положеніе Армянъ въ Турціи», М. 1896, с. 53.
3) «Հայաստան» լրագիր, Թիֆլիս 1917, № 20:

ՈՎ ԽՆՁՊԷՍ

1.

Բեռլինի կոնգրեսը միմիայն հայերին չէր դժգոհութիւն պատճառում: Ամենից շատ դժգոհ էր ինքը, յաղթող Ռուսաստանը, որ կոնգրեսի դահլիճից դուրս էր գալիս կատարելապէս պարտուած, մի դառն զգացմունքով համակուած՝ թէ ապարդիւն անցան իր մեծամեծ ջանքերը եւ իր անհուն զոհողութիւնները մարդկանցով եւ դրամով: Նրանից ոչ պակաս դժգոհ էր եւ յաղթուածը, Թիւրքիան, որ միայն եւրոպական մասում կորցրել էր իր հողերի կէսը: Դժգոհութիւն էին դուրս տանում եւ Յունաստանը, Սերբիան, Չերնոգորիան, Ռումինիան, որոնք Բեռլինում չէին ստացել իրենց ակնկալած կտորները յօշոտուած Թիւրքիայից: Անգամ նոր պետութիւնը — Բուլգարիան — ծնունդ էր առնում դժգոհութեան մէջ, որովհետեւ կոնգրեսը փոքրացրել էր, Սան – Ստեֆանոյում, նրա համար գծագրուած սահմանները: Դժգոհ չէին կարող լինել Աւստրիան, որ ստանում էր վաղուց ակընկալուածը — Բոսնիան եւ Հերցեգովինան, ապա՝ Ֆրանսիան, որ լոկ իր լռութեան համար համաձայնութիւն էր ստանում յափշտակելու Թունիսը, վերջապէս եւ Գերմանիան, որ թէեւ բաժին փնտռող չէր, բայց գոհ էր, որ Ռուսաստանը հեռացրեց Արեւմուտքից, յետ մղեց դէպի Ասիայի տափարակները, եւ այսպիսով ապահովեց իր արեւելեան հարեւանի կողմից (1):

Միայն մի պետութիւն կար — Անգլիան, որ հեռացաւ կոնգրեսից՝ իբրեւ դրութեան լիակատար տէր: Նրա առաջին մինիստր Լորդ Բիկոնսֆիլդը, որ եւ նրա առաջին լիազօրն էր կոնգրեսում, Լոնդոն վերադարձաւ՝ իբրեւ մի մեծ յաղթող զօրավար: Ժողովրդական մեծ ցոյցեր եղան ի պատիւ նրա, եւ նա կարողացաւ արտասանել յաղթողի ինքնագոհ հպարտութեամբ. «Բերում եմ պատուաւոր յաղթութիւն»: Այս նշանակում էր, ամենից առաջ, որ Անգլիայի

1) G. Hanotaux,— «Histoire de la France Contemporaine», T. IV, Paris, 1913, p. 386-392.

ազդեցութիւնը Արեւելքում այլ եւս մրցակից չունի, և Թիւրքիան նորից սկսում է ապրել իբրեւ անկախ պետութիւն՝ այդ ազդեցութեան հովանու տակ:

Դիւանագիտական այդ մեծ յաղթանակը, որի նմանը չէր տեսնուած Ղրիմի պատերազմից յետոյ, պէտք էր ամրապնդել եւ ընդարձակել, ինչպէս վայել է դրութեան տէր դարձած քաղաքական ուժին. Եւ այս կողմից շատ եռանդուն գործունէութիւն էր ծաւալում արտաքին գործերի մինիստր մարկիզ Սալսբիւրին՝ ունենալով Կ. Պոլսում ոչ պակաս եռանդոտ եւ հեղինակաւոր այնպիսի օգնական, որպիսին էր դեսպան Հենրի Լայարդը:

Բեռլինի կոնգրեսից հազիւ մի ամիս անցած՝ Սալսբիւրին ձեռք էր առնում Կիպրոսի դաշնագրութեան այն մասի իրագործումը, որ վերաբերւում է Փոքր Ասիային ընդհանուր բարենորոգումներ տալուն: Այստեղ անգլիական դիւանագիտութիւնը միանգամայն ազատ էր ինքնագլուխ գործելու, առանց միւս պետութիւնների հետ հաշիւ տեսնելու, լոկ միայն Թիւրքիայի հետ համաձայնութիւն կայացնելով: Յենւելով այս եզակի պայմանի վրայ, որ թոյլ էր տալիս ասելու, թէ ամբողջ Փոքր Ասիան տրուած է Անգլիայի հովանաւորութեան տակ, մարկիզ Սալսբիւրին մշակում էր ռեֆորմների մի նախագիծ, որ եւրոպական վերահսկողութեան սկզբունքն էր մտցնում Թիւրքիայի նահանգական վարչութեան զանազան ճիւղերի մէջ: Սուլթանն ընդունում էր այդ նախագիծը, բայց որովհետեւ նրա գործադրութիւնը կապուած էր դրամական ծախսերի հետ, ուստի խնդրում էր Անգլիայից 6 միլիոն լիրայի փոխառութիւն: Սալսբիւրին պատրաստ էր ընդունելու այդ առաջարկութիւնը, բայց այստեղ արգելք հանդիսացան Անգլիայի այն դրամատէրերը, որոնք Թիւրքիայի պարտատէրերն էին: Նրանք բողոքեցին այդ նոր փոխառութեան դէմ եւ հարկադրեցին լորդ Բիկոնսֆիլդին մերժել սուլթանի առաջարկը (1):

Այսպիսով ջուրն էր ընկնում Սալսբիւրիի նախագիծը. սակայն այդ անյաջողութիւնը չէր կանգնեցնում մինիստրին, որ եւ ուրիշ ուղղութեամբ էր սկսում տանել Կիպրոսի դաշնագրութեան գործադրութիւնը: Փոքր Ասիայում գոյութիւն ունեցող անգլիական 8 հիւպատոսութիւններն ու փոխ – հիւպատոսութիւնները նա յանձնում էր Անգլիայի սպաներին եւ յանձնարարում նրանց մանրամասնօրէն ուսումնասիրել իրենց շրջանների վարչական կացութիւնը, տեղեկագրել զեղծումներն ու անկարգութիւնները եւ յայտնել այդ մասին թէ իրեն եւ թէ Կ. Պոլսի դեսպանին՝ Թիւրք կառավարութեան համապատասխան պահանջներ ներկայացնելու համար: Բացի այդ դերից՝ հիւպատոսներն ու փոխ – հիւպատոսները հրահանգւում էին արտաքին գործերի մինիստրից իրենց կողմից եւս քայլեր անել տեղական իշխանութիւնների առաջ զեղծումներն ու անկարգութիւնները վերացնելու համար: Եւ պէտք է խոստո-

1) Г. П. Гуч. — «Исторія современной Европы», М. 1925, с. 18.

վանել, որ այդ գինուորական պաշտօնեաները շատ լաւ էին կատարում իրենց յանձնուած դերը:

Միւս կողմից էլ Թիւրք կառավարութիւնը, անշուշտ նոյն Սալսբիւրի — Լայարդեան ճնշման տակ, 1879-ի գարնանը լիազօր կոմիսարներ էր ուղարկում Փոքր Ասիա գոյութիւն ունեցող դրութիւնը քննելու, պահանջւող բարենորոգումների էութիւնն ու ծաւալը պարզելու եւ տեղեկագրելու համար:

Կոմիսարները տեղերում պիտի կազմէին բարենորոգումների յանձնաժողովներ ազգաբնակութեան ներկայացուցիչներից՝ տեղական պէտքերը քննելու համար: Որ Թիւրք կառավարութիւնը գիտէր թէ վարչական անկարգութիւններից տանջւում էին գլխաւորապէս հայերը եւ հետեւաբար պէտք էր առանձնապէս ի նկատի ունենալ նրանց գանգատները, այս ցոյց էր տալիս այն հանգամանքը, որ գաւառներն ուղարկւող լիազօր կոմիսարները երկու հոգի էին, որոնցից մէկը Թիւրք, միւսը հայ: Բացի այդ միջոցներից, լորդ Սալսբիւրին հարկադրում էր Թիւրք կառավարութեանը ժանդարմերիայի հրամանատար նշանակել մի եւրոպացի սպայի եւ վերջինս, Բեքիր փաշա անունով, ուղարկւում էր այդ պաշտօնով Փոքր Ասիա:

2.

Ինչպէս տեսնում ենք, սկսուած էր մի ամբողջ ձեռնարկութիւն պետական մեքենան առողջացնելու համար: Ի՞նչ դուրս կը գար այս ձեռնարկութիւնից, կարող էր ցոյց տալ ժամանակը, երբ նա բաւականաչափ երկար լինէր՝ մի այսպիսի գործի հետ կապուած դժւարութիւնները, ինչպէս էին Թիւրք կառավարութեան աւանդական անշարժութիւնն ու բթամտութիւնը, դրամական միջոցների պակասութիւնը եւ այլ այսպիսի արգելքներ յաղթահարելու համար:

Ցամենայն դէպս պարզ է, որ այդ բարեկարգութիւններն ընդհանուր էին ամբողջ ազգաբնակութեան եւ ոչ թէ նրա այս կամ այն մասի համար, մի հանգամանք, որ ահագին նշանակութիւն պիտի ունենար ցեղերի եւ լեզուների այն մեծ խառնարանում, որ կոչւում էր Ասիական Թիւրքիա, — որովհետեւ այս դրութեամբ էր միմիայն, որ ձեռնարկւող ռեֆորմը չէր յարուցանի իրար հետ ապրող ազգութիւնների մէջ նախանձ, փոխադարձ ատելութիւն, որ կարող էր հասնել կատաղի թշնամութեան: Ինքը՝ անգլիական կառավարութիւնը շատ լաւ գիտէր, որ բարեկարգութիւնները հարկաւոր են գլխաւորապէս հայ ժողովրդի համար եւ այս ապացուցում էր այն հանգամանքը, որ նա իր պահանջները հիմնում էր ոչ միայն Կիպրոսի դաշնագրութեան, այլ հաւասար չափով նաեւ Բեռլինի դաշնագրութեան 61-րդ յօդւածի վրայ: Բայց ռեֆորմներին ազգային գունաւորում չտալու համար, նա շատ քիչ էր գործածում « հայեր » անունը եւ գրեթէ միշտ փոխարինում էր նրան « քրիստոնեաներ » անունով:

Եւ հայ ժողովրդի համար հնարաւոր լաւագոյն երաշխիքը, իր դրութիւնը բարելաւելու նկատմամբ, կարող էր լինել միայն այս անգլօ-Թիւրքական

ձեռնարկութիւնը: Բացի Կիպրոսի դաշնագրութիւնից, չկար մի այլ իրական փաստ, որ երաշխիք դառնար 61-րդ յօդւածի իրագործման համար: Եթէ Թիւրքահայ գիւղացիութեան պէտք էր տալ, ամենից առաջ, իբրեւ մարդ ապրելու իրաւունքը, եթէ նրա համար մահւան ու կեանքի խնդիր էր ունենալ աշխատանքի ապահովութիւն, գոնէ նւազագոյն չափով, ապա ուրեմն պէտք էր ամէն կերպ յաջողութիւն ցանկալ լորդ Սալսբիւրիի սկսած գործին, որ, եթէ յաջողւէր, դրանով իսկ ժամանակի լուծում տուած կը լինէր հայ գիւղացիական հարցին: Բայց Բեռլինի կոնգրեսից յետոյ՝ հայ կղերաբուրժուական վերնաշերտերում անչափ բարձրացած շովինիստական տրամադրութիւնը թշնամական վերաբերմունք պարզեց անգլիական դիւանագիտութեան դէմ, որովհետեւ սա Թիւրքահայերին տալիս էր մարդկային իրաւունքներ, բայց չէր տալիս ազգային բացառիկ իրաւունքներ: Հակառակ այդ անգլիական ուղղութեան, հայերը հրապարակ էին հանում մի ուժեղ եւ ազգայնական ուղղաշունչ շարժում:

Թիւրք կառավարութիւնը դեռ շշմած էր դժբախտ պատերազմի վնասներից, ուստի եւ նրա գործունէութեան մէջ առաջին երկու տարիների ընթացքում, թոյլատու եւ զիջող ոգին էր տիրապետում: Սուլթան Աբդուլ-Համիդը դեռ նոր-նոր պիտի սկսէր ցուցադրել իր բնաւորութեան ճիւաղային գծերը: Պոլսի հայ դիւանագիտական կղերականութիւնը տեսնում էր իր համար ստեղծուած ուժեղ դիրքերը եւ շտապում էր գրաւել նրանց: Պատրիարքարանը դառնում էր մի գրեթէ անկախ քաղաքական հիմնարկութիւն: Անգլօ-Թրքական այն դիւանագիտական խաղը, որ, ինչպէս տեսանք, Ներսէս պատրիարքին նախ Սան-Ստեֆանօ եւ ապա Բեռլին էր ուղարկել, շահագործական որոշ նկատառումներով, այժմ տուել էր պատրիարքին բաւական աչքի ընկնող, նոյն իսկ հեղինակաւոր տեղ միջազգային դիւանագիտութեան սեղանի շուրջը: Ճիշտ է, Ներսէսը միշտ մնաց Թրքասէր, բայց նրա ենթարկւող բնաւորութիւնը չէր թոյլ տալիս նրան անկախ դիրք բռնել, մանաւանդ որ այդքան փափուկ եւ պատասխանատու կոչման համար պատշաճաւոր մտաւորական պատրաստութիւնն էլ չունէր:

Իր ժամանակի պաշտամունքը դարձած այս հոգեւորականին ամէն օր նւիրւած ներբողների եւ փառաբանութիւնների մէջ կային եւ քննադատաբար ու բացասաբար վերաբերւող մտքեր, եւ դրանցից մէկն էր «Մշակ»-ի մի թղթակիցը, որ չէր քաշւում գրել՝ « Պատրիարքը եւ Պատրիարքարանը աւելի վնաս կը գործեն իրենց ապիկարութեամբ, քան թէ օգուտ »[1]: Մի կողմից թեթեւ ազգամոլութեամբ տոգորւած այն մթնոլորտը, որի մէջ գործում էր պատրիարքը, միւս կողմից եւրոպական դեսպանները, — որոնք մրցութեան նպատակով սերտ յարաբերութիւններ էին պահպանում նրա հետ, յաճախակի այցելում էին նրան եւ յաճախ էլ նրա այցելութիւններն էին ընդունում, — այս

1) «Մշակ», 1879, № 25:

բոլորն այնքան պատեցնում էր շողոքորթող և փառատենչ հայ կղերական դիւանագիտութեան գլուխը, որ նա կարծում էր թէ ինքն այլ ևս սուլթանական հպատակ չէ, այլ Հայաստան անունով եթէ ոչ արդէն կազմուած, գէթ կազմուելիք կամ կազմուելու յարմար պետութիւն ունի իր գրպանում, որ և տալիս է նրան տիրողի՝ այս գլխից անկասկած՝ իրաւունքներ:

Այլ ևս Ներսէսը Հայաստանում պատահող հարստահարութիւնների տեղեկագրերը Թիւրքաց կառավարութեան չէր ուղարկում, այլ շրջաբերականներով հաղորդում էր դեսպաններին՝ խնդրելով նրանց միջամտութիւնը չարիքը վերացնելու համար: Պատրիարքարանը փոքրիկ կարմիր տետրակներ էր հրատարակում Ֆրանսերէն լեզուով՝ նուիրած հայոց ազգին, նմանելու անշուշտ այն դիւանագիտական հրատարակութիւններին, որոնց համար իւրաքանչիւր պետութիւն ունէր միայն շապիկի իրեն յատուկ գոյն (օրինակ անգլիական՝ կապոյտ, Ֆրանսիական՝ դեղին և այլ գրքեր): Բնորոշ էր, կղերական դիւանագիտութեան թեթևսոլիկութեան տեսակէտից, մանաւանդ այն, որ պատրիարքարանը պաշտօնական գրագրութիւնների տուած վերնագրերի մէջ սկսեց տալ նաև հին, Թագաւորական Հայաստանի մոռացուած զինադրոշմը: Աւելացնենք այս բոլորի վրայ և այն, որ Կ. Պոլսի հայ մամուլն ազատութիւն էր վայելում 61-րդ յօդուածը ազգայնական ոգով պաշտպանելու և այս առթիւ Թիւրք մամուլի դէմ տաք և երկարատև բանակռիւներ մղելու համար:

Հասկանալի է, որ այսքան բոցաշունչ և շփացած մի տրամադրութիւն չէր կարող հաշտ գնալ անգլիական քաղաքականութեան հետ, որ թշնամի էր նկատում հայ ազգայնական շահերին: Շտապենք ասել, որ այսպիսի գնահատութիւն տանողը անգլիական քաղաքականութիւնը չէր ընդհանրապէս, այլ այն միայն, որ պահպանողական կուսակցութիւնն էր ծաւալում, մի կուսակցութիւն, որ սաստիկ Թրքասէր էր, հետևաբար և չէր կարող լինել բարեացակամ դէպի հայերը:

Այս մտայնութեան հետևանքով էր, որ, երբ անգլիական թերթերում տպուեց պաշտօնական տեղեկութիւն թէ մայոր Տրոտտրը նշանակւում է Քրդստանի հիւպատոս, և պիտի բնակութիւն ունենայ Էրզրում քաղաքում, հայ ազգաբնակութիւնը սաստիկ գրգռուեց այս բանի դէմ, քանի որ Էրզրումը Հայաստան էր և ոչ Քրդստան, և Անգլիան, ուրեմն, ջնջում էր Հայաստան անունը՝ փոխարինելով նրան Քրդստան անունով: Ներսէս պատրիարքը պաշտօնապէս բողոքեց այս զրկանքի դէմ, իսկ հայ մամուլն էլ մի երկար վայնասուն բարձրացրեց միևնոյն առթիւ, թէև Տրոտտրը հաւատացնում էր թէ Քրդստան յորջորջումը նոր չէ մտցուած, այլ յատկացուած է անգլիական հիւպատոսութեան 1860-ական թուականներից ի վեր:

Բայց պահպանողական Անգլիայի ներշնչած առելութիւնը ամենացայտուն արտայայտութիւն էր գտնում հետևեալ օրինակի մէջ. Գրիգոր Արծրունին,

կարդալով լրագրներում, թէ Անգլիան մտադիր է բերդեր կառուցել Փոքր Ասիայում և գրաւել այն իր զօրքերով, ահազանգ էր հնչեցնում իր «Մշակ»-ի մի առաջնորդողի մէջ՝ հետևեալ յուսահատական դարձուածքներով.

« Թող Թիւրքիայի հայերն, ուրեմն, միմիայն իրենց վրայ յոյս դնեն եթէ կարող են: Թող իմանան, որ նրանց ոչ ոք չի օգնի, թող իմանան, որ եւրոպական պետութիւններից ոչ մէկը չի ընդդիմանայ Անգլիային, եթէ նա վաղը կամ այսօր ուզենայ մտցնել իր զօրքերը Փոքր Ասիա և Հայաստան իբր թէ քրիստոնեաներին պաշտպանելու համար և այսպիսով կատարելապէս նուաճելու այդ երկիրները » (1):

Շատ պարզ է, ուրեմն, որ հայ ազգամոլներին Թիւրքահայ գիւղացիութեան տնտեսական ստրկութիւնը չէր հետաքրքրում, այլ այդ ստրուկների ոսկորների վրայ զուտ հայկական իշխանութիւն կանգնեցնելու ձգտումը: Աւելի հեռուն գնալ չէր կարելի — դժբախտութիւն համարել նոյն իսկ անգլիական տիրապետութիւնը, եթէ նա գար փոխարինելու քրդերի, չերքէզների և այլ վայրենի ցեղերի տիրապետութիւնը ...

Այսպիսի անհեթեթութիւնը վայրենի չէր թւում բնաւ բուն հայ ազգամոլութեանը, որովհետև նա ինքն արդէն հնարաւորութիւններ էր կերտում, որպէսզի նա ինքը միայն ժառանգի Հայաստանը: Բեռլինում ջախջախուելուց յետոյ, նա նորից վերանորոգում է իր իդէալը — Հայաստանը՝ հայերի ձեռքով կառավարուած: Պէտք է, ուրեմն, նորից դիմել Եւրոպային Թիւրքիայի համայն հայութեան հաստատման արժանացած որոշումներով: Այն հիմնարկութիւնը, որ Թիւրքահայութեան ներկայացուցիչ էր համարւում, Կ. Պոլսի Ազգային Ժողովն էր, որ մինչև այդ թէև գլխաւորապէս կաթողիկոսի, պատրիարքի, վարդապետի և այլ այսպիսի «ազգային» հարցերով էր զբաղւում, բայց այժմ դառնում է մի քաղաքական հիմնարկութիւն, միջազգային չափանիշով, և օրէնսդրում էր թէ ինչ ու ինչ պիտի ունենայ ազատուող Հայաստանը:

1879 թուականի փետրուար 16-ին տեղի ունեցաւ Ազգային Ժողովի դռնփակ նիստը, ուր լսեց և հաստատեց խորհրդարանական յանձնաժողովի զեկուցումը, որ ձևակերպում էր թէ ինչ տեսակ ռեֆորմներ են հարկաւոր Հայաստանին: «Մշակ»-ի թղթակիցը՝ Հայկակը՝ մեծ ոգևորութեամբ էր խօսում այդ նիստի մասին:

« Փետրուար 16-ի նիստը ազգային պատմութեան մէջ կարևոր էջ մը պիտի գրաւէ, գրում էր նա: Ի՞նչ փոփոխութիւն ժամանակի. 1870-ին և 1876-ին նոյն ժողովը դարձեալ օսմ. կառավարութենէն Հայաստանի բարեկարգութիւններ կը խնդրէր, սակայն որչա՜փ տարբեր այժմու խնդրածէն. այս երկու առաջարկութիւններն այսօր մեզ համար ոչինչ կ'երևին. զի երբ այժմ կ'ըսենք թէ հայք մասնակցեն տեղական կառավարութեան, որ ըսել է հայ կառավա-

1) «Մշակ», 1879, № 191:

րիչներ լինեն, երբ կ'ըսենք թէ հայք մասնակցեն դատարանաց, որ ըսել է թէ մեր օրէնքն օրէնք ըլլայ, կարծենք դէպի Հայաստանի ինքնօրինութիւն մեծ քայլ արած կ'ըլլանք. եւ այն ժամանակներն ո՞վ մտքէն այսպիսի երազ մը կ'անցընէր:

« Այն օրերն Ազգ. ժողովն իբրեւ պաղատող կը ներկայանար, այսօր միջազգային դաշնագրի մը յենած, ազգային զգացումն իրեն զօրաւիգ եւ աջակից ունենալով, իբրեւ իրաւանց տէր ժողովուրդ մը պահանջումներ կ'ընէ, պատասխանատու յանձնաժողովներ կը կարգէ, եւրոպացոց միջամտութիւնը կը խնդրէ օսմանցոց գործոց մէջ:

« Եթէ այս անցքերն ուշադրութեամբ եւ հետախուզութեամբ քննենք, կը տեսնենք, որ հայ ազգը քաղաքական մի նոր ասպարէզի մէջ կը թեւակոխէ:

« Զարմանալի Ազգային ժողով, որ երբեմն ոչինչ խնդիրներով կը կորսնցունէր իր ժամանակը, իսկ յանկարծ այնպիսի կենդանութեան ոգի կ'առնու, այնպիսի արիութեամբ կը գործէ, որ ամենուն համակրանքը, սէրը կը գրաւէ, նոր ոգի կ'ազդէ ժողովրդի, նոր յոյսեր կ'արծարծէ, աշխարհի ամէն կողմէ հայութեան աչքերն ի նա կը յառին իբրեւ միակ յոյս հայրենեաց փրկութեան:

... « Ազգային ժողովոյ որոշումները դեսպանատան առաջ կարեւորութիւն կը ստանան, զի հայկական դատն ի հանդէս կ'ածէ եւ մինչեւ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի ստորագրողք Հայաստանի բարեկարգութիւնները իրենց եւ Դրան մէջ կատարելիք գործողութիւն մը կը համարէին, ահա 3-րդ մը կը ներկայանայ իբր տէր այդ յօդուածի » (1):

Այս մի ամբողջ մարտահրաւէր էր ուղղուած ոչ միայն թիւրք կառավարութեան, այլ եւ անգլիական կառավարութեան դէմ: Թղթակցին ստուգապէս յայտնի էր, որ « Անգլիոյ կառավարութիւնը, որ չուզեր հայկական խնդրոյ ծագումը տեսնել, դժկամակած էր Ազգային ժողովոյ ընթացքէն»: Այս շատ ճիշտ էր, բայց իր ինքնագոհութեամբ արբեցած կղերական դիւանագիտութիւնը անգլիական դժգոհութեան հակադրում էր հայկական դժգոհութիւնը՝ կազմակերպելով մի ռուսասիրական ցոյց: Ալեքսանդր Բ.-ի դէմ գործուած անյաջող մահափորձի առթիվ՝ Ներսէս պատրիարքն անձամբ պատարագ մատուցեց, որին հրաւիրած էր ռուսաց դեսպանը՝ իշխան Լոբանով–Ռոստովսկի: Եկեղեցական արարողութիւնից յետոյ կայացաւ չքեղ նախաճաշ, որի ժամանակ դեսպանը խմեց Հայաստանի կենացը: Գրիգոր Արծրունին, այս կենացի առթիւ, այսպիսի խորախորհուրդ մտածողութիւններ էր անում.

« Առաջին անգամ մի քաղաքական անձնաւորութիւն, մի այնպիսի բարձր դիպլոմատիկական ներկայացուցիչ, ռուսաց հզօր պետութեան ներկայացուցիչը Թիւրքիայում, արտասանում է « Հայաստանի բարեկեցութեան խօսքը »:

1) «Մշակ», 1879, № 33:

Իշխան Լոբանով–Ռոստովսկու բերանով այդ խօսքը ստանում է մի կատարեալ քաղաքական կերպարանք: Ռուսաց պետութեան ներկայացուցչի բերանից արտասանուած այդ խօսքը տալիս է Հայաստանին, այդ՝ մինչեւ այժմ աշխարհագրական տերմին ներկայացնող բառին, մի նոր, մինչեւ այժմ չեղած քաղաքական նշանակութիւն: Այսուհետեւ Հայաստանը, թող այդ լաւ հասկանան հայերը, լոկ պատմական, աշխարհագրական ասացուածք չէ: Թող իշխան Լոբանով–Ռոստովսկու խօսքն այսուհետեւ նշանաբան դառնայ բոլոր հայերի համար » (1):

Այս նոյն այն ցարական Լոբանով–Ռոստովսկին էր, որ 1895 — 1896 թւականներին խրախուսում էր սուլթանին կոտորել հայերին՝ ասելով թէ Ռուսաստանը ուզում է Հայաստանը, բայց առանց հայերի:

Քաղաքական ցոյցի կերպարանք ստացած ռուսասիրական հանդէսը եւ նրա յարուցած հրճւանքը վկայում էին, որ Ներսէս պատրիարքը հիմա էլ ռուսաց դիւանագիտութեան ինտրիգների հերթական գործիքն էր:

Ռուսահայ ինտելիգենցիան արհամարհանքով էր վերաբերւում թիւրքահայ ինտելիգենցիային՝ համարելով նրան թեթեւսոլիկ, հոռոս: Բայց, այս հոռոսութիւնը միայն թիւրքահայ գաղութային հոգեբանութեան յատկութիւնը չէր, այլ հաւասար չափով վարակիչ էր և ռուսահայ գաղութներում: «Մշակ»-ի խմբագրի այս մանկական հրճւանքին լիովին միանում էր եւ նրա ան-ւանի աշխատակից Գրիգոր Նիկողոսեանը: Փետրուարի 16-ի նիստի ազդեցութեան տակ նա գրում էր.

« Առաւել եւս նշանաւոր էր, առաւել եւս մխիթարական, երբ Կ. Պոլսի Ազգային ժողովը ձգտում է մտնել մի նոր, աւելի լայն քաղաքական գործունէութեան մէջ. ձգտում է ստանալ մի նոր դրութիւն միջազգային պաշտօնական աշխարհում եւ բռնել մի ներգործական եւ աւելի ինքնուրոյն ուղղութիւն Թիւրքիայի կառավարութեան առաջ ... Բեռլինի կոնգրեսը՝ պատւելով հայ պատւիրակներին 61-րդ յօդւածով, ճանաչեց այդպիսով հայ ազգի քաղաքական իրաւունքը — խօսել Եւրոպայի հետ իր ներկայացուցիչների լեզւով, ուրեմն Ազգային ժողովը իբրեւ ազգը ներկայացնող մի հաստատութիւն, իրաւունք պիտի ունենայ մտնել կաբինետների հետ անմիջական յարաբերութիւնների մէջ, զանց առնելով այն հանգամանքը, որ այդ հաստատութիւնը սուլթանի պարգեւած արտօնութիւնների վրայ է կանգնած: Եթէ սուլթան ուզի էլ փշրել իր շինածը, յետ առնել իր տւածը, Բեռլինի ատաժողովից յետ նա չպիտի կարողանայ այդ անելու, վասնզի հայերի ազգային ներկայացուցչութեան իրաւունքը կնքւեց արդէն ամբողջ Եւրոպայից » (2):

Ահա թէ ինչ սպանիական ամրոցներ էր կառուցանում ազգայնական մե–

1) «Մշակ», 1879, № 60:
2) «Մշակ», 1879, № 118:

ծամոլութիւնը « տեղական պէտքերից պահանջուած ռեֆորմներ » բառերից: Այս արդէն մի սովորական հոռետեսութիւն չէր, այլ մի ախտաժէտ մտայնութիւն, մի պսիխոզ, որ վարակում է հասարակութիւնը: Եւ մենք կը տեսնենք այդ ախտաւոր կացութեան ազդակներից շատերը, եթէ այժմ մօտենանք Ազգային ժողովի փետրուարի 16-ի որոշումներին:

Երբ 1879 թ. գարնան ռեֆորմների համար սուլթանի կողմից նշանակուած կոմիսարները հասան Էրզրում, տեղական հայ ազգաբնակութեան կողմից նրանց ներկայացուեց մի ծրագիր այն բարենորոգումների, որոնք ցանկալի էին համարում Էրզրումի վիլայէթի համար: Մենք հաստատ տեղեկութիւն ունենք մեր ձեռքի տակ, որ այդ ծրագիրը Էրզրումում չէր պատրաստուած, այլ ուղարկուած էր Կ. Պոլսից, եւ նրա հեղինակն էր նոյն այն խորհրդարանական յանձնաժողովը, որի առաջարկած որոշումներն էին որ հաստատուեցին փետրուարի 16-ի նիստում: Նշանակում է, ուրեմն, որ Էրզրումի ծրագիրը հէնց այդ որոշումներից էր քաղուած: Արդ՝ այդ ծրագիրը տպուած է [1] եւ մենք նրա մէջ տեսնում ենք այսպիսի պահանջներ հայերի կողմից·

Վալի-ն պէտք լինի հայ եւ նրա ընտրութիւնը սուլթանից չէ միայն կախուած: Սուլթանը պէտք հարցնէ եւ հայոց պատրիարքի համաձայնութիւնը, որը ստանալուց յետոյ միայն նա կարող է հաստատել վալի-ն իր պաշտօնի մէջ: Այս իսկ եղանակով պէտք կատարուի եւ վիլայէթի միւս բարձր պաշտօնեաների նշանակումը: Հայ պէտք լինէին եւ մի քանի սանջակների մութէսարիֆները (նահանգապետները): Բոլոր ներկայացուցչական հիմնարկութիւնների համար ընտրուող անդամներից կէսը պէտք հայեր լինեն, դատական պաշտօնեաների կէս մասն էլ պէտք հայերից նշանակուեն: Հայոց լեզուն թիւրքերէնի հետ հաւասար գործածութիւն պէտք ունենար պաշտօնական բոլոր հիմնարկութիւնների մէջ իբրեւ պետական լեզու: Այսպիսով կրկնւում էր նոյն ծրագիրը, ինչ ուղարկել էր Ներսէս պատրիարքը Բեռլինի կոնգրեսին, այն տարբերութեամբ, որ այնտեղ վալիի նշանակումը սուլթանը կատարում էր վեց մեծ պետութիւնների համաձայնութեամբ, իսկ այստեղ մեծ պետութիւնների տեղը բռնում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքը: Ազգային մեծամոլութիւնը, ինչպէս տեսնում ենք, բոլորովին կորցրել էր չափի զգացումը:

Եւ ահա 1879 թ. յունիսի 12-ին դեսպան Լայարդը գրում էր մարկիզ Սալիսբիւրիին հետեւեալ տողերը·

« Եթէ Բ. Դուռը չզգուշանայ, եթէ նա չը սկսի գործել խելացի եւ կանխատես կերպով, Ասիայում մի գեղեցիկ օր կարող է ծագել հայկական հարց ճիշտ այնպէս, ինչպէս ծագեց բուլգարականը Եւրոպայում, որի հետեւանքը եղաւ վերջին պատերազմը: Միեւնոյն ինտրիգները մղւում են այժմ Փոքր Ասիայում, ինչպէս նրա համար, որ վերականգնեն հայոց ազգութիւնը, այն-

1) «Փորձ» ամսագիր, 1879, № 9, երես 131-147:

պէս էլ նրա համար, որ առաջացնեն իրերի այնպիսի կարգ, որ սարսափի աղաղակ կը խլի ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութեան կողմից եւ կը յանգի եւրոպական միջամտութեան: Ես մի քանի անգամ նախազգուշացրել եմ թիւրք մինիստրներին, որ՝ եթէ նրանք չտապեն կատարել Բեռլինի դաշնագրի որոշումները հայերի մասին, նոյնպէս եւ յունիսի 4-ի դաշնագրութիւնը եւ, վերջապէս, եթէ նրանք ձեռք չառնեն միջոցներ, որոնք անհրաժեշտ են քրիստոնեաների պաշտպանութեան համար Փոքր Ասիայում, կը նկատեն, բայց արդէն չափազանց ուշ, որ սուլթանը վտանգի կ՚ենթարկուի զրկուելու այդ նահանգներից ոմանցից » [1]:

Գուցէ անգլիական դեսպանը ճիշտ որ ուզում էր հայերին լաւութիւն անել այսքան վախեցնելով թիւրք մինիստրներին հայկական մի մեծ վտանգով, բայց այս մի երկսայրի սուր էր, որ ոչ թէ բարի խորհուրդ էր դառնում, այլ աւելի շուտ մատնութիւն: Թիւրք կառավարութիւնը նրանից կարող էր հետեւցնել ոչ թէ այն, թէ հայերին լռեցնելու համար պէտք է շտապել նրանց ռեֆորմներ տալ, այլ, ընդհակառակը, պէտք է ոչինչ չտալ նրանց, իսկ լռեցնելու համար գործ ածել թիւրքական սիրած միջոցը — սպանութիւնը: Աբդիւլ — Համիդը չվախեցաւ թէ կը կրկնուի Բուլղարիայի օրինակը, որի համար այլ եւս նպաստաւոր պայմաններ չկային: Անգլիական դեսպանը՝ յիշատակելով որ հայերի մէջ գործում է միեւնոյն ինտրիգը, որ առաջ բերեց վերջին պատերազմը, անշուշտ, Ռուսաստանն ունէր ի նկատի, բայց ինչ կարող էր նա այժմ անել, երբ սուլթանը զրահապատուած էր նրա կողմից Կիպրոսի դաշնագրութեամբ: Մի փոքրիկ, ստրուկ ժողովրդի առաջ ինքնակամ անձնատուր լինելը չէր համաձայնի օսմանեան գոռոզութեան հետ, մանաւանդ երբ նրան խեղդելու համար այնքան յարմարութիւններ կային:

Եւ ահա նոյն 1879 թ. ամառուանից, մինչդեռ գաղութահայ ինտելիգենտական ամբարտաւանութիւնը երազում էր մի ազգային ժողով, որ պէտք անմիջական յարաբերութիւններ ունենար եւրոպական կաբինետների հետ, հայ գիւղը, թիւրքաց Հայաստանում, կրկնապատկում ու եռապատկում էր իր հեծեծանքները: Ստորագրելով Բեռլինում պարտաւորութիւն պաշտպանելու հայերին քրդերի եւ չերքէզների դէմ, թիւրքաց կառավարութիւնը հայաբնակ տեղերի վրայ էր բաց թողնում տասնեակ հազարներով չերքէզներ, որոնք գաղթել էին Բուլղարիայից, եւ աւելի մեծ քանակութեամբ թիւրքեր, որոնք գաղթել էին Կարսի եւ Արդահանի կողմերից: Միայն սրանց թիւը հասնում էր 50 – 60 հազար հոգու [2]:

Ճակատագրի ո՛րքան անողորմ ծաղր: Եւրոպայից իբր թէ քաղաքական իրաւունքներ ստացած դժբախտ գիւղացիութիւնն աւելի եւս փոքրանում,

1) «Положеніе Армянъ въ Турціи», с. 56-57.

2) Ibid, c. 67.

նարանում, ճկում էր նորեկ զանգւածների ճնշման տակ: Ներսէս պատրիարքը դեսպանատնից դեսպանատուն է վազում, բողոքում է այդ նոր աղէտի դէմ, խնդրում է հանել, հեռացնել գաղթականներին հայաբնակ տեղերից, բայց ով ինչ կարող էր անել: Լայարդը, ամենահեղինակաւորը դեսպանների մէջ, պատասխանում էր, որ Թիւրքիան, իբրեւ մահմեդական երկիր, ապաստան է տալիս իր կրօնակից փախստականներին, եւ ի՞նչ կարելի է ասել դրա դէմ: Այս, ի հարկէ, ճիշտ էր, բայց դժբախտութիւնն այն էր, որ այս խոշոր ներգաղթը Թիւրք կառավարութեան դրդումով էր կատարւում՝ մահմեդական ազգաբնակութիւնն մեծացնելու նպատակով (1):

Վերաբերմունքը դէպի ռեֆորմներն արմատապէս փոխւում է 1879-ի երկրորդ կէսից: Սուլթան Համիդն իր ձեռքն է առնում կառավարութիւնը եւ սկսում է այն դաժան ռեժիմը, որ նրա ամբողջ թագաւորութեան յատկանիշն է կազմում: Բարենորոգումների կոմիսարները լաւ սկսեցին իրենց գործունէութիւնը, բայց շուտով կրճատւեցին նրանց լիազօրութիւնները՝ դատապարտելով նրանց անգործութեան: Այսպիսով՝ ոչնչանում էր Բեքիր փաշայի պաշտօնը: Աբդիւլ – Համիդն այլ եւս չէր վախենում լորդ Սալսբուրիի պահանջից, որովհետեւ նրան պաշտպանում էր լորդ Բիկոնսֆիլդը (2):

Վերագրել այս բոլորը սուլթանի անձնական հակումներին միայն՝ կը լինէր սխալ: Աննպաստ պայմաններ շատ էր արտադրում եւ այն միջավայրը, ուր պէտք է մշակւէին Թրքական վարչութիւնը բարեկարգող ռեֆորմները: Այսպէս, կոմիսարների գործունէութիւնը չեզոքացնում էին նախ եւ առաջ կաշառակեր գաւառական բիւրոկրատիան եւ նրա հետ կապւած աւատական ազնւականութիւնը, ապա նաեւ ժողովրդական անբաւարարութիւնը, որ ծագում էր ազգայնական եւ կրօնական հակադրութիւններից: Էրզրումի մէջ Թիւրք ազգաբնակութիւնը հաճութեամբ համաձայնեց հայերի հետ միասին մշակել տեղային ռեֆորմների ծրագիր: Աշխատանքն սկսւեց, Թիւրքերն ուզում էին համաձայնեցնել իրենց ընդունած սկզբունքները հայերի ծրագրին, որի մասին խօսեցինք վերեւում: Բայց հայերի պահանջները հայ վալիի, հայերէն լեզւի մասին՝ խորտակեցին համաձայնութեան ամէն հնարաւորութիւն եւ երկու դրացի ժողովրդների յարաբերութիւնները հէնց այդ պատճառով վատացան, վերածւեցին հակառակորդների դիրքի (3): Թիւրքաց կառավարութիւնը, ի հարկէ, չէր կարող այս բոլորը հաշւի չառնել, ինչպէս ինքն էր հասկանում իր օգուտը: Ցաւալապէս հայերին տրւելիք բարելաւումների մասին նա այլ եւս լսել անգամ չէր ուզում: Բայց այս բաւական չէր: Պէտք էր արմատախիլ անել հայերին՝ նրանց պահանջներն էլ արմատախիլ անելու համար:

1) Ibid, с. 69.
2) Гуч. «Ист. Соврем. Европы», с. 19.
3) «Մասիս» լրագիր, 1879, № 2405:

3.

Մի ծրագիր էր այս, սուլթան Համիդի հրէշային ուղեղում բուն դրած, մի սիստեմ, որ ստացաւ «Համիդականութիւն» անունը, մի սիստեմ, սակայն, որին չէր վիճակւում գաղտնիքների աշխարհում երկար մնալու ճակատագիրը: Նա սանձարձակ եւ աշկարա էր, եւ հայերը չեն կարող արդարանալ թէ՝ պարզ չեն նկատել կամ բոլորովին չեն նկատել նրան սկզբից եւ եթ:

Նոյն այդ 1879 թ. երկրորդ կիսում, երբ Թիւրքաց Հայաստանը հեծեծում էր նորանոր աղէտների տակ, իսկ նրանից հեռու, գաղութներում, ազգային մեծամոլութեան ժխորն էր աղմկում, բարենորոգումների կոմիսարների հետ զուգընթացաբար, սուլթանի հրամանով Վան էր գնում մի բարձրաստիճան զինուորական պաշտօնեայ՝ միւշիր Սամի փաշան, որին տրւած յանձնարարութիւնը թէեւ գաղտնի էր պահւում, բայց Վանի հայերը կռահեցին թէ բանն ինչումն է, եւ «Մշակ»-ի թղթակիցը գրում էր.

«Ահա թէ ինչ էր Սամի փաշայի պաշտօնը (1). լրտեսել, հետազօտել եւ իմանալ թէ արդեօք Հայաստանի հայերը յեղափոխութիւն մը յարուցանելու պատրաստութիւն մը տեսած են կամ կը տեսնեն եւ թէ ի՞նչ միջոցներով: Հայոց ազգութիւնը ճնշելու, Հայաստանի կարեւորութիւնը ոչնչացնելու եւ բոլոր հայոց ապագայ ակնկալութիւնները փչացնելու մի նոր հնարագիտական, արտաքուստ չյայտնւող եւ փութով գործադրելի յատակագիծ շինել եւ խելոյն գործադրութեան դնել»:

Գաղտնիք չէր եւ այն թէ ովքեր պիտի հանդիսանային այդ բնաջնջման գործիքները: Դրանք քրդերն էին, որոնց մէջ, հէնց այդ միջոցին, ծայր էին տւել ապստամբական շարժումներ՝ անկախութիւն ձեռք բերելու համար: Թիւրք կառավարութիւնը չէր վախենում այդ շարժումներից, ընդհակառակը, խրախուսում էր, որովհետեւ կարծում էր այդպիսով ստեղծել մի քրդական միութիւն, որ քաղաքական ուժով գործիք կը դառնար իր ձեռքում, իսկ անկախութեան գաղափարը հեշտ կարելի էր մոռացութեան տալ՝ գրգռելով քրդերին հայերի դէմ, համոզելով նրանց թէ հայերն են իրանց թշնամիները, որոնք եւրոպացիների միջոցով ձգտում են իշխանութիւն ձեռք բերել նրանց, այսինքն՝ քրդերի վրայ: Այս պրովոկացիան սաստիկ ազդեցութիւն էր գործում հովւական բարբարոս ցեղերի մէջ եւ մի ահեղ զէնք էր, որ մնաց Թիւրք կառավարութեան ձեռքում ընդմիշտ, որովհետեւ հայերը երբեք ընդունակութիւն չունեցան մօտենալու քրդերին, ազդելու նրանց վրայ հակառակ ուղղութեամբ: Նրանք միայն ականատես էին լինում թէ ինչպէս կառավարութիւնը պատրաստում եւ կազմակերպում էր քրդերին իրենց դէմ՝ մատնելով այն մանկական միամտութեան թէ Եւրոպա կայ, որ կը պաշտպանի իրանց եւ թոյլ չի տալ, որ քրդերը կոտորեն իրենց:

1) «Մշակ», 1879, № 207:

Սամի փաշայի‌ն տուած յանձնարարութեան գործադրութիւնն էլ հէնց այն էր, որ նա կենտրոնացնում եւ փայփայում էր քրդերին: Նոյն թղթակիցը շարունակում էր. «Սամի փաշան Վան մտած չմտած սկսաւ ամէն կողմէ քրդեր ժողովել եւ Վան քաղաքին մէջ լեցնել հակակշռելու համար քիւրդ տարրը հայկական տարրին դէմ: Մտադիր է մինչեւ իսկ քիւրդ պաշտօնեաներ նստեցնել կառավարութեան զանազան ատեաններուն մէջ ... Կարնոյ ճանապարհին վրայ մինչեւ Վան պատահած բոլոր աւազակապետ քիւրդերն փոխանակ ձերբակալելու, մեծ պատուով քաջալերեց եւ խրախուսեց զիրենք իրենց ընթացքին մէջ: ... Հայտարանլի Ալի աղայի մանչ Մուսա աղան, որ 35 գիւղ հրկիզ անելով եւ անթիւ կողոպուտներով ձգեր Պարսկաստան փախեր էր, փոխանակ պատժելու զայն, դարձեալ կանչեց եւ իւր հօր տեղ էլաղասի կարգեց՝ ամսական 2,000 ղրուշ ոսկի դրամ յատկացնելով»:

Գրգռման մի գեղեցիկ միջոց էլ ռուսաց կառավարութիւնն էր հայթայթել: Վանում ռուսական փոխ–հիւպատոսութիւն հաստատելով եւ փոխ–հիւպատոս նշանակելով հայ զինուորական պաշտօնեայ Կամսարականին, որ պաշտպանութիւն էր ցոյց տալիս հայերին, դրանով իսկ կատաղեցնելով քիւրդերին, որոնք ամէն անգամ մի հայ կողոպտելիս, ասում էին նրան. «Գնա՛ ռուսաց կոնսուլին բարեւ արա, իր իսկ սիրուն այդ բաներ կ՚անենք, որ ցուցնէ մեզ իր տէրութեան զօրութիւնը»[1]:

Գործողութեան այսպիսի եղանակ ընդգրկելով գաւառական հայութեան դէմ, Թիւրք կառավարութիւնը, ի հարկէ, չէր մոռանում, որ նրան ղեկավարողն ու դաստիարակողը գաղութների հայութիւնն է, ուստի եւ սկսում էր նրան իր ձեռքի մէջ առնել, մի շարք արգելքներով եւ սեղմումներով: Սկսւում էր կառավարական յատուկ հալածական արշաւանքը, որ գնալով սաստկանում էր: Այս արշաւանքն առաջ ու առաջ գաղափարական հողի վրայ սկսում է Կ. Պոլսի Թիւրք մամուլը: 1879–ի վերջերից արդէն իրողութիւն է դառնում Թիւրք հրապարակախօսութեան միարան թշնամութիւնը անխտիր բոլոր հայերի դէմ, որոնց Թիւրքերը մեղադրում էին պետական դաւաճանութեան մէջ, որովհետեւ նրանք, յենուած օտար պետութիւնների վրայ, փութացնում էին նրանց միջամտութիւնը Թիւրքիայի ներքին գործերի մէջ եւ պատրաստում էին բուլղարների նման ապստամբութիւն: Օրւայ հերոսներ, այդ լրագրերի համար, դառնում էին քրդերը, որոնք եւ պիտի լինէին հայոց հարցի խորտակիչները: Գովում եւ փառաբանում էին քրդական բարեմասնութիւնները, ժխտում էին թէ նրանք աւազակաբար ո եւ է վնաս հասցնում էին հայերին եւ պնդում էին թէ, ընդհակառակը, հայերն են նրանց նեղում ու վնասում եւ սպառնում էին Եւրոպային, որ եթէ նա ռեֆորմներ տայ հայերին, այն ժամանակ ամբողջ

1) «Մշակ», 1879, № 89 — Նամակ Վանից:

քիւրդ ժողովուրդը, ինչպէս մի մարդ, ոտքի կը կանգնի եւ զէնքով կը պաշտպանէ իր իրաւունքները:

Հայ մամուլը պատասխանում էր, ազգայնական կրքերը վառւում էին երկուստեք՝ ստեղծելով ատելութիւններ, թշնամութեան մի մթնոլորտ, որ միշտ կարող է պայթուցիկ նիւթերի յատկութեան հասնել, այնպէս որ Ներսէս պատրիարքը ստիպուած է լինում դիմել կառավարութեան եւ խնդրել, որ նա զսպէ Թիւրք մամուլի սանձարձակութիւնը. բայց ի՞նչ կարելի էր անել, երբ Թիւրք Թերթերից ամենակատաղին՝ «Թերջիման Հաղիգաթ» սուլթան Աբդուլ–Համիդի անձնական օրգանն էր:

Այս լրագրական ամբողջ ժխորն ու տակնուվրայութիւնը պարզ ապացոյց էին, որ եթէ դեռ չկայ քրդական մի միութիւն ուղղուած յատկապէս հայերի դէմ, այդ, յամենայն դէպս, կազմում է կառավարութեան հիմնական ծրագիրը, որի իրագործման համար նա չպիտի խնայէ ոչ եռանդ եւ ոչ միջոցներ:

Եւ այս բացարձակ ազդարարութիւնից էլ հայերը ոչինչ դաս չէին վերցնում: 1880 թւի սկզբին մի շարք կառավարական խստութիւններ թոյլ էին տալիս տեսնելու, որ պայքարը սկսւում է լուրջ կերպով: Արգիլւում էր հայ լրագրներին հրատարակել տեղեկութիւններ Հայաստանում կատարուած հարստահարութիւնների մասին, արգիլւում է ռուսահայ Թերթերի մուտքը Թիւրքիա, Ներսէս պատրիարքին պահանջ էր ուղարկւում, որ նա այնուհետեւ գործ ունենայ կառավարութեան հետ միմիայն կրօնական գործերով եւ պաշտօնական գրագրութիւնների մէջ գործ չածէ «Հայաստան» բառը, քանի որ այդպիսի անունով երկիր գոյութիւն չունի[1]:

Իսկ քրդական շարժումը ծաւալւում, միջազգային հանգամանք էր ստանում նոյն այդ 1880–ին, երբ շէյխ Ուբէյդուլլահը ձեռնարկում է կազմել բոլոր քիւրդ ցեղերից մի միութիւն եւ գրաւելով պարսկական Ատրպատականը՝ հիմնել այնտեղ մի անկախ քրդական պետութիւն: Այս նպատակով նա կազմում է, իր Շեմդինան գիւղում, քիւրդ ցեղապետների մի համագումար: Այստեղ, ինչպէս հաստատում են լաւատեղեակ ռուսական աղբիւրները, Թիւրքաց կառավարութիւնից կաշառուած մի քանի շէյխեր առաջարկեցին Թիւրքահայերի եւ միւս քրիստոնեաների մի համատարած կոտորած կատարել, բայց Ուբէյդուլլահը սաստկապէս հակառակեց այդ առաջարկութեան՝ ասելով որ, եթէ Բ. Դուռը ամէն բանի մէջ քրդերի կողմն է պահում, այդ միայն այն պատճառով է, որ հակադրէ նրանց քրիստոնէական տարրին Անատոլիայում եւ եթէ հայերն այստեղ ոչնչացուած լինեն, այն ժամանակ քրդերը կորցրած կը լինեն իրենց նշանակութիւնը Թիւրք կառավարութեան աչքում[1]: Հայերին

1) «Մեղու Հայաստանի» լրագիր, Թիֆլիս, 1880, № 84:
2) Аверяновъ. — «Курды въ войнахъ Россiи съ Персiей и Турцiей», Тиф. 1900, с. 227-228.

անձանօթ չմնաց եւ այն աշխատանքը, որ մտցրել էր Թիւրք կառավարութիւնը Չէյխ Ուբէյդուլլահի աշխատանքի մէջ՝ յատկապէս հայ տարրը ոչնչացնելու համար: Այդ ժամանակները Վան գտնւող Խրիմեան Հայրիկը գրում էր յուլիսի 2-ից 1880 թ.

« Այլ եւս կասկած չկայ, քրդական մի միութիւն է կազմակերպւում կենտրոնական կառավարութեան զրդումով, որ ուզում է անդամալուծել հայոց հարցը, նրան հակադրելով մի նոր հարց՝ քրդականը: Այս միութեան հոգին օսմանեան քաղաքականութիւնն է: Շէյխ Ուբէյդուլլահը նրա անւանական կենտրոնն է, Բահրի բէյը, Բեդերխան բէյի որդին, նրա աննկուն գաղտնի գործակալն է:

« Քրդերին միացնում են: ... Քրդական միութիւնը Թիւրքիայում իր համար օջախ կազմելու մտքով՝ ամենավայրագ գործողութիւններ է կատարում՝ Աղբակը, « Հէքեարին », հայերից դատարկելու համար » (1):

Նկարագրելով մի քանի մանրամասնութիւններ՝ Խրիմեանը գալիս էր բաւական յուսահատ եզրակացութեան: « Որքան էլ, ասում էր նա, աննշան լինի այս միութեան քաղաքական կարեւորութիւնը, նա կարող է, սակայն, չարագուշակ հետեւանքներ ունենալ յանկարծակի բերելով հայ ազգաբնակութիւնը, որի ոչ միայն գոյքը, այլ եւ կեանքն այսօր վտանգի մէջ է »: Այստեղ էլ Թիւրքահայ գիւղացիական հարցը քաղաքականացնող կղերական դիւանագիտութեան գլխաւոր ներկայացուցիչը մեզ բացատրում է թէ ինչո՞ւ ինքն ու իր նմանները երկիւղ չեն կրում Թիւրք կառավարութեան ընդգրկած քրդական քաղաքականութիւնից: Իր նամակը նա վերջացնում էր այսպէս. « Սակայն, Բեռլինի դաշնագրի բարձր վճիռը մի անգամ որ գործադրւած կը լինի, քրդերը, որոնք աւելի նրբամիտ են քան Թիւրքերը, շնորհիւ յղկեղուկ բնաւորութեան, աւելի լաւ բան չեն կարող անել, քան միանալ հայերին »:

Ուրեմն, միշտ միեւնոյն փրկիչը, միեւնոյն հրաշագործը, որին կանչում էին բոլոր ազգասէրները, եւ որ մի օր պիտի գար, վերջապէս, եւ բերէր հային ամէն բարիք, նոյն իսկ եւ միութիւն քրդերի հետ:

Եւ եկաւ այդ ցանկալին, այդ հրաշագործ վհուկը: Եկաւ նոյն իսկ այդ տագնապալի օրերին, երբ քրդական գնդերը շարժւում էին Չէյխ Ուբէյդուլլահի հրամանի տակ. եւ սուլթան Համիդն իրեն այնքան մօտեցած էր համարում իր վառ իղձալին — տեսնել սեփական վիլայէթները ծածկւած հայերի դիակներով:

Ոչ լորդ Սալսբուրիին, ոչ էլ Հենրի Լայարդին չյաջողւեց իրականացնել Կիպրոսի դաշնագրութիւնը Փոքր Ասիական ռեֆորմների վերաբերմամբ, չնայած նրանց գործադրած ամբողջ եռանդին: Անյաջողութեան պատճառը պահ-

1) "Blue Book", Turkey, No 5 (1881), No 6.

պանողականների Թրքասիրութիւնն էր, որ եւ դարձաւ Թուլութեան գլխաւոր պատճառներից մէկը կուսակցական պայքարի մէջ, ուր եւ լիբերալները, վերջապէս, խլեցին իշխանութիւնը նրանց ձեռքից: Կառավարութեան գլուխն անցաւ Գլադստոնը:

Աննկարագրելի է այն մոգական ազդեցութիւնը, որ գործեց այս անունը մանաւանդ Թիւրքիայում: Խօսքը տանք «Մշակ»-ի թղթակցին:

« Գիտենք որ, գրում է նա, Անգլիոյ մէջ ազատականք անցնելով իշխանութեան գլուխ, գրգռեցին Արեւելեան քրիստոնեայ ժողովուրդոց մէջ յոյժ մեծ յոյսեր. քրիստոնեայ ամենափոքրիկ հասարակութիւնք ամենն ալ ուղարկեցին Գլադստոնին երկար եւ ջերմագին ուղերձներ, որով կը յայտնէին ոչ միայն իրենց խնդակցութիւնը անգլիացի օրւան դիւցազնի յաղթութեան վրայ, այլ եւ կը խնդրէին իրմէ, որ զիրենք Թիւրք կառավարութենէ ազատէ: Այս գաղափարն այլ եւ այլ ձեւերով իրեն ամէն կողմէ կը յայտնէր: Ազատականք յայտարարած են քանիցս անգամ, թէ իրենց աշխարհակալութեան նպատակը պէտք լինի պատրաստել քրիստոնեայ ազգերը մի օր անկախ լինելու՝ հիմակու հիմա իրենց selfgouvernement — ինքնօրինութիւն տալով, ընդ վեհապետութեան օսմանեան սուլթանի: Այսպիսի մի յայտարարութիւն բնականաբար պէտք քաջալերէր քրիստոնեաներին եւ մենք ալ — հայերս ոչ նուազ փառաւոր յոյսեր սկսանք յղանալ. որպէսզի հայկական խնդիրը չմոռացուի, լաւ մշակուի եւ Անգլիոյ ամէն կուսակցութեանց կողմէ հաւասարապէս պաշտպանուի, հարկ կար որ մեր կողմէ մարդ գնար Լոնտրա եւ հոն տեսնէր կուսակցութեանց գլուխները, տեսնէր լրագրապետներին եւ տեղն ի տեղօք հասկացնէր Թիւրքիոյ վիճակն ու ուժ տար այսպէս մեր ազգային խնդրոյն: Մի այսպիսի ամենախոփուկ պաշտօն կը պահանջէր մեծ տակտ, մեծ շրջահայեցութիւն եւ մեծ քաղաքականութիւն. վերջապէս երեք անձն Լոնտրա ուղարկեցան: Ամէն մինը տարբեր տարբեր ճանապարհ բռնելով Պոլսէն հեռացան: Ամենամեծ գաղտնիք պահուած է այս միսիոնին վրայ (1): Այս պատգամաւորութիւնը որչափ նշանակութիւն ունի, ամէն ոք խոկոյն կ'ըմբռնէ: Անցեալ անգամուայ պէս կղերական չէն, մի հանգամանք, որ շատ նպաստաւոր չէր հայոց. այժմ աշխարհական են, որով բուն ժողովուրդը կը ներկայացնեն: Մինն իր ճարտարութեամբ անտարակոյս կղերէ աւելի գործ կրնայ ընել: Ձեմ կարենար ուրախութիւնս ձեզ չյայտնել. երբ դիւանագէտն այս լուրը մեզ տուաւ, առաջին գաղափարը եղաւ վար իջնել եւ խոկոյն ձեզ գրել » (2):

Բայց այսպիսի մի պատգամաւորութիւն ուղարկելու կարիք էլ չէր մընում, որովհետեւ Գլադստոնի մինիստրութիւնը, պաշտօնի կանչւելուն պէս,

1) Լա՛ւ գաղտնապահութիւն է. հրատարակել ամէն ինչ, մինչեւ իսկ այն, թէ պատգամաւորութեան համար հաւաքուած է 7000 անգլ. ոսկի եւ թաքցնել միայն պատգամաւորների անունները:

2) «Մշակ», 1880, № 86:

իր ձեռքն էր վերցնում Թիւրքիայի գործերն առհասարակ եւ, առաջին հերթին, 61-րդ յօդւածը: Որ անգլիական քաղաքականութեան մէջ բեկում էր առաջացել Մերձաւոր Արեւելքի նկատմամբ, դրա ապացոյց, — բայց զուտ արտաքին ցուցադրական, — կարող էր համարել այն, որ յետ էր կանչւում նախկին պահպանողական կառավարութեան Թրքասէր դեսպանը Կ. Պոլսում, Թրքամոլ Լայարդը, նրա տեղ դեսպան էր ուղարկւում լիբերալ կուսակցութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից մէկը՝ եռանդոտ Գօշէնը: «Պ. Գօշէնի Կ. Պոլիս գալը, գրում էր «Մշակ»-ի նոյն թղթակիցը, քրիստոնէից վրայ անչափ ազդած է, որչափ որ Լայարդի դեսպան անւանումը ի սկզբանէ, ակէ քանի մը տարի առաջ, ցնծացուց իսլամներին» [1]:

Գլադստոնը, վերցնելով Կիպրոսը, դէն էր շպրտում Կիպրոսի դաշնագրութիւնը եւ նրա փոխարէն դնում 61-րդ յօդւածը: Այսպիսով նա Անգլիայի վրայից վերցնում էր յատուկ պատասխանատուութիւնը Փոքր Ասիան ռեֆորմներով բարեկարգելու վերաբերմամբ եւ դարձնում էր Անգլիան սոսկ մէկն այն վեց պետութիւններից, որոնք ստորագրել էին Բեռլինի դաշնագիրը: Էլ ինչո՞վ էր նա այնքան հրճւանք պատճառում Թիւրքիայի միամիտ քրիստոնեաներին եւ մանաւորապէս հայերին: Մենք տեսանք, որ պահպանողական կառավարութիւնն այդպէս չէր, այլ միայնակ, իր անհատական նախաձեռնութեամբ էր տանում ռեֆորմների գործը, որ եւ այսպիսով չէր զրկւում իրական երաշխիքից: Գլադստոնը մեռցնում էր եւ այդ երաշխիքը եւ քրիստոնեաների փրկութիւնը ձգում էր վեց պետութիւններին, այսինքն՝ ոչ ոքի: Պատահաբար նրան յաջողւում է համաձայնութիւն կայացնել պետութիւնների մէջ, որոնց դեսպանները Կ. Պոլսում միանման ծանուցագրեր են ուղարկում Թիւրքաց կառավարութեան եւ հարցնում նրան, թէ ի՞նչ է ձեռնարկւած Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդւածն իրագործելու համար·

Այսպիսով՝ եւրոպական դիւանագիտութիւնը, առաջին անգամ լինելով, յարուցանում էր յատուկ հայկական հարց: Այս մի դժբախտ քայլ էր, որովհետեւ արւում էր մի այնպիսի ժամանակ, երբ ազգային կրքերը հայ-թրքական յարաբերութիւնների մէջ եռման աստիճանին էին հասել, երբ քրդական արշաւանքների ալիքները ծեծում էին հայութեան կողերը Վասպուրականում եւ երբ Թիւրք կառավարութիւնն առիթներ էր փնտռում իր ճիրանները Թիւրքահայ ժողովրդի մարմնի մէջ աւելի եւս խոր մխրճելու համար: Այսպիսի մի ժամանակ եւրոպական պետութիւնների մի նոր միջամտութիւն, այս անգամ Ասիական Թիւրքիայի վերաբերմամբ, մի միջամտութիւն, ինչպէս միշտ, կատղութիւն էր պատճառում Թիւրք ժողովրդին, պահանջում էր առանձին եռանդ, առանձին ստիպողական թափ ձեռնարկութիւնը չտապալելու համար:

1) «Մշակ», 1880, № 94:

Ամէն մի անյաջողութիւն կարող էր միանգամայն անտանելի դարձնել հայերի դրութիւնը Թիւրքիայում:

Այսպէս էլ եղաւ:

Յուլիսի սկզբին Թիւրքաց արտաքին գործերի մինիստր Աբեդդին փաշան պատասխանում է դեսպաններին մի մանրամասն ծանուցագրով, որի մէջ մի առ մի թւում էր եւ բացատրում է թէ Թիւրք կառավարութիւնն ինչ բարենորոգութիւններ է ծրագրում մտցնել Ասիական Թիւրքիայի, մանաւորապէս գիւղացիական ազգաբնակութեան մէջ՝ նրա անդորրութիւնն ու մշակութային առաջադիմութիւնը ապահովելու համար: Բայց որքան էլ լաւ լինէին այդտեղ արած խոստումները [1], նրանք չէին կարող բաւարարել հայկական բողոքաւոր շովինիզմը, քանի որ նրանք վերաբերւում էին ընդհանուր ազգաբնակութեան, առանց կրօնական եւ ցեղային խտրութիւնների: Եւ բացի դրանից, Աբեդդին փաշան դիմել էր հայ ազգասիրութեան ամենացաւոտ կողմին, այն է՝ հայերի թւին Ասիական Թիւրքիայում, ասելով իր պատասխանի մէջ թէ՝ կառավարութեան հաւաքած նոր տեղեկութիւններով՝ հայերը կազմում են ազգաբնակութեան միայն 17 առ հարիւրը: Փոխանակ հերքելու այդ առարկութիւնը աւելի համոզիչ փաստերով, որոնք չկային էլ, քանի որ դրանք ոչ ոք չէր որոնել եւ հաւաքել, ազգասէրները լուր տարածեցին թէ այդ պատասխանը գրել է հայազգի Արթին էֆէնդի Տատեանը, որ եւ հէնց այդ առթիւ նշանակւում է արտաքին գործերի մինիստրի օգնական: Եւ ահա այս մարդն էլ դարձաւ քաւութեան նոխազ: Գրիգոր Արծրունին նրան անւանեց «դաւաճան», իսկ Աբեդդին փաշային՝ «իդիոտ» [2]: Եւ Կ. Պոլսի հայ երիտասարդութիւնը ցոյց կազմեց Տատեանի ապարանքի առաջ, երգելով ազգային երգեր. ցուցարարները կանչում էին. «Կորչի՛ դաւաճանը, կորչի՛ հայրենիքի թշնամին»: Տատեանը ստիպւած եղաւ գնալ Ներսէս պատրիարքի մօտ եւ յայտնել նրան թէ՝ արտաքին գործոց մինիստրի պատասխանն ինքը չէ գրել: Այս փաստերը շատ լաւ բնորոշում են թէ մինչեւ որ աստիճան ելեկտրականացել էր մթնոլորտը եւրոպական միջամտութիւնից: Այդ լարումն աւելի եւս ծայրայեղութեան էր հասնում, երբ սեպտեմբեր ամսին վեց դեսպանները պատասխանեցին Թիւրք կառավարութեան յայտարարութիւններին եւ խոստումներին: Այս կառավարական ծրագիրը յայտարարւում էր անբաւարար: Պետութիւնները պահանջում էին, որ հայերի համար յատկապէս մշակւեն ռեֆորմներ, ինչպէս պահանջում էր 61-րդ յօդւածը, մանաւանդ թէ ի՞նչ միջոցներով նրանք պիտի պաշտպանւեն քրդերից եւ չէրքէզներից: Դեսպանները տալիս էին մի շարք ցուցմունքներ՝ խիստ քննադատութեան ենթարկելով Թիւրք կառավարութեան պարզած սկզբունքները:

1) Տ. եմ «Հայոց Հարցի Վաւերագրերը», եր. 165-178:
2) «Մշակ», 1880, № 109:

Կարելի է ասել ուրեմն, որ յաղթել էին հայերը: Այս բանը կարծես թէ հաստատում էր թիւրքաց կառավարութիւնը իր հոկտեմբեր 3-ի ծանուցագրով, որի մէջ կրկնում էր իր առաջին պատասխանի մէջ բերած բարենորոգչական սկզբունքները՝ կցելով նրան մի առաջաբան թէ՝ այդ բոլորն արւում է Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդւածն իրագործելու համար հայաբնակ վայրերում: Բայց այստեղ էլ սկսւում էր մէկն այն ողբերգական դրութիւններից, որոնցով այնքան հարուստ էր թիւրքահայ ժողովրդի ճակատագիրը: Դիւանագիտական գրագրութիւնն այստեղ էլ հէնց կանգ էր առնում: Հարցնող չկար այլ եւս: Պետութիւնների համաձայնութիւնը քանդւել էր, եւ Գլադստոնը յայտարարում էր թէ Անգլիան մենակ, առանձնակի ոչինչ չէր կարող անել ...:

Քմահաճոյքի, պատահականութեան մի խաղ ուրեմն: Մեծերը, հզօրները կամեցան, գրեցին, այժմ չեն կամենում, ոչինչ չեն գրում. բայց ի՞նչ նստեց այս խաղը հայ ժողովրդի վրայ: Գլադստոնը, իր այս խղճուկ նախաձեռնութեամբ, ծաղրական արշաւով եւ խայտառակ փախուստով մի կատարեալ աղէտ էր բերում անօգնական գերի գիւղական ժողովրդի գլխին, որին իբր թէ ուզում էր օգնել: Եւրոպական միջամտութեան դէմ յանդիման կանգնած սուլթանն այժմ բազմապատկած կատաղութեամբ պիտի ընկնէր այն ժողովրդի վրայ, որ եթէ թոյլատւութիւն տեսնէր, կարող էր նոր եւ նոր միջամտութիւններ բերել Թիւրքիայի գլխին:

«Ցաւալ եւ յուսահատիլ, — ահա այն շրջանակը, յորում կդեգերինք անդադար, — գրում էր Հայկակը «Մշակ»-ին: — Այսօր կպատրաստենք հայկական ինքնօրինութիւնը ծափահարելու, վաղը Հայաստան անմիջապէս բնաջինջ ըլլալու սարսափը կուլրէ: Եւ մեր այս վիճակը զարմանալի չէ, երբ մեր ուղեցոյցը դիւանագիտութիւնն է ու մենք դիւանագիտութեան ինչ ըլլալը չենք գիտեր» (2):

Ցաւը, սակայն, միայն չգիտնալը չէր: Ցաւն այն էր, որ սովորել ու խրատւելն էլ չէր տւած մեզ: Միայն Գլադստոնեան այս մեծ աղէտը կարելի եղա՞ւ հասկանալ ամենատարրական կերպով, ամենակոպիտ գծերով գոնէ: Այժմ Գլադստոնը միթինգային ճառախօս չէ, որ աջ ու ձախ շանթեր արձակէ, քար ու երկաթ տեղայ Թիւրքիայի գլխին, պահանջէ Թիւրքիայի վռնդումը Եւրոպայից, պաշտպանութիւն եւ ազատութիւն մարդկային իրաւունքների: Այժմ նա Անգլիայի առաջին մինիստրն է, հետեւաբար եւ անգլիական իմպերիալիզմի առաջին ծառան եւ իր ծառայական պարտաւորութիւնները կատարելու համար նա, թէեւ «մեծ մարդասէր» ճանաչւած, պիտի այնքան անմարդի, այնքան աղէտալի խաղ խաղար թիւրքահայ ժողովրդի գլխին: Իսկ

1) Անդ, երես 188-191:
2) «Մշակ», 1880, № 216:

այդ ժողովրդի առաջնորդ քաղաքական մանուկները պատրաստ էին Գլադստոնին այդ դերի մէջ էլ մեծարել, շոյել ու փայփայել: Ի՞նչ էր նշանակում նրա յայտարարութիւնը թէ Անգլիան չի կարող մենակ գործել: Ժամանակի առաջնակարգ հրապարակախօս Գրիգոր Արծրունին այսպէս էր բացատրում.

«Եթէ Եւրոպան կամենում է կրկին միաձայն կերպով ներգործել օսմանեան պետութեան վրայ, Անգլիան էլ կմասնակցի այդ ներգործութեանը, իսկ հակառակ դէպքում Անգլիան վճռել է թողնել Թիւրքիային իր սեփական մահով մեռնելու» (1):

Իսկ իրերը բոլորովին այդպէս չէին: Բիկոնսֆիլդը յափշտակել էր Կիպրոսը, իբրեւ նախադուռ Եգիպտոսի, Գլադստոնն էլ պիտի յափշտակէր ամբողջ Եգիպտոսը — այսպէ՛ս էր անգլիական կապիտալիզմի հրամանը: Իսկ այդ բանը պիտի կատարւէր Թիւրքիայի համաձայնութեամբ եւ աջակցութեամբ: Կարո՞ղ էր, ուրեմն, Անգլիան միայնակ վէճի բռնւել սուլթանի հետ մի ինչ որ կորած ու անարժէք Հայաստանի համար: Անակնկալ կերպով ու ամարդօրէն լքելով հայերին, Գլադստոնը նրանց լէշերի վրայով էր քայլում դէպի Նեղոսի ափերը: Իմպերիալիստական գիշատիչների շահերն այստեղ խաչաձեււում էին իրար հետ, իսկ տեղային ազգայնականութիւնը, Արաբի փաշայի առաջնորդութեամբ, ուզում էր ազատւել գիշատիչներից եւ իր ձեռքն առնել սեփական երկրի ճակատագիրը: Գլադստոնը գնաց այդ տեղային ազատագրական շարժման դէմ, սկզբում գործում էր միւս պետութիւնների եւ մանաւանդ Ֆրանսիայի հետ համերաշխ, մինչեւ իսկ, հակառակ Թիւրքիայի կամքի, դեսպանաժողով գումարեց Կ. Պոլսում եգիպտական հարցը քննելու համար (2). ապա դուրս եկաւ եւրոպական համաձայնութիւնից, ռմբակոծել տւեց Ալեքսանդրիան, հնդկական զօրքերով գրաւեց Սուէզի ջրանցքը, ջարդեց Արաբի փաշայի զօրքը, խեղդեց ժողովրդի ազատագրական շարժումը, գրաւեց ամբողջ Եգիպտոսը եւ, այսպիսով, ամբողջացրեց Անգլիայի յափշտակման գործը:

Այս բոլորը կատարեց Անգլիան մենակ, առանձնացած, հակառակ Եւրոպայի եւ մանաւանդ Ֆրանսիայի կամքի, չվախենալով ոչ ոքից, անգամ Գլադստոնեան Անգլիան, որ առանց Եւրոպայի համաձայնութեան իրեն անկարող համարեց նոյն իսկ գրագրութիւն շարունակելու 61-րդ յօդւածի առթիւ:

Եւ դարձեալ, ինչպէս 1878-ին, այս մեծ դասը բոլորովին զուր անցաւ հայ ժողովրդի առաջնորդների համար ... եւ կորաւ ամենքի երազած 61-րդ յօդւածը, եւրոպական դիւանագիտութիւնը կատարեալ մոռացութեան մատնեց նրան ամբողջ 15 տարի:

2) Անդ:
1) Achille Biores. — «Français et Anglais en Egypte, 1881-1882», Paris, 1910. p. 172.

4.

Մինչեւ այժմ մենք տեսանք թէ ինչպէս էին վերաբերւում քաղաքական դարձրած թիւրքահայ գիւղացիական հարցի լուծման երկու գլխաւոր կողմերը — պահանջատէր եւրոպական դիւանագիտութիւնը եւ պատասխանատու թիւրքաց կառավարութիւնը: Առաջինը՝ թոյլ եւ յեղյեղուկ, սկզբից ի վեր նաեւ վաճառող եւ խաբեբայ Սալսբիւրի – Գլադստոնեան ոճով, երկրորդը՝ հայոց հարցը հայերի բնաջնջումով լուծելու վճռականութեամբ լցւած: Մենք տեսանք նաեւ հարցի առարկան եւ բովանդակութիւնը կազմող հայերին, տեսանք թէ ո՞ւր էր տանում նրանց ազգամոլական շարժումը, որ եռում էր գաղութներում եւ որի հրահրողն էր հայ կղերական դիւանագիտութիւնը:

Այդ շարժումը դեռ խօսք ու ճառ էր, գրագրութիւն ու քարոզ. որքան սակայն ուշանում էր հարցի լուծումը, որքան, հակառակ ակնկալածի, բազմապատկւում էին Հայաստանի գիւղացիութեան տանջանքները, որքան աւելի եւ աւելի նկատելի էր դառնում, որ այդ տանջանքների մի նոր խոշոր բաժինը հէնց 61-րդ յօդւածից է բղխում, այնքան աւելի տիրապետող եւ հրապուրեցնող ուժ էր դառնում բուլղարական օրինակը՝ ամրապնդելով եւ նորից ու նորից բանաւոր դարձնելով այն մտայնութիւնը թէ՝ եթէ հայերին ոչինչ չեն տալիս, պատճառն այն է, որ նրանք զէնք չեն բարձրացնում, չեն կռւում եւ չեն կոտորւում: Մենք տեսանք այս գաղափարի գրական պրոպագանդը, որ դեռ պատերազմից առաջ էր սկսել՝ բուլղարական անցքերի թարմ տպաւորութեան տակ:

Պատերազմից յետոյ՝ զինական շարժման քարոզչութիւնը ձեռք էր բերում այնպիսի մի զօրաւոր ուժ, որպիսին էր Րաֆֆու գեղարւեստը, նրա հռչակաւոր վէպ – ծրագիրը: Րաֆֆին ամենամոլեռանդ արծարծողն էր այն մտքի, թէ առանց զէնքի եւ արիւնհեղութեան ազատութիւն չի լինում եւ իր առաջին վէպ – ծրագրի մէջ — «Ջալալեդդին», որ լոյս տեսաւ Բերլինի կոնգրեսից առաջ, երբ յայտնի էլ չէր թէ հայերն ինչ պիտի ստանային Եւրոպայից, յափշտակիչ գոյներով նկարագրում էր թէ ինչպէս պիտի կատարւի այդ զինական շարժումը: «Ջալալեդդին»-ը առաջին հայդուկային վէպն էր մեզանում, Աբովեանի «Վէրք Հայաստանի»-ից յետոյ, այն տարբերութեամբ, որ Աբովեանի գործը ծրագիր չէր, իրական հերոսի պատմութիւն էր, իսկ Րաֆֆու գործը ծրագիր էր, նրա հայդուկներն իրական մարդիկ չէին, այլ պիտի ստեղծւէին սլաւոնական ապստամբութիւնների օրինակով:

Դեռ Աբովեանի գործը ցոյց էր տւել թէ որքան յափշտակիչ է հայդուկային արւեստը հայ ժողովրդի մէջ, ինչպէս այդ բնական ու համապատասխան մի երեւոյթ է, քանի որ ամէն ժամանակ եւ բոլոր տեղերում հերոսապաշտութիւնը ժողովրդական ոգու խոշորագոյն արտայայտութիւններից մէկն է եղել: Այսպիսի մի վառ ժողովրդական ընդունելութիւն վիճակւում էր Րաֆֆու հայդուկային վէպերին, թէ ամենից առաջ «Ջալալեդդին»-ին եւ թէ յետոյ

երեւան եկածներին — «Խենթ»-ին եւ «Կայծեր»-ին: Եւ որովհետեւ սրանց հերոսներն իրական չէին, այլ միանգամայն մտացածին, ֆանտաստիկ, ուստի ժողովրդական ոգեւորութեան էր մնում իրականացնել նրանց, միս եւ արիւն տալ այդ օդային պատկերներին: Այսպիսով էր Րաֆֆու վէպը ծրագիր, այսպիսով էր նա, մի խեղճ սալմաստեցի մանրավաճառ, դառնում մի զինւորական հրամանատար, որ ծրագրում է մի ամբողջ պատերազմ, մի թոյլ ու փոքրիկ, ցիր ու ցան ժողովրդի ընդդէմ մի զինւորական պետութեան, որին եթէ յաղթել էր վիթխարի Ռուսաստանը, այդ բանը գլուխ էր բերել մեծամեծ դժւարութիւններով: Մինչդեռ Րաֆֆին իր անկասկած խոշոր տաղանդով ոգեւորելով ընթերցողներին, չափազանց հեշտացնում էր այն պատերազմը, որ ինքն էր յայտարարում Թիւրքիային:

Այդ հեշտութեան գաղտնիքն այն բանի մէջ էր, որ Րաֆֆին ռոմանտիկ էր, դաստիարակւած ֆրանսիական ռոմանտիկ արւեստի վրայ: Եթէ, օրինակ, մի Էժէն Սիւ, որի ազդեցութիւնը Րաֆֆու վրայ մեծ է եղել, կարողանում էր իր գլխաւոր վէպերից մէկի, հայ ընթերցող հասարակութեանը երկար ժամանակ յափշտակած «Թափառական հրեայ»-ի մէջ դուրս բերել մի գործող անձ, որ ապրում էր Քրիստոսի օրերից, այսինքն՝ աւելի քան 1850 տարի, ինչո՞ւ Րաֆֆին չպիտի կարողանար մի ամբողջ կազմ ու պատրաստ, լաւ զինւած ու կարգապահութեան վարժեցւած հայդուկային խումբ ասպարէզ դուրս բերել հէնց այն րոպէին, երբ չէյխ Ջալալեդդինի քրդերը Աղբակի հայութիւնն էին կոտորում, եւ այդպէս էլ անում էր նա: Տալով սարսափների ցնցող պատկերներ, նա թովում էր ընթերցողին երկնքից իջեցնելով քաջերի մի փայլուն հրոսակ, որ վրէժը հանի ոչ միայն քրդական եղանակով, այսինքն՝ սրով ու արիւնով, այլ եւ այնպիսի ճառերով, որոնք դեռ երբեք չէին լսւած մեզանում:

Ի՞նչպէս գոյացան հայ իրականութեան համար այդ կատարելապէս գերբնական երեւոյթները, որտեղ այդ կորիճներն այդքան փիլիսոփայեցան, — Րաֆֆին այսպիսի հարցերին չէր պատասխանում, որովհետեւ այդպիսի հարցերը նրան չէին էլ տրւում: Մենք հարց ու փորձի ժողովուրդ չէինք, քննել չգիտէինք, հաւատալ գիտէինք: Եւ Րաֆֆին դառնում էր ուժ, այնպիսի մի ղեկավար, որի հմայքին դիմադրել չէր կարելի: Այս բնական էր, նայե՛նք մեր այն ժամանակւայ գրականութեան: Ո՞վ կարող էր Րաֆֆու հակակշիռը կազմել:

Տեսնելով «Ջալալեդդին»-ի արտասովոր յաջողութիւնը, Րաֆֆին, ինչպէս ինքն է գրում [1], պատրաստւում էր գրել մի վէպ, որի վերնագիրը պիտի լինէր ուղղակի «Հայդուկներ»: Այս արդէն պարզ ապացոյց է, որ Րաֆֆու ծրագրային արւեստը ներշնչւում էր բուլղարական օրինակից, մի հանգամանք, որ բացատրում էր թէ ի՞նչն էր նրա ռազմական յեղյեղումների

1) «Արաքս», պատկեր. հանդէս, Պետերբ. 1892. Գ. Ա. էր. 91-93:

մէջ այնքան հեշտացնում պատերազմը Թիւրքիայի դէմ: Նա գիտէր, որ հայ հայդուկները մենակ չեն մնայ պատերազմի մէջ, այլ կը բերեն իրենց ետեւից Եւրոպան: Ապացոյց — բալկանեան հայդուկները:

Բերլինի կոնգրեսից ձեռնունայն վերադարձած պատգամաւորներն էլ, ինչպէս գիտենք, միեւնոյն հաւատն ունէին: Եւ ռուսահայ ազատամբական պրոպագանդային ձայնակցում էր հոգեւորականութիւնը Թիւրքիայում բերանացի քարոզներով: Արդէն 1878-ի վերջերում այդ քարոզութիւնը հրապարակային էր: «Մշակ»-ի թղթակիցը գրում էր. « Հոգեւորական յարգելի անձինք կքարոզեն Կ. Պոլսի մէջ թէ զէնք առէք, հայեր, երկաթը զմեզ փրկելու է » (1): Իսկ երբ 1879-ին դեսպան Լայարդը, խօսելով մի հայ վարդապետի հետ, ասում էր թէ այդպիսի քարոզներ տալը յեղափոխութիւն եւ ապստամբութիւն ասել է, քաջ վարդապետը պատասխանում էր. « Բու լցի, հայոց շահը օսմանեան տէրութեան շահուց հետ ի մի ձուլած է եւ կփափաքինք, որ Դուռն այսպէս մտածէ. սակայն երբ կառավարութիւնը հարստահարիչներու դէմ զմեզ չի պաշտպաներ, ինչպէս իւր պարտքն է, մեզ անկ է այն ժամանակ մեր պաշտպանութեանը խնամք տանիլ: Հայ ժողովուրդն ազնիւ ժողովուրդ մ'է, տէր, դարերու հալածանաց կարող եղած է տոկալ. բայց այսօր իւր հայրենեաց մէջ եթէ փոքրիկ գոնաւոր փայտ մը իր ձեռքը տեսնեն, թիւրք եւ քիւրդ զայն նորա ձեռքէն խլել կջանան. ամենուն աչքը հայոց կալուածային ընչից վրայ է. ուրեմն պաշտպանելու պէտք ունենք, հետեւապէս մեր քարոզածը ոչ թէ ապստամբութիւն է, այլ ինքնապաշտպանութիւն » (2):

Բայց աւելի 1880-ին է, որ շնդալից է դառնում հայկական զինաւորումների եւ զինական շարժումների համբաւը: Երբ Կ. Պոլսում սկսւում է դեսպանների գրագրութիւնը թիւրք կառավարութեան հետ 61-րդ յօդուածի մասին, հայ ղեկավար շրջաններում միտք է ծագում, որ եւրոպական այդ միջամտութիւնն աւելի արդիւնաւէտ կը լինի, եթէ նրա հետ զուգընթացաբար շարժումներ տեղի ունենան թիւրքաց Հայաստանում: Պատահաբար, այդ ժամանակ, Վանի կողմերում, քրդերը յարձակւում են մի հայ գիւղի վրայ, բայց անսպասելի կերպով հանդիպում են զինւած դիմադրութեան գիւղացիների կողմից, տեղի է ունենում կռիւ եւ քրդերից սպանւում են շատերը: Ահա այս մասնաւոր փոքրիկ շարժումը անսպասելի չափերով ուռչւում է լրագրութեան մէջ, հասցւում է հայերի համատարած ապստամբութեան աստիճանի, որ իբր թէ յաջողակ եւ յաղթական էր ընթանում:

Որպիսի՜ անողորմ ծաղր հէնց նոյն այդ սովից տանջւող թիւրքահայ գիւղացիութեան հասցէին: Պետերբուրգի « Գոլոս » լրագրի թղթակիցը նկարագրում էր մի չտեսնուած աղէտալի տեսարան, որ ներկայացնում էին « հեռա-

1) «Մշակ», 1879, № 125:
2) Անդ, № 209:

ւոր եւ սովատանջ Հայաստանից այստեղ հասած մի քանի հազար երեխաներ, որոնք իրենց համար հաց եւ բնակարան էին փնտռում »: Եւ թղթակիցը շարունակում էր. « Ասում են, որ տարաբախտ երեխաների կէսը մեռաւ երկար ճանապարհորդութեան ժամանակ, որոնց ուղեկցում էին մայրերը եւ քահանաները: Հայրերը նրանց վաղուց թողել էին. նրանք խոստացել էին իրենց երեխաների ապրուստը հեռաւոր, օտար երկրներից ուղարկել, բայց ամիսներ միմեանց յետեւից անցնում էին եւ խոստացուած օգնութիւնը չէր հասնում: Յուսահատուած մայրերը եւ երեխաները վճռեցին ճանապարհ ընկնել, հայրերի շաւղով, դէպի մայրաքաղաք՝ յուսալով որ այստեղ մի կտոր հաց կը գտնեն » (1):

Եւ ահա այսպիսի մի երկրից տարածւում էին մէկը միւսից ահագնալուր ռազմական տեղեկութիւններ: Նոյն «Գոլոս»-ի Էրզրումի թղթակիցը յայտնում էր. « Առհասարակ Էրզրումի վիլայէթի հայերը սուր եւ հրաձիգ զէնքերի բաւական մեծ պաշար ունեն: Այդ պատճառով նրանց յարաբերութիւնները թիւրքերի հետ այժմ բոլորովին փոխուել են: Ինձ ասացին, որ հայերը զինուորւած ընկերութիւններ են կազմակերպել, որոնք ուշադրութեամբ հետեւում են անցքերի զարգացման, որպէսզի հարկաւոր դէպքում իրենց օգնութիւնը աւելի իրական եւ օգտաւէտ դարձնեն: Հաւատացնում են, որ թիւրքաց կառավարութեանը յայտնի են այդ ընկերութիւնների գոյութիւնը, բայց նա ոչինչ չէր կարող անել, նա միշտ մի պատրուակ է սպասում, որ այդ բոլորն արւում է սեփական ապահովութեան համար » (2):

Միաժամանակ Հայկակը գրում էր Կ. Պոլսից. « Երէկ եւ այսօր յուզեալ օրեր են Կ. Պոլսի համար: Յուլիսի 28-ին լուր տարածւեցաւ, թէ Հայաստանի վերաբերեալ կարեւոր հեռագիրներ կառավարութիւնը վար դրել է. ահա երէկ կ'իմանանք. « Ստամպուլ » կը հրատարակէ, « Սեմաֆոռ » եւ « Վագըթ » կը հաստատեն թէ՝ « յանուն ազգային վրէժխնդրութեան հայոց զինեալ զօրեղ խմբեր յարձակեր են Վասպուրականի քիւրդ գիւղերու վրայ եւ 7 գիւղ այրել, մրկել են »: Այս լուրը, որոյ ստուգութիւնն ինչ աստիճան լինելը չկարողացանք իմանալ, մեծ ազդեցութիւն ունեցաւ: Համոզում կայ, որ եթէ այս դէպքը ճշմարիտ լինի, Եւրոպիոյ վրայ խոր տպաւորութիւն պիտի ընէ եւ հայկական խնդրոյն այնպիսի քայլ մը անել տայ պիտի, որմէ շատ եւ շատ գոհ պիտի լինենք: Պատրիարքը դեսպանաց այցելութեան պիտի շրջակայէ»(3):

Իսկ լուրը գնալով մեծանում էր: Սեպտեմբերի 10-ին «Մշակ»-ը գրում էր այսպիսի մի « սեփական » հեռագիր Իգդիրից. « Լուր կայ թէ Վանի հայերի մէջ ապստամբութիւն է ծագել, սպանուած հայերի թիւը 70 հոգի են, թիւրք սպանուածների թիւը յայտնի չէ: Երկու կողմերն էլ լաւ զինուորուած են »:

1) «Մշակ», 1880, № 139
2) Անդ, № 155:
3) «Մշակ», 1880, № 138:

Բայց կար դրանից աւելի չաղն էլ. Էրզրումից գրում էին Վիեննայի «Փոլիտիշէ Կոռռեսպոնդենց» լրագրին. «Վերջապէս հայերի համբերութիւնն էլ հատաւ եւ նրանք չեն գտնում փրկութեան մի այլ կէտ, բացի նրանից, որ իրենց բողոքը յայտնեն զէնքով: Զէյթունի բարձրութիւնների վրայ բնակւող հայերը ապստամբուեցան — ահա օրւայ նշանաւոր նորութիւնը: Երեւելի եւ ամենից յարգւած Պապիկ իշխանը առաջնորդում է ապստամբներին, որոնք այժմ իրենց յարձակումներով սարսափի մէջ են գցել վերին Հայաստանի կողմերը: Մի ուրիշ շարժման կենտրոնը գետեղւած է հին Բայազէտի հարաւային կողմերում: Ապստամբւած հայերի զօրաբաժինն ամենաստատիկ կերպով ուժ եւ զօրութիւն է ստանում: Սկզբում, երբ 1200 հոգուց բաղկացած մի խումբ, որ դուրս էր եկել Մուշի գաւառից, մինչեւ հին Բայազէտի մօտենալն այնքան բազմացաւ, որ նրանց թիւը հասաւ 2800 հոգու, որոնք արդէն սկսել են գործել: Վանից հաղորդում են, որ այս ապստամբներն այրեցին 7 քրդարնակ գիւղ:

«Այս շարժման օգտին պիտի նպաստէ եւ այն իրողութիւնը, որ Զուլամերիկի կողմերում նոյնպէս ապստամբուեցան հայերը (գլխաւորապէս Նեստորական աղանդի). նրանք հանդիսաւոր կերպով ընդունեցին հռչակաւոր Մար Շիմոնին՝ որպէս իրենց քաղաքական եւ զինւորական գլխաւոր եւ երդւեցին անպայման կերպով հնազանդւել նրան մինչեւ մահ: Մար Շիմոնը առաջ տարաւ իր բանակը դէպի Վանի կողմերը: Դուրս գալուց առաջ, նա դիմեց առաջին գնդերի հրամանատարներին իր ոգելից ճառով, որի մէջ նրանց ուշադրութիւնը դարձնում էր այն կէտի վրայ, թէ որպիսի սրբազան նշանակութիւն ունի սկսւող պատերազմը «ժողովրդի եւ կրօնի համար»: «Հայերը, ասաց նա, ոչնչացան, նրանք արիւնաքամ եղան ճակատագրի ծանր հարւածների տակ: Այժմ աստւածային արդարադատութիւնը զարթեցնում է եւ մեր ազգը մի նոր կեանքով, որը մենք, այնուամենայնիւ, պէտք է մեր արիւնով ստանանք: Ձեր կռիւը պէտք է լինի միայն զինւած ուժերի եւ փաշաների հետ, որոնք կառավարութեան գլխաւորներն են: Բայց ձեզ համար պէտք է մնան որպէս սրբութիւն բոլոր մասնաւոր ցեղերի իրաւունքները եւ մեր երկրի ամէն մի բնակչի պատիւը, ինչ կրօնի եւ ինչ ազգի պատկանէին նրանք. իւրաքանչիւր անկարգութեան համար, որ կարող էր վնասել մեր գործին, ես կը պահանջեմ խիստ պատասխանատւութիւն: Նա, որ զինւորւում է Աստծու եւ ազգի անունով, չպիտի արատաւորէ իր զէնքը անշահ անգթութեամբ:

«Այս շարժումների պատճառով, — շարունակում էր գերմանական լրագրի թղթակիցը, — թիւրք կառավարութիւնը գտնւում էր խիստ անհաստատութեան մէջ: Վանի գլխաւոր Նահանգապետ Սամի փաշան ունի իր ձեռքի տակ զօրքերի շատ աննշան մի թիւ, թէեւ ամենից առաջ վտանգը նրան է սպառնում: Նա ժողովեց, իրաւ է, ռեդիֆներին եւ ձեռք առեց բոլոր միջոցները, որպէսզի Հայաստանում ցրւած զօրքերը կենտրոնացնէ Վանի չորս կողմե-

րում: Նա կանչեց իր դրօշակի տակ եւ քրդերի մի քանի խմբեր: Բայց մինչեւ նա պատրաստւի կատարելու իր պատերազմական գործողութիւնները, կ'անցնեն շաբաթներ եւ շատ կարելի է մինչեւ այն ժամանակը ապստամբները մեծ հարւածներ կտան նրան: Կ. Պոլսից շուտափոյթ օգնութիւն ստանալու յոյս չկայ: Պատերազմական վեզիրը պարզապէս յայտնեց մայրաքաղաքից Հայաստան զօրք ուղարկելու անկարելիութիւնը: Վիլայէթի գլխաւոր քաղաքում, Էրզրումի մէջ, դեռ ամէն ինչ խաղաղ է, բայց այստեղ վախենում են, որ հայ բնակիչների մէջ կյուզւի յանկարծակի շարժում: Դուռը երկար ժամանակ հայերի գլխին խաղ էր խաղում, իսկ այժմ այդ խարդախւած կառավարութեան հին եւ նոր մեղքերը, ինչպէս երեւում է, սարսափելի կերպով պատժւած կը լինեն»[1]:

Եւ այս բոլորը սուտ, այս բոլորի մէջ եւ ոչ մի բառ ճշմարիտ: Բաւական է փոքր ինչ քննական վերաբերմունք եւ, շատ հեշտ կարելի է գալ այն եզրակացութեան, որ ամէն կողմ տարածւած այդ տեղեկութիւնների աղբիւրը մի հատ էր — հայկական եւ ունէր մի նպատակ — ազդել Եւրոպայի դիւանագիտութեան եւ հասարակական կարծիքի վրայ, շտապեցնել Կ. Պոլսի դեսպաններին, ստանալ նրանցից ինքնավարութիւն: Երեխայութի՞ւն էր այս թէ յիմարութիւն: Գոնէ ամաչէին հազարաւոր սովատանջ հայ մանուկներից, որոնք Կ. Պոլիս էին գնում մի կտոր հաց գտնելու՝ դիակներ փռելով իրանց երկար եւ տանջալի ճանապարհին: Հայկական շովինիզմը, կատարեալ գաղանային կերպարանք ստացած, դարձեալ եւ դարձեալ ցոյց էր տալիս, որ թիւրքահայ գիւղացիութիւնը իբրեւ մարդ չէր հետաքրքրում նրան, այլ իբրեւ մարդկային մասկոյտ, որից պէտք էր քաղաքական մի մարմին կոփել, կազմել: Հայկական ապստամբութիւն չկար, բայց նրանք յօրինում էին թղթի վրայ՝ թէ ուրիշների եւ թէ մանաւանդ իրանց խաբելու համար:

Եւ այս շովինիզմի գաղափարախօսը Գրիգոր Արծրունին էր: Երբե՛ք նա կասկած չյայտնեց այդ առասպելական ստութիւնների մասին: Ամէն ինչ նա կարելի էր համարում, նոյն իսկ այն՝ որ մի ամբողջ ժողովուրդ — նեստորական ասորիները — հայ էր դառնում: Այս չէր հակասում «Մշակ»-ի խմբագրի ազգային դաւանանքին: Եւ նա՝ նոյն այդ անորակելի ստերի մէջ՝ նորից ժամանակը հասած էր համարում կրկնել 1876-ի քարոզած իր միտքը թէ՝ ազատութիւն ստանալու համար զէնք պէտք է գործածել, արիւն թափել. բայց այս անգամ աւելացնում էր հետեւեալը.

«Եթէ հայերը ներկայանային Բեռլինի կոնգրեսին քիւրդերին, ասորիներին, եզդիներին եւ այլ ազգութիւններին հայացնելուց յետոյ, ներկայանային որպէս մի զօրեղ, բազմաթիւ ազգութիւն, եթէ, բացի սրանից, կարող էին պարծենալ զէնք գործածելու եւ արիւն թափելու ընդունակութեամբ, —

1) «Մշակ», 1880, № 161:

այն ժամանակ նրանք Բեռլինի կոնգրեսից անհամեմատ աւելի շատ կստանային, քան թէ ստացան, Թիւրքաց հայերն այժմ արդէն ճանաչած կլինէին, որպէս քաղաքական կեանքով ապրելու մի ազգութիւն » (1):

Քրդերին, ասորիներին նա համարում էր հայաստանցիներ: Եւ միայն նրանք չէին, որ պատիւ պիտի ունենային մտնելու հայ շովինիզմի ազգակուլ փորի մէջ: Արծրունու ճաշակին էլ հեռուներն էր թեւակոխում: Այսպէս, նա ասում էր որ կովկասեան ազգերից ոչ մէկը չունի հայերի նման մի կուլտուրական, կենսունակ, զարգացման ընդունակ լեզու, ուրեմն եւ հայերէնը պէտք է առաջնակարգ եւ բարձր լինի: Յետոյ նա խորհուրդ էր տալիս բոլոր մահմեդականներին թողնել արաբական անյարմար տառերը եւ գործածել հայերէն տառերը, որոնք ամէն յարմարութիւններ ունեն նրանց լեզուն ճշտութեամբ եւ հեշտ կերպով արտայայտելու: Կ. Պոլսի թիւրք լրագրներն աղմուկ բարձրացրին, որ հայերը բուլգարներից էլ վտանգաւոր թշնամիներ են, որովհետեւ բուլգարները զէնք էին բարձրացնում թիւրքերի դէմ, մինչդեռ հայերն ուզում են խաղաղ միջոցներով կլանել թիւրքերին եւ քրդերին, ձուլել նրանց իրենց մէջ, ոչնչացնել նրանց կրօնը, ազգութիւնը: Եւ, ի հարկէ, այդ լրագրները չէին բաւականանում աղմուկ հանելով, գանգատներ անելով, այլ եւ պահանջում էին միջոցներ ձեռք առնել, ճնշել, նոյն իսկ կոտորել (2): Խեղճ մշեցի հայի բարակ ու վտիտ վզի վրայ թիւրքական եաթաղանը վճռահատութիւն էր անում լոկ այն պատճառով, որ Թիֆլիսի լիբերալ բուրժուազիայի մի անդամը այսպէս էր հասկանում ազգասիրութիւնը ...

Կար, հակառակ «Մշակ»-ի, աւելի զուսպ եւ զգուշաւոր վերաբերմունք դէպի ընդհանուր հայկական ազատագրութեան լուրերը, եւ այդ վերաբերմունքի ներկայացուցիչը « Մեղու Հայաստանի » լրագիրն էր, որ մինչեւ իսկ հասնում էր այն աստիճանի, որ ասում էր թէ լուրերը շինծու են եւ թէ արհեստական կերպով են տարածւում. բայց այդ լրագիրը իր ժամանակի հասարակական զարգացման ընդհանուր չափանիշն էր — կրօնամոլ, լուսաւորչականութեան համար խաչւող: Նա չէր կարող յաղթահարել «Մշակ»-ի ուղղութիւնը, որ թէեւ ազգային շովինիզմի հասած աստիճանն էր ներկայացնում, բայց զուրկ էր կրօնական նեղ ֆանատիկոսութիւնից: Յաղթութիւնը պատկանում էր ազատագրական գաղափարախօսութեան, որ մինչեւ մեզ ծանօթ ստութիւնների դէմքը, հրապարակ հանեց այնպիսի մի հուժկու եւ անդիմադրելի զէնք, որպիսին էր Րաֆֆու երկրորդ հայդուկային վէպը — «Խենթը», որ մաս մաս տպեց «Մշակ»-ի մէջ եւ մի ամբողջ դարագլուխ կազմեց մեզանում: Շարժումներով, յուզումներով, արհեստական ոգեւորութիւն գրգռելու ճիգերով լի 1880 թւին պակասում էր մի գրական հրձիգութիւն, եւ ահա այդ

1) «Մշակ», 1880, № 160:
2) Տ. Խ. «Գրիգոր Արծրունի», 3րդ հատոր, Թիֆ. 1905, եր. 180-181:

էլ եկաւ. անօրինակ մի երեւոյթ մեր ամբողջ գրական եւ հասարակական կեանքի մէջ:

Այս վէպի նիւթը Րաֆֆին, ինչպէս յայտնի է, վերցրել է այն հայ գաղթականների կեանքից, որոնք 1877-ի ամառը, գեներալ Տ. Ղուկասովի նահանջող զօրաբանակի յետեւից ընկած, թողին իրենց գիւղերն Ալաշկերտի հովտում եւ, քրդերի ահից սարսափահար ու լեղապատառ, փախան մտան ռուսական հողը եւ տարածւեցին Երեւանի նահանգի զանազան մասերում:

Այս մի մեծ ժողովրդական աղէտ էր եւ Րաֆֆուն վիճակւում էր մի բացառիկ յաջողութիւն — տեսնել այդ փախած ժողովուրդը՝ գաղթից հազիւ մի կամ մէկուկէս ամիս անցած, մտնել նրա մէջ, հարց ու փորձ անել եւ իմանալ հանգամանքները, պատճառները, եւ այլն: Այդ բոլորը նա իբրեւ ճանապարհորդ ճշտութեամբ եւ իրական գոյներով նկարագրել եւ տպագրել է (1): Եւ մենք տեսնում ենք այդ նկարագրութեան մէջ բարեկեցիկ եւ ունեւոր, անգամ հարուստ, լաւ պաշտպանւած մի գիւղացիութիւն, որ շշմել էր պատերազմական փոթորիկից եւ, ենթարկւելով այն պրովոկացիային, որ տարածում էին ռուս կոզակները, յանկարծակի եկած, սարսափահար ու գլխապատառ քշւեց դէպի փախուստ ու կորուստ: Ամենահետաքրքրականն այդ ճանապարհորդական նկարագրութեան մէջ այն է, որ Րաֆֆին ամէն քայլում շեշտում եւ ընդգծում է այն հանգամանքը, որ իրենց երկրում այդ գիւղացիները եղել են բարեկեցիկ եւ ունեւոր: Ահա, օրինակ, ի՛նչ էր պատմում այդ փախստականներից մէկը.

« Մեր երկիրը վատ չէր, հողն ընդարձակ էր, իսկ ջուրն առատ. ցանում էինք որքան կամենում էինք: Մենք մեր հողի տէրն էինք: Մեր սարերը խոտաւէտ էին, իսկ մեր անասունները՝ կուշտ ու պարարտ: Մեր հարեւան քրդերը չէին վնասում մեզ. մենք սիրով էինք ապրում միմեանց հետ եւ նրանց քիրվա (կնքաւոր) էինք կոչում: Պատահում էր որ լինում էին աւազակութիւններ, օրինակ, մի խումբ քրդեր ուրիշ երկրից գալով, կողոպտում էին ինչպէս մեր, նոյնպէս եւ իրենց ազգակիցների անասունները. խտրութիւն չէին դնում, մենք էլ նոյնպէս էինք վերաբերւում նրանց հետ: Այդ մեր երկրի սովորութիւնն է:

« Կառավարութիւնը նոյնպէս վատ չէր մեզ հետ. հարկերը թեթեւ էին: Երբեմն միւլթէզիմներն անգթութիւն էին անում, բայց երբ նրանց վրայ գանգատ էր լինում, մեզանից անիրաւացի առածը կրկին մեզ յետ էին դարձնում: Մեր առաջնորդները մէջլիսներում շէյխերի ու դադիների հետ հաւասար ձայն ունէին, եթէ մեզ զրկողութիւն էր լինում, մեր ձայնը հասնում էր մինչեւ սուլթանի պալատը: Եւ քիչ էր պատահում, որ մեր խօսքը չլսէին, որովհե-

1) Րաֆֆի.— « Ճանապարհորդութիւն Թիֆլիսից մինչեւ Ագուլիս » (« Փորձ » 1877-78, № III.):

տե հայի խօսքն աւելի ընդունակ է քան Թիւրքերէնը և կառավարիչ փաշաները գիտէին, որ հայը մահմեդականի վրայ խօսելու սովորութիւն չունի: Այսպէս ամէն կերպ լաւ էին անցնում մեր օրերը (1):

Իսկ մի խումբ գաղթականներ Րաֆֆուն աւելի զարմանալի լուրեր բերին: Նրանք, — ասում էր մեր ճանապարհորդը, — պատմում էին թէ տաճկաց կառավարութիւնը մեծ կորուստ համարեց իր երկրին՝ զրկուելով հայերի նման օգտաւէտ, աշխատասէր ժողովրդից, եւ թէ նա տակաւին յոյս ունի, որ հայերը կը վերադառնան. այս մտքով նա հրամայեց, որ նրանց տները անվնաս եւ ամբողջ պահուեն: Եւ որովհետեւ գաղթականներն իրենց ցանքերը թողել էին առանց քաղելու, տեղական կառավարութիւնը կարգադրեց որ ցանքերը յանձնուեն մահմեդականներին կամ այնտեղ մնացած հայերին այն պայմանով, որ նրանց հնձեն, կալսեն եւ մաքուր ցորենը լցնեն առանձին ամբարներում, որպէսզի, եթէ նրանց տէրերը վերադառնալու լինեն, ուտելու հաց ունենան: Իսկ տեղացիք, որ այս աշխատութիւնը յանձն առան, ստանալու էին բերքի մի փոքրիկ մասը, որպէս վարձատրութիւն: Պատմում էին՝ իբր թէ գաղթականներից ոմանք վերադառնալով իրենց հայրենիքը, արդէն ստացան իրենց թողած հունձքերի պատրաստի բերքը եւ որպէս թէ կառավարութիւնը շնորհեց նրանց եւ այն տասանորդը, որ ինքը պէտք է վերցնէր երկրագործական արդիւնքներից: ... Այլ եւ պատմում էին թէ մի քանի երեւելի քիւրդեր պատժուեցին իրենց գործած անգթութիւնների եւ հարստահարութիւնների մասին. մի քանիսը կախաղան հանուեցան եւ չէյխ Ջալալեդդինին հրամայուեցաւ, որ իր բարբարոս ասպատակները վեր առնի գնայ իր տեղը, այլ եւս պատերազմի չմասնակցի (2):

Այսպէս, ուրեմն, մի ամբողջ աւերակ երկիր՝ եթէ ոչ համատարած Թիւրքաց Հայաստանը, գէթ նրա մի անկիւնը, Արեւելեան Եփրատի վերին հովիտը: Էլ ի՞նչ լաւ բան կարելի է ցանկալ մի գիւղացի ազգաբնակութեան համար: Այսպէս էր Րաֆֆին Սան – Ստեֆանոյի դաշնագրից առաջ, « Ջալալեդդին » հրատարակելուց առաջ: Խնդիրն այն չէ, որ Րաֆֆին իր այս ճանապարհորդական նկարագրութեան մէջ չափազանցութիւններ շատ է մտցրել այն երկրի նկատմամբ, որ դժոխք էր համարւում, բայց նա ներկայացրեց իբրեւ դրախտ: Խնդիրն այն է, որ նա կարելի համարեց տպագրութեան միջոցով այնքան գեղեցիկ գաղափար տալ մի պետութեան մասին, որի կատաղի թշնամին պիտի լինէր ինքը՝ նոյն այդ ճանապարհորդութեան փոշին դեռ իր կօշիկներից չթօթափած: Եւ այսպիսի մի թշնամական զգացմունք արծարծելու եւ հրահրելու մի միջավայր նա ընտրում էր նոյն այդ Ալաշկերտը, նոյն այդ դրախտի կտորը:

1) Երես 217–218:
2) Երես 214:

Իր մօտ եկած գաղթականների մասին Րաֆֆին ասում է թէ նրանք հասարակ մարդիկ չէին, առաջաւոր անձինքներից էին: Իսկ ժողովուրդը, մասսա՞ն: Նրան մենք պէտք է տեսնէինք իր բուն երկրում, ուր տանում է մեզ Րաֆֆին, «Խենթ»–ի մէջ: Բայց այստեղ էլ չկայ այդ մասսան: Մենք թէեւ գիւղի մէջ ենք, բայց ամբողջ ժամանակ, սկզբից մինչեւ վերջ, փակուած ենք գիւղի իշխանաւորի՝ ռէս Խաչոյի տանը կամ, աւելի ճիշտ, ամրոցում, որ շրջապատուած է պարիսպներով, բաւական բարձր, որպէսզի դրսից զանգուածային ժխորը ներս չթափանցէ: Բայց չէ՞ որ Րաֆֆին մեզ բերել է Ալաշկերտի հովտի այս գիւղը, որպէսզի ցոյց տայ թէ ի՞նչ է հայոց հարցը: Ի՞նչ է իսկապէս հայոց հարցը: Դա ռէս Խաչոյի աղջիկ Լալան է, որի վրայ սիրահարւում են երեք հոգի — քիւրդ Ֆաթթան բէկը, հարկերի կապալառու Թոմաս էֆէնդին եւ մաքսանենգ Վարդանը: Ամբողջ հարցն այն է թէ ո՞վ պիտի տիրանայ այդ աղջկան: Ամենից շատ աշխատողը Թոմաս էֆէնդին է, որ եւ պատճառ է դառնում ռէս Խաչոյի տան աւերման:

Բայց Րաֆֆին ուզեցել է, որ այս սովորական դրաման դառնայ հայոց հարցի պատմութիւն: Եւ այս բանը նա յաջողեցնում է ոչ թէ վիպական հանգամանքների բնական միջոցով, այլ մտցնելով նրա մէջ, իբրեւ մի օտար տարր, որ կարող էր եւ չլինել, մի երկար եւ շատախօս հրապարակախօսութիւն: Րաֆֆին նկարագրում է նախապատերազմեան Ալաշկերտը, բայց ինքն այլ եւս նախապատերազմեան Րաֆֆին չէ. նա ապրել է Սան – Ստեֆանոյի եւ Բերլինի դաշնագրերի ժամանակները, դարձել է գլխաւոր հրապարակախօսներից մէկն այն շովինիստական շարժման, որ 1878–ի երկրորդ կէսից առաջ էր նետել՝ հայկական ինքնավարութիւն կորզելու եւրոպական դիւանագիտութեան եւ օսմանեան կառավարութեան ձեռքից: Այդ գաղափարախօսութիւնը նա զարգացրել էր «Մշակ»–ի մէջ տպուած իր հրապարակախօսական յօդուածներում եւ այդ նոյնը մտցնում էր, իբրեւ միջանկեալ խօսակցութիւններ, իր վէպի մէջ:

Միջավայրը, ուր տեղի էին ունենում այդ խօսակցութիւնները, գրաւչութիւն է ստացել Րաֆֆու դէպի այն ունեցած տաք, ոգելից վերաբերմունքից, այդ ռէսի տունն է, մեծ, հարուստ, լիքը եւ անկարօտ: Թէեւ Րաֆֆին ներկայացնում է Խաչոյին իբրեւ բոլոր առաքինութիւնների շտեմարան, բայց հօ վերջ ի վերջոյ նա մի գիւղական իշխանաւոր է, որի մեծ տնտեսութեան մէջ աշխատում են բազմաթիւ վարձու հովիւներ եւ մշակներ: Եւ նա չէր կարող բացառութիւն լինել իր դասակարգի մէջ, չշահագործել ուրիշներին, իր առատ ոսկիներից վաշխով փող չտալ գիւղական ընչազրկութեան, որ թէեւ բացակայում է Րաֆֆու վէպի մէջ, բայց անկասկած գոյութիւն ունէր, այն էլ մեծ չափերով:

Այդտեղ ահա, այդ նահապետական « օրհնեալ » տան օդայում երեւան է

գալիս մի երիտասարդ՝ Դուղուգչեան անունով, որ եկել է Կ. Պոլսից՝ այդ կողմերում յեղափոխական պրոպագանդ մղելու:

Դա է այն անձնաւորութիւնը, որի բերանով Րաֆֆին արծարծում էր Թիւրքաց Հայաստանի յեղափոխութեան գաղափարախօսութիւնը: Այդպիսի տիպ դեռ չէր երեւացել հայ իրականութեան մէջ, եւ դարձեալ ռուս յեղափոխական նարոդնիկութիւնն էր, որ հայթայթում էր Րաֆֆուն ժողովրդի մէջ գնացած յեղափոխականի գեղարուեստօրէն նկարած օրինակը, մարմնացած Տուրգենեւի «Նով» անունով վէպի մէջ, յանձին նրա գլխաւոր հերոս Նեժդանովի: Այդ օրինակից էլ Րաֆֆին արտանկարում էր իր Դուղուգչեանին՝ կարծես ներշնչուած մի տեսակ մարգարէական կանխատեսութեամբ, որ Հայաստանի յեղափոխութիւնը պիտի հիմնուի եւ իրականանայ հայ նարոդնիկների ձեռքով: Հայ Նեժդանովը նոյնպէս անփորձ է, չգիտէ ինչպէս խօսել ժողովրդի հետ, նոյնպէս բաժանում է անգրագէտ գիւղացիներին տպագրուած բրօշիւրներ, նոյնպէս, ժողովրդի հետ խօսք ու զրոյց անելու համար, մտնում է գինետուն, խմում, հարբում, մինչեւ իսկ ծեծւում եւ վերջ ի վերջոյ կալանաւորւում. բայց հայ Նեժդանովն իր ռուս եղբայրակցից աւելի միամիտ է, որովհետեւ հայ ժողովրդի ընդհանուր անգրագիտութեան եւ յետամնացութեան մէջ է գործում, եւ Րաֆֆին կամեցել է, որ նա լինի ոչ միայն քաղաքական պրոպագանդիստ, այլ եւ փիլիսոփայ: Այդ է պատճառը, որ երբ Դուղուգչեանը ռէս Խաչոյին եւ նրա որդիներին ուզում է հասկացնել, թէ պէտք է զէնք ձեռք բերել, սկսում էր բացատրել այդ անհրաժեշտութիւնը Դարւինի թէորիայով (տեսութեամբ), թէեւ այդքան խորը գնալու ոչ մի կարիք չկար, քանի որ ոչ միայն գիւղացու, այլ եւ ամէն մի ապրող էակին յայտնի է անձնապաշտպանութեան բնազդը:

Դարւինի ուսմունքից անցնելով Թիւրքիային, Րաֆֆու հրապարակախօսութեան բերան դարձած հայ Նեժդանովը նոյնպէս երկար ու բարակ բացատրում էր, թէ Թիւրք կառավարութիւնը որոշել է ոչնչացնել հայ ժողովրդին՝ իր ասիական երկիրները չկորցնելու համար: Կարօ՞ղ էր այսպիսի մի միտք արծարծուել Ալաշկերտի հովտում, պատերազմից առաջ: Այս բանի դէմ բողոքողն ամենից առաջ կը լինէր հէնց ինքը Րաֆֆին, ալաշկերտցի գաղթականներին այցելութեան գնացած միջոցին: Վիպագրող Րաֆֆին ոտնատակ էր անում ճանապարհորդ Րաֆֆուն եւ այն, ինչ որ իսկապէս յետպատերազմեան իրողութիւն է դարձել՝ իբրեւ հետեւանք գաղութահայերի ցուցահանած թունդ ազգայնական շարժման, փոխադրում էր պատերազմից առաջ, որպէսզի ցոյց տայ թէ Թիւրք կառավարութեան այդ վճիռը գոյութիւն ունէր վաղուց, անկախ Բերլինի դաշնագրից եւ 1875-ի շարժումներից, մի բան որ պատմականօրէն ճիշտ չէ:

Եւ ի՞նչ միջոց կար Թիւրքահայ ժողովուրդն այդ բնաջնջումից փրկելու

համար: Դուղուգչեանն առաջարկում էր երկու բան—զէնք անձնապաշտպանութեան համար եւ դպրոց: Նա եկել էր այդ երկրորդն էլ իրականացնելու: Բայց այստեղ, դեռ վէպի մէջ կեանք առած առաջին յեղափոխականին Րաֆֆին տալիս էր մի քանի բնորոշումներ, որոնք զարմանալիօրէն ճիշտ հանդիսացան եւ այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը կար իրապէս, եւ նրա մէջ գործողներն այլ եւս վիպական անձեր չէին: Դուղուգչեան ասում էր.

«Ես իմ եւ իմ մի քանի համախոհների դիտաւորութիւնը կատարեալ դոնկիշոտութիւն եմ համարում: Ի՞նչ կարելի է սպասել: Ամբողջ ժամանակ նստել Պոլսում բոլորովին անգործ, չհետազօտել Հայաստանի կեանքը, չուսումնասիրել երկիրը, չծանօթանալ ժողովրդի պէտքերի ու պահանջների հետ, չնախապատրաստել նրան մի լաւ ապագայի համար, — դա հազիւ թէ կարող էր ընդունելութիւն գտնել» (1):

Առողջ բանականութիւնը կարծէք թէ մեռած չէ, երբ պիտի խրատող եւ անշեղ ղեկավարող լինի: Բայց այդ մի վայրկենական զգաստութիւն է, որի դէմ ծառանում է, որին խորտակում է շատ բնորոշ մի այլ սկզբունք:

«Այնուամենայնիւ, շարունակում է նա, մենք չենք վհատում, իմ հաւատքը բնաւ չի խախտւում, ես եւ գուցէ իմ բոլոր համախոհները կ'ընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կը բացանէ մեր հետեւողների առաջ եւ նրանք կ'անցնեն մեր դիակների վրայով»:

Իսկ երբ Խաչոյի որդիներից մէկն ասում է՝

«Մեր դրութեան մէջ, իմ կարծիքով, համարձակութիւնը, անձնավստահութիւնը եւ մինչեւ խենթութեան հասած յանդգնութիւնն աւելի գործ են կատարում, քան թէ իմաստունների լուրջ եւ խոհեմ մտածողութիւնները», պրոպագանդիստը պատասխանում է. «Այդ շատ ճիշտ է. խելացիների խելքը շատ անգամ խաբում է իրանց, եւ խաբուածները այն ժամանակ միայն հասկանում են, որ յիմարացել են, երբ գժերն արդէն իրանց գործը աւարտած են լինում»:

Այս յախուռն խենթային գործելակերպն էլ հիմք է դառնում Թիւրքահայ յեղափոխութեան ոչ միայն Րաֆֆու վէպի, այլ եւ իրականութեան մէջ:

Այնուհետեւ Խաչոյի գիւղում երեւան է գալիս Մելիք Մանսուրը, որ թէ փերեզակ է, թէ զէնքեր բաժանող եւ թէ խմբապետ: Րաֆֆին մոռանում է մեզ ցոյց տալ թէ ինչ արին Մելիք Մանսուրի բաժանած զէնքերը Ալաշկերտի հայ գիւղացիների ձեռքում, երբ միայն այն սուտ լուրը, թէ քրդերը գալիս են, այնպիսի սարսափ տարածեց 3,000 ընտանիքների մէջ, որ նրանք վեր կացան եւ լեղապատառ փախան Ռուսաստան: Նա միայն իր սիրած ու փայփայած ռէս Խաչոյի հարուստ նահապետական տանով է հետաքրքրուած, պատմում է հէնց միայն թէ ինչպէս քար ու քանդ եղաւ մի հայի՝ Թոմաս էֆէնդու ձեռ-

1) «Խենթը», Մոսկուա, 1890, երես 189-190

րով, եւ ասում է թէ Թիւրքահայերի դժբախտութեան ամենամեծ արտայայտութիւնն է այս, հայոց հարցը, հէնց այս է, որ կայ ...

5.

Ես պատմել եմ մի ուրիշ տեղ [1] թէ ինչ տպաւորութիւն եւ ներգործութիւն ունեցաւ «Խենթը» իր ժամանակի հասարակութեան վրայ: Հայդուկային սկզբունքի կատարեալ եւ վերջնական յաղթանակն էր, որ համակում էր բոլոր մտքերն անվերապահ կերպով, իբրեւ մի անխախտ միջոց Թիւրքահայերի փրկութեան: Պէտք էին Դուդուզչեաններ, Վարդաններ, Մելիք Մանսուրներ եւ ամէն մէկը շտապում էր դրանցից մէկն ու մէկի դերի մէջ մտնել: Այս տեսիլներով հմայուած ռուսահայ երիտասարդութեան համար մի տեսակ նուիրական ուխտ էր դառնում զէնք առնելով անցնել Թրքական սահմանը, երեւակայելով թէ այնտեղ շատ պիտի գտնէր Խաչոյի տան նման բարեկից տներ:

Ռաֆֆին դառնում էր մտքերի կախարդ: Նրա գրչի տակ գրականութիւնը ձեռք էր բերում հայերի մէջ չտեսնուած մի հրամայող եւ բռնադատող ուժ: «Մի գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ», ասում էր Ռաֆֆին իր հերոսներից մէկի բերանով, իր «Կայծեր» վէպի մէջ: Այդ մի գիրքը հէնց «Խենթը» պիտի դառնար: Թէեւ նա գրեց եւ «Կայծեր»-ը, երկու խոշոր հատոր, բայց այստեղ չկար «Խենթը»ի պարզորոշ գաղափարախօսութիւնը, բացի միայն այն ռազմագիտական ցուցմունքից, թէ Պարսկաստանի Սալմաստ գաւառը յարմար տեղ է խմբեր կազմելու եւ Թիւրքաց Հայաստան ուղարկելու համար: Այս ցուցմունքին էլ ամենայն հաւատարմութեամբ հետեւում էր Թիւրքահայ յեղափոխութիւնը:

Եթէ մի հատ գրքին տրուած լինէր մի ամբողջ ազգ փրկելու կարողութիւնը, պէտք էր որ այդ գիրքը օժտուած լինէր ամենաբարձր տեսակի գրական-գեղարուեստական կատարելութիւններով: Սակայն Ռաֆֆին այդպիսի գործ չի տուել: Եւ եթէ նա, այնուամենայնիւ, հմայել է, այդ սոսկ այն պատճառով, որ նրա ժամանակն անողորմ վերլուծող, բարձր քննական կարողութեամբ հզօր մի ժամանակ չէր, այլ միամիտ, նոյն իսկ կոյր հաւատի մի ժամանակ, հայ ժողովուրդը դեռ աշուղական հէքեաթներով ապրող մի ունկնդիր էր, որին յափշտակում է արեւելեան վառող եւ ապշեցնող երեւակայութիւնը: Իսկ Ռաֆֆու կարողութիւնը, այդ բնագաւառում, գրեթէ անհուն էր, ինչպէս նա ցոյց է տուել իր «Կայծեր»-ի մէջ: Միայն այն հանգամանքը, որ «Կայծեր»-ի պէս մի գրուածք կարող է պատուաւոր տեղ գրաւել մեր գրականութեան մէջ՝ իբրեւ առաջնակարգ գեղարուեստական գործ, վկայում է թէ որքան աղքատ էին մեր պահանջներն ու հայեացքները եւ համբերատար էր մեր ուշադրութիւնը:

Այսպէս եւ միայն այսպէս էր, որ «Խենթ»-ին վիճակւում էր դառնալ հայ ազգի փրկիչը: Նրա անմիջական ազդեցութեան տակ էր, որ 1881 թ. Էրզրումի

1) Տ. իմ «Անցեալից», Թիֆ. 1925, երես 37:

մէջ կազմւում է առաջին յեղափոխական մարմինը, որ սկզբում կոչւում էր Գերագոյն Խորհուրդ, ապա իւրացրեց «Պաշտպան Հայրենեաց» անունը: Նշանակելի հանգամանք է այն, որ թէեւ այդ առաջին յեղափոխական կազմակերպութիւնը ծնւում է Թիւրքահայերի մէջ եւ Թիւրքիայում, բայց նրա մէջ առաջնակարգ դեր կատարում էին ռուսահայերը: Այսպէս, բժշկապետ Բագրատ Նաւասարդեանն էր, որ, Էրզրում գնալով, նոր կազմակերպութիւն էր տալիս գաղտնի ընկերութեան եւ այնուհետեւ Թիֆլիսից էր ղեկավարում եւ դրամական միջոցներ ուղարկում զէնք գնելու համար:

1883 թ. այս կազմակերպութիւնը Թիւրքաց իշխանութիւնների ձեռքն է ընկնում եւ նրա անդամները, թւով 55, կանգնում էին Էրզրումի դատարանի առաջ՝ մեղադրւելով այն բանի համար, որ նրանք, նպատակ ունենալով հիմնել հայոց թագաւորութիւն, կազմել են մի յեղափոխական ընկերութիւն, Էրզրումի նահանգը օսմանեան տիրապետութիւնից կտրելու համար [1]: Մեղադրւողները զանազան պատիժների դատապարտւեցին, իսկ կազմակերպութիւնը ոչնչացաւ: Այս Թիւրքահայերի առաջին քաղաքական դատն էր: Աբդուլ Համիդի անձնական ռեժիմն արդէն կապարի ծանրութեամբ ճնշում էր ամբողջ Թիւրքիան: Հալածւում էր ամէն ինչ, որ չէր համապատասխանում այդ գազանաբարոյ բռնակալի հայեացքներին ու քմահաճութեան: Հալածանքը միայն հայերի դէմ չէր, այլ եւ երիտասարդ Թիւրքերի եւ առհասարակ այն բոլոր տարրերի դէմ, որոնք փոքր ի շատէ ընդդիմադիր տրամադրութիւն էին յայտնաբերում, իսկ հայերը կարծում էին թէ հալածանքը միայն իրենց դէմ է եւ աւելի եւս հաստատւում էին այն մտքի մէջ, թէ միայն յեղափոխութիւնը կարող է իրենց փրկիչը դառնալ՝ հրաւիրելով իրենց վրայ Եւրոպայի ուշադրութիւնը:

Բայց դաժան սուլթանը երկիւղ չունէր այդ տեսակէտից, քանի որ, իր արտաքին քաղաքականութեան մէջ, նա Թիւրքիան յետ էր տւել եւրոպական կապիտալիզմին, որի սիրելին էր դարձել: Իմպերիալիստական մրցակցութիւնը օսմանեան պետութեան շուրջը գնալով ընդարձակւում էր եւ իր շրջանի մէջ էր առնում նաեւ Եւրոպայի առաջնակարգ միլիտարիստական ուժը ներկայացնող Գերմանիան, որ իր արագ մեծացող արդիւնաբերութեան շահերի համար մօտենում էր Թիւրքիային, նրա պաշտպան էր հանդիսանում: Գուցէ միայն Ռուսաստանը, ինչպէս այս եղել է դարերից ի վեր, շարունակէր գործիք դարձնել Թրքահպատակ քրիստոնեաներին իր շահերի համար, բայց այստեղ էլ, 1881 թ., այն է՝ Աղեքսանդր Բ-ի սպանութիւնից յետոյ, ստեղծւում էր Ալեքսանդր Գ-ի խաւար յետաշրջական ռեժիմը, համիդեան ռեժիմի հոգեհարազատը, որ այլ եւս Թիւրքիայի կործանման չէր հետամուտ լինում, այլ, ընդհակառակը, ձգտում էր մօտենալ նրան, իր պաշտպանութեան տակ առնել նրա

1) «Մշակ», 1883, № 3463:

չահերը: Հիմնուած լինելով օտար ազգութիւնները ճնշելու եւ հալածելու սկզբունքի վրայ, Աղեքսանդր Գ–ի ռեժիմը առանձին մոլեդնութեամբ ընկնում էր հայերի վրայ՝ նրանց ազգային արժէքները ոչնչացնելու համար: Ռուսաց կառավարութիւնը կատաղի, թշնամական դիրք էր բռնում մանաւանդ Թիւրքահայերի հարցի նկատմամբ, եւ այս միանգամայն յուսահատական էր դարձնում այդ հարցի դրութիւնը, որովհետեւ ոչ մի դէպքում նա, առանց Ռուսաստանի համաձայնութեան, որ եւ է լուծում ստանալ չէր կարող:

Յենւելով այդքան նպաստաւոր պայմանների վրայ, Աբդուլ – Համիդը ձեռք էր առնում բոլոր միջոցները, որպէսզի հայերի դրութիւնը միանգամայն անտանելի դառնայ Թիւրքիայում եւ նրանք ստիպուած լինեն թողնել այդ երկիրը: Այս հարուածներն ահագին ուժգնութեամբ թափւում էին հայ գիւղացիութեան վրայ, որ օրէնքից դուրս էր դրւում եւ մատնւում քրդերի ու թիւրք պաշտօնեաների կամայականութեան: Թրքական բանտերը լցւում էին հայ հասարակութեան մէջ փոքր ի շատէ աչքի ընկնող մարդկանցով, թրքական դատարանները գործում էին ամենայն խստութեամբ, մեղադրում էին դատի ենթարկւածներին թէ նրանք ուզում են անջատել Թիւրքիային պատկանող հողամասերը եւ այդ պատճառով դատապարտում էին նրանց ամենածանր պատիժների:

Իրերի այս մռայլ կացութեան մէջ էր, որ 1884–ի հոկտեմբերին մեռնում է Ներսէս պատրիարքը: Մի կարճ ժամանակ կար այս մարդու կեանքի մէջ, գրեթէ երկու տարի (1878 – 1880), երբ նա դառնում էր եւրոպական դիւանագիտութիւնից փայփայւած մի գործիչ, որին հայութիւնը նայում էր իբրեւ իր կարող պաշտպանին եւ փրկչին: Բայց Գլադստոնեան աղէտալի խաղը, որ դնում էր հայոց հարցը եւ, անհուն դրդումներ առաջացնելով մահմեդական աշխարհում, յանկարծ լքում ու դէն էր գցում իր պաշտպանած հարցը, քաղաքական հորիզոնից իջեցնում էր Ներսէսին, համոզում էր նրան թէ որքան սխալուած են եղել ինքը եւ միւս հայերը՝ յոյս կապելով եւրոպական դիւանագիտութեան հետ: Լքուած ու ամէն նշանակութիւն կորցրած, նա մնաց Աբդուլ–Համիդի առանձին համակրանքի առարկայ, մի հանգամանք, որ վկայում է թէ սարսափելի սուլթանը նրան չէր համարում Թիւրքիայի թշնամին, ուստի մերժում էր նրա բազմաթիւ հրաժարականները, եւ վերջ ի վերջոյ, իբրեւ յատուկ շնորհի եւ ուշադրութեան նշան, ընծայում է նրան մի մեծ տուն Օրթագիւղ արուարձանում, ուր եւ բնակութիւն էր հաստատում Ներսէսը: Չնայած, սակայն, այս պերճախօս ապացոյցներին, Ներսէսը մնաց, մինչեւ վերջը, իբրեւ համաժողովրդական հմայք, իսկ նրա մահը համարեց մի անփոխարինելի կորուստ, որ զրկում էր հայութիւնն իր մեծ պաշտպանից:

Իսկ Ներսէսին յաջորդած երկու պատրիարքները նոյն իսկ ընդունակութիւն էլ չունեցան քաղաքական որ եւ է նշանակութիւն ստանալու եւ դարձան կոյր գործիքներ Աբդուլ – Համիդի ձեռքում: Այսպիսով, ամէն կողմից ծանր

պաշարուած հայութեան մէջ հետզհետէ ստւարանում էին այն տարրերը, որոնք միակ փրկութիւն համարում էին կառավարութեան դիմադրութիւն ցոյց տալը: Շատ համարձակներ մնում էին երկրում, կազմում էին հայդուկային փոքրիկ խմբեր եւ կռւում քրդերի դէմ, մի հանգամանք, որ հէնց թիւրք կառավարութեան ցանկացածն էր, քանի որ այսպիսով քրդերը հէնց սկզբից ի վեր դառնում էին հայկական շարժման կատաղի թշնամիները: Բորբոքել էր սկսում այն ազգամիջեան սարսափելի պատերազմը, որ փոխադարձ բնաջնջման անյագ ծարաւ էր զարգացնում երկու հարեւան ժողովուրդների միջեւ եւ մահացու վտանգի տակ էր դնում ամբողջ հայ ժողովրդի գոյութիւնը: Այսպիսի կռիւ սկսող առաջին հայդուկ «յեղափոխականները» գաւառացի անզարգացած տարրերից էին դուրս եկած, ուստի հասկանալի է, որ նրանք, հայ – քրդական յարաբերութիւնների մէջ, փոխանակ մերձեցման եւ երկուսի համաձայնութեան, ընդգրկեցին կոյր եւ նեղ կրօնա – ազգայնական խտրութիւնների ճանապարհը: Բայց ահա շուտով մենք կը տեսնենք եւ այնպիսի տարրեր, որոնք կրթուած եւ զարգացած են, նոյն իսկ «սոցիալիստ» են անւանում իրենց, բայց քրդերի հետ նստել խօսել գիտեն միայն զէնքի, միայն արեան լեզուով:

Եղան դժգոհ տարրերի մէջ եւ այնպիսիները, որոնք, երիտասարդ թիւրքերի նման, համիդեան բռնութիւնների երեսից փախան Արեւմտեան Եւրոպա եւ այնտեղ կազմեցին քաղաքական վտարանդիների շրջանակներ՝ գրեթէ բացառապէս այն նպատակներով, որ ոտքի կանգնեցնեն հինաւուրց Փենիքը — Եւրոպայի հասարակական կարծիքը, նրա միջոցով ճնշում գործ դնեն միջազգային դիւանագիտութեան վրայ եւ հարկադրեն, որ նա սանձահարէ Աբդուլ – Համիդին: 1885–ին, այդ վտարանդիներից մէկը՝ Մկրտիչ Փորթուգալեան՝ հիմնում է, Մարսէյլում, «Արմենիա» հայերէն թերթը, որ առաջին երկու տարում բաւականանում էր բողոքի եւ մերկացնողի դերով: Այս փոքրադիր հրատարակութեան ազդեցութիւնը բաւական խոշոր էր, որովհետեւ մամուլը, թէ Թիւրքիայում եւ թէ Ռուսաստանում, խեղդուած էր, եւ «Արմենիա»–ն միակ ազատ լրագիրն էր, որ տեղեկութիւններ էր հաղորդում Թիւրքիայից, նկարագրում էր գաւառների սարսափելի դրութիւնը եւ թիւրք կառավարութեան գործադրած վայրագութիւնները, միեւնոյն ժամանակ եւ գաղափարական ցուցմունքներ էր ցոյց տալիս, թէ ինչ պէտք է անեն հայերը Թիւրքիայում:

Փորթուգալեանն, այստեղ, այս ղեկավարող դերի մէջ, ոչ մի նոր բան ասել չէր կարողանում, բացի Բուլղարիայի օրինակը ցոյց տալուց, այսինքն՝ կրկնում էր այն, ինչ արել էին Արծրունին, Րաֆֆին եւ ուրիշները: Այս նպատակով Փորթուգալեանը հրատարակում է բուլղարական շարժման պատմութիւնը, բուլղար յեղափոխականների պատմութիւնները, բայց այս կողմից աւելի խոշոր գործ կատարւում էր ռուսահայերի մէջ: Պետերբուրգի հայ ուսանողութիւնը էժանագին ժողովրդական գրքոյկների մի մեծ քանակութիւն

էր հրատարակում, որի մեծագոյն մասը նոյն բուլղարական հայդուկային շարժումներն էր ներկայացնում եւ այսպիսով ինքնըստինքեան թելադրում էր, թէ հայերն էլ նոյն եղանակով պիտի կազմակերպեն կռիւ Թիւրքիայում: Մենք աւելորդ ենք համարում այստեղ նորից խօսել թէ որքան կործարար էր հայերի համար այնպիսի մի հաւատ թէ՝ իրանք էլ կարող էին բուլղարներ դառնալ, հէնց որ սկսէին հայդուկային ապստամբութիւն: Այս մասին մենք մանրամասն խօսել ենք իր տեղում եւ այստեղ միայն ցաւ պիտի յայտնենք, որ նմանութեան (անալոգիայի) արտաքին, խաբուսիկ տեսքն էր գալիս դրդող ու առաջնորդող գործօն դառնալու:

Սակայն, «Արմենիա»-յի ընդգրկած ուղղութիւնը բաւարարութիւն չէր տալիս նրա գաղափարակիցներից մի քանիսին, որոնք բաժանւում են եւ Լոնդոնում հիմնում մի « Անգլօ – հայկական կոմիտէ », որ եւ 1887-ից սկսում է հրատարակել « Հայաստան » անունով մի թերթ՝ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Այս հատւածն առաջ է քաշում այն գաղափարը, թէ հայոց հարցը կարող է լուծւել եւ պիտի լուծւի միմիայն Եւրոպայի ձեռքով, միմիայն դիւանագիտական ճանապարհով: Այս պատճառով «Հայաստան»-ի խմբակը աշխատում էր Եւրոպայում հայերի եւ նրանց դատի վերաբերմամբ համակրական տրամադրութիւն ստեղծել: Դրա համար նա, մի կողմից, ներկայացնում էր Թիւրքաց Հայաստանի թշւառ դրութիւնը, միւս կողմից, դիւանագիտական դիմումներ էր անում, խնդրում էր նշանաւոր պետական, հասարակական, գրական ու գիտական գործիչներին կարծիք յայտնել հայոց հարցի մասին եւ տպագրում էր նրանց գրած նամակները: Ամէն մի ճառախօսութիւն, որ տեղի էր ունենում հայերի մասին անգլիական պարլամենտում, իսկոյն տպւում էր «Հայաստան»-ի սիւնակների մէջ, կամ ինչ տպւում էր « Կապոյտ » գրքում, իսկոյն թարգմանւում էր նոյն էջերում: Ոչ միայն անգլօ – հայկական ընկերութեան, այլ եւ ամբողջ հայ ժողովրդի առաջին բարեկամը համարւում էր Գլադստոնը, որ այժմ այլ եւս մինիստր չէր, հետեւաբար կարող էր ճառել մարդասիրութեան, ազգերի ազատութեան, եւ այլնի մասին:

Այսպէս ահա, « Հայաստանի դիւանագէտները շատ լուրջ գործ կատարած էին համարում հաւաքելով կարծիքներ, համակրանքներ եւ բարի կամեցողութիւններ յօգուտ թիւրքահայերի: Այս ժողովարարութիւնը ցոյց էր տալիս, որ, եթէ Եւրոպայում մնացել է մի երկիր, որի հետ կարելի է խօսք ու խնդրանք ունենալ հայերի մասին, այդ դարձեալ Անգլիան էր: Եթէ ռուսական արջը չորս թաթերով դէն էր հրում հայերին, անգլիական դիւանագիտութիւնը թեր էր մնում այն սկզբունքին թէ՝ ոչ մի բան չպէտք է արհամարհել յաջողութիւն գտնելու համար: Այժմ, երբ նրա ոխերիմ հակառակորդ Ռուսաստանն այնպիսի կերպարանք է ուզում ցոյց տալ թէ հաշտւել պէտք է Թիւրքիայի հետ եւ նոյն իսկ բարեկամանալ, նա, ընդհակառակը, աշխատում էր լինել այնպէս, ինչպէս Ռուսաստանն էր Ալեքսանդր Գ-ից առաջ, այն է՝ բա-

րեկամ լինել Թիւրքիայի ժողովուրդներին՝ հակառակ թիւրք կառավարութեան: 1885 թ., Արեւելեան Ռումելին, որ Բերլինի կոնգրեսը, Անգլիայի պահանջով, կտրել էր Բուլղարիայից եւ տւել Թիւրքիային, յեղափոխութեան միջոցով նորից միացաւ Բուլղարիային: Եւ ահա ցար Ալեքսանդրը, որի դերը 1876 թ. Բալկանեան հրդեհի մէջ մեզ արդէն յայտնի է, չէր ընդունում այդ միացումը, ասել է՝ բռնում էր այն դիրքը, որ գրաւել էր Անգլիան Բերլինի կոնգրեսում, մինչդեռ մարկիզ Սալսբիւրին, որ այն ժամանակ Անգլիայի կառավարութեան գլուխն էր, ընդունում էր բուլղարական յեղափոխութիւնը, այսինքն՝ ընդգրկում էր այն վերաբերմունքը, որ ունէր Ռուսաստանը Սան – Ստեֆանոյի եւ Բերլինի կոնգրեսների մէջ. դերերն այսպիսով արմատապէս փոխւել էին: Ահա այս հանգամանքն էլ հայ գործիչներին աւելի եւս հաստատում էր նախկին անվերապահ անգլօսիրութեան մէջ:

«Հայաստան»-ի խմբակի այս գործունէութիւնը, որ յենւած էր կազմակերպութեան վրայ, վախ էր ներշնչում Փորթուգալեանին թէ՝ իր « Արմենիա»-ն կարող է կորցնել իր նշանակութիւնը, ուստի նա էլ գալիս էր այն եզրակացութեան, թէ պէտք է կազմակերպւել: Այս միտքն նա արտայայտում էր այսպէս.

« Յայտնի է «Արմենիա»-յի մշտական ընթերցողներին, որ մենք սկզբէն ի վեր յայտնած ենք թէ մենք հակառակ չենք եւրոպական մամուլին եւ տէրութիւններին դիմումներ անելու. այդ մեր իրաւունքն է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածովը, որմէ, ի հարկին, օգուտ քաղելու ենք. բայց լոկ դիմումներ ամուլ եւ ապարդիւն կը մնան, տղայական կը լինեն, եթէ բուն իսկ Հայաստանին մէջ զօրաւոր շարժումներ չգոյանան. ուստի պէտք էր մեր մէջ զօրացնել մի ներքին ուժ եւ այդ նպատակով կազմակերպւել: Արդ՝ քանի որ մեր ծրագրէն դուրս չէ նաեւ եւրոպական պետութիւններին դիմումն ի հարկին, ինչո՞ւ համար միշտ բաժանման կձգտէին անոնք որ այժմ «Հայաստան»-ի խմբակը կազմած են: ... «Արմենիա»-յի խմբագրութիւնը իր առաջին տարիներին կը բաւականանար միայն գաղափարներ տարածելով եւ կսպասէր, որ նպատակին համար մի ընկերութիւն կազմակերպելու գործին ուրիշներ աշխատեն: Այժմ որ ինքնակամ մեզնէ բաժանւած են անոնք, որոնք կըսեն թէ իրենց պաշտօնն է միայն օտարի գթութեան դիրկն առաջնորդել հայ ազգը, մենք պարտաւորւած ենք առաջին մեր գաղափարակիցներով կազմակերպել այլ եւ մի ընկերութիւն եւ այս եզրակացութեան եկած ենք արդէն մեր քաղաքական գործիչների բարեկամներէն շատերի խորհրդով »:

Եւ վերջացնում էր այս յայտարարութիւնը հետեւեալ դիմումով.

« Հայրենակիցներ, բախտն այնպէս բերած է, որ այսօր թիւրք կառավարութեան դէմ կռւի դաշտին վրայ կգտնւենք դրչով: Պատերազմի գործիքն ինչ որ ալ լինի, պատերազմի գործը կպահանջէ անվեհերութիւն, աշալրջու-

թիւն եւ կարգապահութիւն: Գիտնանք ուրեմն այլ եւս մեր կարգերը եւ կազմակերպուենք »:

Եւ Փորթուգալեանը կազմակերպում է մի ընկերութիւն՝ « Հայոց հայրենասիրական միութիւն » անունով: Այդ նախապէս մի ընկերութիւն էր «Արմենիա»-յի հրատարակութիւնն ապահովելու համար, բայց նրա վրայ բարդւում էր այնպիսի գաղափարախօսութիւն, որ նա դառնում է առաջին կազմակերպուած, որոշ ծրագրով գործող եւ լայն պրոպագանդով ինքն իրան յայտագործող մի գաղութային ընկերութիւն:

Այդ գաղափարախօսութիւնը, սակայն, շատ խեղճ է ու նախնական: Ինքը՝ Փորթուգալեանը յեղափոխական բնաւորութիւն չէ, ընտրել է Թիւրքիայի դէմ գրչով պատերազմելու հանգիստ պաշտօնը, բայց յաւակնութիւն ունի իրագործելու Բուլգարիայի օրինակի էական կենտրոնական մասը — շարժումներ առաջ բերել Հայաստանում, որպէսզի Եւրոպան միջամտէ: Ոչ մի նորութիւն չկար այս գաղափարի մէջ. դա բուլգարական կոտորածների կրկնութիւնն էր, որ առաջին գաղափարախօս Արծրունին Հայաստանի ազատութեան պայման էր յայտարարում դեռ 1876-ին: Մանուածապատ դարձուածքներով, կարծէք վախվխելով էր Փորթուգալեանը յայտնում, թէ ինչ պիտի բերէր Հայաստանին իր « Հայրենասիրական միութիւն»-ը: Նա ուզում էր Հայաստանի համար ոչ թէ ինքնավարութիւն, այլ անկախութիւն (1): Ի՞նչ հնարներով կարելի է ձեռք բերել այդ անկախութիւնը: Եւ « Հայրենասիրական միութիւն»-ը պատասխանում էր. « Հնարները զանազան են նայելով հանգամանքներին — երբեմն զէնքով, երբեմն փողով, երբեմն օտարի օգնութեամբ » (2): Բուրժուական խաւերը չվախեցնելու համար՝ « Միութիւնը » հաւատացնում էր թէ պատերազմի մէջ զարնուածների մի փոքր տոկոսն է միայն մեռնում, թէ մահն այդտեղ տանջալից չի լինում եւ սարսափելի չէ եւ այլ այսպիսի հանգստացումներ ու մխիթարանքներ էր տալիս. բայց ամենից հրաշալին այն էր, որ կարծում էր թէ Հայաստանի անկախութիւնը կարելի է նոյն իսկ փողով էլ գնել:

Թէեւ այսքան խղճուկ էր «Արմենիա»-յին կից հաստատուած քաղաքական կազմակերպութեան գաղափարախօսութիւնը, բայց եւ այնպէս նրան վիճակւում էր որոշ դեր կատարել հայ կեանքի մէջ: Նրա ազդեցութեամբ էր, որ Հայաստանի հողի վրայ առաջ էր գալիս Արմենական կուսակցութիւնը՝ իբրեւ ներկայացուցիչ ակտիւ յեղափոխական գործունէութեան:

1) Անդ, № 50, 51:
2) «Վարդապետարան Հայաստանի Ազատութեան», Մարսէյլ, 1891, երես 5:

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1.

Բայց միայն անգլօ - հայկական ընկերութեան հետ մրցելու հանգամանքը չէր, որ մղեց Փորթուգալեանին դէպի « Հայոց հայրենասիրական միութիւն » կազմակերպելու եւ նրան Հայաստանի մէջ շարժումներ առաջացնողի դերը յատկացնելու անհրաժեշտութիւնը: Կար եւ մի ուրիշ երեւոյթ, որ ոչ պակաս հզօր դրդիչ էր հանդիսանում, բայց որն այդ միջոցին դեռ հազիւ հող սաղմնաւորելու շրջանն էր ապրում:

Ժընեւում ապրող հայ ուսանողներից կազմուած մի փոքրիկ խմբակ էր այդ՝ ընդամենը 5 - 6 հոգուց բաղկացած: Այդ երիտասարդները «Արմենիա»-յին համակրողներից էին եւ նոյն իսկ գրում էլ էին նրա մէջ: Բայց ահա նրանք էլ, դարձեալ 1887-ին, անջատուեցին Փորթուգալեանի շրջանից, ինչպէս անջատուել էր Լոնդոնի « Հայաստան » թերթի խմբակը եւ հիմք դրին մի փոքր պարբերական հրատարակութեան, տալով նրան « Հնչակ » անունը, որին վիճակւում էր մի մեծ հռչակ:

Նրա կանոնաւոր հրատարակութիւնը սկսւում էր 1888 թ., որին եւ մենք սխալուած չենք լինի, եթէ յատկացնենք հայ տարեգրութիւնների մէջ խոշոր դարագլխային նշանակութիւն:

Եթէ այդպիսով արտասահմանի հայ մտաւորականութիւնը համարենք խմբուած « Արմենիա » լրագրի շուրջը, եւ հէնց այնտեղ էլ շերտաւորման ենթարկուած, մեր առջեւ մենք կ՚ունենանք հասարակական առաջաւոր, տիրապետող դասակարգը, առեւտրական կապիտալի սնուցած խոշոր բուրժուազիան, որի մէջ ճեղքուած է գոյանում՝ տրոհւելով երկու հակադրութիւնների — մէկը՝ «Հայաստան»-ի խմբակը, ընդգրկում է ցուցամոլ եւ հանդիսակատար նացիոնալիզմը, այն է՝ Հայաստանի չարատանջ գիւղացիութեան փաստաբանի այցետոմսով մուտք գործել ազնուապետական բարձր շրջանները, գիտ-

նադիտական սալոնների այցելու դառնալ, դիւանագէտներին յատուկ ռեդինգոթներով եւ ցիլինդրներով, նաեւ դիւանագիտական հարկինքների սեղանների ծայրերում, մի խօսքով, ազգասիրական փառք վայելել: Բուրժուազիայի միւս մասը, որ մնացել էր «Արմենիա»-յի հետ, այդքան բարձր ճաշակաւոր դիւանագիտական արիստոկրատիա չունէր, բայց նոյնպէս ազգասէր դիւանագէտ էր եւ փայփայում էր այն միտքը թէ Թիւրքաց Հայաստանի ազատութիւնը կարելի է եւ փողով գնել՝ առանց բուրժուական փոքրամասնութիւնը Թրքական գնդակներից ծակծակելու վտանգին ենթարկելու: Շեշտե՛նք այստեղ, որ խոշոր բուրժուազիայի այդ երկու հատուածներն էլ միատեսակ ենթարկւած էին հայ կղերական դիւանագիտութեան՝ հանդիսանալով նրա հարազատ զաւակները:

Սակայն հայ հասարակական կեանքի մէջ միակ գործակատարը չէր խոշոր բուրժուազիան: Հետզհետէ առաջանում էր եւ դիրք էր ստանում մինչեւ այդ աննկատելի մնացած մանր բուրժուազիան: Եւ ահա այդ հասարակական կատեգորիայի գաղափարախօսութիւնն էր, որ մտցնում էր հայկական հարցի մէջ Ժընեւի ուսանողական խմբակն իր «Հնչակ»-ով: Նա դառնում էր այն ժամանակի հայ հասարակական մտքի ծայրայեղ ձախակողմեան թեւը: «Հընչակ»-ը հայ սոցիալիստ յեղափոխականների բերանն էր:

Մենք շուտով կը տեսնենք, որ այդպիսի երեւոյթը՝ «Հնչակ»-ը՝ աննախընթաց մի նորութեան հանգամանքը չունի իր էութեան կենտրոնում, այլ իսկապէս վերածնունդ էր այն հոսանքի, որ դեռ 60-ական թւականների սկըզբին ներս էր խուժում հայ իրականութեան մէջ. բայց այնքան միայն կարողացաւ անել, որ տւեց իր առաջին ծաղիկը՝ Միքայէլ Նալբանդեանին: Այստեղ պէտք է ասենք միայն այն, որ այդ վերածնունդը չափազանց բեղմնաւոր էր, չափազանց հուժկու եւ այս մինչեւ այն աստիճան, որ նա կարողացաւ խորախոր ակօսներ փորել ամբողջ հայութեան ճակատագրի մէջ, անյաղթելի արգելառիթ ամբարտակներ կանգնեցնել հայ ժողովրդի պատմութեան ընթացքի մէջ, բռնի կերպով յեղաշրջել այդ ընթացքը եւ տանել նրան բոլորովին ուրիշ հունով: Զուր չէր որ մենք վերեւում ասացինք, թէ 1887 – 1888 թ. դարագլխի նշանակութիւն ունեցող տարիներ պիտի համարենք հայ կեանքի պատմութեան մէջ: Այս մի պատիւ է, իր էութեամբ շատ տխուր, որ միայնակ «Հնչակ»-ը չէ նւաճել, այլ եւ նրանից աւելի մեծ չափերով, եւ նրանից յետոյ ծնւած, բայց նրա երկւորեակ «Դրօշակ»-ը: Սրանք երկուսով մտցրին հայութիւնը մի քրոնիկական ազգամոլութեան յեղափոխութեան մէջ, դարձրին հայ ժողովուրդը մշտապէս ողբալի պայմանների մէջ պատերազմող ժողովուրդ, որի կեանքը, երեսուն տարիների մի կարճ տարածութեան վրայ, լիքն է արիւնոտ փոթորիկներով: Այս երեսնամեակն ինքնըստինքեան մի բազմահատոր ահուելի պատմութիւն է:

Մենք այդ պատմութեամբ չպիտի զբաղւենք: Մի կողմ ենք թողնում հայ

ժողովուրդն իր երեսնամեայ յեղափոխական պատերազմի հետ եւ միայն պիտի հետեւենք այն գաղափարախօսութեան, որ ղեկավարել եւ սնուցել է այդ պատերազմը, որ այսօր անգնահատելի վաւերագիր է պատմաբանի ձեռքում՝ ամփոփւած լինելով յեղափոխական կուսակցութիւնների պաշտօնական հրատարակութիւնների մէջ:

2.

Եթէ «Հնչակ»-ի բերած հասարակական հոսանքը, ինչպէս վերեւում նկատեցինք, անցողակի, միանգամայն աննախընթաց չէր, ինքը, ինչպէս պարբերական մամուլի օրգան, մի դեռ չտեսնւած երեւոյթ էր հայ մամուլի պատմութեան մէջ: Առաջին անլեգալ թերթն էր նա, ծածուկ եւ ձրի բաժանւող, առանց բաժանորդագրութեան: Իր այս յատկութեամբ նա գալիս եղբայրանում էր, մարմին ի մարմնոյ և ոսկր յոսկերաց էր դառնում ռուս էմիգրանտական մամուլի հետ, որ, իբրեւ ռուս բռնակալական պետութեան որդինք, վաղուց էր արմատ գրել եւրոպական ազատ մի երկու երեք հողի մէջ եւ այդտեղից աշխատում էր ղեկավարել եւ դաստիարակել հասարակական միտքը Ռուսաստանում, հակացարական ուղղութեամբ: Ճիշտ այսպիսի առաքինութիւն էլ «Հնչակ»-ն էր ստանձնում, բայց յատկապէս Թիւրքիայի վերաբերմամբ:

Իր բովանդակութեամբ էլ այդ թերթը նոր, իր նմանը չունեցած երեւոյթ էր հայութեան մէջ: Յեղափոխութիւն, յենւած սոցիալիզմի վրայ, բայց առայժմ ոչ – սոցիալիստական — ահա ի՛նչ էր նրա սրբութիւն սրբոցը: Իր այս ուղղութեամբ «Հնչակ»-ը մի գնահատելի փաստ է, նոյն իսկ ոչ յատուկ Թիւրքահայ հարցի տեսակէտից, այլ առհասարակ հայ հասարակական մտքի զարգացման տեսակէտից: Առաջին 3 – 4 տարիների ընթացքում թերթը երկարօրէն զբաղւել է գաղափարախօսական հարցերով, ընդարձակ յօդւածների մէջ արծարծելով, կրկնելով եւ երեքկնելով իր սոցիալ – տնտեսական մերձեցումներն ու հիմնաւորումները: Ա՛յս է կարեւորը: Ինչ էլ ասելու լինենք այդ տեսական հայեացքների արժէքի մասին, դարձեալ իրողութիւն կը մնայ այն, որ «Հընչակ»-ի էջերում հայ հրապարակախօսութիւնը սկսել է իր մայրենի լեզւով թոթովել «սոցիալիզմ», «կապիտալիզմ» համամարդկային տերմինները, ծանօթացնել նրանց հետ հայ ընդհանրութեան դեռ անշարժ տիրացուական միտքը, փորփորել նրա թանձր զանգւածը եւ մտցնել նրա մէջ կայծեր, յեղաշրջիչ հասկացողութիւններ շահագործողների եւ շահագործւողների մասին, խարսխել կեանքի առեղծւածների պարզաբանութիւնը տնտեսական հիմքերի վըրայ, եւ այլն, եւ այլն:

Այս բոլորը շատ լաւ էր, շատ նոր, շատ թարմ: Եւ այս բոլորն, անշուշտ, անուրանալի ծառայութիւն էր, որ Ժընեւում սաղմնաւորւած շարժումը, — անւանենք նրան, հէնց այս գլխից, Հնչակականութիւն, — մատուցանում էր հայ ժողովրդական գործին դրական, շինարար մի ծառայութիւն: Նոր, մատերիալիստական հրապարակախօսութեան լեզուն, ոճն անգամ, ջղուտ, երի-

տասարդ կռուարարութեամբ լի եւ եռանդաշատ, միաժամանակ եւ զուսպ ու վայելուչ, իր ամբողջ համառօտութեամբ հանդերձ, ամենեւին չնմանող մեր այն ժամանակուայ բուրժուական թերթերին, սանձարձակ յիշոցարան լեզուին, — այս էլ նոյն իսկ, ասում ենք, մի արժէքաւոր ստացւածք էր հայ մտաւոր անդաստանում: Եւ եթէ «Հնչակ»-ի այդ հրապարակախօսութիւնը մնար լոկ դրական մի աշխատանք, իբրեւ սոցիալիստական գաղափարների պրոպագանդ, գաղափարներ, որոնք անհրաժեշտ կարիք ունէին դեռ շատ ծեծւելու իրենց շատ խակութիւններից զտւելու եւ անվիճելի գիտական բովանդակութիւն ստանալու համար, — այն ժամանակ գալող սերունդները կարող կը լինէին ամենայն վստահութեամբ ասել թէ «Հնչակ»-ի սոցիալիստական հրապարակախօսութիւնը մի մեքենական սկզբնաւորութիւն չէր, ծառայական նշանակութեամբ չէր երեւացել մեր մէջ, այլ ճիշտ որ եղել է մի դրական խոշոր երեւոյթ:

Խնդիրն ահա հէնց այստեղ է, այս երկու բառերի մէջ — մեքենական, ծառայական: Սոցիալիզմը հնչակեան հրապարակախօսութեան մէջ մի անկախ հասարակական շարժում չէր, այլ ծառայեցնում էր Թիւրքահայերի հարցին: Չլինէր այդ հարցը, չէր լինի եւ «Հնչակ»-ը, թէեւ հայ ժողովրդի հասարակական զարգացման գործը անհրաժեշտ պահանջ դարձրած լինէր սոցիալիստական հրապարակախօսութիւնը: «Հնչակ»-ը կապում էր սոցիալիզմը Թիւրքահայ գիւղացու անունից սկսւած քաղաքական շարժման հետ:

Այս երեւոյթի առջեւ պէտք է կանգ առնել՝ նրան մանրամասնօրէն դիտելու եւ ուսումնասիրելու համար: Ահագին կարեւորութիւն ունեցող մի անհրաժեշտութիւն է այս եւ, եթէ պարզւի ու մերկացւի նա ամենայն աչալրջութեամբ, այն ժամանակ մենք կարողութիւն կ'ունենանք ուղղակի մօտենալ այն ահաւոր հարցին թէ ինչի՞ց էր որ ոչնչացաւ առնւազն երկու միլիոն անհատներից բաղկացած Թիւրքահայ ժողովուրդը: Այսպիսով հնչակեան սոցիալիզմի վրայ բարդւում է անհուն չափերով ծանր մի պատասխանատւութիւն, որի էութիւնը մենք պարզած կը լինենք, եթէ պարզենք թէ ինչ տեսակ սոցիալիզմ էր հնչակեան սոցիալիզմը:

Դիմելով այս հարցին, մենք առաջ ու առաջ ուղեցոյց թելեր գտնում ենք այն հանգամանքի մէջ, որ «Հնչակ»-ի ղեկավարներն իրենց անւանում էին սոցիալիստ – յեղափոխական: Այս անւանումը, սպեցիֆիկ ռուսական, մտցընում է մեզ ռուսական առանձնայատուկ սոցիալիստական վարդապետութեան մէջ, որ նախկին նարոդնիկական սոցիալիզմի շարունակութիւնն էր: Եւ երբ ծանօթանում ենք հնչակեան սոցիալիզմի հետ ամբողջովին, տեսնում ենք նրա մէջ մի ամբողջ շրջան, առաջին, կարեւոր, կազմակերպչական, երբ իրօք հնչակեան գործիչները իրենցով վերակենդանացրել են մեզ լաւ ծանօթ նարոդնիկութիւնը: Միքայէլ Նալբանդեանի մահից անցել էր մի ամբողջ քառորդ դար, բայց հայոց երիտասարդութեան համար ուսուցիչները մնացել էին նոյ-

նը, հները — Հերցէն, Բակունին, Լավրով, Չերնիշեւսկի: Հասկանալի է, որ ռուս քաղաքական վտարանդիութեան այնպիսի մի խոշոր կենտրոն, որպիսին էր Ժընեւը, հէնց այդպիսի դաստիարակչական ազդեցութիւն էլ պիտի ունենար «Հնչակ»-ի հիմնադիրների վրայ, որոնք կամ ռուսաստանցիներ էին, կամ ռուսական կրթութիւն ստացած:

Մի շարք արտաքին նշաններ միանգամայն հաստատում են այս հանգամանքը. հէնց ինքը թերթի անունը — «Հնչակ» — չի՞ յիշեցնում արդեօք Հերցէնի հռչակաւոր «Կոլոկոլ»-ը, որ այնքան հզօր եւ հմայիչ ազդեցութիւն է ունեցել իր ժամանակի ռուս հասարակութեան վրայ [1]: Ցետոյ, հնչակականութեան համար հեղինակութիւն էր ռուս նշանաւոր սոցիալիստ Պ. Լավրովը [2]: Իսկ թէ ինչպէս էր նա վերաբերւում Չերնիշեւսկուն, ցոյց են տալիս այս ոգեշունչ տողերը նրա յիշատակին նւիրւած մահացուցակից. «Եւ կրթելով այդ սերունդներին Նիկոլայ Գավրիլովիչը կրթել է բաւականաթիւ ռուսահայ երիտասարդներ, որոնք միշտ կրելով իրենց սրտում մեծ մարտիրոսի վեհ կերպարանքը եւ տոգորւած խորին երախտագիտութեամբ դէպի նա, ողբում են իրենց մեծ ուսուցչի անփոխարինելի կորուստը՝ միշտ իրենց աչքի առաջ ունենալով նրա ազնւամիտ կեանքի եւ գործունէութեան մեծ օրինակը»:

Առաջ տանելով մեր փաստերը եւ մնալով շարունակ «Հնչակ»-ի սկզբնական, այն է՝ կազմակերպչական շրջանում, մենք լաւագոյն ապացոյցներ չենք գտնի, քան թէ տալով ընթերցողին այնպիսի կտորներ գաղափարախօսութիւնից, որոնք բացայայտօրէն մատնում են իրենց նարոդնիկական ծագումը: Հետեւեալ հատւածը մենք տեսնում ենք «Նոր հոսանք» վերնագիրը կրող չափազանց երկարաբան եւ ձգձգւած սկզբունքային յօդւածում.

«Եւրոպական ժողովուրդներն անցնելով կեանքի զարգացման զանազան ֆազիսներ, իրերի ընթացքի զօրութեամբ, բնական կերպով եկել հասել են այդ կէտին՝ սոցիալիզմին: Եւ նրանք հասել են սոցիալիզմին կապիտալիստական արդիւնագործութեան շրջանից, ֆազիսից յետոյ: Այդ ֆազիսի մէջ հայ ժողովուրդը դեռ չի մտել եւ եթէ վաղ թէ ուշ այդ քայլն էլ անէ, դա կը լինի, բացի ուրիշ ներքին պատճառներից, նոյնպէս եւրոպական կապիտալիստական արդիւնագործութեան ազդեցութեան շնորհիւ: Բայց դա դեռ չի նշանակում, որ հայ ժողովուրդն անպատճառ պէտք է անցնէ եւրոպական կապիտալիստական արդիւնագործութեան ֆազիսը, ինչպէս նա անցել է եւրոպական ժողովուրդների տնտեսական կացութեան մի քանի նախկին ֆազիսները: Եւրոպա-

1) Մեզ, դժբախտաբար, չյաջողւեց գտնել «Հնչակ»-ի առաջին թիւը, բայց մեր նշանաւոր գրողներից մէկը հաւաստեց թէ ինքն առիթ է ունեցել Ժընեւում համեմատելու «Հնչակ»-ի թիւ 1 համարի առաջնորդողը «Կոլոկոլ»-ի թիւ 1-ի առաջնորդողի հետ և գտել է մեծ նմանութիւն երկուսի մէջ, նոյն իսկ արտայայտութեան եղանակի կողմից էլ:

2) Աւելորդ կրկնութիւններից խուսափելու համար, մենք «Հնչակ»-ից վերցրած մէջբերումներից յետոյ, անմիջապէս փակագծի մէջ նշանակում ենք տարին՝ հռոմէական եւ №-ը՝ արաբական թւանշաններով:

կան ժողովուրդների այժմեան անտանելի թշուառ վիճակը եւ դրա պատճառները մեզ, հայերիս համար հանդիսանում են գեղեցիկ դաս ու խրատ: Աչք խփել եւրոպական ներկայ ժողովուրդների առջեւ, որ առաջացրել է կապիտալիզմը, մեզ ներելի չէ: Աջակցել այդ կապիտալիզմին մուտք գործելու մեր ժողովուրդի մէջ, քանի որ եւրոպական ժողովրդների այդ առաջադէմ գործիչները տեսնելով ու ապացուցանելով նրա՝ կապիտալիզմի՝ բոլոր մեծամեծ չարիքները, աշխատում եւ գործում են այսօր կործանել նրա անիրաւ սեփական կարգերը՝ յանուն սոցիալիզմի, աջակցել, ասում եմ, կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մէջ, — յանցանք է» (II, 1):

Այս փիլիսոփայութեան մէջ զուտ հնչակեան ոչինչ չկայ: Նա ամբողջովին, բառ առ բառ, արտագրուած է նարոդնիկական գաղափարախօսութիւնից, որի հիմունքների հետ մենք ծանօթացել ենք այս գործի դեռ առաջին գլխում: Ողջ «ինքնուրոյնութիւնը», որ երեւում է վերեւի մէջբերումի մէջ, այն է, որ «ռուս ժողովուրդ» բառերի տեղ դրուած են «հայ ժողովուրդ» բառերը: Զարմանալի կերպով անշարժ էր մնացել, 25 տարիների ընթացքում, եւ հայ երիտասարդութեան կատարեալ անտեղեակութիւնը հայկական իրականութեան, որ մենք տեսանք այնքան խոշոր չափերով Միքայէլ Նալբանդեանի մօտ:

«Հնչակ»-ի հիմնադիրները դեռ չէին տեսնում արդիւնագործական կապիտալիզմի մուտքը հայերի մէջ 1888 թ., մինչդեռ նա, այդ կապիտալիզմը, վաղուց, դեռ 1850-ական թւականներից էր սկսել հաստատել մեր մէջ՝ նախ մեծ կապիտալիստական տնայնագործութեան, ապա ապշերոնեան նաւթագործութեան միջոցով եւ «Հնչակ»-ի ծնունդից դեռ 10 տարի առաջ, նա, այսինքն՝ դարձեալ այդ կապիտալիզմը, Բաքուի մէջ ճչում էր իր պատանի թոքերի ամբողջ եռանդով: « "Соучастники". » նաւթարդիւնաբերական ընկերութիւնը, որի անդամների մեծագոյն մասը հայեր էին, տալիս էր տարեկան դիվիդենտ, 1877 թ. համար, իւրաքանչիւր բաժնին (փայ) 3420 ռ., մինչդեռ ինքը բաժինն արժէր 2000 ռ. ասել է, ուրեմն, որ իւրաքանչիւր բաժին բերում էր 171 % եկամուտ [1]: Այսպէս է հիմք դրւում Բաքուի միլիոններին, որքան եւ այդ բանը «յանցանք» լինէր «Հնչակ»-ի տնտեսագէտների համար. բայց անտեղեակութեան աւելի խոշոր օրինակը առջեւներումս է:

Շարունակելով իր նարոդնիկական դատողութիւնները, «Հնչակ»-ի յօդուածագիրը, արտագրողի միեւնոյն բարեխղճութեամբ, պիտի հար նոյն այն եզրակացութեան, ինչին յանգում էին ռուս նարոդնիկները ռուս ժողովրդի վերաբերմամբ, այն է՝ թէ սոցիալիզմը կարելի է իրականացնել Թուրքաստանում եւ առանց կապիտալիստական արդիւնագործութեան: Ճիշտ միեւնոյն կերպով էլ մեր հայ նարոդնիկը գրում էր.

«Սոցիալիզմն իր իրականացման համար ունի և ուրիշ դրական հիմք հայ

1) «Бакинскія Извѣстія», լրագիր, Բաքու, 1878, № 10:

ժողովրդի մէջ: Յայտնի են հայ գիւղական համայնական կարգերը, հողատիրութեան կոմունական կերպերը: Հինժամանակներից ժառանգած այդ մեծ հարստութիւնը՝ գիւղական համայնքը կոչուած է ապագայում մեծ դեր խաղալու ժողովրդի բարօրութեան գործում՝ ստանալով այժմեան ձեւ ու կարգերից անհամեմատ լայն, անհամեմատ կատարելագործուած կերպարանք: Եթէ մի կողմից արհեստաւորները համայնքների Հայաստանում կործանւում են արագարար, դա ... մէկ յայտնի կողմից բանում է Հայաստանի դռները սոցիալիզմի առջեւ, բայց միւս կողմից, ընդհակառակը: Հայ գիւղական համայնքները ստանում են լայն, ընդարձակ ծաւալ եւ դրանով նմանապէս աւելի ընդարձակ կերպով առնում հայ ժողովրդի կարգերը սոցիալիզմի հանդէպ: Շնորհիւ կառավարութեան անողորմ կամայականութեան եւ անօրէն ու անարգել կեղեքումների, շնորհիւ ուղղակի եւ անուղղակի հարկերի դժուարատանելի ծանրութեան եւ այլն եւ այլն նոյնանման պայմանների, — այդ բոլորի շնորհիւ է, որ հայ գիւղական համայնքներն աւելի ու աւելի են ընդարձակւում իրենց ծաւալականութեամբ: Անհատ գիւղացի սեփականատէրը մենակ անկարող է լինում դիմանալ կառավարութեան կեղեքումներին ու ծանր հարկերին: Կամ կառավարութիւնն է հարկերի փոխարէն ի վերջոյ գիւղացուց խլում հողը, կամ այս վերջինը կեղեքումների, հարստահարութիւնների եւ հարկերի շնորհիւ պարտաւորուած է լինում ձգել իր հողն ու գաղթել հեռաւոր երկրներ՝ ուրիշ գործով իր ու իր ընտանիքի ապրուստը հայթայթելու, եւ կամ անհատական ուժով չկարողանալով դիմանալ վերոյիշեալ հարուածներին, նա միանում է գոյութիւն ունեցող գիւղական համայնքի հետ, իր հողը դարձնելով սեփականութիւն այդ համայնքի: Եւ արդարեւ իր կացութեան ներկայ պայմաններում անհատ գիւղացի հողատէրն ուրիշ միջոց չունի դիմանալու կառավարութեան հարստահարութիւնների կամայականութեան առջեւ, եթէ ոչ նոյն իսկ իր շահերի տեսակէտից, միմիայն միանալ համայնքին, աւելի դիմացկուն լինելով իբրեւ հաւաքական ուժ:

«Այդպիսի միացման երեւոյթներ ներկայումս Հայաստանում պատահական երեւոյթների թւում չեն արդէն: Եւ դրանց յաճախակի փորձերը վաղ թէ ուշ պիտի հասնեն այն կէտին (ինչպէս այսօր իսկ տեղ տեղ երեւում է), որ մի քանի ու աւելի շատ գիւղեր միանգամայն կկազմեն մէկ ընդհանուր համայնք: Բոլորովին տարբեր աղբիւրից առաջանալով այդ երեւոյթը, այսինքն՝ անհատական սեփականութիւնը դարձնել սեփականութիւն համայնքի, յայտնում է ամենահաստատ հիմք սոցիալիզմի ամենագլխաւոր պահանջի աջողակ իրագործման — դարձնել հանրական, հաւաքական, հանրաժողովրդային սեփականութիւն արդիւնագործութեան ամենանշանաւոր գործիքներից մէկը — հողը: Այդ երեւոյթի մէջ արդէն կան հիմունքները համայն ժողովրդային տնտեսական կեանքի եւ կարգերի, որ սոցիալիզմը ներկայացնում է մեզ իր ամենակատարելագործուած կերպարանքով: Հայաստանում սոցիալիզմն այդ կող-

մից կարող է յայտնել ժողովրդի իղձերի ու ձգտումների համապատասխան մի կացութեան կերպ» (անդ)։

Երանական հեշտութեամբ, ինքն իրեն, առանց երկունքի ու ջղաձգութիւնների ծնուած մի սոցիալիզմ։ Այս բոլորը զարմանալի կը լինէր, եթէ մեր սոցիալ – ուտոպիստների նկարագրած գիւղական համայնքը երբ եւ իցէ գոյութիւն ունեցած լինէր հայ իրականութեան մէջ։ Մենք արդէն ճշտօրէն պատկերացրել ենք թէ ի՞նչ է եղել հայ գիւղը մանաւանդ Թիւրքիայում, եւ եթէ համբերութիւն ունեցանք մէջ բերելու հնչակեան յերիւրած համայնքի հեքեաթը, այդ միայն եւ միմիայն նրա համար, որ ցուցադրենք — այս քանի երրորդ անգամ — որ ինտելիգենտական գաղութն աւելի ուժեղ հասկացողութիւն կարող էր ունենալ մի որ եւ է Զուլունդիայի կամ Հրոյ երկրի մասին, քան Հայաստանի մասին, այն երկրի, որ նրա բերանում մեծարւում էր « Հայրենիք » անունով։ Եւ — ա՛յս էր միշտ միեւնոյնը — այսպիսի ծանօթութեամբ էր նա փրկութեան ծրագրներ կազմում այդ թշւառ երկրի համար։

Եւ այսպէս, պարզ է միանգամայն, որ նորելուկ հնչակականութիւնը նարոդնիկութեան հարազատ հոգեզաւակն էր։ Եթէ այս բոլորը բաւական չէ իբրեւ ապացոյց, աւելացնենք հնչակականութեան ստացած նարոդնիկական ժառանգութիւնն էլ, — բակունինեան բունթարութիւնը (ապստամբութիւն) եւ ահաբեկում (տերրոր), որոնք, ինչպէս կը տեսնենք շուտով, «Հնչակ»–ի մըշտական մոլեգնոտ պաշտամունքն էին կազմում։ Սակայն, իմանալ պէտք է, որ եթէ նարոդնիկութիւնը Նալբանդեանի ժամանակ միակ քաղաքական վարդապետութիւնն էր, բացարձակ եւ ինքնակալ տիրապետող մտքի վրայ, այժմ բոլորովին այլ էր նրա դրութիւնը։ Երբ ծնւում էր «Հնչակ»–ը, նոյն ժընեւում արդէն ամրապնդւած էր այն շարժումը, որ սկսել էր Պլեխանովն իր հռչակաւոր « Մեր տարաձայնութիւնները » աշխատութեամբ։ Արդէն կազմակերպւել էր, այդ հին նարոդնիկի ղեկավարութեամբ, « Աշխատանքի ազատագրութեան խմբակցութիւնը », որ մի հուժկու եւ արմատական յեղաշրջում էր բերում՝ մղելով սոցիալիստական աշխատաւորութիւնը նարոդնիկական նեղլիկ խուցից դէպի գիտական, մարքսիստական սոցիալիզմը։

Ժողովրդների ամբողջ ճակատագիրը, գոյութեան խնդիրը երբեմն մանր պատահականութիւնից է լինում կախուած։ Եթէ «Հնչակ»–ի ղեկավարները մկրտուած լինէին պլեխանովեան աւազանի մէջ, լինէին «Աշխատանքի ազատագրութեան խմբակ»–ի անդամները, մի խօսքով, եթէ նրանք լինէին իսկական մարքսիստ սոցիալիստներ, բոլորովին այլ կը լինէր Թիւրքաց Հայաստանի վիճակը․ ամենից առաջ՝ ոչ այնքան զարհուրելիօրէն մեկուսացած ու կղզիացած մի խօլական եւ խելառ ըմբշամարտութեան մէջ, բոլորովին այլ կը լինէին գործողութիւնների եղանակն էլ, նպատակն էլ, ծրագիրն էլ։ Բայց Թիւրքահայ ջրատար գիւղացիութեան այդպիսի բախտ չէր տրւած։ Ժխտել չէ կարելի, որ սոցիալիստական մտքի ժընեւեան յեղաշրջումը բոլորովին աննկա–

տելի չմնաց հնչակականութեան համար։ Ազդեցութիւնը նկատելի եղաւ թէեւ բաւական ուշ, բայց նկատելի եղաւ։ Այսպէս, 1891–ին «Հնչակ»–ի սոցիալիստներն այլ եւս այնքան ֆանատիկաբար չէին սարսափում թէ՝ չլինի որ արդիւնագործական կապիտալիզմը, մայր ամենայն չարիքների եւ անիրաւութեան, մուտք գործի հայերի մէջ, չէին հաւատում այլ եւս թէ՝ այդ մուտքին նպաստելը յանցանք է, ընդհակառակը, նրանք արդէն գիտէին, որ մեր երկրի զարգացման, առաջադիմութեան գլխաւոր պայմանը խոշոր կապիտալիստական արդիւնագործութիւնն է եւ հայ ժողովուրդը միայն այդ տնտեսական ձեւի մէջ կարող է գտնել իր ուժն ու զօրութիւնը (, 15), գիտէին, որ միանգամայն բնական կը լինի, եթէ հայ կապիտալիստական արդիւնագործութիւնն էլ, ուրիշ երկրների նման, բազմացնելով ժողովրդական հարստութիւնը, կենտրոնացնի նրան մի փոքրիկ դասակարգի ձեռքում, իսկ ժողովրդական զանգւածները դարձնել պրոլետարիատ (, 16)։ Գիտէին, բացի այդ բոլորից, եւ աւելին, այն, որ անհաստատ է « ռուս նախկին յեղափոխականներ»–ի թէօրիան գիւղական համայնքի եւ համայնական հողատիրութեան կատարելիք դերի մասին (, 14)։ Այսքան բան էին սովորել առաջին հնչակեան գաղափարախօսութիւնները։ Եւ էլ աւելի շատ բաներ էին սովորել, օրինակ այն՝ որ Կարլ Մարքսի դպրոցը գիտութեան վերջին խօսքն է եւ նրան պիտի հետեւէր հայ յեղափոխականը (, 16)։

Բայց այս բոլոր նոր սովորածներից օգուտ չունէր Թիւրքաց Հայաստանը, քանի որ ինչ որ ծրագրել էր նրա համար, ծրագրել էր «ռուս նախկին յեղափոխականներ»–ի, այսինքն՝ նարոդնիկների դաւանանքների վրայ եւ նոր, մարքսիստական ըմբռնումներին յատկացւում էր նարոդնիկական սկզբունքները հաստատելու եւ նւիրագործելու ծառայական դերը։ «Հնչակ»–ի հիմնադիրները, Հայաստանի համար յեղափոխական ծրագիր մշակողները, շարունակում էին իրենց անւանել «սոցիալիստ – յեղափոխականներ », եւ այս իսկապէս այսպէս էր, չնայած այն մարքսիստական քղամիտին, որի մէջ փաթթւելը նրանք երբեք խոտելի չէին համարել։

3․

Իրանց սեփական ստեղծագործական ինքնուրոյնութիւնը հնչակեան սոցիալիստները ցուցադրել են միայն մի տեղ՝ իրենց ծրագրի եւ նրա իրագործման եղանակների մշակման մէջ։ Այստեղ, ճիշտ որ, մենք կանգնում ենք մի քննութեան առջեւ, որ արտայայտւում է, եթէ կամենում էք, նոյն իսկ շատ լայն չափերով․ բացի այդ երկերասանի մի Եանուս ծնելու ինքնուրոյնութիւնն է։ Այդ ծննդի մէջ ժամանակն էր, որ վերցնում էր իրենը։ Եթէ մի կողմից այն ժամանակն էր, երբ համաշխարհային սոցիալիստական շարժումը բնական ընթացքով ուժեղ արձագանգներ էր տալիս հայ մտաւորականութեան որոշ շրջաններում, միւս կողմից այդ այն շրջանն էր, երբ հայ կղերա – բուրժուական նացիոնալիզմը հասել էր իր մոլեգնութեան գագաթնակէտին։ Եւ ահա

այդ երկու ուխերիմ հակոտնեաներին հնչակականութիւնը ամփոփում է իր մէջ, մէկին տալով մօտակայ նպատակ, միւսին՝ հեռաւոր նպատակ անունները։

Մօտակայ նպատակը նացիոնալիզմն էր, հեռաւոր նպատակը՝ սոցիալիզմը։ Մի սոցիալիստական կազմակերպութեան համար կարող էր լինել մի ծրագիր, մի նպատակ թէ ներկայի եւ թէ ապագայի, թէ մօտիկութեան եւ թէ հեռաւորութեան մէջ՝ սոցիալիզմը, եւ միայն այն։ «Հնչակ»-ն ունէր երկու ոտից կաղ մի տրամաբանութիւն, որ զարմանալի հեշտ կերպով անակնկալ հակասութիւնները արտաքուստ վայելուչ ծածկով ձեւող դիրքեր էր ստեղծում նրա համար։ Նա ասում էր սոցիալիզմին՝ «Գնա՛, սիրելիս, պահւի՛ր մի հեռու տեղ, սպասի՛ր քո հերթին, մինչեւ որ ես կը պատրաստեմ մի անկախ ազգ եւ կտամ նրան այնպիսի մի կազմակերպութիւն, որ քեզ յաղթական երգով կը մտցնէ հայ իրականութեան մէջ»։

Իսկ թէ որքան հեռու տեղ պիտի գնար ու հերթի սպասէր հնչակեանների սիրելին, այս մասին մեզ լիակատար գաղափար կարող է տալ նրանց մօտակայ նպատակը, որ ոչ պակաս եւ ոչ աւել հայութեան ազատագրողն էր եւ քաղաքական կատարեալ անկախութիւնը՝ ձեւակերպուած այսպիսի արտայայտութիւններով.

«Մօտակայ նպատակը կայանում է հետեւեալում. — Յեղափոխել եւ ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովրդին իր ընդհանուր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կարելիութիւն միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են լինում նրա տնտեսական զարգացման, առհասարակ նրա կուլտուրական առաջադիմութեան, ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատաւոր դասակարգին միջոց տան ազատ կերպով արտայայտելու իր ձգտումներն ու պահանջները, աւելի եւ աւելի բարելաւելու աշխատանքի ծանր պայմանները, դասակարգային գիտակցութիւն ձեռք բերելու եւ կազմակերպուելու իբրեւ քաղաքական մարմին ու դիւրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պէտք է ամէն տրամադրելի հասարակական պայմանների միջոցով նրպաստեն նրա առաջխաղացութեան դէպի հեռաւոր նպատակը»[1]։

Սրանք ընդհանուր խօսքեր են. գալով մանրամասնութիւններին, որոնք հետեւում են նրանց, մենք տեսնում ենք, որ հնչակեան իդէալն էր՝ մի պարլամենտական պետութիւն՝ ընդհանուր ընտրողական իրաւունքով եւ նահանգական ու համայնական ինքնավարութիւններով։ Ահա եւ մի քանի սկզբունքներ. ընտրողը եւ ընտրուողը կարող են լինել բոլոր քաղաքացիներն առանց խտրութեան ազգի, դասակարգի եւ կրօնի։ Ամենքի կատարեալ հաւասարութիւն օրէնքի առաջ. կատարեալ ազատութիւն մամուլի, խօսքի, խղճի, ժո-

1) «Ծրագիր Հնչակեան Կուսակցութեան», Լոնդոն, 1897, երես 5-7։

ղովման, ընկերութիւնների եւ ընտրական ագիտացիայի. անձի ու բնակարանի անձեռնմխելիութիւն, եկեղեցու բաժանում պետութիւնից, ընդհանուր զինուորագրութիւն, ընդհանուր պարտադիր ուսում։

Ահա ինչ պիտի դառնար երեք թագաւորութիւնների (Թիւրքիայի, Պարսկաստանի եւ Ռուսաստանի) տակ ապրող հայութիւնը հնչակեան ծրագրողների ցանկութեամբ։ Այս մի ամբողջ համահայութիւն (պանարմենիզմ) էր, որ ոգեւորում էր անխտիր հայ ազգասէրներին (կղերական, պահպանողական, (լիբերալ), որոնք այսպիսով եղբայրանում էին հնչակեան սոցիալիստների հետ։ Ազգայնական ամբարտաւանութեան եւ մեծամոլութեան ամենից բարձր աղաղակող ցոյցն էր այս ծրագիրը. նրա ծրագրողը պիտի լինէր մի կազմակերպութիւն, որ ամենաշատը այդ միջոցին կարող էր անուանել ընկերակցութիւն։ Ի՞նչ ուժ ունէր նա, ի՞նչ նիւթական եւ մտաւորական միջոցներ մի այսպիսի ռամկավարական պետութիւն ստեղծելու համար ասիական այն միջավայրում, որ ներկայացնում էր նախնական ժողովուրդների մի քաոսական խառնարան։ Ուշի ուշով քրքրում ենք մենք «Հնչակ»-ի ծրագիրն ու գաղափարախօսական բազմաթիւ յօդուածները եւ գտնում ենք դրանց մէջ մի միջոց միայն՝ ապստամբութիւն, ապստամբութիւն, հանապազ ապստամբութիւն։ Ապստամբութիւն Պարսկաստանի դէմ, ապստամբութիւն Ռուսաստանի դէմ, ապստամբութիւն Թիւրքիայի դէմ, — ահա այն կախարդական ճանապարհը, որով ճորտ ու անգրագէտ գիւղացիութիւնը պէտք է բարձրանար մինչեւ պարլամենտական դեմոկրատիզմը։

Մենք այս միջոցի մասին դեռ կը խօսենք, բայց այստեղ պէտք է մի հարց դնենք։ Եթէ համարենք բահով զինուած հայ գիւղացուն օժտուած նոյն իսկ արտակարգ ապստամբական հանճարով, եթէ աւելացնենք նրա թուական իրականութիւնը չորս — հինգ անգամ, հեշտացնենք նրա ռազմական աշխատանքը՝ զրկելով ռուսական եւ թրքական բանակները թնդանօթներից ու հեծելազօրքերից, այնուամենայնիւ ո՞րքան ժամանակ հարկաւոր կը լինէր դեմոկրատիկ պարլամենտարիզմով այնքան կազմակերպել եւ պատրաստել մի Հայաստան, ծովից ծով, որպէս զի կարելի լինէր հասնել հնչակեան կարեւոր նպատակին, բանել մի ինչ որ հեռու տեղ պահ տուած սոցիալիզմը, բերել ու մտցնել այն հայութեան մէջ։ Այո՛, ո՞րքան ժամանակ, տարինե՞ր արդեօք, տասնեա՞կ տարիներ, թէ գուցէ հարիւրամեակներ անգամ։ Այդպիսի դերեր յատկացնելով երկու հակոտնեայ սկզբունքներին, չէ՞ր նշանակում արդեօք գործել նացիոնալիզմով եւ խաղաղ սոցիալիզմով։ Այո՛, այսպէս էլ եղաւ «Հնչակ»-ի գործն առաջին օրից մինչեւ վերջինը։

Ընդգրկելով այսպիսի մի ահագնածաւալ ծրագիր յղանալու եւ հրապարակ նետելու յանդգնութիւնը, հնչակեանները գոնէ պիտի ցոյց տային, որ իրենց հարկաւոր է փորձ եւ այդ փորձը նրանք սկսում են փոքրից ու հեշտից, ուստի նրանք իրանց գործունէութեան համար ասպարէզ ընտրում են փոքրաթիւ

պարսկահայ ժողովուրդը: Բայց նոյն կաղ տրամաբանութիւնը, որ ղեկավարում էր հնչակեան սկզբունքները, մի քանի նկատառումներով վճռահատութիւն էր անում: Իր այդ գործունէութիւնը նա սկսում է եւ կենտրոնացնում բացառապէս Թիւրքաց Հայաստանում, առաջ ու առաջ նկատի ունենալով այն՝ որ « Հայութեան ամենաստուար մեծամասնութիւնը կազմում են Թիւրքահայերը եւ նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է » (1): Այսպիսով ծրագրային այն մեծամիտ խոստումները, որոնք մենք բերինք վերեւում եւ որոնք տրւում էին ընդհանուր հայութեան, դառնում էին անպէտք եւ անբովանդակ ֆրազներ, որոնք աչք շլացնելուց եւ մտքեր մոլորեցնելուց աւելի նշանակութիւն ունենալ չէին կարող: Հաչան – փչան ճայթմունքների մէջ մի «Հնչակ» էր ծնւում լոկ Թիւրքաց Հայաստանի համար:

Եթէ բաց անենք, այժմից իսկ, այդ նորածինի խանձարուրը, կը տեսնենք նրա մէջ մի մանուկ՝ կապկապւած մօտակայ եւ հեռաւոր նպատակների սպիտակ ու կարմիր լաթերով: «Հնչակ»-ի առաջին ճիչերը նացիոնալիստական ու սոցիալիստական աններդաշնակութեամբ են բաղխում մարդու ականջները: « Հայ կեանք » վերնագրով բաժնի մէջ տեղ են գտնում ժամանակի « Ազգային լուրերը », որոնք պտտւում են պատրիարքարանի եւ էջմիածնի կաթողիկոսարանի շուրջը, այսպէս են, օրինակ, Վանի «Պօղոս եպիսկոպոս»-ի հարցը, որ, եթէ չէք մոռացել, գոյութիւն ունէր դեռ Միքայէլ Նալբանդեանի օրերից. Պեշիկթաշի գերեզմանատան հարցը, եւ այլն (I, 4 – 5): Մի երկար ու թունդ սոցիալիստական ոգով գրւած յօդւածին անմիջապէս հետեւում է «Մակար ազգավնար» յօդւածը, Մակար կաթողիկոսին նւիրւած (I, 9 – 10): Երբ մեռաւ հայ ազգայնամոլութեան կենտրոնական սիւնը կազմող Րաֆֆին, սոցիալիստների «Հնչակ»-ը, գրւած նացիոնալիստական ազգակցութեան սուր վշտից, արտակարգ հիացական զեղումներով էր արձանագրում այդ կորուստը:

« Չէինք սպասում, բացագանչում էր նա, յանկարծ գլորւեցաւ վաթսունամեայ ընկուզենին:

«Այո, Րաֆֆին իր անունը յանձնեց պատմութեան: Նա ինքն անձամբ չքացաւ մեր միջից, որ այնուհետեւ բարձր պատւանդանի վրայ յարութիւն առած տեսնենք նրա կերպարանքը: ... Ոչ, գլխաւորապէս Րաֆֆի – գրագէտին չէ, որ մենք ողբում ենք, այլ մենք ողբում ենք այն զօրութիւնը, որ թուլամորթ ու անզօր հայերի անողոք զանն (զանգն) էր, որ հայութեան թարմ ուժերի կանչողն ու ուղեցոյցն էր: Մենք ողբում ենք տաղանդաւոր ջատագովին ընկճւած ժողովրդի մարդկային ու քաղաքացու իրաւունքների, տաղանդաւոր քարոզչին ազատութեան գաղափարի: Մենք ողբում ենք նշանաւոր քաղաքացուն, որի հասարակական գործունէութեան նպատակն էր դուրս հանել հայե-

1) «Ծրագիր», երես 8:

րին եսամոլ անշարժութիւնից, առաջացնել նրանց կենդանի գործի, վսեմ պատերազմի ասպարէզ եւ յեղափոխութեան կանթեղը ձեռին՝ արիւնի գնով մաքրել, հարթել ճանապարհ դէպի հայ ժողովրդի հանգիստը, բախտն ու բարօրութիւնը. — Մենք ողբում ենք Րաֆֆիին իբրեւ ազատութեան եւ յեղափոխութեան գաղափարների նշանաւոր պրոպագանդիստի:

« Չէինք սպասում ... աւաղ, յանկարծ գլորւեցաւ վաթսունամեայ պտղատու ընկուզենին » (I, 6):

Մենք իր տեղում ցոյց տւինք թէ ինչ դեր կատարեց Րաֆֆին այն հայդուկային յեղափոխութեան մէջ, որ սկսեց ճարակել հայութեան որոշ շրջանները՝ եռման աստիճանին հասցնելով ազգային բարձրաւէտ ինքնահաւանութիւնն ու ռազմատենչ տրամադրութիւնը: «Հնչակ»-ի այս անմխիթար ողբը ցոյց էր տալիս թէ հոգեպէս որքան մօտիկ էին, որքան հարազատ էին հայ նորելուկ սոցիալիստ – նացիոնալիստները ռոմանտիկ ռաֆֆիականութեան: «Հնչակ»-ի մէջ տպւում էին այնպիսի յօդւածներ, որոնց տակ ամենայն հեշտութեամբ կարելի է դնել Րաֆֆին կամ Արծրունու ստորագրութիւնները: Այդպիսիներից մէկի վրայ մենք կը դարձնենք մեր ընթերցողների ուշադրութիւնը:

Կամենալով ցոյց տալ թէ ինչու անպատճառ անհրաժեշտ է ազատել Թիւրքահայերին օսմանեան տիրապետութիւնից, «Հնչակ» տալիս էր ոչ միայն Թիւրք պետականութեան, այլ եւ Թիւրք ժողովրդի բնութագիրը: Եւ մենք կարդում ենք այդտեղ.

« Թիւրք ազգը, որի ճակատագրի հետ այսօր կապւած է հայ ժողովրդի ճակատագիրը, մէկ ազգ է, որն ապրում է միմիայն նրա համար, որ գոյութիւն ունի եւ այդ պատճառով վիճակւած է նրան առայժմ ապրել: Դա մէկ անընդունակ, նախապաշարւած, տգէտ, ծոյլ ազգ է, որը բոլորովին չի զգում պահանջ ոչ մտաւոր, ոչ բարոյական, ոչ կուլտուրական որ եւ է այլ ճիւղի զարգացման, որի համար մարդկութեան բոլոր առաջադիմական ձգտումներն ու շարժումները միշտ եղել են խորթ ու օտար: Թիւրք ազգը չունի կուլտուրական ոչ մի զարգացում, եւ այն ժողովուրդները, որոնք պատմական հանգամանքների շնորհիւ ընկել են այդ ազգի պետութեան ձեռքը, դատապարտւած են եղել կրել նոյն մտաւոր, բարոյական ու սոցիալիստական անշարժութեան լուծը, նոյն ապրել ապրելու համար անասնական նշանաբանն ունենալ իրենց կեանքում, ինչպէս ինքը, Թիւրք ազգը: Կեանքի պայմաններն այնպէս են Թիւրք պետութեան սահմաններում, որ այլ կերպ չէր էլ կարող լինել: Քամնելի հեգնութիւն տասնեւիններորդ դարու հասցէին ուղղւած, որ մի կուլտուրա, որ կարողացել է թափանցել նոյն իսկ Ամերիկայի սակաւածանօթ խորքերն ու Ամերիկայի զանազան երկիրները, մինչեւ այժմ չի կարողացել ծակել Թիւրքիայի հնացած վահանը եւ բաւականաչափ հոսանքով ներս փչել այդ ծակից իր նոր կեանք պարգեւող զեփիւռը: Եւ այդ խոչընդոտն աճել,

տարիներով կենալ ու պահպանել կարող է միայն այնպիսի ժողովրդի մէջ եւ նրա չեզոք աջակցութեամբ, որպիսին Թիւրք տգէտ ժողովուրդն է։ Թիւրք կառավարութիւնը, նրա բռնապետական բնաւորութիւնը, նրա կառավարչական կերպերը, որ իրենց համար լոկ յենարան են գտնում Թիւրք ժողովրդի տգիտութեան մէջ, նրա կեանքի բոլոր կողմերի կատարեալ անշարժութեան եւ նրա նախապաշարումների ծոցում, նրա կրօնական մոլեռանդութեան եւ օտարատեաց ու վայրենի բնաւորութեան մէջ, — այո, այդ Թիւրքիան մշտական անխուսափելի զօրեղ խոչընդոտ է այն ամէն ազգերի առաջադիմութեան, որ անագորոյն ու թշուառ բախտ ունեն կրելու նրա հպատակութեան վայրենի ու մահացնող լուծը» (II,2)։

Այսպէս չէր, ինչպէս ասել կ՚ուզէ «Հնչակ»–ը իր սիրած տերմինով «հարազատ ժողովուրդ» կոչւող հայ ժողովուրդը։ Կուլտուրական ու սոցիալ տընտեսական առաջխաղացութեան բոլոր շնորհքներով օժտուած, նա միայն մի կարիք է զգում — զատել վայրենի Թիւրք ժողովրդից եւ անկախութեան մէջ ծաւալել իր ստեղծագործող ընդունակութիւնները։ Ո՞ր տեղի եւ ո՞ր ժամանակի նացիոնալիզմն է, որ ճիշտ եւ ճիշտ այսպիսի բառերով չի արտայայտել իր «հարազատ» եւ օտար, ոչ հարազատ ժողովրդների մասին ...

Միայն 1891–ին էր, մօտ երեք տարի անցած, որ «Հնչակ»–ը հասկացաւ թէ իր սոցիալիստական դէմքին անվայել է այդպիսի վայրենի վերաբերմունքը դէպի մի ամբողջ ժողովուրդ եւ սկսեց ինքն իրեն ապտակել միանգամայն արդար ցասումով։ «Համերաշխ գործակցութիւն» առաջնորդող յօդուածի մէջ նա ասում էր.

«Բոլոր ցաւը նրանումն է, որ մեր հայրենասէրները, ազգասէրները իրենց հայրենասիրութեամբ, իրենց ազգասիրութեամբ հասել են միայն այն աստիճան կուրութեան, որ առհասարակ ատում են տաճկին, որովհետեւ նա տաճիկ է, ատում են քիւրդին, որովհետեւ նա քիւրդ է, ատում են ռուսին, որովհետեւ նա ռուս է. նրանք չեն նայում տաճկի, քիւրդի, ռուսի վրայ իբրեւ մարդու վրայ, այլ իբրեւ տաճկի, քիւրդի, ռուսի վրայ։ Արդեօք դա չի՞ նմանում այն բանին, որ մահմեդականը քրիստոնեային գեավուր է կոչում, նրան իրենից աւելի ստոր համարելով։ Մեր հայրենասէրները, մեր ազգասէրները, որ գեավուր խօսքի համար այնքան սաստ զայրոյթով գիտեն յարձակուել տաճկի վրայ, ինչո՞ւ մի բոպէ անգամ չեն մտածում, թէ իսկապէս իրենք էլ նոյնանման վերաբերմունք ունեն դէպի տաճիկը, իրենք, որ այնքան սովոր են պարծենալ իրենց՝ տաճկից աւելի ունեցած քաղաքակրթութեամբ։

«Իրաւ է, այս մեր հայրենասէրների, մեր ազգասէրների ընդհանրապէս դէպի տաճիկը ունեցած ատելութեան աղբիւրն այն է, որ նա հային տիրող ազգ է, որ դարերից ի վեր հայը տաճիկ բռնակալութիւնից կրել է ստրկական ամէն տեսակ չարչարանք ու թշուառութիւն։ Բայց ժամանակն է ուշիմ ու բանիմաց կերպով նայելու իրականութեան վրայ։ Երբեք չպիտի շփոթել տաճիկ

բռնակալ կառավարութիւնը տաճիկ թշուառ ու ստրուկ աշխատաւոր ժողովրդի հետ։ Ո՞ւմ յայտնի չէ թէ որչափ աղքատ, որչափ կեղեքւած, որչափ հարստահարւած է նոյն այդ տաճիկ ժողովուրդն իր սեփական կառավարութեան ձեռքով։ Հազիւ թէ հայ աշխատաւոր ժողովուրդը յանդգնի նախանձել նրա վիճակին։ Բայց թերեւս ասեն մեզ թէ կարող է հայը նախանձել աշխատաւոր տաճկի վիճակին այն տեսակէտից, որ տաճիկը մի քանի տուրքեր հայից փոքր ինչ պակաս է տալիս, որ դատարանում վկայ լինելու իրաւունք ունի, որ կրօնական անհամբերութեան ենթակայ չէ, որ զէնք կրելու իրաւունք ունի, մի խօսքով, որ տաճիկն ունի, ինչպէս սովորաբար ասում են, մի քանի առանձնաշնորհումներ։ Բայց արդեօ՞ք այդ այսպէս ասած առանձնաշնորհումները տաճիկ աշխատաւոր ժողովրդին պակա՞ս ստրուկ են ներկայացնում։ Մի՞թէ այս բոպէիս մենք ականատես չենք տաճիկ աշխատաւոր ժողովրդի տնտեսական աւերման, որ նրան տանում է դէպի մահացում։ Մի՞թէ այս բոպէիս մենք ականատես չենք տաճիկ ժողովրդի քաղաքական կատարեալ ստրկութեան, որ հայոց քաղաքական դրութիւնից ոչ մի կերպ տարբեր չէ։ Այդ տնտեսական աւերումն ու քաղաքական ստրկութիւնը այլանդակում, հրէշաւոր է դարձնում եւ կամ իսպառ թունաւորում, խեղդում, մահացնում է տաճիկ աշխատաւոր ժողովրդի թէ հանրական եւ թէ անհատական կեանքի բոլոր արտայայտութիւնները։

.. «Փաստերը մեր ձեռքի տակ են։ Աշխատաւոր ժողովուրդները միմեանց մոլեռանդաբար ատել չգիտեն։ Նրանք զաւակներ ու մշակողներ են միեւնոյն հողի, կամ ընկերներ միեւնոյն գործարանում եւ նրանք կեղեքւում, հարստահարւում ու ճնշւում են միեւնոյն ձեռքով ու միջոցներով» (IV, 9)։

Եզրակացնել պէտք է թէ ինչ կը լինէր Թիւրքաց Հայաստանի դրութիւնը, եթէ այսպիսի սկզբունքները լինէին հնչակականութեան միակ, անփոփոխ եւ անխորտակելի համոզմունքը, եթէ այդ բոլորը ձուլէր կենդանի գործի, պրոպագանդի եւ ժողովուրդների մերձեցման եռուն աշխատանքի մէջ։ Բայց չշեղուենք։ Մեր առջեւ կատարւողը Եանուսի երկու դէմքերի սովորական ընդհարումն է։ Կամ նացիոնալիստական երեսն էր շառաչիւնով ապտակ տալիս սոցիալիստական երեսին, կամ այս երկրորդն էր նրան պատասխանում ոչ պակաս աղմկարար ուժգնութեամբ։

Թրքահայ յեղափոխութեան պատմութիւնը անչափ դժբախտ է հէնց նրանով, որ սկզբից մինչեւ վերջ լեփ լեցուն է այսպիսի հակադրական, իրար ոչնչացնող ապտակներով։

4.

Դիմենք այժմ այն միակ միջոցին — ապստամբութեան, որով հնչակեանները կարծում էին իրագործել իրանց ծրագիրը, այն է՝ ազգային անկախութիւն նւաճել Թիւրքահայերի համար։

Պէտք է ասել, որ «Հնչակ»–ը հրապարակ էր գալիս մի խիստ շեշտւած բա-

ցատական վերաբերմունքով դէպի եւրոպական դիւանագիտութիւնն առհասարակ եւ դէպի նրա ստեղծած 61-րդ յօդուածը մասնաւորապէս. եւ այստեղ, այս վերաբերմունքի մէջ, ցուցադրում էր խիստ արժէքաւոր եւ միանգամայն ճըշգրիտ ըմբռնումներ:

«Հնչակ»-ը, ասում էր մի յօդուածի մէջ, ոչ միայն չի պաշտպանել 61-րդ յօդուածը եւ պահանջել Եւրոպայից նրա գործադրութիւնը, այլ նա միշտ յայտնել է, որ այդ յօդուածը, բացի մութ ու երկմտի բառախաղութիւնից, ուրիշ ոչինչ չի ներկայացնում եւ որ ոչինչ միտք չունի դիմել Եւրոպային, պահանջելով այդ յօդուածի գործադրութիւնն. այլ թէ ընդհակառակը, հայերը պիտի մէկ անգամից ընդ միշտ թողնեն այդ սխալ եւ հայ ժողովրդի ինտերեսների հակառակ ընթացքը եւ իրենց բոլոր յոյսը դնեն սեփական հայկական ուժի վրայ՝ գործադրելով դրան յեղափոխական ապստամբական շարժումներով, որոնց նպատակը շատ աւելի ընդարձակ ու մեծ է 61-րդ յօդուածի իմաստից» (II, 4):

Բացասական կարծիք հայութեան համար կուռք դարձրած 61-րդ յօդուածի նկատմամբ, — այս մի շատ համարձակ, կարելի է ասել յանդուգն նորոյթ էր, որ բերում էր հրապարակախօսութիւնն իր խանձարուրի մէջ: Հաւասարաչափ դրական արդիւնք է ներկայացնում եւ այն եռանդաշատ արշաւը, որ նոյն այդ սկզբնական շրջանում հնչակականութիւնը մղում էր եւրոպամոլութեան դէմ, մերկացնելով մեծ պետութիւնների դիւանագիտութեան շահամոլութիւնը եւ գաղանային ձգտումները: Այս բոլորը կարող էր մի արթնացող ու բուժիչ շարժում առաջացնել հայերի մէջ, եթէ ամենից առաջ ինքը «Հնչակ»-ը հաւատար իր ասածներին եւ ինքն անխախտ պահէր այս ուղղութեամբ իր ընդունած սկզբունքները: Սակայն այսպիսի բան, ինչպէս կը տեսնենք, տեղի չունեցաւ եւ ինքը «Հնչակ»-ն էր, որ ջուխտ ձեռքով իր կրծքին սեղմեց նոյն «խղճուկ» 61-րդ յօդուածը:

Այս երկու նպատակները — սեփական ուժ եւ արհամարհանք դէպի եւրոպական դիւանագիտութիւն, «Հնչակ»-ի առաջին եւ երկրորդ տարիներում ընդարձակ տեղ են գրաւում իբրեւ գաղափարախօսական «հաւատոյ հանգանակներ», որոնք բղխում են միմեանցից եւ լրացնում միմեանց: Եւ ստեղծում էր այսպիսի մի վիճակ:

«Բացարձակ պատերազմ մղել այդ սպանիչ կազմակերպութեան դէմ, գրում էր «Հնչակ»-ը, նպատակ ունենալով ժողովրդի բարօրութիւնը, բացարձակ պատերազմ մղել Թիւրք կառավարութեան դէմ, որ արգելք է ժողովրդի զարգացման եւ պատճառ նրա թշուառութեան, — մէկ անհրաժեշտութիւն է յանուն ճշմարտութեան:

«Հէնց ժողովրդի գոյութեան ներկայ հանգամանքները, հէնց կառավարութեան վարքն ու ոգին, հէնց խաղաղ առաջադիմութեան անհնարինութիւնը

պարզորոշ կերպով մատնանիշ են անում յեղափոխութեան անհրաժեշտութեան վրայ, որպէս միակ ելք փրկելու անխուսափելի քայքայումից:

«Այս մօտակայ նպատակին հասնելու այդ միակ միջոցը, յեղափոխութիւնը, պիտի սկսէ գործադրել գիտակցական և յեղափոխական տարրը ժամանակի եւ պատերազմի յաջողութեան շնորհով, գրաւելով իր յետեւից ժողովրդի աջակցութիւնը:

«Այսպէս՝ ճշմարտութիւնն արդէն որոտում է օրհասական խօսքը՝ «պատերազմը» եւ իւրաքանչիւր հայ, որ սիրում է իր հայրենիքն ու ժողովուրդը, որ դեռ կրում է իր մէջ մարդկային արժանաւորութեան զգացումը, որ դեռ չէ անբարոյականացել, — այդ լուսաւոր գաղափարին հետեւել՝ նրա միակ ու սուրբ պարտականութիւնն է դարձել:

«Արգելքը պէտք է վերացնել հեռաւոր նպատակի իրագործման համար:

«Մարդկային զարգացման կատաղի թշնամուն պէտք է մի կողմը հրել, նրանից անկախ դառնալով:

«Որքան դժուար լինեն այդ պատերազմի պայմանները, այդու հանդերձ նրանց պէտք է յաղթահարել:

«Որքան էլ սուղ նստէ այդ պատերազմը, այդու հանդերձ նրան պէտք է մղել արգելքի դէմ եւ յաղթանակը տանել:

«Բայց աջող պատերազմի յաղթութեան համար հարկաւոր է կանոնաւոր գաղտնի յեղափոխական կազմակերպութիւն» (, 4 – 5):

Յայտարարելով բացարձակ պատերազմ Թիւրքիային, «Հնչակ»-ը միեւնոյն համարում ծաղրի էր ենթարկում այն յիշատակագիրը, որ Լոնդոնի հայերը ներկայացրել էին առաջին մինիստր Սալսբիւրիին, խնդրելով նրան որ գործադրի Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը:

«Յիշատակագիր, յիշատակագիր եւ դարձեալ յիշատակագիր, բացագանչում էր նա: — Յիշատակագիր անգլիական կառավարութեան, նոյնը գերմանական կառավարութեան եւ այլն ... ամբողջ 8 – 9 տարի եւրոպաբնակ հայերը այդպիսի յիշատակագիրներով քարկոծեցին եւրոպական պետութիւններին, որոնք իրենց կողմից անգլիական պաղութեամբ տալով սովորական պաշտօնական երկդիմի պատասխան, ամենահանգիստ կերպով հաւաքում էին այդ թղթի բառերը եւ շպրտում իրենց զամբիւղները փտելու համար: Եւ դեռ մինչեւ այսօր այդ յիշատակագիրները հեղինակելու համար եւրոպական զանազան քաղաքներում այդ անձերը հիմնել են ընկերութիւններ, տալով նրանց փքուն անուններ: Մեզ շատ հետաքրքիր է իմանալ թէ արդեօք այդ պարոնները սպասում են որ եւ է լուրջ հետեւանք այդպիսի թղթեր մրոտելուց: Մեզ նոյնպէս հետաքրքիր է իմանալ թէ արդեօք ի՞նչ նպատակով են նրանք ղեկավարւում այդպէս գործելով, ի՞նչ կարող է լինել նրանց «ջանքեր»-ի հետեւանքը կամ մի՞թէ նրանք յիրաւի հաւատացած են որ դրանով իրենք «հայրենասիրութեան» գործ են անում: Շատ հետաքրքրաշատ կլինի լսել նրանցից այդ հար-

ցերի պատասխանը։ Որ այսպիսի «հայրենասիրական» գործունէութիւնը նըմանում է արժան ապրանքի թանկ ծախելուն, — դա տարակուսանքի չէ կարող ենթարկուել. բայց եթէ կան մարդիկ, որոնք դրանից լրջօրէն մի բան են սպասում, թող ներուի մեզ ասել, որ դա նշանակում է tomber dans la...

«Սակայն նայենք մի բոպէ։ Տարին մի կամ երկու անգամ թղթի կտոր ներկայացնել եւրոպական այս կամ այն կառավարութեան ոչ մի դժուարութիւն չկայ, ոչ մելանն է պակաս, ոչ թուղթը եւ ոչ խնդրագիր գրել սիրողները եւ դրա փոխարէն ստանալ պաշտօնական պատասխան գուցէ մխիթարական է խնդրագիր ուղղողների համար, բայց տառապող ժողովրդին դա ոչ տաքացնում է, ոչ մրսեցնում։ Սակայն չէ՞ որ իւրաքանչիւր քայլ հասարակական ասպարէզում պէտք է ունենայ իր նշանակութիւնն ու իմաստը։ Ամբողջ տասը տարուայ փորձը մեզ ապացուցել է, որ այդպիսի յիշատակագիրները ամենայն նշանակութիւնից զուրկ են, քանի որ դրանց ներկայացնելն անհետեւանք է մնում, յիշատակագիր ստացող կառավարութիւնը չդիմելով դէպի ոչ մի օգտաւէտ միջամտութիւն, այլ եւ երբեմն ընդհակառակը՝ հէնց առանց այդ թղթի կտորի էլ նոյն կառավարութիւնը հարցումներ է արել Թիւրք կառավարութիւնից հայ ժողովրդի դրութեան մասին։ Եւրոպական այս կամ այն պետութեան շահն ինքն է թելադրում իր անելիքը հայ ժողովրդի վերաբերմամբ եւ ոչ մի յիշատակագիր նրա ուշադրութիւնը չի գրաւել, եթէ սեփական շահերի հմայքը չյափշտակէր նրան» (Անդ)։

Այսպիսի առողջ եւ խելացի օգտաւէտ դատողութիւններ «Հնչակ»-ը շատ է հրապարակ բերել մեր քննութեան ենթակայ շրջանում։ Այսպէս, նա երկար ու բարակ բացատրել է թէ ի՞նչ է եւրոպական պետութիւնների կոլոնիալ (գաղութային) քաղաքականութիւնը, եւ նոյն իսկ մի երկրի մէջ տնտեսական բարելաւութիւններ մտցնող օտար կապիտալը սարկութիւն է բերում այդ երկրի բնիկ ժողովրդին, եւ այլն, եւ այլն։ Իբրեւ դրական երեւոյթ, այդ սկզբունքները հայ իրականութեան մէջ շատ գնահատելի տնտեսագիտական եւ քաղաքագիտական երեւոյթներ էին։ Մի կողմից այսպիսի բացատրական վերաբերմունք դէպի Եւրոպայի գովւած մարդասիրութիւնն ու քաղաքակրթական առաքելութիւնը, իսկ միւս կողմից՝ բացարձակ ու անողոք պատերազմ Թիւրքիայի դէմ։ Չէ՞ր նշանակում այս արդեօք, որ «Հնչակ»-ի մարդիկ վճռել էին մղել այդ պատերազմը միայն հայ ժողովրդի միջոցներով, միայն սեփական ուժով, առանց որ եւ է մի այլ ուժի դաշնակցութեան, գործակցութեան կամ հասարակ աջակցութեան։

Առաջին տպաւորութիւնը, այո՛, այսպէս է։ Թէեւ այս կը լինէր բացայայտ ու մինչեւ երկինք աղաղակող մի դոնքիշոտութիւն, բայց միտքը կը լինէր ինքնուրոյն ասպետական։ Սակայն «Հնչակ»-ի մարդիկ իրենց լամանչեցի նախատիպից մի քիչ տարբերւում էին։ Պատերազմ, այո՛, պատերազմ, ապստամբութիւն, այո՛, ապստամբութիւն, բայց այդ բոլորը ոչ թէ ինքնամ-

փոփ, վերջնական նպատակ, ո՛չ, այս ապստամբութեամբ չէին մտածում ստիպել Թիւրքիայի կառավարութեանը, այլ ուզում էին ստիպել Եւրոպային, որ նա, նոյն իսկ հակառակ իր կամքին, միջամտէ։ Խօսելով անգլիական այն յայտարարութեան դէմ, թէ Անգլիան մենակ ոչինչ չէր կարող անել հայերի համար, թէ Եւրոպան պիտի միաբան համաձայնութեամբ լուծէ հայերի հարցը, «Հնչակ»-ը՝ մոռանալով այն, ինչ ասել էր 61-րդ յօդւածի մասին, որ դառնում էր մի սովորական մանիկ այն ժամանակւայ ասօրէութեան, ասում էր. «Արդեօք այս բոլոր յայտարարութիւններն ուղղակի չե՞ն նշանակում հայկական խնդիրը թաղել հողի տակ. դրանք ուղղակի չե՞ն նշանակում արդեօք, թէ Անգլիայի շահերը ոչ մի միջամտութիւն նրանից չեն պահանջում յօգուտ հայերի, ինչպէս չեն պահանջել մինչ այն ժամանակ մինչեւ որ իրենք հայերը ապստամբական շարժումներով ստիպել են նրան միջամտել» (II, 2)։

Սոցիալիստական դէմքն նորից այսպիսով սաստիկ ապտակահարւած էր, վեհաղն փիլիսոփայութիւնները դարձել էին ողորմելի փրազների կոյտ, եւ նացիոնալիզմը ամուր կերպով հաստատւում էր «Հնչակ»ն այն հարթոցի վրայ, ուր կանգնած էին Արծրունին, Րաֆֆին, Գամառ-Քաթիպան։ Տո՛ւր, ուրեմն, ժողովրդային միս՝ ստիպելու համար Եւրոպան որ ոտքի ելնի եւ անկախութիւն տայ հայերին։ «Հնչակ»-ի մէջ անարգւած 61-րդ յօդւածը անկիւնաքար էր դառնում հնչակեան կուսակցութեան ծրագրի մէջ այսպիսի արտայայտութեամբ.

«Նկատելով որ հայութեան այդ մեծամասնութեան դատը Բեռլինի դաշնագրութեան 61-րդ յօդւածի զօրութեամբ, ինչպէս եւ այլ միջազգային պայմանագրերի զօրութեամբ, արդէն մտած է միջազգային իրաւունքի դրական շրջանը եւ ճանաչւած եւրոպական մեծ պետութիւնների կողմից ...» [1]։

Այսքանը բաւական չէր։ Սոցիալիստական «Հնչակ»-ի նացիոնալիստական զգացմունքը չկարողացաւ փարատել հայ տիրացուական խղճալից, որի համար անհնար էր ապրել առանց վեղարի, եւ ահա 1891 թ., Ժընեւից, հնչակեան սոցիալիստ կենտրոնի յանձնարարութեամբ Երուսաղէմ էր ուղեւորւում նոյն կենտրոնի սիւներից մէկը, նոյնպէս սոցիալիստ, Ռուբէն Խանազատեանը [2] յատուկ պաշտօնով, Խրիմեան Հայրիկին, որ սուլթանի հրամանով Երու-

1) «Ծրագիր», երես 8։

2) Այս Խանազատեանը Տրապիզոնի Հնչակեան կենտրոնական վարչութեան վարիչն էր եւ իր յիշողութիւնների մէջ գրում է թէ ինքն, իբրեւ պրոպագանդիստ, քարոզում էր հասարակ ժողովուրդին սոցիալիզմ, որ եւ շատ լաւ ըմբռնում էր այդ վարդապետութիւնը եւ գերադասում էր ազգային գաղափարից։ Եւ անշուշտ, կամենալով յետին թւով եթէ ոչ ջնջել, գէթ մեղմացուցիչ հանգամանքներով շպարել իր եւ իր ընկերների ձեռքով խառնշտւած նացիոնալիստական շիլափլաւը, գրում է. «Հնչակեանի միակ եւ անփոփոխ նպատակը, ի՛մ հասկացողութեամբ, սոցիալիզմն է լինելու հէնց իր առաջին օրից, եւ նրան պիտի նա ձգտէր հասնելու յեղափոխութեան ճանապարհով»։ («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927. № 1. եր. 127)։ Նահապետական, «բարի» ժամանակների հասկացողութիւն— սոցիալիզմ, իրագործւած Թիւրքահայ աւատական տնտեսութեան պայմաններում, լոկ քարոզչութեան միջոցով։ Հնչակեան միամտութիւնը այսօր էլ թարմ է սոցիալիստ Խանազատի մէջ։

սաղէմ աքսորուած էր, Ներսէս փախցնելու եւ յեղափոխական շարժման գլուխ կանգնեցնելու համար (1):

Զարմանալի հետաքրքրական են այդ յիշողութիւնները հասկանալու համար թէ ի՞նչ տեսակ գործիչներ եւ մանաւանդ ի՞նչ տեսակ սոցիալիստներ էին իրենց համար մենաշնորհ դարձրել Հայաստանի ազատութիւնը: Մենակ Տրապիզոնում սոցիալիստական պրոպագանդով տարուած Խանազատը չէր այնչափ օժտուած մի անուանի վեղարաւոր ձեռք գցելու կարելիութեամբ: «Ես ինչեր ասես որ չէին մտածում ու երազում այն ժամանակ», բացագանչում է նա ոչ միայն իր, այլ եւ ընկերների կողմից: Ոգեւորութիւնը բազմապատկւում է, լեռնանում, երբ նա հասնում է Երուսաղէմ, դառնում է հաջի – ապա սոցիալիստ եւ իրեն գտնում Խրիմեանի քով: «Տրամադրութիւնս հիանալի էր, գեղգեղում է նա: Այն միտքը միայն որ Հայրիկը Երուսաղէմում բանտարկեալի պայմանների մէջ չէ դրուած, ինձ ահագին հրճուանք էր պատճառում»:

Իր յիշողութիւնները Խանազատը գրել է հնչակեան կուսակցութիւնից հեռանալուց յետոյ, երբ արդէն հասունացած մարդ էր, եւ պէտք է հաւատալ որ յաճախ զգում էր թէ իրեն դատաստանի են կանչում 300,000 մորթուած ու ջարդուած թիւրքահայերի գլխակները․ ուստի այդ զգացմունքի անախորժութիւնը վանելու համար, ասում է թէ այդ բոլորը — հաջի – ապա սոցիալիստական արարքները — ուրիշ բան չէին, բայց միայն «երիտասարդական երազներ»: Մի ուրիշ տեղ նա այդ միեւնոյնն անուանում է «երիտասարդական մոլորութիւններ»: Որքան եւ որքան երջանիկ պիտի լինէր թիւրքահայ գիւղացիութիւնը, եթէ հայ երիտասարդութիւնն իր մոլորութեան առարկայ դարձնէր իր սեփական գլուխը՝ զարնելով նրան քարերին եւ այդպիսով ամենեւին զրկւէր ուրիշների ազատութեան համար երեւակայական հոգածութիւններ անելու կարելիութիւնից:

Խրիմեանին փախցնել չկարողացաւ Խանազատը: Փորձւած կղերականը տեսաւ որ իր առջեւ հրճւանքից պարողները քաղաքական մանուկներ էին: Հիասթափւած երազողը ձեռնունայն գնաց իր հիասթափութիւնը հաղորդելու իր նման հաջի – ապա սոցիալիստներին:

Դառնա՛նք, սակայն, այդ երազատեսների գաղափարախօսութեան, որ արծարծւում էր «Հնչակ»–ի էջերում: Մենք գիտենք արդէն, որ Ժընեւի յեղափոխականների միակ զէնքը թիւրքահայ ապստամբութիւնն էր: Այս, ինչպէս ասացինք, նախընթաց երեսներից մէկում, մի մոլեգին պաշտամունք էր հնչակականութեան համար, ժառանգած, ռուս նարոդնիկութեան միջոցով, Բակունինից: Բոլորովին զուր ջանք կը լինի, եթէ մենք որոնենք այս չափազանց կարեւոր հարցի մասին խօսող յօդուածների մէջ ո եւ է լուրջ ուսումնասիրութիւն թէ ո՛րքան կարեւոր է այդպիսի մի շարժում Թիւրքաց Հայաստանի և

1) Ռ·Խանազատ· «Յիշողութիւններ Խրիմեանի մասին», Թիֆլիս, 1908, եր· 25–30:

առհասարակ Փոքր Ասիայի ազգագրական պայմանների մէջ, ուր հայութիւնը փոքրամասնութիւն էր կազմում եւ միանգամայն մեկուսացած էր՝ ունենալով իր շուրջը բոլոր այնպիսի ազգագրական տարրեր, որոնք հայ ազգայնական շարժումների հետեւանքով արդէն իսկ թշնամաբար էին տրամադրւած դէպի հայկական անջատ ու առանձնացած ռեֆորմների գաղափարը: Չէր ասւում թէ ի՞նչպէս հնարաւոր պիտի դառնայ հայերի ապստամբութիւնը այնպիսի տեղերում, ուր նրանք խառն են ապրում ուրիշ ժողովրդների հետ: Այդ խառնակեցութիւնն այնքան մեծ էր, այնքան սերտ, որ միայն գիւղերը չէին զանազան ազգութիւնների մէջ սահմանակից, այլ եւ շատ յաճախ միեւնոյն գիւղում ապրում էին թէ հայեր եւ թէ ուրիշ ազգութիւններ: Ի՞նչպէս կարող էր այսպիսի վայրերում գլուխ գալ հայերի մի անջատ զինական շարժում եւ ի՞նչպէս կարող էր ուրիշ, աւելի նպաստաւոր պայմանների մէջ ծագած ապստամբութիւնը արձագանգել այսպիսի վայրերում:

Այսպիսի հարցեր չէին նախատեսւում: Միանգամայն անտես էր առնւում քրդական հարցը, որ կեանքի եւ մահւան հարց էր հայերի համար դարերից ի վեր: Հայ յեղափոխական նացիոնալիզմն էր, որ իր արհամարհանքը դէպի այս հարցը տարածում էր մինչեւ այնտեղ, որ պատերազմ էր յայտարարում եւ քիւրդ ժողովրդին: Այսպէս էր վերաբերւում նա եւ ուրիշ կենսական հարցերի հետ, օրինակ թէ ո՞րտեղից պիտի ստացւեն ապստամբութեան համար անհրաժեշտ միջոցները — զէնք, դրամ, առաջնորդներ:

Բոլորովին անտես անելով այսպիսի անիծեալ հարցեր, հնչակեան երիտասարդական մոլորութիւնը բաւականանում էր միմիայն մի կազմակերպչական իմաստութեամբ, այն է՝ յեղափոխական գործիչները պիտի մտնեն ժողովրդի մէջ, կազմակերպեն նրան, մնացածն արդէն կարեւոր չէ: Տիրում էր Բակունինի գաղափարը՝ թէ ժողովուրդը պատրաստ է ապստամբութեան եւ ինքը գիտէ թէ ինչպէս պիտի ապստամբել եւ կռւել, նրան պէտք է միայն նշան տալ շարժումներ սկսելու համար: Ամէն մի դժգոհութիւն, որ երեւան էր գալիս Թիւրքաց Հայաստանում, «Հնչակ»ն ընդունում էր իբրեւ ապացոյց ժողովրդի ապստամբական պատրաստականութեան: Մուշից 50 հայեր ոտով գնում են Կ․ Պոլիս իրենց տանջող քիւրդ ցեղապետ Մուսաբէյի դատին ներկայ լինելու՝ իբրեւ վնասւածներ: Վաթսուն օր անասելի դժուարութիւններ կրելով՝ հասնում են մայրաքաղաք, եւ այդ հանգամանքը «Հնչակ»–ին թւում է նշան ժողովրդական զայրոյթի, որ ամէն րոպէ կարող է փոխակերպւել ժողովրդական ապստամբութեան:

«Այո, — ասում էր այս առթիւ «Հնչակ»–ը, — հայ ժողովուրդն ընդունակ է ապստամբելու իր ներկայ հանրակեցութիւնը արւեստականապէս յեղափոխելու համար: Այո, հայ բանւոր, ռազմիկ ժողովուրդն է ապստամբութեան գլխաւոր ուժը եւ նա է այն տարրը, որ առաջին ջատագովը կը հանդիսանայ իր ներկայ հանրակեցութեան այնպիսի յեղափոխութեան, որ իր յաղ-

թանակից յետոյ իր երկրում հաստատուեն հասարակական – ռամկավարական սկզբունքներ ։

« Բայց որ հայ ժողովուրդն ապստամբէ, նրան պէտք են գործին հմուտ, բանիմաց ու անկեղծ առաջնորդներ ։ Արդ՝ ո՞րտեղ են մեզ մօտ այդ բանիմաց առաջնորդները ։ Նրանք հայ ինտելիգենտական կարգերումն են ։ Պարզորոշ նպատակներով ու գործունէութեան ծրագրով, այդ երիտասարդները, արհամարհելով ամէն տեսակ դժուարութիւններ, պէտք է ուղղեն իրենց քայլերը դէպի Հայաստան եւ կազմեն յեղափոխական մի կուսակցութիւն, մտնեն հայ ժողովրդի մէջ ։ Այդտեղ նրանք՝ յեղափոխութեան նպատակի ու իմաստի պրոպագանդայի եւ ագիտացիայի միջոցով՝ պէտք է համախմբեն ժողովրդի ուժերը, կազմեն նրանցից երկու զօրեղ կազմակերպութիւններ, մէկը՝ յեղափոխական գաղափարական պաշարով, որ պէտք է ժողովրդին յեղափոխութիւն քարոզէ ու դրդէ ապստամբելու, միւսը՝ ուղղակի մարտիկ ապստամբութեան կազմակերպութեամբ, երկուսն էլ իրենց ճիւղերով տարածուած Հայաստանի քաղաքներում ։ Եւ երբ յարմար առիթը կը ներկայանայ, երիտասարդ առաջնորդ յեղափոխական կուսակցութիւնը կկանգնի գլուխ ժողովրդային կազմակերպութեան ու Հայաստանի զանազան քաղաքներում կ՚արշաւեն նրանք Թիւրք տէրունական հիմնարկութիւնների վրայ, նպատակ ունենալով նրանց իրենց ձեռքը գցել ։ Եւ այն ժամանակ, երբ այդպէս անելով, հայն արիւնահեղ մարտից յետոյ տէր կը դառնայ տէրունական հիմնարկութիւնների, որ վայրենի կառավարութեան սիրտն ու հոգին են, եւ այնտեղ կը ծածանի իր յեղափոխական կարմիր յաղթանակի դրօշակն, այն ժամանակ եւ զօրեղ Եւրոպան տեսնելով իր խաղաղութիւնը խախտուած, պարտաւորուած կը լինի վաւերացնել հայ ժողովրդի պահանջները ։

« Ուրեմն, դէպի Հայաստան, — ահա հայրենիքից դուրս գտնուող հայ երիտասարդի ճանապարհն այսօր, որովհետեւ ժամանակը մօտ է, պէտք է պատրաստ լինել » (II, 3) ։

Այս մի ծրագիր է, եթէ կամենում էք ։ Բայց ո՞ւմ համար էր նա գրած ։ Ամենից առաջ ոչ իր՝ «Հնչակ»–ի համար ։ Եթէ ճիշտ որ հարկաւոր էր որ «հայրենասէր » երիտասարդ ինտելիգենտներ գնային Հայաստան, պրոպագանդի եւ կազմակերպման աշխատանք կատարէին, դրա համար հարկաւոր էր ժամանակ, այն էլ ոչ կարճ ժամանակ ։ Մինչդեռ հէնց իրանք հնչակեաններն էին, որ, այս « ծրագրից » մի տարի էլ չանցած՝ նետուեցին յախուռն յեղափոխական արկածախնդրութիւնների մէջ, եւ նրանց երազած կազմակերպութիւնը, որ պիտի միութիւն եւ համայնատարածութիւն մտցնէր ապստամբական գործի մէջ, վերածուեց անհատական կամ խմբական ելոյթների ։

Նշանակելին, սակայն, ապստամբութեան պատրաստութիւնը չէր, այլ ինքը ապստամբութիւնը, որ ներկայանում էր հնչակեաններին իսկապէս որ երիտասարդական, առնենք թէ՝ տղայական երազի նման ։ Հայերը գրաւում են

թրքական պաշտօնատները քաղաքում՝ կուելով, ի հարկէ, եւ դրանով ամէն ինչ վերջանում է, որովհետեւ, սարսափահար Եւրոպան ստիպւում է միջամտել եւ վաւերացնել հայկական պահանջները ։ Այսքան, տեսնո՞ւմ էք, ուժեղ է եւ յաղթական հայերի ապստամբութիւնը ։ Նոյն այդ երազական պատրանքն արտայայտւում է աւելի խոշոր, գաւեշտական լինելու չափ խոշոր միամտութեամբ եւ ուրիշ դէպքերում ։ Կարդալով լրագրերում տեղեկութիւն թէ Ռուսաստանը պահանջում է Թիւրքիայից, որ անվճար մնացած պատերազմական տուգանքի փոխարէն իրեն տրուի Էրզրում քաղաքը, «Հնչակ»–ի մարդիկ իրար են անցնում եւ յայտարարում, թէ հայերը պիտի ընդդիմանան այդ բանին՝ պատճառ բերելով որ իրենք ազգային անկախութիւն են պատրաստում իրանց համար եւ բոլորովին չեն ուզում մի բռնապետութեան տակից դուրս գալով՝ միւսի տակ ընկնել ։ Ուստի եւ հայ ժողովրդի նախապատրաստուած ապստամբական ուժերը պէտք է ուղղել երկու թշնամիների դէմ էլ, այսինքն՝ թէ՛ Թիւրքիայի եւ թէ Ռուսաստանի դէմ (I, 6) ։ *Միեւնոյն սկզբունքով հայ ապստամբութիւնը պիտի գործէր Անգլիայի եւ Ռուսաստանի դէմ, եթէ սրանք, օգտուելով հայկական շարժումներից, երեւան գային Հայաստանում եւ փորձէին իրանց քաղաքական գործիք դարձնել Հայաստանն ու հայերին* (II, 3) ։

Երիտասարդութիւնը, ճիշտ է, — իրաւունք տանք Խանազատին ասելու, — սիրում է երազել, բայց վա՜յ այն ժողովրդին, որի ճակատագիրը կախուած է երիտասարդական երազներից ։

Եւ այսպէս, ապստամբութիւն եւ միմիայն ապստամբութիւն՝ իբրեւ միակ ճար եւ միակ փրկութիւն ։ Ապստամբութիւն ամէն դէպքում եւ մանաւանդ այնպիսի զարհուրելի ժամանակներում, երբ ընդհանուր կոտորածներով էր Թիւրք կառավարութիւնը պատասխանում այդ յեղափոխական նշանաբանին — ապստամբութեան ։ Այսպէս խելացնորութեան չափ սիրահարուած էին այդ նշանաբանի վրայ հնչակեանները, իսկ երբ նրանց յաջորդեցին դաշնակցականները, բանից դուրս եկաւ, որ նրանք էլ միեւնոյն հնչակեաններն էին եւ նրանց ամբողջ բառարանն էլ այդ մի հատիկ բառից է կազմուած — ապստամբութիւն, դարձեալ ապստամբութիւն եւ դարձեալ ապստամբութիւն ։

Եւ ի՞նչ պատուաստե՞ց այդ արիւնոտ հասկացողութիւնը Թիւրքահայ իրականութեան վրայ ։ Քրքրում ենք Թիւրքահայ յեղափոխութեան ամբողջ պատմութիւնը, տեսնում ենք զատ զատ, մասնակի շարժումներ, որոնց մասնակցում են կամ բոլորովին քիչ, կամ բաւական թւով մարդիկ եւ խմբեր, բայց ոչ երբեք համատարած, ընդհանուր ժողովրդական բնոյթով ։ Յեղափոխական թերթերն այս մասնակի, տեղական շարժումները փքում, ուռցնում էին՝ ապստամբութիւն, ապստամբութիւն գոչելով եւ այսպիսով հեշտացնում էին սուլթանական կառավարութեան գործը, որ արագ կերպով եւ կատաղի վայրագութեամբ ճնշում էր շարժումը ։ Թէեւ եւրոպական մամուլն ու առանձին հրապարակութիւններ ամէն կերպ ապացուցում էին թէ հայկական ապստամ–

րութիւնն առաջել է [1], բայց Թիւրք կառավարութիւնը միշտ կարող էր վըկայ բերել հայ յեղափոխականներին, որոնք իրանք էին մշտապէս ապստամբութիւն քարոզում: Իսկ երբ հայերն իրանք էին խոստովանում իրանց ապըստամբութիւնը, ո՞ր պետութիւնը կարող էր արգիլել սուլթանին, որ նա դաղէ իր ապստամբուած հպատակներին: Անգլիա՞ն միթէ. ինքը «Հնչակ»-ը պատմում էր հետեւեալը Հնդկաստանի կեանքից.

«Իսկ երբ, վերջապէս, հասած ծայրայեղ յուսահատութեան, Հնդկաստանի ժողովուրդը փորձեց ապստամբել այդ բռնակալութեան դէմ, անգլիացիներն այնպիսի վայրենի կատաղութեամբ սկսեցին ժողովրդին զսպել, «հանդարտեցնել», որի օրինակը թերեւս չկայ պատմութեան մէջ: Լուսաւորուած անգլիացիներն աւելի արիւնարբու, ամարդի հանդիսացան այդ դէպքում, քան վայրենի քիւրդերն ու թաթարները: Ամբողջ քաղաքներ, գիւղեր հիմնովին քար ու քանդ էին անում, մարդերին ոչնչացնում էին գազանային վայրագութեամբ ու անգթութեամբ եւ անչափ, որ դաշտերը, ճանապարհները ցանուած էին մարդկային արեան գետերով. գերիների գլխին կատարում էին այնպիսի խստասիրտ եւ աղեխարշ բռնութիւններ, որոնց հանդէպ մարդկութիւնն ապշած մնացած էր» (I, 9 – 10):

Այսպէս դեռ հեռաւոր մի գաղութում, օտար մի ժողովրդի հետ: Իսկ լուսաւոր Եւրոպայի հողը քի՞չ է տեսել բարբարոսութիւններ կատարուած սեփական հարազատ ժողովրդի վրայ: Բաւական էր յիշել հէնց միայն «աշխարհի մայրաքաղաք» կոչուած Փարիզի մէջ տեղի ունեցած արիւնոտ սարսափները 1848-ի յունիսեան օրերում եւ 1871-ի կոմմունի ճնշման ժամանակ:

Ունենալով այսպիսի օրինակներ պատմութեան մէջ եւ բան ու գործ դարձնել ամէն քայլափոխում ապստամբութիւն գոչել, — այս արդէն միայն «երիտասարդական մոլորութիւն» չէր, այլ մի զարհուրելի ոճիր էր: Թիւրք կառավարութիւնը աչալուրջ հետեւում էր հայ քաղաքական մանուկներին, 1895-ին ընդհանուր կոտորածի ենթարկեց Թիւրքահայերին՝ ասելով թէ սկսել էր նրանց այն ապստամբութիւնը, որ հայ յեղափոխական կուսակցութիւնների իդէալն է կազմում: Ընդհանուր ապստամբութիւն չկար եւ չէր էլ կարող լինել. բայց ո՞վ պիտի ապացուցէր այդ բանը, մի՞թէ «Հնչակ»-ը կամ «Դրօշակ»-ը, որոնց երկու խօսքից մէկը ապստամբութիւն էր:

5.

Մինչեւ այստեղ մենք տեսանք «Հնչակ»-ի տեսական, թէորետիկ աշխատանքը, այն՝ որ կատարւում էր խմբագրատան խորքում, առանց կապուած լինելու կեանքի հետ, առանց ենթարկուած լինելու նրա ուժեղ ներգործութեան: Այդ գաղափարախօսական գործունէութիւնը առաջնակարգ հրամայական դեր

×

1) Տ., օրինակ, Кан. Мальколм Макколь. — «Отвѣтственность Англіи передъ Арменіей» «Положеніе Армянъ въ Турціи», с. 153.

է խաղում փորձի մէջ՝ նրա առաջին եւ երկրորդ տարիներում: Երրորդ տարեշրջանից՝ այս կաբինետային երեւոյթը սկսում է կամաց կամաց տեղի տալ գործնական աշխատանքին, եւ «Հնչակ»-ի համարները, երկարախօս ու ձըգձըգուած դատողութիւնների փոխարէն, սկսում են լցուել Թիւրքիայից գրուած թղթակցութիւններով, որոնց մէջ նկարագրուած էին իրերի դրութիւնը, Թիւրք կառավարութեան խստութիւնները, եւ այլն: Նշանակում էր, որ տեսաբան «Հնչակ»-ը դառնում էր կեանքի թերթ, որ պիտի իրագործէր իր թէորիաները կեանքի մէջ:

Այս կողմից շատ նշանաւոր է «Հնչակ»-ի յաջողութիւնը: Նա գտնում է իր ծրագրին համակրող շատ տարրեր, որոնց վրայ յենուելով՝ մի աննշան խմբակցութիւնից դառնում է մի ամբողջ յեղափոխական կուսակցութիւն, որ մի կարճ միջոցում մեծ անուն է հանում:

Այս յաջողութիւնը հեշտ բացատրելի է: «Հնչակ»-ը երեւան էր եկել, ինչպէս տեսանք, այնպիսի մի ժամանակ, երբ սկսել էին առաջ գալ Հայաստանն ազատող երիտասարդական կազմակերպութիւններ, որոնց մէջ ամենից շատ տարածուած էր արմենականութիւնը, մի կազմակերպութիւն, որ աւելի խօսքի կազմակերպութիւն էր, գրեթէ միանգամայն կորած գործնական կեանքի համար: Նրանից աւելի կենսունակ էր համարւում «Հնչակ»-ի խմբակցութիւնը, որի երկու երդուած անդամները, մեր վերոյիշեալ Հաջի – աղա սոցիալիստ Ռուբէն Խանազատը եւ Շմաւոն կեղծ անունով գործող Գաբրիէլ Կաֆեանը կարողանում են հնչակեան կենտրոններ հիմնել Թիւրքիայում (Տրապիզոն եւ Կ.Պոլիս), իրենց կողմը քաշելով, մանաւանդ այս վերջին քաղաքում, արմենականներին:

Ի՞նչն էր հնչակականութեան մէջ գրաւում Թիւրքահայ ազգասէր երիտասարդներին, նրա ո՞ր երեսը: Անշուշտ, ոչ սոցիալիստականը, որ, ընդհակառակը, միայն խրտնեցնողի դեր էր կատարում: Յայտնի հնչակեան գործիչ Յարութիւն Ճանկիւլեանը, խօսելով իր «Յիշողութիւններ»-ի մէջ այն բանակցութիւնների մասին, որ սկսել էր Կաֆեանը Պոլսի արմենականների հետ (որոնց մէջն էր եւ ինքը՝ «Յիշողութիւններ»-ի հեղինակը), գրում է, որ համաձայնութիւն երկար ժամանակ չէր կայանում, որովհետեւ վարիչ մարմինն (արմենականների) պնդեց իր տեսակէտի վրայ թէ սոցիալիզմի վարդապետութիւնը եւ գաղափարը մեզ համար անմարսելի են եւ մեր երկրի մէջ դեռ հող չունին» [1]:

Բայց այս արգելքը հեռացնելու ոչ մի դժուարութիւն չկար, բացի այն հըրաշագործ նշանաբանից, թէ սոցիալիզմը միայն հեռաւոր նպատակ է: Հաջի – աղա սոցիալիստ հնչակականութիւնն ամէն դիւրութիւն ունէր յափշտակելու

1) Հ. Կ. Ճանկիւլեան. — «Յիշողութիւններ Հայկական Ճգնաժամէն», հատոր 3, Պոլիս, 1913, երես 6:

ազգասիրական միտքն իր լայնախոհ եւ ծովածաւալ նացիոնալիզմով, եւ համաձայնութիւնը երկար սպասել չտուեց նրան: Կ. Պոլսում կազմակերպւում էր հնչակեան մասնաճիւղ, ենթարկւած Տրապիզոնի մէջ գոյութիւն ունեցող կենտրոնական վարչութեան:

1890 թ. յունիսի 18–ին Էրզրումում տեղի է ունենում առաջին ընդհարումը թրքական զօրքի եւ տեղական հայ ժողովրդի միջեւ, մի ընդհարում, որ կազմակերպել էին մի քանի հայեր՝ նախկին «Պաշտպան Հայրենեաց» կազմակերպութեան անդամներից: Կռւի մէջ սպանւեցին ու վիրաւորւեցին մօտ 20 հայեր եւ մի քանի հոգի էլ թիւրք ոստիկանների կողմից: Դէպքն ահագին տպաւորութիւն էր թողնում բոլոր տեղերի հայերի վրայ: Սկսւել էր այն կռիւը, որին սպասում էին Խրիմեանի «երկաթի շերեփ»–ի եւ Րաֆֆու հերոսների ժամանակից: Հայրենասիրական հրճւանքը մեծ էր. նրանից ծնւում էր յեղափոխական երգը, գուցէ առաջինն այդ շրջանում.

Ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաչիւնէն.
Հայ գիւղացին գարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած,
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղ առած [1]:

Գամառ – Քաթիպան էլ իր զառամեալ բանաստեղծական յարուն էր թամբում այսպէս.

Կեցցեն Կարինի անկեալ քաջերը, —
Նոր Հայաստանի նոր նահատակներ,
Թող անմահ պահեն հայի սրտերը
Նոցա պանծալի աղնիւ անուններ:
Եկ ուխտատեղի դարձնենք այն վայրը,
Ուր որ թափեցաւ հայոց սուրբ արիւն
Եւ պարկեշտասուն հայուհի մայրը
Համբուրել հողն բերէ իւր որդւոց [2]:

Հրճւում էր, ի հարկէ, եւ «Հնչակ»–ը:

«Մեծ արիւնահեղ յուզումներ Էրզրումում, — գրում էր նա, յուզումներ Ալաշկերտում, յուզումներ Զարշանդայում ու Երզնկայում, ընդհարումներ Խոտրջրում, ընդհարումներ Վանում ... եւ Հայաստանի հայ ժողովուրդը խլրտում, շարժւում է եւ Հայաստանի հայ բանող ժողովուրդն այդպիսով մտնում է կեանքի մի նոր շրջան, որ այնուհետեւ մի նոր ու բնորոշ կերպարանք է տալիս այդ կեանքին: Մենք չենք կարող չասել, որ այդ երեւոյթն ինքն ըստ ինքեան ուրախալի է, ուրախալի է, որովհետեւ նա ապացուցում է, որ հայ ժողովուրդը «զարթնում» է, ուրախալի է, որովհետեւ նա ապացոյց է հայ

1) «Նոր Ազգային երգարան գրպանի», Մարզւան, 1913, եր. 236:
2) Գամառ–Քաթիպայի բանաստեղծութիւններ, Պետերբ. 1895, եր. 252:

ժողովրդի անբաւականութեան իր դրութիւնից, ուրախալի է, որովհետեւ նա բողոք է հայ ժողովրդի ներկայ անտանելի հանրակեցութեան դէմ. ուրախալի է վերջապէս, որովհետեւ այդ «զարթնելը», այդ անբաւականութիւնը, այդ բողոքը նրանց կփրկեն իր այժմեան թշւառ վիճակից» (III, 3):

Սակայն միաժամանակ թերթը մատնանիշ էր անում մի ծանրակշիռ հանգամանք՝ «բայց ուրախալի խօսքով այդ նշանաւոր երեւոյթի մասին մենք չենք կարող շատանալ»: Ըմբռնելով հանդերձ այդ երեւոյթի միտքն ու բնոյթը, հայ յեղափոխականը մեծ լրջութեամբ պիտի վերաբերւէր դէպի նա եւ ճանաչէր իր կատարելի դերը նրա նկատմամբ:

... «Նա (Թիւրքահայը) շարժւում է, մերժում է հարկը տալ, կամ սկսում է ուղղակի կռւել թիւրք զօրքերի հետ, շատ անգամ քաջ գտնւելով, որ այդ անհաւասար կռւի հետեւանքն այն կլինի, որ ինքը կյաղթւի, արիւն կթափի, եւ բանտերի դռները կբացւեն նրա դիմաց: Բայց այն, ինչ ամենից շատ աչքի է ընկնում, երբ մարդ քննում է այդ յուզումները, դա յուզւած հայերի ամէն կերպի անպատրաստութիւնն է կռւելու համար, նրանց ուժերի կատարեալ անկազմակերպ լինելն է, կռւի համար կանխապէս որոշւած նախագիծ չունենալն է: Ահա հէնց այդ կէտը պիտի գրաւէ հայ յեղափոխականների լուրջ ուշադրութիւնը: Նիւթական անպատրաստութիւնը, յեղափոխական ուժերի անկանոն, անկարգապահ ու ցրւած լինելը, մի խօսքով ընդարձակ ուժեղ ու լուրջ կազմակերպութեան բացակայութիւնը եւ այդպիսի վիճակում թիւրք կառավարութեան հետ կռւելն առանց կանխապէս որոշւած նախագծի, թէեւ դա կարող էր ունենալ իր օգուտներն իբրեւ կենդանի օրինակ, իբրեւ պրոպագանդա գործով, բայց լուրջ յաղթութիւն, յեղափոխական նպատակների իրագործման նպաստող մի պայման — երբեք: Եւ այդ տեսակէտից ինտելիգենտ յեղափոխականների ներկայութիւնը Հայաստանում այդ յուզող ամբոխի կարգերում, աւելի քան երբ եւ է, անհրաժեշտ է անյետաձգելի կերպով: Կազմակերպել այդ ուժերը մէկ ընդհանուր կազմակերպութեան մէջ, որ ունենար իր նպատակների որոշ ծրագիրը, իր գործունէութեան որոշ նախագիծը, իր նիւթական ուժերի նախապատրաստութիւնը, — դա այժմ ինտելիգենտ հայ յեղափոխականների առաջին պարտաւորութիւնն է: Երբ որ կազմակերպւած կլինի այդպիսի մի կազմակերպութիւն, երբ որ այդ կազմակերպութիւնն օժտւած կլինի թէօրիական, մարդերի եւ նիւթական անհրաժեշտ զօրութեամբ, այն ժամանակ նա ընդունակ էլ կլինի, երկրի ամենայն անկիւններից, միաժամանակ հնչեցնել պատերազմի հնչակը եւ միահամուռ կերպով, կանխապէս որոշւած ու մտածւած նախագծով մղել մարտն ընդդէմ թրքական կառավարութեան: Այսպիսի պատրաստականութեամբ եւ այսպիսի կերպով յեղափոխականները կարող են հաւատացած լինել, որ յաղթութիւնն իրենց է, թէկուզ մեծամեծ զոհողութեան գնով: Այսպէս կազմակերպւած ու մարտի նախագիծը որոշւած, որոնք նախազգուշացրած կլինեն շատ անբարեյաջող պայմաններ ու հանգա–

մանքներ, որոնք անխուսափելի են այն պարագայում, երբ յեղափոխականներն անպատրաստ ու աննախադէպ կերպով են յուզւում կառավարութեան դէմ եւ կռւում նրա զօրքերի հետ»: (Անդ):

Այս երկրորդ առաջարկութիւնն էր կանոնաւոր պատրաստւած ու խելացիօրէն ղեկավարւած ընդհանուր ապստամբութեան: Բայց ինչո՞ւ համար եւ ո՞ւմ համար էին գրում այսպիսի բաներ: Ամբողջ Թիւրքահայ յեղափոխութիւնը, թէ հնչակեանների ժամանակ եւ թէ նրանցից յետոյ, երբեք ընդունակ չէ հանդիսացել կազմակերպելու բոլոր ուժերի միացման հիմքի վրայ: Նա, ընդհակառակը, միշտ էլ եղել է յախուռն, անկազմակերպ, մանկական եւ շատ անգամ հակասական շարժումների մի խառնուրդ: Այն, ինչ արաւ հէնց ինքը հնչակեան կուսակցութիւնը Էրզրումի դէպքից յետոյ, անմիջապէս ապացուցում է մեր ասածները: Թափւել էր հայի արիւնը: Իսկ ո՞ւր էր եւրոպական միջամտութիւնը: Կոյր երեխայական հաւատը, որ մինչեւ այդ տիրաբար բռնած ունէր բոլոր ազգասէրների ուղեղը, չէր հասկանում թէ ինչո՞ւ չէր շտապում այդ միջամտութիւնը: Եւ որովհետեւ «Հնչակ»-ն էլ, լքելով առաջին օրերի իր քննադատական դիրքը, միացել էր նոյն այդ կոյր հաւատացող ամբոխին, ուստի նա էլ, ընդհանուրի նման, չէր հաշտւում միջամտութեան ուշանալու հետ: Ռ. Խանազատը գրում է իր «Յուշեր»-ի մէջ.

«Ամենից հետաքրքրականն այն է որ թէ մենք, Տրապիզոնում եղածներս, եւ թէ այլ տեղերում այն համոզումն ունէինք, թէ Էրզրումի եւրոպական հիւպատոսներն իսկոյն ահազանգ պիտի հնչեցնէին այդ դէպքի առիթով եւ «Հայկական հարցը» պիտի հրապարակ գար եւ շուտով իր լուծումն ստանար. իսկ երբ այդ տեղի չունեցաւ, ամենուրեք մեծ հիասթափութիւն առաջացաւ:

«Մեր վարչութեան մէջ այդ խնդրի մասին խորհրդակցելով, եկանք այն եզրակացութեան, որ եւրոպական մեծ պետութիւններն իրենց այդ քար անտարբերութիւնից դուրս հանելու համար, անհրաժեշտ է մի մեծ ցոյց կազմակերպել հէնց սուլթանի մայրաքաղաքում, դեսպանների քթի տակ»[1]:

Ասելն ու վճռելը մէկ է լինում: Իսկոյն վարչութեան վարիչ Ռ. Խանազատը մի քանի ընկերներով գնում է Կ. Պոլիս, ցոյցն անձամբ կազմակերպելու համար: Եւ կազմակերպւում է այդ ցոյցը, որ ստացաւ Գում-Գափուի ցոյց անունը: Նա տեղի ունեցաւ Էրզրումի դէպքից մի լրիւ ամիս էլ չանցած, 1890 թ. յուլիսի 15-ին: Բայց ցոյցի գլխաւորը, Խանազատը, չկար այդ օրը Կ. Պոլսում: Ամէն ինչ կարգադրելուց յետոյ, նա ցոյցի նախօրեակին հեռացել էր Թիւրքաց մայրաքաղաքից, երեւի երբեք չմոռանալով իր հօրը, որ ճանապարհ դնելով որդուն յեղափոխութեան, խրատել էր նրան. «Զգոյշ եղիր ամէն կերպ որ էշ Նահատակ չըլլաս»: Այդպէս էլ անում էր նա՝ փախուստ տալով իր

1) «Հայրենիք», 1927, № 1, երես 124:

սարքած դժբախտ եղելութից այն պատրւակով, որ ինքը ռուսահայ է, որ իրեն հետեւում են թիւրքերը եւ այդպիսով թոյլ տալով, որ ուրիշները, որքան կամենում են, էշ նահատակ դառնան. այդպէս էլ եղաւ: Ցոյցի հետեւանքն այն եղաւ, որ էշ նահատակի դրութեան մէջ ընկան ոչ միայն հնչակեանները, այլ եւ ամբողջ Թիւրքահայ ժողովուրդը:

Յուլիսի 15-ի ցոյցն իր ամբողջ մանրամասնութիւններով նկարագրել է գլխաւոր հերոս Յար. Ճանկիւլեանն իր «Յիշողութիւններ հայկական ճըգնաժամէն» աշխատութեան 3-րդ հատորի մէջ: Կարդալով այժմ այդ նկարագրութիւնը[1], մենք տեսնում ենք թէ որքան խղճալի մի ձեռնարկութիւն է եղել նա, ճիշտ որ արժանի երիտասարդական շրջանն ապրող Ռ. Խանազատի եւ նրա ընկերակից հաջի-աղա սոցիալիստների: Մի պահանջագիր են պատրաստում նրանք եւ որոշում որ Աշըգեան պատրիարքը, իրենցից մէկի ընկերակցութեամբ, տանի սուլթանական պալատը յուլիս 15-ին, որ մահմեդական մեծ տօնի օր էր: Այստեղ էլ հաջի-աղա սոցիալիստները չկարողացան ոչ մի գործ տեսնել առանց վեղարի եւ եկեղեցու: Մեծ քաջութիւն էր եկեղեցու մէջ, ժամերգութեան միջոցին, ռեվոլվերը հանել, փախցնել ոչ միայն տէրտէրներին, այլ եւ պատրիարք Աշըգեանին: Արգահատելի տպաւորութիւն է թողնում, մանաւանդ, այդ թշւառական վեղարաւորը, որ ընկնում է Ճանկիւլեանի ոտները, աղաչում է չսպանել իրեն, ուշաթափւում է, վայր է ընկնում, բայց վերջ ի վերջոյ, երբ մի ռեվոլվերի տեղ հինգ հնչակեան ռեվոլվերներ են ուղղւում իր դէմ, անձնատուր է լինում բռնադատողներին եւ, ուշաթափ դրութեան մէջ, կառք է մտնում: Այդ կառքն էլ պիտի տանէր Աշըգեանին եւ Ճանկիւլեանին սուլթան Համիդի մօտ: Մի խեղկատակ դիտաւորութիւն, որին, ի հարկէ, ոչ ոք չէր հաւատում եւ ամենից առաջ՝ հէնց հաջի-աղա սոցիալիստները: Այս բաւական չէ. նրանք ոչ միայն չէին հաւատում, այլ եւ գիտէին, թէ ի՞նչ սոսկումներ կարող է բերել իրենց այս փորձը Հայաստանի հայ ազգաբնակութեան գլխին, ուստի եւ ցոյցից առաջ, նրանցից մէկը կտրում է հեռագրական թելերը, որպէսզի գաւառները հեռագրական հրամաններ չուղարկեն հայերին կոտորելու մասին[2]: Ինչպէ՞ս չասել, թէ այդ մարդիկ երեխաներ էին, եւ միայն դժբախտ իրականութիւնն էր կարող այդպիսիներին յանձնել ամբողջ ժողովրդի ճակատագիրը:

Յուլիսի 15-ի ցոյցն իսկապէս այն էր, ինչ կատարւեց Գում-Գափուի եկեղեցում եւ պատրիարքարանում: Աշըգեանին տանող կառքը հազիւ մի քանի քայլ էր արել, որ նրան շրջապատեցին թիւրք զինուորները: Սրանց եւ կառքին հետեւող հնչակեանների միջեւ հրաձգութիւն սկսւեց, երկու կողմից էլ եղան վիրաւորւածներ եւ սպանւածներ:

1) Անդ, 1927, № 11, երես 131:
2) Ճանկիւլեան, հատ. 3, երես 20:

Արդի՞ւնքը։

Անհուն՝ ըստ «Հնչակ»-ի։ Նա գրում էր․

«Մեր անցեալ առաջնորդողում մենք խօսում էինք այն մասին, թէ 15 յուլիսը որքան մեծ նշանակութիւն ունի եւրոպական քաղաքականութեան նկատմամբ եւ թէ Եւրոպայի վերաբերութեամբ որպիսի դիրք, ուղղութիւն ու տակտիկ պիտի ունենան հայերը յեղափոխական գործում, որ հասնեն իրենց նպատակին։ Այսօր մեր խօսքի նիւթը կլինի այն ազդեցութեան մասին, որ ունեցաւ 15 յուլիսը եւ ընդհանրապէս հայ ժողովրդի խլրտումները Թիւրքիայի վրայ եւ այն նշանակութեան մասին, որ ունի 15 յուլիսը Թիւրքիայի վերաբերութեամբ։

…«Որ եւ է թիւրքահպատակ ազգի ամէն մէկ շարժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մահացու վէրք Թիւրքիայի բազմաւեր մարմնի վրայ․ ոչ այլ ինչ է, եթէ ոչ Թիւրքիայի հոգեւարքի մահուան հնչիւնը․ ոչ այլ ինչ է, եթէ ոչ եւրոպական այս կամ այն տէրութեան անհամբեր սպասած առիթը, որի զօրութեամբ կրկին երեւան կգայ Թիւրքիայի բաժանման հարցը։

«Ահա այս նսեմ տեսարանը, իր այս սեւ ապագան նկարեցաւ Թիւրքիայի աչքեւ, երբ 15-ը յուլիսին յանդուգն կերպով ձայնեց հայ ապստամբ տարձանակը, նոյն իսկ սուլթանական քաղաքում։ Մեծ ցոյցից սուլթանական կառավարութիւնը շփոթւեց եւ կատաղեց միեւնոյն ժամանակ։ «Զօ՛րք, կոտորե՛լ ապստամբներին» գոչեց սուլթանը հոգեւարքում գանուողի յուսահատութեամբ։ Ապստամբ հայի արիւնն առաջին անգամ ոռոգեց Բիւզանդիայի փողոցները։ Հայն իր գլուխն արդէն բարձրացրած էր յեղափոխական դրօշը ձեռքին։ Ցանկարծ Եւրոպան վեր թռաւ եւ աչքը դցեց դէպի Արեւելք․ այստեղ պատրաստւում էր ազատ անկախութիւնը դարերով ստրուկ մնացած մէկ ազգի։

«Եւ Թիւրքիայի բաժանման խնդիրը նորից երեւան եկաւ։ Ամէն ճիգ, ամէն ջանք, գործ դրած սարսափած թիւրք կառավարութեան ու նրա շողոքորթ եւ կեղծոտ մամուլի կողմից Եւրոպայի աչքին աննշան դարձնելու յուլիսի 15-ը, ապարդիւն անցաւ։ «Բիւրք բիւրոց ձայնից» հայի անունը ուէն, նրա անկախ ազատութեան ձգտումը յիշեցին եւ եւրոպական մամուլը նկարագրեց մէկ օրւայ անցքը։

«Թիւրքիայի բազմաւեր մերկ մարմինը կրկին ընդհանուրի քննութեան ենթարկեց, ամենքը տեսան, որ Թիւրքիան երկունքի մէջ է, — նրան դեռ ստրուկ մնացած օտար ազգութիւնների ազատութիւնը ծնելու վրայ է, գնով նրա, Թիւրքիայի, սեփական մահի։

«Ահա թէ ինչ ցոյց տւեց Տաճկաստանին 15 յուլիսը» (, 6)։

Այս բոլորը սուտ էր, ռոմանտիկ զառանցանք միայն։ Յուլիսի 15-ը ոչ մի օգուտ չտւեց հայ ժողովրդին։ Զօղնեցին եւ եւրոպական դեսպանների քթերը։ Ընդհակառակն, այդ մի սեւ թւական է, որից սկսած՝ թիւրքահայութեան

բնաջնջումն արդէն իրական հողի վրայ է դրւում։ Այդ մի աննշան ու չնչին դէպքի օր էր, որ, սակայն, դարձաւ մի ընդարձակ ու լայն բացւած դուռ, որի միջով աղէտներ աղէտների յետեւից սկսեցին թափւել անմեղ եւ անգիտակ թիւրքահայ գիւղացիութեան գլխին։

Ճիշտ է, Աբդիւլ-Համիդը մի ճիւաղ էր, մէկը պատմութեան մէջ հազուագիւտ մարդախողող ճիւաղներից։ Բայց նրան առիթներ էին հարկաւոր, եւ ահա այդ առիթներն ամենայն առատութեամբ մատակարարում էին հայ թեթեւամիտ, քաղաքականապէս անգրագէտ յեղափոխականներն իրենց խակ, չմտածւած ցոյցերով եւ մանր ապստամբութիւններով։ Աբդիւլ-Համիդին եւ Եւրոպայի քաղաքականութիւնը նրանցից աւելի լաւ ճանաչում էր Աշըրգեանի պէս փտած ու յետադէմ կղերականը, որ, դեռ Էրզրումի, Գում-Գափուի դէպքերից առաջ, հետեւեալն էր գրում Էջմիածնի Մակար կաթողիկոսին․

«Անդէն եւ անդ է ժամանել մեր ի հրամանէ Աստուծոյ ի գլուխ պաշտաման պատրիարքութեան տեսի զամենայն։ Ահաւասիկ, տեսի զի թագաւոր՝ որ միահեծան իշխանութեամբ զաշխարհն իւր կառավարէ, խորասոյզ մնացեալ է պալատան եւ յանձին առանձին հանճար եւ ի զօրութիւն ապստամբ եղեալ զամենայն զսանձ պետութեան ի բուռն ժողովեալ է եւ ջանայ ի բաց մերժել զամենայն միջամտութիւն Արեւմտեան պետութեանց յիւր յատուկ իւրոյ աշխարհին։ Եւ քանզի միջամտութիւն կարեւորագոյն պետութեանց առաւել խակութեամբ ի 61-րդ յօդւածի դաշնագրութեան վերջին պատերազմի օրինագրութեան տեսանէ … վասն որոյ սրտմտեալ բարկանայ յոյժ ընդ հրապարակութիւնս որք ի Լոնդոն եւ ի Փարիզ լինեն։ Արդ յառաջնում անդ աւուր յանդիման լինելոյ իմ առաջի կայսերական աթոռոյ հրամայաց ինձ սուլթանն սրտմտեալ ջանս առնել զամենայն ի խափանում այնց հրապարակութեանց եւ յայլում եւ գնալոյ ընդ խօսել իւրում ընդ իս ի պալատան ի ձեռն անձնական քարտուղարի իւրոյ յաւել ասել՝ թէ անհնարին է ինձ վիճանել տալ զինքնօրէնութիւն զոր հայք երազեն, եւ ոչ միայն ինձ՝ այլ եւ ամենեցուն, որ զկնի իմ գալոց են սուլթանք նզովք դնեմ ի վերայ չտալ հայոց այնպիսի ինչ, այլ մանաւանդ ջնջումն բովանդակ խաղաղութեան յերեսանց երկրի ուխտ դնեմ պատերազմել ընդդէմ անկախութեան հայոց» [1]։

Այս մի ամբողջ պետական ծրագիր էր, մի ամբողջ համաթիւրքական ուխտ էր, որ, իբրեւ նախազգուշացում, հաղորդւում էր հայերին։ Բայց հայ ժողովրդի վիճակն այլ եւս իր ձեռքին չէր գտնւում, այլ յեղափոխական խմբակների ձեռքին․ իսկ սրանց համար սուլթանը մի ոչնչութիւն էր, որ դողում էր ամէն մի յեղափոխական տարձանակի պայթիւնից։ Այո, ի հարկէ, մի զարհուրելի մոլորութիւն էր, ոչ միայն այն պատճառով, որ մի ռազմիկ պետու-

1) Աշըրգեան Պատրիարքի գրութիւնը Մակար Կաթողիկոսին, 1889 թ․ դեկտ․ 24ից (Էջմիածնի արխիւ)։

թեան գլուխ էր սուլթանը, այլ մանաւանդ այն պատճառով, որ հայոց հարցը, հանդերձ իր յեղափոխութեամբ, արդէն վաճառքի առարկայ էր եւրոպական պետութիւնների համար: Սուլթանը երկիւղ չէր զգում դրանց կողմից եւ այդ պատճառով էլ այդքան անողոք եւ երկար ժամանակեայ ծրագիր էր կազմել հայոց հարցը ոչնչացնելու համար: Արդէն Գերմանիա երկաթուղիների կառուցման պայմանագրեր էր կապում Թիւրքիայի հետ: Դեռ նոր, 1889–ի վերջերին, Վիլհէլմ կայսրն իր կնոջ հետ գնացել էր Կ. Պոլիս եւ անձնական բարեկամութիւն հաստատել սուլթանի հետ՝ գերմանական կապիտալի շահերին լաւ ծառայելու համար, եւ Կ. Պոլսի հայ գաղութը ուղերձ էր ներկայացրել նրան՝ խնդրելով նրա միջնորդութիւնը, որ Հայաստանին տրւեն խոստացուած ռեֆորմները, բայց չէր արժանացել պատասխանի (1): Գերմանիայի հետ սուլթանի բարեկամներն էին եւ նրա դաշնակիցները — Աւստրիա եւ Իտալիա, այնպէս որ այլ եւս չկար ամբողջ Եւրոպա, որին կոչ անէին հայ քաղաքական եւ յեղափոխական երազատեսները, այլ կար միայն կէս Եւրոպա, որ հազիւ հաւասարակշռում էր միւս կէսը: Բայց Հայաստանի « փրկիչները », եթէ գիտէին էլ ուղիղ կշռադատել այս չափազանց ծանրակշիռ հանգամանքը, այնուամենայնիւ նկատի չէին առնում նրան, ինչպէս եւ նկատի չառան այն ահաւոր եւ մահացու հարւածը, որի ամենաուժեղ գրգիչներից մէկը, եթէ ոչ միակը, հանդիսացել էր Հնչակեան հիացքն ու պարծանքը դարձած յուլիսի 15–ը:

Այդ հարւածը քիւրդ վայրենի աշիրէթապետներին զինւորական կազմակերպութիւն տալն էր կամ, ուրիշ խօսքով, համիդիէ գնդերի կազմակերպումը, որ տեղի ունեցաւ 1891–ին եւ հետեւեալ տարին արդէն կատարուած իրողութիւն էր: Էրզրումի անգլիական հիւպատոս Համպսոնը հաղորդում էր իր կառավարութեան, որ այս կարգադրութիւնը շատ մեծ անհանգստութիւն է պատճառում բոլոր քրիստոնեաներին, Թիւրքերին, բայց առաւելապէս հայերին, որովհետեւ իրենք քրդերն են յայտարարում թէ իրենց զինւորական կազմակերպութիւն են տալիս յատկապէս հայերին զսպելու համար: Էրզրումի հայերից ունեւորները, հիւպատոսի ասելով, վախից վճռել են թողնել քաղաքը եւ ուրիշ տեղեր գնալ (2):

Ահա ինչ հաստ եւ ահռելի գործիք էր ստեղծում, հայերին բնաջինջ անելու համար, այն սուլթանը, որին «Հնչակ»–ը ներկայացնում էր իբրեւ սարսափահար դարձած այս բանից, որ Ճանկիւլեանն ու Աշըգեանը կառք էին նստել պալատ գնալու համար: Մեծամիտ պարծենկոտութիւնը փակել էր նրանց աչքերը, եւ մինչդեռ Թիւրք զինւորականները կազմակերպում եւ զինում էին քրդական գնդերը, նրանք նորանոր փառաբանութիւններ էին անում ընդհա-

1) «l'Arménie» ,Մինաս Չերազի, № 3:
2) «Положеніе Армянъ въ Турціи», с. 161-162.

նուր ապստամբութեան, ասել է իւղ էին ածում նոր արծարծւող կրակի վրայ, բորբոքում, շտապեցնում էին Թիւրքերին: Այդ այն ժամանակն էր, երբ համիդիէ քրդերն արդէն իրենց դերի մէջ էին մտել եւ Մուշի դաշտի ու Սասունի կողմերում ընդհարումներ էին սկսել նրանց ու նրանց միացրած Թիւրք ձիաւոր ոստիկանութեան եւ Հնչակեանների կազմակերպած հայ գիւղացիների միջեւ ... պէտք է ասել առհասարակ, որ Հնչակեան կազմակերպութիւնը մի կարճ միջոցում առաջ էր բերել մի շարք եռանդուն գործիչներ, որոնք եւ շարժումներ էին առաջ բերել Ասիական Թիւրքիայի մի երկու երեք կողմերում: Այդ մասնակի եւ ժամանակաւոր յաջողութիւններից շատ էր յղփացել «Հնչակ»–ը, շատ էր գոռոզացել ու յոխորտում էր անդադար:

« Դա մի հմայիչ խօսք է՝ ապստամբութիւն խօսքը ճնշիչ լուծի տակ հեծող մի ժողովրդի համար: Գեղեցիկ յոյսեր, ոսկի երազներ, փայփայած իղձեր, սիրուն նախագծեր, որ ստրկական կեանքը ջարդել, փշրել, ոչնչացրել էր, — այսպէս էր սկսում իր մի երկար յօդւածը՝ « Ապստամբութիւն » վերնագրով: —Հէնց այդ խօսքի մի գիւթական ձայնից միանգամից կենդանանում է ստրկի սիրտը, որ փայլեցնում է նրա աչքերը, պարզեցնում է նրա երեսը, ջերմութիւն տալիս նրա արիւնին. այդ խօսքից ինքը ստրուկը մեծանում է իր աչքին, նա ինքն իրան չի յանդգնում ճանաչել, նա ուրիշ մարդ է դարձել. իր սրտում ներկան այլ եւս աւերակ է համարում եւ նա ապրում է ապագայով, ապագայի յոյսով, ապագայի տեսիլքով: Բայց սակայն նոյն այդ մի խօսքի պատկերացումը որպիսի՜ ոգեւորական տեսարաններ է ներկայացնում իրենից, որպիսի արհաւիրքներ, որպիսի սրտաճմլիկ եւ զարհուրելի հանգամանքներ, որոնց մէջ մարդկային կրքերն՝ անսանձ ու կատաղի՝ երեւան են գալիս իրենց ամբողջ մերկութեամբ, որպէս իրենց պաշտելի գեղեցկութիւններով, նոյնպէս եւ վայրենի տգեղութիւններով: Եւ ամէն անգամ, երբ ապստամբութեան խօսքն է ասւում, ստրկի աչքին բացւում են նորանոր հորիզոններ, բոլորովին տարբեր ներկայից:

« Այսպէս է հայ ժողովրդի տրամադրութիւնն այսօր. գիւթական խօսքն էլեկտրական հոսանքի նման անցել է նրա սրտով եւ լարել նրան: Նա սպասում է այն օրին, նա սպասում է այն ժամին, երբ իր սաստիկ ձգւած ջղերը յանկարծ կ՚արձակւեն, երբ իր միշտ լարւած եւ այդ պատճառով յոգնած ուշադրութիւնը վախճան կստանայ, թողնելով իրեն հանգիստ շունչ առնել, երբ վերջապէս, հորիզոնի վրայ կնկարւէ այն արշալոյսը, որ իր արիւնագոյն ներկով կօծէ ազատ Մասիսի ձիւնապատ թագը: Հայ ժողովուրդն սպասում էր այդ օրին, այդ ժամին, երբ երկիւղը, երբ ինքնավստահութիւնը փոփոխակի կերպով տիրում են նրա սրտին, նրա մտքին: Բայց ի՞նչ կերպարանք կունենայ եւ ի՞նչ վախճան կստանայ ապստամբութեան օրը հայ ժողովրդի համար: Կլինի՞ դա հեղափոխական շարժում, որ կստանայ մի հեղափոխական բողոքի կերպարանք, թէ ժողովրդի այդ ընդհանուր ալեկոծումը կաջողէ միանգամից

տապալել այն ոչ պակաս հսկայական ուժը, որ կրում է ստրկական լուծ նման ու սպանիչ անունը: Ինքը ժողովուրդը հաւատում է իր յաղթութեանը, մենք, մենք էլ հաւատում ենք» (V, 5):

Որ ժողովուրդն իբրեւ անպատրաստ ամբոխ կարող էր հաւատալ թէ ինքը իր մերկ ձեռքերով կը յաղթէ օսմանեան զօրութիւնը, այն զօրութիւնը, որին նա ճանաչում էր 500 տարիներից ի վեր, այս, ի հարկէ, չէ կարելի թոյլ տալ ոչ մի կերպով: Այս մի խօսք էր, որ ասում էր ժողովուրդը, մանկական եւ ոչ երեխայական կամ կեղծած ժողովուրդը խաբելու համար: Չէր հաւատում այդ յաղթութեան եւ ինքը «Հնչակ»-ը, ուստի կեղծ ու պատիր դատողութիւններով, բայց միշտ պահելով ընտիր գրական ոճը, ասում էր թէ ապագան անյայտ է, թէ ամենայն դէպս պէտք է սովորել այն մտքին, թէ այսպիսի յաղթութիւն մի հատ ապստամբական շարժումով չի ձեռք բերւում: Էլի կրկնում էր յոյների, սերբերի, բուլղարների դժբախտ օրինակը եւ նախազգուշացնում էր թէ հայերի գործն այդ ազգերի գործից դժւար է, քանի որ նրանք գործում էին աւելի նպաստաւոր քաղաքական պայմանների մէջ քան այն պայմանները, որոնք վիճակւած են այժմ հայերին: Եւ դարձեալ գեղեցիկ, գրաւիչ խօսքեր ու արտայայտութիւններ: Ապստամբութիւնը բոլոր ստրուկ ազգերի սրբազան իրաւունքն է, սրբազան պարտականութիւնն է: «Եւ այն դէպքում, գրում էր «Հնչակ»-ը, երբ ապստամբութիւնը ծագում է, մի հայ անգամ չպիտի մնայ իր տանը, մի զէնք անգամ չպիտի պարապ լինի, մի հարւած անգամ չպիտի վրիպի իր նշանից եւ ամբողջ հայութիւնը պէտք է ընկնէ մի կուրծքից եւ թող երկրի մի ծայրից մինչեւ միւս ծայրը թնդայ այն ոգեւորիչ ու վսեմ խօսքը, որ պատերազմի դաշտում միացնում է ցրւած ուժերն իբրեւ եղբայրների, որ յեղափոխութեան կարմիր դրօշակն է ծածանեցնում, որ ազատութեան արեւի ծագումն է աւետում»:

Ահա այսպիսի ընդհանուր եւ համազգային ապստամբութիւնների մի ամբողջ շարք է հարկաւոր, ասում էր «Հնչակ»ը, որպէսզի վերջնականապէս գլուխ գայ Թիւրքահայերի ազատութեան գործը:

Կարդալով այսպիսի «խորիմաստ» եւ ղեկավարելու յաւակնութիւն ունեցող յօդւածներ, մարդ զարմանում է թէ այդ մարդիկ լուսնի՞ վրայ էին արդեօք ապրում, արդեօք կեանքի՞ համար էին գրում նրանք, թէ բանդագուշանքների մէջ էին միշտ եւ երբեք մատիտ չէին վերցնում նրանք իրենց ձեռքը հաշւելու համար թէ ո՞րքան հայ կայ աշխարհիս երեսին, որ կարելի լինի նրանցով ապստամբութիւնների մի երկար շարք յարուցանել իր պատերազմական ուժերով ահեղ Թիւրքիայի դէմ: Բոլորովին թոյլ տալ չի կարելի թէ՝ «Հնչակ»-ի ղեկավարներն անկեղծ էին իրենց այս անհեթեթութիւնների մէջ:

6.

1893 եւ 1894 թ. ամառը, Սասունի լեռներում, հնչակեան ագիտացիայի հետեւանքով, տեղի ունեցան գիւղացիական շարժումներ, որոնք հնչակեան-

ների կողմից որակւեցին իբրեւ ապստամբութիւն Թիւրք կառավարութեան դէմ: Այս շարժումների ոգին հնչակեան հայդուկային մի փոքրիկ խումբ էր, որի ղեկավարն էր Մուրադ անունով հնչակեան յայտնի գործիչը (Համբարձում Պոյաճեան): Այսպիսով կարծէք իրականանում էր հնչակեան վաղեմի երազը, որ, ինչպէս տեսանք, Թիւրքահայ ժողովրդի միահամուռ ապստամբութիւնն էր: Ճիշտ է, «Հնչակ»-ը տեսնում էր այդ երազի, իր այդ մոլեգնոտ պաշտամունքի միայն մի մասնակի տեղական իրագործումը, բայց չէ՞ որ չափազանց լայնասիրտ էր «Հնչակ»-ն իր ապստամբական ոգեւորութեան մէջ, եւ հաւատում ու հաւատացնում էր թէ մի շարք ապստամբութիւններ են հարկաւոր՝ հայերի անկախութիւնը Թիւրքիայում հաստատելու համար: Ի՞նչն էր ուրեմն խանգարում, որ Սասունի շարժումը դառնայ եթէ ոչ առաջինն այդ շարքից, գէթ լինի նրա նախատօնակը: Դեռ 1892 թ. ամառը, «Հնչակ»-ը շտապել էր Սասունի շարժումներին մի առանձին փոքրիկ թռուցիկի մէջ յատկացնել «Ապստամբութիւն Հայաստանում» խոշորագիր ցուցանակը, որի տակ զետեղւել էին այսպիսի տողեր.

«Յատուկ թղթատարով մի մեծ ու ծանր լուր հասաւ մեզ վերջին վայրկեանին — հնչակեան յեղափոխական կուսակցութեան նախաձեռնութեամբ, մայիսի առաջին օրերը, Սասնոյ գաւառը եւ Մշոյ դաշտի մի քանի գիւղերն ապստամբւել են կառավարութեան դէմ: Մի քանի անգամ Մուշից եւ Բաղէշից զօրքեր են ուղարկւել ապստամբների վրայ, բայց ջարդւել են: Կառավարութիւնը չունենալով բաւականաչափ զինական ուժ, գլուխը կորցրած դիմում է ուրիշ կենտրոններին օգնութիւն խնդրելով: Ապստամբական շարժումն աւելի ու աւելի ընդարձակ ծաւալ է ստանում շարունակ:

«Կեցցէ՛ ապստամբութիւնը,

«Կեցցէ՛ Սասունը» (V, 5, յաւելւած):

Այս սակայն ապստամբութիւն չէր, այլ ապստամբութիւն տաքացնելու միջոց: Թիւրք կառավարութիւնը, ի հարկէ, չէր կարող դժգոհ լինել հնչակեանների ապստամբական անչափ եռանդից: 1894-ի ամառը, նա էլ որակեց Սասունի մի քանի գիւղերում տեղի ունեցող շարժումներն իբրեւ ապստամբութիւն իր դէմ եւ հրամայեց 4-րդ զօրաբանակի հրամանատար եւ համիդիէ գնդերի կազմակերպող Զէքի փաշային ջնջել հայերի ապստամբութիւնը Սասունում: Թրքական զօրքերն արշաւեցին լեռնաբնակ ժողովրդի վրայ եւ նրա հետ հաշւի տեսան թրքական մեթոդով, այն է՝ սրի քաշելով ազգաբնակութիւնը: Կոտորեցին, ինչպէս ասում էին այն ժամանակ, մօտ 10,000 մարդ:

Բայց ապստամբութի՞ւն էր այդ:

Մենք չպիտի հաւատանք ոչ Թիւրք կառավարութեան, ոչ մանաւանդ ապստամբութեան վրայ ցնդւած հայ յեղափոխականներին: Սասունի անցքը քննելու համար կազմւեց միջազգային հիւպատոսական քննիչ յանձնաժողով,

որի ընդարձակ եւ շատ մանրամասն տեղեկագիրը մեր աչքի առջեւ է [1]: Այդ չափազանց մանրամասն քննութիւնը բերել է երեք պետութիւնների (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) հիւպատոսական ներկայացուցիչներին այն վերջնական համոզման, որ տեղի չէ ունեցել հայկական ապստամբութիւն, քաղաքական նպատակով, Թիւրք կառավարութեան դէմ, այլ եղել են ընդհարումներ քրդերի հետ՝ զուտ տնտեսական հողի վրայ: Բանն այն է, որ Սասունի գիւղացիները քիւրդ կալուածատէրերի ճորտերն էին եւ, նեղուած լինելով իրենց տէրերի խիստ պահանջներից, ընդդիմութիւն էին ցոյց տուել նրանց, իսկ Մուրադն իր հայդուկային խմբով (հինգ հոգուց) յարձակումներ է գործել քրդերի վրայ եւ չէր քաշուել նոյն իսկ գողութիւններ անելուց: Բնականաբար քըրդերն էլ աւելի կատաղութեամբ էին վարւում իրենց ճորտ հայերի հետ: Կարեւորն, ի հարկէ, այն է, որ հիւպատոսական ներկայացուցիչները ժխտելով ժխտում էին ապստամբութիւնը: Եւ այս ապացուցւում է, թէ հայ ժողովուրդը անգամ լինելիք, այնքան անմիտ չեն, որ, լոկ սիրուն Ֆրազներով եւ բացագանչութիւններով զինուած, յարձակուեն կառավարութեան վրայ: Մի Թիւրք պաշտօնական յիշատակագրից մենք տեղեկանում ենք, որ հայերը զինուած էին կայծքարի հրացաններով, դաշոյններով, կացիններով, ցակաթներով. Թէեւ յիշւած են նաեւ բերդան հրացաններ, բայց սրանք, երեւի, գտնւում էին Մուրադի եւ իր ընկերների ձեռքին [1]: Իրականութիւնն ահա այս էր, կայծքարի հրացանների եւ կացինների իրականութիւնը, եւ նրա դէմ ոչինչ չէին կարող անել Ժընեւում կամ եւրոպական մի այլ քաղաքում նստած խակամիտների կանչկռտոցները:

Բայց եթէ ապստամբութիւն չէր եղել Սասունում, նրա լեռնալանջերը ծածկած 10,000 անմեղ դիակները ծառայութիւն մատուցի՞ն հայ յեղափոխութեան, վերջապէս կատարւե՞լ էր հայ ազատագրութեան իղձը: Վերադարձել էր 1876 թ., բուլղարական օրինակը կրկնուել էր ամենայն ճշտութեամբ—Արեւելքում քրիստոնեաներին սոսկալի ջարդ, Արեւմուտքում հասարակական կարծիքի սաստիկ յուզում, խօսում էին լրագրները, խօսում, աղմկում էին միտինգները: Հայերի գործը կարծես աւելի լաւ է գնում, քան բուլղարներինը 1876-ին: Այն ժամանակ Անգլիայում պահպանողականներն էին կառավարում, որոնք աշխատում էին թաքցնել թիւրքական գազանութիւնները կամ նոյն իսկ արդարացնել նրանց: Այժմ կառավարութեան գլուխ կանգնած էին ազատամիտները, որոնք ոչ միայն ոչինչ չթաքցրին, այլ եւ իսկոյն իրանց ձեռքն առան հայոց հարցը: Յաղթանակում էր «Հնչակ»-ի գաղափարը թէ՝ հայերն իրանց շարժումներով պիտի ստիպեն Եւրոպային միջամտել յօգուտ իրենց:

1) Blue Book. No 1, 1895, Turkey 1, part p.p. 133-146.

2) Ibid, p. 11.

Ճիշտ այդպէս էլ եղաւ: Միջամտեց Եւրոպան, բայց, — ա՛յս նկատի առնել չափազանց կարեւոր է, — ոչ թէ ամբողջ Եւրոպան, այլ նրա կէսը միայն: Գերմանիան իր երկու պոչերով հրաժարուեց որ եւ է մասնակցութիւն ունենալուց սուլթանին ընդդէմ. նշանակում է՝ շահագործում էին սասունցիների արեան գետերը՝ գերման վաճառականների գրպանը չաղացնելու համար: Բայց էլի դեռ բաւական մնաց իբրեւ հայերի նեցուկ: Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի դեսպանները մշակեցին, հայկական վեց վիլայէթների համար, վարչական ռեֆորմներ, որոնք ստացան «մայիսեան» անունը, որովհետեւ 1895-ի մայիսին էր, որ նրանք ստորագրուեցին դեսպաններից եւ մատուցւեցին սուլթանին:

«Հնչակ»-ն, ի հարկէ, հասնում էր պարծենկոտութեան եւ հրճւանքի գագաթնակէտին: Եւ ո՞վ կարող էր զրկել նրան այդքան եւ էլ աւելի փառաւորւելու իրաւունքից: Չէ՞ որ այս բոլորն իր գործն էր, միայն իր, առանց որ եւ է մի ուրիշի մասնակցութեան: Դեռ մայիսի ռեֆորմներից առաջ, նա գրում էր.

«Անցեալ օրն Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քիմբերլէյ մի երկար ճառով յայտնեց այն միտքը թէ իրեն հաստատ յայտնի չէ, որ հայ յեղափոխականներ կան, որ դրանք խիստ կազմակերպուած են եւ որ հայ ժողովրդի մեծամասնութիւնը յեղափոխական տրամադրութեան մէջ է, եւ աւելացրեց, թէ այսօր հայկական խնդիրը լուծել կարելի է միայն այնպէս, որ բաւարարութիւն տրւի այդ հայ դժգոհ տարրերին: Դա չէ՞ նշանակում արդեօք, ուրիշ խօսքով, որ հայկական խնդիրն ու իր լուծումն այսօր կախուած են հայ յեղափոխականներից: Ահա մի քիչ ճշմարտութիւն անգլիական մի մինիստրի շուրթներից ելած, որ շատ շատերին հայերից, որպէս եւ Թիւրք կառավարութեան կ'ապշեցնէ եւ կկատաղեցնէ միանգամայն:

«Այսպէս, այսօր մինիստրների կողմից անգամ ճանաչուած եւ հաստատուած իրողութիւն է, որ հայկական խնդիրն իր ներկայ եռանդուն վիճակում, որը բերել նրան դրել է իր լուծման նախընթաց օրը, պարտական է հայ յեղափոխականներին ... պատասխանը պարզ է. անցեալ ամիսներում արդէն, Սասունի դէպքէն անմիջապէս վերջ, մենք գրեցինք — մենք կշարունակենք, եւ աւելի մեծ եռանդով, մեր յեղափոխական գործունէութիւնը: Մենք կնայենք թէ ինչ է անում Եւրոպան իր քննութիւններով ու դիպլոմատիայով, եւ պէտք եղած դէպքում յեղափոխական շարժումներով մենք կծանրանանք նրա վրայ, այդպիսով հարկադրելով նրան լուծում տալ մեր խնդրին» (VIII, 4):

Մի գիրք, որ վայել էր մի յաղթողի, մի այնպիսի յաղթողի, որ իրան զգում էր դրութեան տէր, ուժի եւ հեղինակութեան ամպածրար բարձունքները թառած: Այստեղից նա սպառնում էր Եւրոպային, սպառնում էր հարկադրել նրան: Եւ եթէ, սակայն, այդ դառը եւ մինիստրներից անգամ երես առած կազմակերպութիւնը կարողանար մի յստակ հայեացք գցել իր անցեալի վրայ, երբ նա լոկ մի համեստ տեսաբան էր, կիմանար թէ որքան հեռու

են մնացել այժմ նրա վաղեմի խիզախներն ու դաւանութիւնները: Մայիսեան ռեֆորմներն այժմ բաւարարում էին նրան, եւ նա համարում էր այդ Թուղթը հայոց հարցի լուծում: Իսկ ո՞ւր մնաց ազգային անկախութիւնը, հայ ժողովուրդը Թիւրքիայից բաժանելու անհրաժեշտութիւնը, որոնց մասին այնքան երկար ու այնքան պերճօրէն նա ճառում էր իր գոյութեան առաջին երկու տարիներում: Այդ ժամանակ էլ նա ծաղրում էր նորակազմ դաշնակցական կազմակերպութիւնը այն պատճառով, որ նա իր քաղաքական պահանջների չափանիշ էր ընդունել Ներսէս պատրիարքի այն ծրագիրը, որ խօսում էր Թիւրքաց Հայաստանի ինքնավարութեան մասին: Չափազանց համեստ, չափազանց խղճուկ էր այն ժամանակ «Հնչակ»-ին թւում այդ ինքնավարութիւնը, իսկ այժմ բաւարարւում էր Ներսէսի ծրագրից էլ համեստ ու սեղմ վարչական կարգով:

Այս ցոյց էր տալիս, որ Թիւրքահայ յեղափոխութիւնը չէր կարողանում իրան խարսխել հաստատ ու ամուր գաղափարախօսութեան վրայ: Յեղյեղուկ, փոփոխական շրջմոլիկ, նա կարծում էր յարմարուել ամէն մի դէպքի, ամէն մի պահանջի, եւ այս դառնում էր, վերջ ի վերջոյ, գաղափարի շահագործում, նրան կուսակցական եւ անձնական եսամոլութեան ստրկացնելու համար: Այսպէս էր ոչ միայն հնչակեան կուսակցութիւնը, այլ եւ այն բոլոր կազմակերպութիւնները, որոնք կպած էին հայոց հարցի դժբախտ մարմնին՝ իբրեւ իրենց միակ մասնագիտութեան:

Մայիսեան ռեֆորմների վրայով անցան ամբողջ չորս ամիս, եւ Թիւրք կառավարութիւնը կատարեալ լռութիւն էր պահպանում երեք մեծ պետութիւնների այդ պահանջի նկատմամբ: Այս լռութիւնն անշուշտ անխորհուրդ չէր: Դիւանագիտական բեմի վարագոյրի յետեւից, այդ միջոցին, հայ ժողովրդի արիւնը նորից վաճառքի էր հանուած իմպերիալիստական բորենիների միջեւ. կատարւում էին քամահելի սակարկութիւններ, եւ սուլթանը շահում էր նոր կողմնակիցներ: Ռեֆորմներ պահանջող պետութիւններից երկուքը — Ռուսաստան եւ Ֆրանսիան — համաձայնութիւն էին կայացնում Աբդուլ-Համիդի հետ, որոշ հարցերի շուրջը, որոնցից գլխաւորն էր մեկուսացնել Անգլիան, որ հայոց հարցն իր ձեռքն էր առել եւ դրանով խիստ մեծ ազդեցութիւն ձեռք բերել Կ. Պոլսի եւ այլ տեղերի հայութեան վրայ: Ռուսաստանը յանձն էր առնում լինել Թիւրքիայի պաշտպանն ու աջակիցը սուլթանի հակահայկական քաղաքականութեան մէջ, իսկ Ֆրանսիան, իբրեւ Ռուսաստանի նոր դաշնակից եւ կամակատար, իր վրայ էր վերցնում եռանդուն աշխատակցութիւն Անգլիայի ջանքերին դիմադրաւելու համար: Եւ ահա այդ բոլոր սակարկութիւններից, առ ու ծախի համաձայնութիւններից դուրս էր գալիս մի սոսկալի դատավճիռ հայ ժողովրդի համար — բնաջնջում:

Այդ դատավճիռը պիտի գործադրութեան մէջ մտցնէր Թիւրքիան, ասելով թէ հայերի մէջ սկսել է ընդհանուր ապստամբութիւն, որ եւ, ի հարկէ,

պէտք է ճնշել: Ահա ուրեմն ինչ էին բերում մայիսեան ռեֆորմները, նոյն իսկ նախ քան օրէնք դառնալը, երբ նրանք դեռ միայն երեք պետութիւններից առաջարկուած մի նախագիծ էին: Կարո՞ղ էր անխնայ մահուան դատապարտուող թշուառ, անլեզու, անզէն, ապստամբութեան ոչ մի միտք ու հնարաւորութիւն չունեցող Թիւրքահայ գիւղացիութիւնը որ եւ է պաշտպանութիւն գտնել դիւանագիտական բորենիների արձակած մահավճռի դէմ, երբ նրա անունից խօսող յեղափոխական բանդագուշանքը շարունակ երգում, փառաբանում էր ընդհանուր ապստամբութիւնը եւ ամէն քայլափոխում կուրծք էր ծեծում թէ ամբողջ հայ ժողովուրդը լցուած է ապստամբելու բուռն տենչանքով: Մահուան վճռի հեղինակները կարող էին յենուել հէնց հայ յեղափոխութեան վրայ, իբրեւ անժխտելի ապացոյցի վրայ:

Արդէն Պետերբուրգի ոստիկանական բաժանմունքը 1895-ի ապրիլին իմաց էր տալիս Թիֆլիսի ժանդարմական վարչութեան, որ ինքը արտասահմանի իրազեկ պաշտօնական անձերից (իմա՛, Թրքական աղբիւրներից) տեղեկութիւն է ստացել, որ մայիս ամսին սպասւում է «հայ բնակչութեան զինուած ապստամբութիւն, Թրքական Փոքր Ասիական նահանգներում»[1]: Նոյն այս սպասուող շարժման մասին ոստիկանական բաժանմունքն ուրիշ ազդարարութիւններ էլ ուղարկում էր նոյն վարչութեան՝ նկատի առնելով որ կարող են անկարգութիւններ ծագել սահմանագլխի վրայ:

Սակայն եթէ մայիս ամսին հնարաւոր չեղաւ ապստամբութիւնն սկսուած յայտարարել, այդ, անշուշտ, այն պատճառով էր, որ հայ կազմակերպութիւններն առիթ չէին տուել: Ամէնքը շատ գոհ էին մայիսեան ռեֆորմներով եւ հանգիստ սպասում էին նրանց գործադրութեան: Բայց ահա հատնում է հնչակեան համբերութիւնը: Իրան, յաղթողին, անշուշտ, սազ չէր գալիս երկար սպասողի դերը, ուստի շտապում էր իրագործել այն սպառնալիքը, որ կարդացել էր Եւրոպային վերեւում մեր բերած առաջնորդող յօդուածում:

Կ. Պոլսի անգլիական դեսպան Հայասէր Ֆիլիպպ Քիւրին այսպէս էր նկարագրում այդ բանն իր կառավարութեան ուղարկած զեկուցման մէջ. Հնչակեան կուսակցութիւնը Կ. Պոլսի դեսպաններին ուղարկում է մի շրջաբերական, որի մէջ յայտարարում է թէ հայերն ուզում են սարքել մի խաղաղ ցոյց՝ յայտնելու համար Թիւրք կառավարութեան իրենց դժգոհութիւնն այն առիթով, որ բարենորոգումների ծրագիրը մինչեւ այժմ չէ մտցուած կեանքի մէջ: Այդ ցոյցը տեղի է ունենում սեպտեմբերի 30-ին (2 տ.): Բայց, հակառակ խոստման, այդ մի խաղաղ ցոյց չէր, այլ զինուած: Բոլորի զէնքերը (ռեվոլվերներ) միեւնոյն տեսակի էին, եւ այս մի ապացոյց համարուեց, որ նրանց մատակարարել է յեղափոխական կազմակերպութիւնը: Ցուցարարները, թւով մօտ 2,000 մարդ, հաւաքուեցին Գում-Գափուի եկեղեցում: Պատրիարք Իզմիրլեանը

1) «Նորք» հանդէս, Երեւան, № 5-6, երես 43:

սկսեց խրատել նրանց, որ յետ կենան ցոյցից, սպասեն մինչեւ որ պետութիւնները կը հարկադրեն, որ սուլթանը ստորագրէ ռեֆորմների ծրագիրը: Բայց մի երիտասարդ կանչեց՝ «Շա՛տ ենք սպասել» եւ յարձակուեց պատրիարքի վրայ, որ հազիւ կարողացաւ թաքնուել մերձակայ սենեակում: Այնուհետեւ ցոյցն ուղղուեց դէպի Բ. Դուռը (այս պատճառով էլ ստացաւ Բաբ-Ալիի ցոյց անունը):

Թիւրք կառավարութիւնը վաղօրօք իրազեկ էր այդ ցոյցին եւ իր պատրաստութիւնն էր տեսել: Նա զինել էր սոֆթաներին եւ մահմեդական խուժանը հաստ բիրերով եւ ուղարկել էր նրանց փողոց: Ցուցարարների ճանապարհները կտրեցին թիւրք ոստիկանութիւնը եւ զօրքերը՝ հրամայելով նրանց ցրուել: Բայց որովհետեւ ցուցարարները զինուած էին, ուստի դիմադրութիւն առաջ եկաւ նրանց կողմից, հրաձգութիւն սկսուեց երկու կողմերի միջեւ: Մի հայի արձակած գնդակով սպանուեց զինւորական հրամանատարը, թիւրքերը յարձակում գործեցին, իսկ հայերը փախուստի դիմեցին՝ թողնելով կռւի տեղում բազմաթիւ դիակներ: Այնուհետեւ սոֆթաներն ու խուժանը սկսեցին իրենց գործը՝ փողոցներում յարձակուելով հայերի վրայ եւ իրենց բիրերով ջարդելով նրանց գլուխները: Սարսափն ու ահաբեկումը տիրեցին մայրաքաղաքի եւ նրա արուարձանների վրայ [1]: Կոտորեցին մօտ 2,000 հայ:

Այդ գործն էր ահա, որ «Հնչակ»-ը համարում էր իր համար «յաղթութիւն»: Այս վերնագիրը կրող առաջնորդող յօդուածի մէջ նա ասում էր.

«Կ. Պոլսում սեպտեմբեր 18-30-ին տեղի ունեցաւ մի մեծ դէպք: Հնչակեան ցոյցը, որ ընդունեց այնպիսի ծաւալ ու սպառնական կերպարանք, հայկական խնդրին տուեց մի մեծ ու անմոռանալի ծառայութիւն:

«Այն դրութիւնը, որի մէջ գտնուել էր մեր խնդիրը, եւրոպական դիպլոմատիայի հետ ունեցած բանակցութիւններում, վերջին ամիսներում պարզորոշ կերպով նկատելի էր դարձնում, որ սուլթանի յամառութիւնը պարզապէս յամառութիւն չէր: Եւրոպական դիպլոմատիան՝ իր թղթի կտորներից ու շատախօսութիւններից զատ՝ ոչ մի վճռական քայլ չփորձեց անել: ... Քնացնել մեր խնդիրը, խաբելով մեզ մի քանի բանտարկուածների արձակումով, որոնք վերջը կրկին պէտք է ձերբակալուէին, կուրացնել մեզ իր հանած բանակցական պղպջի փուչիով, դրան յանգաւ ի վերջոյ եւրոպական դիպլոմատիայի ընթացքը: Եւ մեր խնդիրը կրկին պինդ քնանալու, գուցէ մեռնելու վրայ էր: ... Հնչակեան կուսակցութիւնը մի մեծ ցոյցով այս անգամ նախազգուշացրեց այդ կորուստը եւ վառեց փրկութեան կանթեղը: Այսօր ամբողջ Եւրոպան, կառավարութիւններ, դիպլոմատիա, մամուլ, հասարակութիւն — սարսափած հայ յեղափոխական կարմիր տեսիլից, մի չտեսնուած մեծ իրարանցման մէջ են ընկել հայկական խնդրի առիթով: Ցոյցը, յեղափոխութեան այդ ձայնը, կրա-

1) Bbue Book, Turkey No 2, (1896), p. 50.

րեց պետութիւնների հաշւի թելը, պատռեց նրանց դիմակները անհաճութիւն պատճառելով նրանց եւ ստիպեց նորից եւ այլ եւս լուրջ կերպով դիմել հայկական խնդրի լուծման: Ի՞նչ. այդ ստրուկ ժողովուրդն ունի իր մէջ այդքան ուժ, գիտակցութիւն, վճռականութիւն եւ ազատութեան սէր: Ի՞նչ. նա կարողանում է անել եւ սպառնալ շարունակել յեղափոխական շարժումներ ...

... «Մենք տարինք մի մեծ յաղթութիւն եւ կձգտենք մեր ամբողջ եռանդով հասնել վերջնական յաղթանակին: Ամէն տեղ կռիւ կմղենք, ամէն տեղ զոհեր կտանք, եթէ ստիպեն մեզ այդ անել, եթէ շուտափոյթ լուծում չտրուի մեր խնդրին:

«Այո, եթէ պէտք լինի, կդիմենք նոր եւ նոր կռիւների, նորանոր յաղթութիւնների համար: Ասում ենք դարձեալ եւ դարձեալ — մեր ճակատագիրն ու ապագան մեր ձեռքն են այսօր:

«Կեցցէ՛ յաղթութիւնը» (VIII, 10):

Կուրութիւնն այնքան խոր էր գնացել հնչակեան Փրազամոլութեան մէջ, որ նա չէր նկատում նոր ահաւոր երեւոյթը — կոտորած նոյն իսկ մայրաքաղաքում, դեսպանների քթի տակ, կոտորած ամենավայրենի նախնադարեան միջոցներով. կաշառուած վարձկան խուժանը, որ փայտերով ջախջախում էր իր ձեռքն ընկած զոհի գլուխը: Եթէ սառը դատելու, իրողութիւնների մէջ խորաթափանց լինելու ընդունակութիւնն իսպառ չոչնչացած չլինէր, առանց մեծամեծ քննութիւնների կարելի կը լինէր եզրակացնել այս սարսափելի փաստից, թէ Աբդուլ-Համիդն այնքան մի հզօր բռնակալ չէր, որ յանդգնէր, առանց վաղօրօք պետութիւնների հաճութիւնն ստանալու, ողողել մայրաքաղաքի փողոցները հազարաւոր անմեղ մարդկանց արիւնով: Դեսպաններն այդ սպանութիւնների առիթով մի ողորմելի թուղթ ուղարկեցին Թիւրքիայի արտաքին գործոց մինիստրին: Մարդասպանը ազատ էր իր գործողութիւնների մէջ: Հնչակեան ցոյցը մի հաստատութիւն է, որ սկսել է հայկական ընդհանուր ապստամբութիւն, եւ սուլթանը մտնում էր այդ ապստամբութիւնը զըսպողի դերի մէջ: Կ. Պոլսի կոտորածը մի ազդանշան էր: Ութ օր հազիւ անցած՝ կոտորածն սկսւում է Տրապիզոնում: Միաժամանակ ցոյց տալու համար, որ ինքը միանգամայն բարեացակամ է այդ ապստամբ ժողովրդի վերաբերմամբ. Աբդուլ-Համիդը վաւերացնում էր մայիսեան ռեֆորմները եւ նշանակելով Շաքիր փաշային բարձր կոմիսար, ուղարկում էր Հայաստան ռեֆորմները կեանքի մէջ իրագործելու համար: Սկսւում էր մի ահռելի արիւնոտ պաւէշտ, որի նմանը չէին տեսել պատմութեան էջերը:

Իսկ «Հնչակ»-ի համար այս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ... «մեծ յաղթանակ»: Ահա ինչ էր գրում նա հոկտեմբերի 20-ին.

«Հեռագիրն, այսօր, ամսիս 18-ին, հաղորդում էր, որ վերջապէս սուլթանը պաշտօնական իրադէն ստորագրելով, ընդունում է Հայաստանում

մտցուելիք բարենորոգումների նախագիծը ներկայացուած մայիսին երեք մեծ պետութիւնների կողմից, վերջերս փոփոխուած:

« Այսպէս, վերջապէս, մենք ստիպեցինք այդ վայրենի բաշիբոզուկին գլուխ ծռել մեր առջեւ, որ ուխտել էինք մեր կեանքի գնով, մէկ ուխտ, որ անյողդողդ, նպատակայարմար կերպով, օրինակելի ժրաջանութեամբ ու անձնազոհութեամբ կատարեց մինչեւ այժմ, ամբողջ ութ տարուայ ընթացքում, հնչակեան կուսակցութիւնը:

« Այսպէս, վերջապէս, ստիպեցինք մեր կատաղի դահճին ճանաչել հայ ժողովրդի իրաւունքը, լսել նրա ձայնը, հնազանդուել նրա ձգտումների ու բարոյական զօրութեան առջեւ:

« Այսպէս, վերջապէս, այսօր համայն հայութիւնը, համայն աշխարհ վըկայ է կուսակցութեան այս մեծ յաղթութեան, որ մենք տարինք այնքան արեան եւ այնքան եռանդի զօրութեամբ:

« Եւրոպական երեք տէրութիւնների անընդհատ ստիպողական, մինչեւ իսկ սպառնական դիմումները եւ միւս երեք մեծ պետութիւնների բարոյական աջակցութիւնն առաջիններին՝ ամբողջ մէկ տարուայ ընթացքում չկարողացան յաղթել այդ մարդահրէշի վայրենի կամքը: Եւ այդ կամքի ջախջախողն ու անդամալուծողը եղաւ հնչակեան կուսակցութիւնը, որ իր վճռական յանդուգն ապստամբական շարժումով նոյն իսկ մայրաքաղաքում, որ իր յեղափոխական գնդակի պայթիւնով՝ արձակուած նոյն իսկ սուլթանի ականջի տակ, ցոյց տուեց մէկ առարկութիւն շատ աւելի զօրեղ, քան ամէն մի դիպլոմատական միջոց » (խօսքեր Թայմզի): Միւս կողմից նոյն այդ պատմութիւնը նոյնպէս երկիւղի ու շփոթութեան մէջ գցեց Եւրոպային եւ սրան էլ ստիպեց շտապել անմիջական ու սպառնական կերպով ծանրանալ սուլթանի վրայ:

« Եւ այսպիսով մեր գործը եղաւ մեծ, եղաւ յաղթական ...

« Յայտարարելով մեր այդ մեծ յաղթութիւնը, որ մի նոր դարագլուխ է բացում հայ ժողովրդի կեանքում, նայենք այժմ մեր դրութեան » (VIII, 18):

Իրօք, եթէ որ եւ է դարագլուխ էր բացւում հայ կեանքի մէջ, այդ ամենեւին հնչակեան այդ խեղճ ու խորապէս զզւելի կանչկռտոցները չէին, այլ այն, ինչ այդ միջոցին իսկ, այդ ինքնապարծ կռուեցածքի րոպէին, կատարւում էր Հայաստանում: Այստեղ սուլթան Աբդուլ-Համիդը « խաղաղեցնում » էր ապստամբ հայերին: Շաքիր փաշան գաւառից գաւառ էր շրջում, եւ նրա հետ գնում էր ջարդը, ընդհանուր ջարդը: Որպիսի արիւնոտ քրքիջ մարդկութեան վրայ: Եւ այդ քրքիջը միայն Թիւրք բաշիբոզուկը չէր արձակում, այլ եւ Աբդուլ-Համիդ Բ-ը: Նրա հետ ձայնակից ու սրտակից էր եւ ռուս բաշիբոզուկը, նոյնպէս եւ Նիկոլայ Բ-ը: Այս ճիշտ որ մի դարագլուխ էր մարդկութեան պատմութեան մէջ: Թիւրքիայում, — ի հարկէ, նոր չէին սովորում ամբողջ ժողովուրդներ ջարդելը: Այդ սուլթանների բնական իրաւունքն էր: Բայց որ սուլթաններին այդ սարսափելի գործի մէջ քաջալերիչ ու խորհրդատու

հանդիսանայ մի « աստուծոյ օծեալ », մի « քրիստոսապաշտ », աւելացնենք նաեւ, հայ հոգեւորականների լեզուով, « աստուածանման » ու « քրիստոսանըման » թագաւոր — ա՛յդ էր ահա նորութիւնը: Այդ թագաւորի դեսպան Նելիդովը շշնջում էր Աբդուլ-Համիդի կայսերական ականջներին. «massacrez Majesté, massacrez» (կոտորեցէ՛ք, ձերդ մեծութիւն, կոտորեցէ՛ք): Այդ թագաւորի ընդհանուր հիւպատոսը Էրզրումում կոտորածը ղեկավարող Թիւրք պաշտօնեաների խորհրդատուն էր: Այդ թագաւորի արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկին էր, որ ձեւակերպեց շնական դաւանանքը՝ « Հայաստան առանց հայերի »:

Կոտորուած հայերի թիւն ընդունուած է հաշուել 300,000: Այն ժամանակ, երբ այդ մարդկանց արեան լճերը դեռ չէին ծծուել հողի մէջ, հեռագիրը լուր է տարածում երկրի բոլոր կողմերը թէ Նիկոլայի կինը, այժմ տխրահռչակ Ալեքսանդրան, Ձմերային պալատի մեծ հարկինքի մէջ, բարեհաճեց պարել սուլթանի կողմից նոր եկած փաշայի հետ: Երկու բաշիբոզուկներն էլ միատեսակ էին մտածում խաբել աշխարհը, ասելով թէ հայերն ապստամբուել են: Եւ դրեթէ միաժամանակ Թիւրք կառավարութիւնը Կ. Պոլսի Իզմիրլեան պատրիարքին էր առաջարկում [1], իսկ ռուս կառավարութիւնը՝ Խրիմեան կաթողիկոսին [2], որ նրանք կոնդակներով յորդորեն իրենց ժողովրդին, որ հանդարտ կենայ եւ չյարձակւի մահմեդական ազգաբնակութեան վրայ: Սուլթանացարական սրտակցութիւնն այնքան սերտ էր եւ հարազատ, որ այս երկու առաջարկութիւնները դրեթէ միեւնոյն բառացի արտայայտութիւններն էին կրում իրանց մէջ:

Եւ այսպէս, անլուր կերպով շարախօսուողը խեղճ, անզէն Թիւրքահայ գիւղացիութիւնն էր: Երբ նրա մնացորդները, կոտորածներից սարսափահար, դէս ու դէն փախան եւ նրանցից մօտ 80,000 հոգի կիտւեցին Կարսի շրջանում, ռուս ժանդարմերիան այդ բազմութեանը նայում էր՝ իբրեւ ընդհանուր ապստամբութիւնից փախածների վրայ: Նրա տեղեկագրի մէջ մենք կարդում ենք. « Թիւրքիայում հայերի ընդհանուր ապստամբութիւն յարուցանելու անյաջող փորձերից յետոյ, որ վերջացաւ հայոց հրոսակախմբերի կատարեալ ջախջախումով, քրդական անկանոն զօրքերի ձեռքով եւ ապստամբների ծանր կոտորածով Սասունում եւ շրջակայ հայ գիւղերում — մեր եւ պարսկական սահմանները շտապեցին թողնել Եւրոպայի եւ Ռուսաստանի հայ յեղափոխական կոմիտէների գործակալները ու հրոսակախմբերի մնացորդները, իսկ նրանց յետեւից փախան եւ ջարդից խուսափած Թիւրքահայերը: ... Սկըզբում այդ փախստականներն իրենց ցոյց էին տալիս կատարելապէս քաղաք—

1) Տ. Իզմիրլեան Պատրիարքի Թուղթը Օսմ. դատական նախարարին 1895 թ. դեկտեմբերի 4ից: Ձեռ. Էջմիածնի արխիւ:

2) Տ. Ներքին գործերի մինիստր Գորեմիկինի նամակը Խրիմեան Կաթողիկոսին, 1895 թ. հոկտեմբերի 31ից: Ձեռ., անդ:

ւած, անօգնական եւ կարօտ ռուսահայերի օժանդակութեան: Իրենց փախըստական անւանողների ինքնութիւնն անհնարին էր որոշել որ եւ է բանով, եւ եթէ նրանք մերկացւում էին մի քանի անուն կրելու մէջ, ապա դրանք ուղղակի բացատրութիւն էին տալիս, թէ այդ անում են իրենց հետքերն թիւրք կառավարութեան հնարաւոր պահանջից թաքցնելու նպատակով, քանի որ նրանց սպառնում էր պատիժ, իբրեւ ապստամբութեան կարծեցեալ մասնակիցների» (1):

Այս եղանակով էր ահա, որ ոչխարի պէս մորթւած մի ամբողջ ժողովուրդ գրւում էր ընդհանուր ապստամբութեան ելածի դիրքում եւ ստանում էր, այդտեղ էլ, ջարդւածի համբաւ: Թիւրք եւ ռուս կառավարութիւնների հնարած այս առասպելը պաշտպանեց եւ ապացուցւած հրապարակեց եւրոպական վաճառւող մամուլը:

7.

Սոսկալի իրականութիւնը, որ յուզել էր ամբողջ քաղաքակիրթ կոչւած աշխարհը, հարկադրեց «Հնչակ»-ին իջնել իր երեւակայած «մեծ յաղթանակի» գագաթից եւ գոնէ մի քիչ փոխել իր լեզուն: Պահպանելով իր արտաքին վսեմ ձեւերն ու արժանաւորութիւնը, նա իրապէս ներկայանում էր ծանր հարւածից չշմածի նման, դէս ու դէն էր ընկնում, մեղադրում էր ուրիշներին, ամբողջ աշխարհը, բայց ոչ երբեք իրան. գրկւածի, խաբւածի գանգատն էր անում, մերթ յարձակւում էր Եւրոպայի վրայ, մերթ ջերմ յոյս էր դնում նրա վրայ ուղղակի մանկական թեթեւամտութեամբ:

«Իրերի վիճակն այն կերպարանքն էր առել, գրում էր նա, որ այժմ հայկական խնդիրը ոչ միայն չլուծւեցաւ, այլ մտանք նրա երկունքի բուն ճգնաժամը, իր վախճանի սկիզբը: Վերջին 10 տարւայ դէպքերն այնպիսի արագութեամբ յաջորդեցին միմեանց եւ արեան ու բոցի գծով օձի պէս սողացին ամբողջ Հայաստանի երեսով, որ այդ ողբերգութիւնը պէտք է մօտենայ իր վախճանին» (VIII, 19):

«Հնչակ»-ը գիտէր ելքի, փրկութեան ճանապարհը: Բայց այդ մի նոր բան չէր, նոր յայտնութիւն չէր, այլ դարձեալ հինն էր, այն, որ գիտէր կրկնել հնչակեան պարկապզուկը — ապստամբութիւն, ապստամբութիւն, ընդհանուր ապստամբութիւն:

«Այս րոպէիս, — դրականապէս պատւիրում էր նա, — մենք կանգնած ենք սոսկալի հարցի առջեւ — մեր ոչնչացումը Թիւրքաց Հայաստանում եւ կամ Հայաստանի բոլոր կենդանի ուժերի պատրաստականութիւնը ոտքի ելնել մեծ ապստամբութեամբ եւ ստիպել Եւրոպային վերջապէս մի բաւարար լուծում տալու մեր խնդրի նկատմամբ: Եթէ սպառնացող կորստի պատճառով այս խնդրին նորից եւ աւելի ընդարձակ արծարծումն աւելի անհրաժեշտ է եւ

1) «Նորք» հանդէս, Երեւան, 1925, № 5-6, էջ. 435:

դա մեզնից եւ միմիայն մեզնից է կախւած, միւս կողմից Եւրոպայից է կախւած նրա վերջնական լուծումը:

... «Այժմ մեր վերջին ու ամենաահաւոր րոպէն է. ո՞վ է այն խելօքը, որ կը յանդգնէ պոռալ մեր երեսին, թէ կանգ առէք, երբ մեզ կոտորում են, երբ մեզ ստիպում են դիմադրել: Ո՞վ է այն տխմար չարագործը, որ կփորձէ այժմ վհատութիւն սերմանել հայի սրտում: Ո՞վ է այն զարշելի անձը, որի սիրտն այս վերջին րոպէին սարսափ չզգայ հայ ժողովրդի անկման մի մտածումից անգամ: Ո՞վ է այն ստորաքարշը, որ այս վերջին րոպէին կյանդգնէ ցեխ գցել այն մարդկանց վրայ, որոնք իրենց կեանքի եւ արեան, անձնազոհութեան ու հմտութեան գնով իրենց ձեռքն են առել հայ ժողովրդի փրկութեան գործը: Ուզում ենք հաւատալ, որ այդպիսի մի վատ հայ չկայ:

«Մենք դեռ երէկ վճռել էինք սպասողական դիրք բռնել, բարենորոգումների ընդունելու առթիւ, որքան էլ այդ բարենորոգումները լինեն ողորմելի: Բայց սուլթանի կառավարութիւնն, իր գազանային կոտորածներով, նորից մեզ դուրս է հանում այդ սպասողական դիրքից եւ ստիպում կրկին հնչեցնել ապստամբական փողը:

«Պարտաճանաչ, վստահ իր եռանդի վրայ, ղեկավար հայ ազգային դատի եւ վճռած մինչեւ վերջին ուժն առաջ տանել այդ դատը՝ հնչակեան կուսակցութիւնը այսօր բարձրացնում է սուլթանի այդ ձեռնոցը՝ պատրաստ մղելու նորանոր ճակատամարտեր: Նա գիտէ, որ այժմ ոչ թէ կռւելու մի ցանկութիւնից դրդւած, ոչ թէ նորանոր արիւն թափելու համար, այլ վերջ դնելու համար այլ եւս լրբացած ու գազանային մոլեգնութեամբ հարբած թշնամու կորստաբեր հարւածներին, նա գիտէ, ասում ենք, որ կորստի այդ ահաւոր վտանգից խուսափելու համար այլ եւս ոչ մի միջոց չի մնացել, եթէ ոչ դիմադրութիւն յարձակման, հարւած հարւածին, ապստամբութիւն՝ բռնութեան դէմ: Այլ եւս թշնամին վճռել է հայերին կոտորել եւ ծիծաղում է այն մեծ եւամոլի, եւրոպական դիպլոմատիայի երեսին, որ պարտութիւն կրելով այսօր ամօթահար շփոթւած մնացած է: Իսկ մենք, հայերս, չպիտի շփոթւենք, ոչ էլ կորցնենք մեր պաղարիւնութիւնը: Բայց եւ միեւնոյն ժամանակ պատմական, ազգային եւ մարդկային մէկ ամօթալի ոճիր կլինէր մեր կողմից թողնել մեր բոյներում, մինչեւ որ լպիրշ թիւրքի հարւածն այնտեղ հասնէ եւ մեզ իսպառ ոչնչացնէ, մեզ կոտորէ» (Անդ):

Ի՞նչ իմաստ ունէր թափել այժմ հազար ու մի անգամ կրկնւած ու քաշքըշւած, վերջնական հաշւով ողորմելի դարձած այս ֆրազների կոյտերը. այժմ, այո՛, երբ 50,000 անխնամ որբեր էին թափառում Հայաստանի երկնքի տակ: Ո՞վ պիտի լսէր այդ կոչերն ու ռազմաշունչ աղաղակները, երբ ամբողջ երկիրը վերածւած էր մի համատարած գերեզմանի, իսկ ողջ մնացածները օտար երկրներում հաց էին մուրում: Տարրական օրինաւորութիւնն էլ երես էր դարձրել գլուխը կորցրած եւ խղճուկ խօսքի մեքենայ դարձած «Հնչակ»-ից: Պէտք

էր գոնէ բարի լինել դէպի արիւնաթաթաւ գիւղը եւ հանգիստ թողնել նրան իր սեւ օրի հետ։ Եւ ինչո՞ւ էր «Հնչակ»-ն անպատճառ ուզում, որ վերկացնէր այդ գիւղը, երբ նա ինքն էր ասում, թէ Եւրոպան, հայ ժողովրդի համար ամենապաշտելի փրկիչ դարձած Եւրոպան, պարտուած էր սուլթանից եւ ամօթահար մնացած։ Ի՞նչ անխելքութիւն, ի՞նչ հակասութիւն. յօդուածի գլխին ասել թէ հայոց խնդրի վերջնական լուծումը Եւրոպայից է կախուած, իսկ մի քանի տասնեակ տողերից յետոյ յայտարարել, որ այդ նոյն Եւրոպան պարտուած է, եւ դարձեալ կանչել հայ գիւղին. «Վեր կաց կռուի»։ Որ ի՞նչ անէր այդ արիւնաքամ ու կիսամեռ գիւղը ...

Աֆրիկայի խափշիկը նեղութեան մէջ իր Փրկչին է դիմում, նրան է գանգատներ անում, նրա վրայ է բարկանում, մինչեւ իսկ ծեծում։ «Հնչակ»-ը, վերջ ի վերջոյ, եկաւ այդ խափշիկի հոգեբանութեան իր Փրկչի առաջ։

«Այո, ապերախտ ենք, մրմնջում էր նա «Արեան հեղեղ» յօդուածի մէջ։ — Մենք պէտք է ձեռնածալ նստէինք եւ իբրեւ երեւակայական նախախնամութեամբ ուղարկուած մի պատիժ մեր մեղքերին՝ քրիստոնէաբար տանէինք ամէն հալածանք, ամէն կոտորած, մինչեւ որ մեր երկրում քար քարին չմնար եւ մենք էլ անհետ լինէինք։ Այն ժամանակ, անտարակոյս, մեծամիտ ու եսամոլ Եւրոպան այլ եւս անվտանգ կտեսնէր իր շահերն Արեւելքում եւ մեր գերեզմանի վրայ դնելով մի քար, հանգիստ սրտով վրան կ'արձանագրէր. «Ամէն բան կատարեալ է — fait accompli»։

«Իսկ մենք այդպէս չմտածեցինք։ Մենք, ստրուկներս մէկ անպատիւ ու անամօթ բռնակալի, ուզեցինք մինչեւ վերջին շունչը պաշտպանել մեր պատիւն ու կեանքը, եւ այսօր անում ենք այն, չխնայելով հայութեան լաւագոյն զաւակների արիւնը, որ վերջին հաշւով պէտք է մաքրի հայութեան ճակատից ստրկութեան զզուելի արատը։

«Բայց ի՞նչ գնով եւ ի՞նչ կվաստակենք մենք։ Մենք կորցնելու ոչինչ չունենք, մեզնից յափշտակել ու գողացել են մեր ամբողջ կեանքը։ Մինչդեռ մեր վաստակելիքը մեր ազատութիւնն է, որ մենք կ'ունենանք ինչ գնով էլ լինի» (VIII, 20)։

Պերճարան ողբասացն այնուհետեւ, նոյն խափշիկային ճշտութեամբ, բարկանում էր իր Փրկչի վրայ եւ ծեծում էր նրան։

«Մեր արեան հեղեղի պատասխանատուութիւնն ամբողջովին ընկնում է երեք պետութիւնների վրայ, որ խումբ այսօր կոչւում են «երեք մեծ տկարներ»։ Ռուսաց կառավարութեան ճիւաղութիւնը, որ առերես միանալով Անգլիային մեր դատի լուծման իբրեւ աջակցելու, ներքնապէս մեր դէմ գաղտնաբար որոգայթներ էր լարում եւ նենգուկ հանդիսանում սուլթանի գազանութիւններին. Ֆրանսիական բուրժուական մեծ կառավարութիւնը, որ ծառայի պէս հետեւում էր առաջինին. բրիտանական կառավարութիւնը, որ արդէն

նախապէս ցոյց տուեց մէկ անվճռական ու թոյլ ընթացք եւ վերջը դիպլոմատիական կատարեալ պարտութիւն կրեց իր ռուս ընկերների դաւաճանութեամբ — ահա դրանք են պատասխանատու մեր արեան եւ յաղթական բաշիբոզուկ սուլթանի հրէշաւոր ոճիրների ընդդէմ մարդկութեան» (Անդ)։

Բայց խափշիկն առանց Փրկչի մնալ չէր կարող. ուստի, նրան իր դժբախտութեան հեղինակ համարելուց ու նրան ծեծելուց յետոյ, նորից իր կրծքին է սեղմում նրան։ Այդպէս էր եւ մեր քաղաքական խափշիկը։ Լսել էր լուր՝ թէ վեց մեծ պետութիւնները միահամուռ դիմում պիտի անեն սուլթանին յօգուտ հայերի, եւ գրում էր.

«Եթէ այդ դիմումն անկեղծ է, մենք հայերս ուրիշ ոչինչ չունենք անելիք, եթէ ոչ ցանկալ որ մէկ օր առաջ Եւրոպան մտնէ թրքական կայսերական երկիրը եւ շուտով հաստատէ այնտեղ հարկ եղած բարենորոգումները՝ Հայաստանի ինքնավարութեամբ եւ խիստ ու արժանաւոր պատիժը տայ այն բոլոր սուլթան, փաշա ու բէյ ոճրագործներին, որոնց տեղն այլ եւս Եւրոպա ու Հայաստան չեն, այլ Մեքքէի խոլերական փողոցներն իրենց շների խմբերով եւ Բաղդադի յիմարանոցներն իրենց պաղ ջրով։

«Անհամբերութեամբ սպասում ենք այդ օրին. մինչ այդ՝ բարձրացրած ազատութեան եւ ապստամբութեան դրօշակը, որ այսօր յաղթական կերպով ծածանւում է Կիլիկիայում, մենք հայերս կմիանանք եւրոպական զօրքին, եթէ, ինչպէս լուր կայ, նա ներս մտնէ Թիւրքիա, ինքներս պատրաստ ու կազմ ամէն կերպ մասնակցելու թրքական բարբարոս ու կորստաբեր լծի ջախջախման» (Անդ)։

Իսկ Փրկիչը պատասխանում էր, որ, այո՛, վեց մեծ պետութիւնները կը միջամտեն նոյն հայկական գործի առիթով, բայց ոչ թէ սուլթանին Մեքքէ կամ Բաղդադ փախցնելու, այլ նրան ծառայութիւն մատուցելու համար։ Նոյն այդ կոտորածի տարին, աշնանը, չորս հնչակեան գործիչներ մտան Զէյթուն եւ բռնկեցրին այդ երկրին յատուկ ապստամբութիւններից մէկը, որ ունեցաւ այդ երկրի համար շատ յաջողակ ընթացք։ Կառավարութիւնը կարողացաւ այնքան զօրք կեդրոնացնել, որ Զէյթունցիները, թողնելով յարձակողական պատերազմը, անցան պաշտպանողականի։ Զէյթունը պաշարւեց, բայց քաջաբար դիմադրեց օսմանեան կանոնաւոր բանակին ամբողջ 48 օր։ Սուլթանի համար ստեղծւում էր անախորժ դրութիւն, եւ վեց մեծ պետութիւնների դեսպաններն առաջարկում են նրան իրենց օգնութիւնը եւ հրաման են ուղարկում Հալէպի իրանց հիւպատոսներին միջամտել։ Հիւպատոսները խիստ ձմռան մէջ գնում են թրքական բանակը եւ, միջնորդ հանդիսանալով, վերջ են դնում լեռնցիների ապստամբութեան։ Ֆրանսիական դեսպանի տեղակալը գրում էր

իր կառավարութեան թէ՝ այս մեծ ծառայութիւն էր, որ պետութիւնները մատուցեցին սուլթանին [1] :

Իսկ Հայերին եւ ոչ մի ծառայութիւն, նոյն իսկ ամենափոքրը: Եւ այդ մեծ ծառայութիւնը մատուցւում էր այն ժամանակ, երբ նոյն այդ սուլթանի հրամանով Հայաստան արիւնաշաղախ էր դարձել: Եւ այդ դեսպաններից ու հիւպատոսներից ոչ մէկը ձեռք չմեկնեց նոյն այդ Հալէպի վիլայէթում կոտորւող հայերի գոնէ մի մասը փրկելու: Կարո՞ղ էր լինել աւելի պարզ, աւելի հասկանալի բան: Եւրոպան շիկացած երկաթով խարանում էր թիւրքահայերի ճակատին մի նոր դաղակնիք, ամենասոսկալին այն բոլոր դաղակնիքներից, որ նա կրել էր մինչեւ այդ սարսափելի տարին, այն է, որ նրան կարելի է ջարդել անթիւ ու անհաշիւ եւ ոչ մի պատժի, անգամ ոչ մի հարց ու փորձի չենթարկել: Թրքական նացիոնալիզմին տրուած էր վեց մեծ պետութիւններից մանդատ՝ այդ իսկ բովանդակութեամբ:

Իսկ «Հնչակ»-ը գրում էր այդ իսկ օրերին, երբ Զէյթունն էր կռւում.

«Եւ այսօր վեց մեծ պետութիւնների մեծամեծ նաւատորմիղը, միացած իրար հետ մոլեգնած ու խելագար սուլթանի դէմ, սոսկալի փոթորկի պէս ամպում են թրքական ջրերում, եւ ով գիտէ թէ վաղը սուլթանը կամ նրա գլուխը իր տե՞ղը կլինի: Ո՞վ գիտէ, որ նա չի գլորւի արդարութեան դահիճի ձեռքով պատրաստած արիւնաթաթախ գամբիւղում եւ կամ նոյն իր սուլթանի սրով թափած հայկական արեան ծովում» (VIII, 21):

Այս արդէն քաղաքական անդրագիտութիւն եւ յիմարութիւն չէր միայն, այլ եւ աւելին՝ յանցանք, ոճիր մի յեղափոխական թերթի համար, որ ուզում էր ունենալ իր յետեւում յիմարացած, առասպելներով հարբած մի ամբոխ եւ ոչ թէ գիտակից, իրական գաղափարականներ:

Մերկ իրողութիւնն այն էր, սակայն, որ ամբողջ Եւրոպայում միայն Անգլիան էր, որ պաշտպանում էր թիւրքահայերին: Ծերամանիկ Ալբիոնի խորամանկ ներկայացուցիչ լորդ Սալիսբուրին չկարողացաւ այս անգամ օգտագործել հայոց հարցը, ինչպէս օգտագործել էր 1878 թ.: Այժմ նա մենակ էր մնացել եւ դիւանագիտական պայքարի միակ միջոց էր դարձրել յիմար եւ անպտուղ սպառնալիքներ կարդալը Թիւրքիայի դէմ: Նրա քաղաքական հակառակորդ Գլադստոնը, այժմ գործերից հեռացած մի ծանուոր մարդ, առաջարկում էր, որ Անգլիան մենակ գործէ, գոնէ՝ իբրեւ անբաւականութեան ցոյց՝ յետ կանչէ իր դեսպանին Կ. Պոլսից. բայց Սալիսբուրին կատարեալ իրաւունք ունէր նրան հարցնելու թէ ինչո՞ւ նա ինքը մենակ չգործեց 1880 թ., ինչո՞ւ հայերին լքեց այնքան անակնկալ կերպով: Այժմ Սալիսբուրին ճիշտ եւ ճիշտ կերպով կրկնում էր նրա մեթոդը՝ գործել միւս հինգ պետութիւնների

1) Aghassi.— «Zeitoun» Paris. 1897, p. 315.

հետ միասին: Եւ երբ յաջողութիւն չունեցաւ, յիշեց Գլադստոնի այն փախուստի ճանապարհը եւ մի օր վեր կացաւ, ասաց իր ճառի մէջ թէ՝ անգլիական դրահանաւերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները եւ, այս բանի սախոստութեան հովանու տակ, Անգլիան արտօրանքով թողեց Հայաստանի եւ հայոց հարցի ասպարէզը, որպէսզի այլ եւս երբեք չվերադառնայ այնտեղ:

Ի՞նչ մնաց այս բոլորից յետոյ: Ջարդ ու փչուր մի հայութիւն հրդեհւած ու ամայացած գիւղերում եւ քար ու քանդ քաղաքամասերում, ողնաշարից կաթւածահար մի ժողովուրդ, օրէնքից դուրս դրւած, թշնամութեան անդունդը խորասուզւած: Նրա արեան գետերը քշել տարել էին այն թղթի ռեֆորմները, որ տւել էր սուլթանը: Նրանց մասին այլ եւս ոչ մի խօսք չեղաւ:

Բայց այսպիսի ահագնահեղ փլուզումները՝ սարսափեցնելով ժողովրդի գոյութիւնը մինչեւ խորքերը, առաջ են բերում եւ իրենց ծնեցնող գործօնների խորտակում: Եւ դրանց թւումն էր նաեւ «Հնչակ»-ը: Սոսկալի տակնուվրայութիւնը տակնուվրայ արաւ եւ այդ կազմակերպութիւնը: 1896 թ. Լոնդոնում կայացաւ հնչակեան կուսակցութեան ընդհանուր ժողով, ուր երեւան եկաւ խորունկ քայքայում, կուսակցութիւնը բաժանեց երկու իրար հակառակ մասերի, կորցրեց իր առաջնակարգ ուժեղ դիրքը, ստացաւ երկրորդական նշանակութիւն, այնպէս որ այսուհետեւ մենք կը նկատենք նրան իբրեւ երկրորդական գործօն թիւրքահայ գաղափարախօսութեան մէջ:

Այդ մի անկում էր գլուխ պտտեցնող բարձրութիւնից, մի անկում, որ առաջ է բերում արդէն անբուժելի անդամալուծութիւն:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ (ԿՈՆՍՊԵԿՏ)

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

—— oo ——

ԱՌԱՋԱԲԱՆ

Թիւրքահայ յեղափոխութեան պատմութիւնն իմանալու անհրաժեշտութիւնը: — Ներկայ աշխատութիւնն այդ պատմութեան մի ճիւղն է պարունակում — գաղափարախօսութիւնը միայն: — Աղբիւրներ: — Շնորհակալիքներ: Երես 5:

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒՄԸ

1.

Զէյթուն եւ նրա կռիւները: — 1862*-ի ապստամբութիւնը: — Այս դէպքի նոր լուսաբանութիւնը: — Միքայէլ Նալբանդեանը եւ ռուս քաղաքական վտարանդիներն արտասահմանում: Երես* 9:

2.

Ի՞նչ է նարոդնիկութիւնը: — Բակունիզմ, բունթարութիւն: — Ռուսական սոցիալիզմի հաւատամքը — գիւղական համայնքը իբրեւ փրկարար եւրոպական կապիտալիզմի դէմ: — Յեղափոխութիւն գիւղացիութեան միջոցով: — «Նարոդնայա Վոլիա»: Երես 10:

3.

Միքայէլ Նալբանդեանի գրական դէմքը: — «Սոցիալիստ», «Կարմիր հանրապետական»: — «Երկրագործութիւնն իբրեւ ուղիղ ճանապարհ»: — Մասնաւոր սեփականութեան հարցը: — Համայնական հողատիրութիւն: — Գաղափարական երկւորեակութիւն: — Նալբանդեանն արտասահմանում եւ Նալբանդեանը Ռուսաստանում: — Կէս սոցիալիստ եւ լուսաւորչական հայրենասէր: Երես 14:

4.

Նալբանդեանը՝ նախատիպ գաղութահայ ինտելիգենցիայի: — Անծանօթութիւն հայկական իրականութեան: — Նալբանդեանը եւ Թիւրքահայ գիւղացին: — Միամիտ անգիտութիւնը հասնում է չարախօսութեան: — Թիւրքահայ գիւղացու գաղթման պատճառները: — Նալբանդեանի առաջարկած միջոցները: — Վաշխառուական կապիտալն իբրեւ փրկութիւն: — Թիւրքահայ գիւղացին զոհ այսպիսի անգիտութեան: — Գաղութահայ ազգասիրութիւնը եւ Թիւրքաց Հայաստանը: — Մի հատուած Ս. Շահազիզեանի «Լեւոնի վիշտը» քերթուածից: — Ապստամբութեան գաղափարը: — Նրան հրահրում է Բակունինի համասլաւոնական բունթարութիւնը: — Համասլաւոնական շարժումների ահագին ազդեցութիւնը Թիւրքահայ ժողովրդի ճակատագրի վրայ: — Բակունինի ծրագիրը սլաւոնական ցեղերն ապստամբեցնելու մասին: —

պական մամուլ։ — Պետական եւ հասարակական նշանաւոր գործիչներ։ — Դրանցից եւ ոչ մէկը պատճառ չդարձաւ բուլղարների ազատութեան։ — Իսկական պատճառն է համասլաւոնական շարժումը Ռուսաստանում։ — Սերբիայի եւ Չերնոգորիայի պատերազմը Թիւրքիայի դէմ։ — Ռուսական օգնութիւն։ — Թագաժառանգ Ալեքսանդրը շարժման գլուխ։ — Գլադստոնի կատարած դերի ճշգումը։ — Ակսակով։ — Ռուս – թրքական պատերազմը։ — Գլխաւոր հրամանատարի հրամանը։ Երես 56։

3·

Ռուսահայ գաղութային ինտելիգենցիան համասլաւոնական շարժման ազդեցութեան տակ։ — Րաֆֆիի բնորոշումը։ — Հին թանձր անգիտութիւնը շարունակում է մնալ։ — Ծերենցի նկարագրութիւնը։ — Գրիգոր Արծրունին եւ Բալկանեան հրդեհը։ — Հայերն էլ պիտի ապստամբեն։ — Հակառուսական ցոյցեր Կ. Պոլսի հայերի մէջ։ Նրանց առաջին դիմումը մեծ պետութիւններին։ — Թիֆլիսի հայերի դիմումը Ալեքսանդր կայսրին։ — Կ. Պոլսի դեսպանաժողովը։ — «Մշակ»-ի առաջնորդողը՝ « Հայոց խնդիրը » եւ նրա բացասական արժէքը։ — Արծրունու « Восточный вопросъ » բրօշիւրը իբրեւ ապագայի յեղափոխական ծրագիր։ — Սարսափներ Հայաստանում՝ Եւրոպան ցնցելու համար։ — 1877-ի պատերազմը Թիւրքաց Հայաստանում։ — Ժողովրդական աղէտներ եւ ամենից մեծը՝ 20 հազար Հէնրի Մարտինի հրացան՝ բաժանուած քրդերին։ — Գամառ – Քաթիպայի «Ազատ երգեր»-ը եւ նրանց նշանակութիւնը։ — « Վանեցի կորիւն » ռոմանսը իբրեւ նմուշ ազգային մեծամտութեան։ — Շովինիստական զառանցանքներ։ — « Վոթել արիւն » իբրեւ ամենափրկիչ գաղափար։ — Տնայնագործական ապստամբութիւն։ Երես 65։

4·

Պատերազմի վերջը։ — Հայ կղերա – էֆենդիական կառավարող շրջանները անգլօ – թրքական դիւանագիտական խաղերի առարկայ։ — Անգլիական դեսպանի թելադրութեամբ այդ շրջանները դիմում են անում յաղթական ռուսներին՝ խնդրելով ինքնավարութիւն Հայաստանի համար։ — Կոմս Իգնատիեւը եւ նրա հաշիւները։ — Մերժւում է ինքնավարութեան միտքը։ — Սան – Ստեֆանոյի դաշնագրութեան 16-րդ յօդւածը։ — « Տեղական պէտքերի պահանջած ռեֆորմներ » անորոշ մշուշային դարձւածքը։ — Ամբողջ յօդւածը Ռուսաստանին է ծառայում, իսկ հայերի տրւում էր այն երջանկութիւնը, որ նրանց անունը առաջին անգամ մտնում է միջազգային դաշնագրի մէջ։ — 16-րդ յօդւածը՝ մեծագոյն չարիք եւ ոճիր հայ ժողովրդի համար։ — Բայց նա ընդունւում էր իբրեւ մի մեծ նւաճում։ — Նրա անորոշութեան ու մթութեան վրայ հայ բուրժուական ազգասիրութիւնը կառուցում էր ամէն տեսակ օդային ամրոցներ, սկսած ինքնավարութիւնից մինչեւ կատարեալ անկախութիւն « ծովից ծով »։ — Ներսէս պատրիարքի իսկական դերը Հայոց

հարցի մէջ։ — Ներսէսը գործիք է անգլիական դեսպանի ձեռքին, բայց ցոյց էր տալիս իրեն ռուսասէր։ — Այս երկդիմութեան հետեւանքները։ — Հայ պատուիրակութիւն Եւրոպայում՝ դարձեալ արդիւնք անգլօ – թրքական դիւանագիտական խաղերի։ — Հայ առեւտրական կապիտալը Մանչեստրում եւ նրա դերը 1878-ի բանակցութիւնների մէջ։ — Գարեգին Բաբաջեան եւ Ջէմս Բրայս։ Երես 75։

5·

Խրիմեանը եւ Թիւրքահայ հարցը։ — Պատուիրակութիւն Եւրոպայում։ — Դիւանագիտական մուրացկանութիւն։ — « Պիտի լամ »։ — Փառաւոր ընդունելութիւններ։ — Իմպերիալիստական գազանանոց։ — Մինաս Չերազ եւ իր «Յիշողութիւններ»-ը։ Անգլիական դիւանագիտութեան յաղթանակները։ — Մարկիզ Սալիսբիւրի։ — Նա դրական խոստումներ է անում հայ պատուիրակութեան։ — Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Վադինգտոն։ — Բեռլինի կոնգրեսը։ — Դիմումներ եւ յուսադրութիւններ։ — Խաբւած ամենքից։ — Մարկիզ Սալիսբիւրիի դիւանագիտական չահատակութիւնները։ — Հայ պատուիրակութեան անճարութիւնը։ — 61-րդ յօդւածը։ — Հայերի բողոքը։ Երես 84։

6·

Հայերի դիւանագիտական անգրագիտութիւնը։ — Ինչպէ՞ս հասկացեց Բեռլինում ստեղծւած դրութիւնը։ — Յուսաբեկութիւն առաջին րոպէին։ — Իրանք իրանց համար յոյս են շինում։ — Երկու գիծ։ — Ներսէս պատրիարքի ատենախօսութիւնը Ազգային ժողովում՝ իբրեւ համազգային խարէութիւն։ — Խրիմեանի խօսքը երկաթէ շերեփի մասին։ — Դիւանագիտական ճանապարհ եւ բուլղարական օրինակը, այն է՝ ապստամբական ճանապարհ։ — Երկու նամակ։ — Խրիմեանի պատասխանատւութիւնը։ — Թիւրքաց Հայաստանի դրութիւնը պատերազմից յետոյ։ — Ժողովուրդը, ինչպէս միշտ, իր Փիզիքական գոյութիւնը պահպանելու բնազդով, պատրաստ է գաղթել ռուսական զօրքերի յետեւից։ — Բայց նախ հարկաւոր է հայ ազգասիրութեան իբրեւ ատաղձ մի հայկական պետութիւն ստեղծելու համար։ — Գաղթականութիւնը կանգնեցւած։ — Հոգեւորականութեան ջանքերն այդ ուղղութեամբ։ — Գարեգին Վ. Սրւանձտեան։ — «Մշակ»-ի թղթակցութիւնները։ — Լրագրական աղմուկ։ — Գաղթը կանգնեցնողները ռուսական սւիններն էին։ — Գեներալ Լազարեւի դերը։ — «Մշակ»-ը այդ դերի համար յատկացնում է « Լաւ հայ » պատւանունը։ — Լացով ու կոծով դէպի յետ, դէպի դժոխքը։ — Այդ դժոխքի փաստացի նկարագրութիւնը անգլիական « Կապոյտ Գրքի » մէջ։ — Տեսարան մի 17 – 18 տարուց յետոյ։ — Նոր ժողովրդական շարժում դէպի ռուսական սահմանները։ — Գաղթ չէ այժմ, այլ փախուստ կոտորածներից։ — Եւ այնուամենայնիւ, դարձեալ նոյն ազգային իդէալը — « Սոել, հաւատալ, սպասել »։ Երես 93։

ՈՎ ԻՆՉՊԷՍ

1.

Թիւրքիայի յօշոտումը Բեռլինի կոնգրէսում: — Անգլիան ստանձնում է Կիպրոսի դաշնագրութեամբ իրեն յանձնուած առաքելութիւնը — ընդհանուր բարենորոգումներ մտցնել Ասիական Թիւրքիայում: — Փոխառութեան խնդիրը: — Անգլիական զինուորական հիւպատոսներ: — Բեքիր փաշայի առաքելութիւնը: — Երկրի մէջ տիրող պայմանների ուսումնասիրութիւնը: — Սուլթանական կոմիսարներ: — Թիւրք կառավարութեան թուլութիւնները եւ հայոց պատրիարքարանի քաղաքական նշանակութեան բարձրացումը: — Հայ գործիչների անվստահութիւնը դէպի Անգլիայի պաշտպանողական կառավարութիւնը: — Քրդստա՞ն թէ Հայաստան: — Կ. Պոլսի Ազգային ժողովին վերագրուած չափազանց մեծ նշանակութիւնը: — Դռնփակ նիստ 1879 թ. փետրուարի 16–ին: Գրիգոր Նիկողոսեանի յօդուածը: — Ազգային ժողովը՝ միակ յոյս «Հայրենեաց փրկութեան»: — Ռուս դեսպան Լոբանով – Ռոստովսկու բաժակախօսքը եւ Գրիգոր Արծրունու հրճուանքն այդ առթիւ: — Ազգային ժողովի ծրագիրը, իր գլխաւոր հիմունքներով ծիծաղելի, ներկայացնում է Թիւրք կառավարութեան, Էրզրումում: — Անգլիական դիւանագիտութիւնը՝ ռուսական ինտրիգներ տեսնելով հայերի այդ տենչանքների մէջ, ահազանգ է հնչեցնում: — Անգլիական դեսպանը զգուշացնում է սուլթանին, որ Հայաստանը կարող է Բուլղարիա դառնալ: — Հետեւանքներ: — Չերքէզների ներգաղթը հայաբնակ վայրերը: — Հայոց հարցի ջնջումը հայ ժողովրդի ջնջման միջոցով: Երես 106:

2.

Համիդականութիւն: — Սամի փաշայի առաքելութիւնը Վան ու նրան տրուած հրահանգները: — Սեղմումներ եւ սահմանափակումներ Կ. Պոլսում: — Քրդութիւնը հայութեան դէմ: — Շէյխ Ուբէյդուլլահ: — Շեմդինանի ժողովը: — Կառավարութիւնն առաջարկում է կոտորել հայերին: — Խրիմեանի նամակը: — Անգլիայում կառավարութիւնն անցնում է լիբերալ կուսակցութեան ձեռքը: — Այս դէպքը թովիչ տպաւորութիւն է թողնում Թրքական Արեւելքում: — Ազատագրական յոյսեր: — Հայերը պատուիրակութիւն են ուղարկում Լոնդոն: — Նոր անգլիական դեսպան Գօշէն: — Գլադստոնի քաղաքականութիւնը: — Պետութիւնների հաւաքական միջամտութիւնը: — Դիւանագիտական գրագրութիւններ վեց մեծ պետութիւնների դեսպանների եւ Թիւրք կառավարութեան միջեւ (1880 թ. ամառը): — Պետութիւնների համաձայնութեան քայքայումը: — Գլադստոնի «հայասիրութիւնը»՝ մեծ աղէտ հայութեան համար: — Գլադստոնեան քաղաքականութեան սատարը: — Երես 108:

3.

Հայերը դիւանագիտական թոյլ փորձերի եւ թրքական բռնաճնշումի քա-

ղաքականութեան հանդէպ: — Ուժ է ստանում «Երկաթէ շերեփով» գործելու անհրաժեշտութիւնը: — Առանց արիւնի փրկութիւն չկայ: — Րաֆֆու դերը: — Բուլղարական օրինակի ժողովրդականացում: — Հայդուկային վէպ: — Աբովեան եւ Րաֆֆի – վէպ – ծրագիր: — «Ջալալեդդին»: — Նրա անսովոր յաջողութիւնը: — Ռոմանտիկ հերոսներ: — Զինական շարժման քարոզութիւն Կ. Պոլսում: — Իսկ Հայաստանում սով է: — 1880–ի հսկայական սովը հայ զինական շարժումների, հայկական յաղթութիւնների, Վանի գրաւման, ասորիների, Մար Շիմոնի, եւ այլն եւ այլնի մասին: — Իրականութիւնը կազմում են միայն մի քանի հազար հայ սովալլուկ երեխաներ, որոնք Հայաստանից սոված գնում էին Կ. Պոլիս ապրուստ ճարելու: — Հայկական անզուսպ գաղանային շովինիզմը ապտամբութիւններ էր յօրինում Հայաստանում՝ կարծելով թէ այդպիսով աւելի ուժ կը ստանայ եւրոպական դիւանագիտական միջամտութիւնը: — Րաֆֆու «Խենթը» իբրեւ յեղափոխական ծրագիր: — Երկու ռաֆֆիներ Ալաշկերտի հայ գիւղացիների դրութեան նկարագրութիւնների մէջ: — Ռէս Խէչօն՝ իդէալ Րաֆֆու համար: — Պրոպագանդիստներ: — Դարբինը՝ ռէս Խէչօի օդայում: — Անցեալի քննադատութիւն: — Վէպը չի տալիս թիւրքահայ տառապանքի պատկերը մասսայական օրինակներով: — Խէչօն բացառիկ անհատ: — Բոլոր դժբախտութիւնների պատճառը մի հայ է: — Թոմաս էֆէնդի: — Ալաշկերտի գաղթականութեան պատճառները լաւ չեն բացատրուած, թէեւ Րաֆֆուն ծանօթ էին նրանք: — Երես 117:

4.

Րաֆֆին թէ հայդուկային յեղափոխութեան պրոպագանդիստ եւ թէ զինուորական կազմակերպիչ – հրամանատար: — «Կայծեր»: — Շարժումներ Կովկասից դէպի Թիւրքաց Հայաստան: — Առաջին յեղափոխական կազմակերպութիւնը Էրզրումում՝ «Պաշտպան Հայրենեաց»: — Արգիլ – Համիդի հալածանքները: — Առաջին քաղաքական դատավարութիւնը: — Քաղաքական վտարանդիները Եւրոպայում — հայեր եւ երիտասարդ թիւրքեր: — Մկրտիչ Փորթուգալեան եւ նրա «Արմենիա»–ն: — Բուլղարական օրինակի ուժեղ պրոպագանդ: — Պետերբուրգի հայ ուսանողների հայդուկային հրատարակութիւնները: — Ներսէս պատրիարքի մահը: — Նրա գործունէութեան բնորոշումը: — Նրա յաջորդները: — Պատրիարքարանի քաղաքականութիւնը փոխւում է, բայց գաղութների հայութիւնը ռազմատենչ տրամադրութիւններ է հրահանգում: — Արմենական ուղղութեան հարուածումը: — Անգլօ – ռուսական ընկերութիւնը եւ նրա «Հայաստանը»: — Հայոց հարցը պիտի լուծէ խաղաղ եղանակով, լոկ դիւանագիտական ճանապարհով: — Այդ նպատակին հասնելու համար գործադրուած միջոցները: — Փորթուգալեան հակադրում է դրան իր «Հայոց Հայրենասիրական Միութիւն» կազմակերպութիւնը: — Հայաստանում շարժումներ են հարկաւոր՝ դիւանագիտութիւնն ստիպելու եւ

մտրակելու համար ։ — Արմենականութեան յեղափոխական դաւանանքները ։ Երես 126 ։

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1.

Ուսանողական խմբակ Ժընեւում՝ բաղկացած 5 – 6 հոգուց՝ եւ նրա անջատումը «Արմենիա»-յից ։ — « Հնչակ » եւ նրա կանոնաւոր հրատարակութիւնը 1888 թուականից, որ հէնց այս պատճառով ստանում է դարագլուխ կազմող տարբեթիւ նշանակութիւն ։ — Առեւտրական կապիտալի սնուցած խոշոր բուրժուազիայի երկու ճիւղաւորումները — «Հայաստան»-ի եւ «Արմենիա»-յի խմբակներ ։ — Քաղաքական ասպարէզ է իջնում եւ մանր բուրժուազիան, որի բերան ու գաղափարախօս էր դառնում «Հնչակ»-ը ։ — Իր էութեամբ այս մի նոր երեւոյթ չէր հայ իրականութեան մէջ, այլ մի վերածնունդ ռուս նարոդնիկութեան ։ Երես 145 ։

2.

«Հնչակ»-ն իբրեւ պարբերական հրատարակութիւն ։ — Առաջին սոցիալիստական թերթ ։ — Սոցիալիստական հրապարակախօսութիւն ։ — Ի՞նչ տեսակ դեր էր կատարում սոցիալիզմը հնչակականութեան մէջ ։ — «Հնչակ»-ը հայ սոցիալիստ – յեղափոխականների օրգան, հետեւաբար եւ ժառանգորդ ռուս նարոդնիկական սոցիալիզմի ։ — Հատուածներ գաղափարախօսական մեկնաբանութիւններից ։ — Հին անտեղեակութիւնը հայկական կեանքի մասին ։ — Գիւղական համայնքը կ՚ազատէ հայ ժողովուրդը կապիտալիզմի չարիքներից ։ — Բակունինեան բունթարութիւնը եւ տերրորը՝ հնչակականութեան մոլեգնոտ պաշտամունք ։ — Եթէ Ժընեւի հնչակեան օջախը թողած լինէր հայդուկութիւնը եւ Պլեխանովի ու նրա կազմակերպած «Группа освобожденія труда » (« Աշխատանքի ազատագրման խմբակցութեան » հետ յարած լինէր մարքսիստական – գիտական սոցիալիզմին, բոլորովին այլ կը լինէր Թիւրքահայ ժողովրդի ճակատագիրը ։ Երես 147 ։

3

Հնչակականութիւնը՝ մի երկերեսանի Յանուս ։ — Մօտակայ նպատակ, հեռաւոր նպատակ ։ — Մօտական՝ նացիոնալիզմ, հեռաւորը՝ սոցիալիզմ ։ — «Հնչակ»-ի պետական դրախտը պարլամենտարիզմ է ։ — Ապստամբութիւն, ապստամբութիւն, հանապազ ապստամբութիւն ։ — Ազգայնական – կրօնական իդէալներ՝ խառնուած սոցիալիստական խոհերի հետ ։ — Ողբ Րաֆֆու մահուան առիթով ։ — Թիւրք ազգի բնորոշումը ։ — Այս հարցի մէջ հնչակը քիչ յետոյ ինքն իրան ծեծում է ։ — Յանուսի դէմքերը իրար ապտակում են ։ — Հայ յեղափոխութեան մեծագոյն դժբախտութիւնն է այս ։ Երես 153 ։

4.

«Հնչակ»-ն սկզբնական շրջանում ժխտում է 61-րդ յօդուածն իբրեւ մթին

եւ անբովանդակ ։ — Նրա ձգտումն է՝ կատարեալ քաղաքական անկախութիւն Թիւրքահայերի համար ։ — Պատերազմ Թիւրք կառավարութեան դէմ ։ — Կծու եւ արդարացի յարձակում այն մարդկանց վրայ, որ կարծում են ազատել Հայաստանը դիւանագիտական դիմումների միջոցով ։ — Կատաղի բացասական ու քաղաքակրթական առաքելութիւնը եւ անխնայ կատաղի պատերազմ Թիւրքիայի դէմ ։ — Ո՞վ էր, «Հնչակ»-ի համար, աջակիցն ու դաշնակիցը ։ — Նոյն Եւրոպան ։ — Նրան պէտք էր ստիպել միջամտելու յօգուտ հայերի ։ — Հին անմիտ մոլորութիւն ։ — «Հնչակ»-ը չէր մտցնում եւ ոչ մի նոր բան հայ ինտելիգենտական մտայնութեան մէջ ։ — Ստիպել Եւրոպան հայերին կոտորել տալու միջոցով ։ — Հնչակականութիւնն է, որ սկսում է գործադրել այս ողբմար կերպով ըմբռնուած բուլղարական օրինակը ։ — Հնչակեանները ձեռնարկում են Խրիմեանին փախցնելու Երուսաղէմից ։ — Վեղարապաշտութեան առաքեալը՝ Ռուբէն Խանազատ ։ — Հաջի – ադա — սոցիալիստ — մանկական միամտութիւնը խաղուած ։ — Ապստամբելու ծրագիրն ու յորդորները ։ — Ապստամբել պէտք է Ռուսաստանի դէմ, եթէ նա փորձէ գրաւել Թիւրքաց Հայաստանը ։ — «Հնչակ»-ը՝ քարոզելով հանդերձ ընդհանուր ապստամբութիւն, օրինակ էր բերում թէ գազանային որպիսի անգթութիւններով անգլիացիները ճնշեցին ապստամբութիւնը Հնդկաստանում ։ — Ընդհանուր ապստամբութեան պատասխան՝ ընդհանուր կոտորած ։ Երես 159 ։

5.

Հնչակեան գաղափարները կեանքի մէջ ։ — Համակրող տարրեր ։ — Ի՞նչ են պատճառները ։ Էրզրումի դէպքը 1890 թ. յունիսի 18-ին ։ Եւրոպական միջամտութիւն նա չի առաջացնում ։ — Տրապիզոնի հնչակեան կոմիտէն որոշում է, միջամտութիւն առաջ բերելու համար, մի ցոյց կատարել Կ. Պոլսում, դեսպանների քթի տակ ։ — Խորհրդակցութիւններ Կ. Պոլսում ։ — Գում – Գափուի ցոյցը յուլիսի 15-ին ։ «Հնչակ»-ի հրճուանքները ։ — Ընդհանուր ապստամբութեան կոչ ։ — Գիտեն որ Կ. Պոլսում եղած ցոյցը կարող է կոտորած առաջ բերել Հայաստանում ։ — Հնչակեաններն իրենց ցոյցին վերագրում էին ահագին քաղաքական նշանակութիւն, բայց իրողութիւնն այն էր, որ նա առիթ տուեց Աբդիւլ – Համիդին ծաւալել խիստ հալածանքներ հայերի դէմ ։ — Դատաստանական գործեր, աքսորներ ։ — Սուլթանի ահեղ յայտարարութիւնը Աշըգեան պատրիարքին ։ — Սպառնալիքի իրագործումը՝ քրդական « համիդիէ » գնդերի կազմակերպում ։ — Հնչակեան խմբերի մասնակի յաջողութիւններ Մուշի եւ Սասունի կողմերում ։ — Նրանք աւելի եւս հրահրում են «Հնչակ»-ի ապստամբական գոռոզութիւնը ։ — Քարոզում է, որ ապստամբութիւնը պիտի լինի տեւողական ։ Երես 168 ։

6.

Հնչակեան պրոպագանդի արդիւնքները Սասունի լեռներում ։ — 1889 – 1890 թուականների դէպքերը որակւում են, «Հնչակ»-ի կողմից, իբրեւ բացար-

ձակ ապստամբութիւն Թիւրք կառավարութեան դէմ : — Այդպէս ընդունում էր եւ Թիւրք կառավարութիւնը : — Միջազգային քննիչ յանձնաժողովը հաստատում է , որ հայերի ապստամբութիւն տեղի չի ունեցել : — Հայ ազգաբնակութեան ակնկալութիւնները կատարւած : — Բուլղարական օրինակի ճիշտ կրկնում : — Անգլիայի , Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջամտութիւնը : — Թրքական զազանութիւնները աղմուկ են բարձրացնում մանաւանդ Անգլիայում : — « Մայիսեան ռեֆորմները » : — «Հնչակ»-ը՝ պարծենկոտութեան գագաթնակէտին : — Մրցութիւն երեք պետութիւնների միջեւ : — Ցարիզմը գրկախառնւած սուլթանիզմի հետ : — Հայերը իբրեւ թէ ընդհանուր ապըստամբութիւն պիտի բարձրացնեն : — Սուլթանը իբր թէ պիտի ճնշէ այդ ապըստամբութիւնը : — Հնչակականութիւնը մատակարարում է առիթ : — Բար-Ալիի ցոյցը : — Աբդիւլ - Համիդն ընդունում է « մայիսեան ռեֆորմները » : — «Հնչակ»-ի բացագանչութիւնը՝ « Կեցցէ՛ յաղթութիւն » : — Առաջին կոտորած Կ . Պոլսում : — Կոտորածները ծաւալւում են գաւառներում : — 300 հազար զոհեր : — Թիւրք եւ ռուս կառավարութիւնները համերաշխ են կոտորածների գործում : — Երես 176 :

7 .

Համատարած կոտորածների հանդէպ՝ խոստովանութիւն թէ հայոց հարցը ոչ միայն չլուծւեց , այլ մտնեց երկունքի ճգնաժամին : — Եւ դարձեալ հին կանչկռտոցը — ապստամբութիւն , ապստամբութիւն : — Մեղաւորը յեղափոխութիւնը չէ , մեղաւորը երեք մեծ պետութիւններն են : — «Հնչակ»-ի մեծամտութիւնը փրկւում է Զէյթունի ապստամբութեամբ : — Եւրոպական միացած նաւատորմի առասպելով է խաբում հնչակականութիւնը : — Յաղթական Զէյթունը վեց մեծ պետութիւնների միացած ջանքերով նորից ենթարկւում է սուլթանիզմին : — Յեղափոխութեան կատարեալ պարտութիւնը : — Ընդհանուր Թիւրքահայութեան աղէտը փլուզում է բերում եւ հնչակեան կուսակցութեան : — 1896-ի ընդհանուր ժողովը Լոնդոնում եւ կուսակցութեան քայքայումը : — Այնուհետեւ՝ «Հնչակ»-ին վիճակւում է երկրորդական դեր Թիւրքահայ յեղափոխութեան մէջ : Երես 188 :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԷՆ

Հեղինակին ոճն ու նախասիրած արտայայտութեան ձեւերը հարազատօրէն պահւած են ներկայ հրատարակութեան մէջ :

Տեկստին մէջ պակսող ծանօթութիւնները , թիւերն ու թւականները բնագրին մէջ ալ գոյութիւն չունին :

Imprimerie du GLOBE, 60, rue de Provence - PARIS IX